

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
նշ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format


Adapt — remix, transform, and build upon the material

059
g-85

1-0

99





ՀԱՌԿՐԹԵԼՈՅ

1932 ՄԵՐԵԳԻՐԲ 1933

3.

ՋՈՒՆԵՐԹԵՆՈՅ

ՄԵՐԵԳԻՐԲ

ՋՈՒՆԵՐԹԵՆՈՅ ի գեղարուեստական կողմը յասկապես եւ ազնուօրէն պատրաստուած է Ախֆասախնամիս համար Օր. Ռիդա Արապեանի կողմէ:



059

9-85

ՉՊԱՆԵՐՈՒՄ ՄԵՐԵԳԻՔ

Բ. - Գ. Տ Ա Ր Ի

1932-1933

ՔՍԱՆԵՒՅԻՆ ԳԱՄԵԱԿ

Կ. ՓԱՇԱՅԻ ԱՂՔԱՏԱԽՆԱՄ ՄԱՐՄՆՈՅ

1908 - 1933

ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՇՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ԿԷՏԻԿ ՓԱՇԱՅԻ ԱՂՔԱՏԱԽՆԱՄ ՄԱՐՄՆՈՅ



ՍՈՒՐԲ ԵՆՐԱՆՍ ՇՆՈՐՀԱԼԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
ST. NERSES SHNORHALI
LIBRARY

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ «ԽԱՒՔ» — ՔԷՆԻՆԵԱՆ
Անգարա հասե, Էպուստոսուս փողոց թիւ 15

ՊՕԼԻՍ

30 JAN 2014

13.620/1

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ

ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ

ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ

1933-1933

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ

ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ


1933-1933

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ
ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ
1933-1933



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ
ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ
1933-1933

4223-2011



ԹՈՒՐԲԻՈՅ ՇԱՆՐԱՄԵՏՈՒԹԵԱՆ ՎՍԵՄ ՆԱԽԱԳԱՀ
ԿԱԶԻ ՄՈՒՍԹԱՅԱ ՔԷՄԱԼ ՓԱՇԱ

ԶՈՒՆՐԹՆՈՅ

ՄԱՐԵԳԻՐԲ

1932 - 1933

“ԶՈՒՆՐԹՆՈՅ” Ը


Սկսուած 1931ին, Գեր. Տ. Հմայեակ Ծ. Վ. Պախթիյարեանի յոյժ ձեռնհաս վարչութեամբ, **Զուարթնոցը** պահ մը թուեցաւ մեռած ըլլալ իր երկրորդ տարւոյն մէջ իսկ, ինչպէս կ'ըլլան յաճախ մտրի ու հոգիի հսկայական շարժումներն անգամ մարդկային կեանքին, օրուան մը ցնցող ու փայլուն յայտնութենէն վերջ շիջելու համար մուացութեան անհունին մէջ. լքուած, ուրացուած ոյժն է այդ նոյնինքն յղացողին կողմէ, անոր ներքին ապրումներովը դարձնուած, եւ խեղդուած իր իսկ ձեռքերով, որովհետեւ իր բովանդակ երկունքի սպառումէն վերջ ա'լ չունի ոյժը զայն ապրեցնելու, ճակատագրական, տխուր վախճան, արդիւնք հոգեբանական իրողութեան մը, որ պիտի վրձնակէր կարծէք մեր գիրքին ալ եթէ չունենայինք ներքին անզուսպ ըմբոստութիւնը բնութեան այդ հեզանքին առջեւ պուարու համար անոր երեսին թէ բոլոր դժուարութեանց մէջէն ալ պիտի շարունակենք սկսուած մեր գործը. **Տարեգիրքը պիտի երաւարակուի:**

Ֆանդուզն վճիւճ արծակուած մեր անզօր ուսերուն վրայ, որ սահայն անդունդի մը խորքին **Զուարթնոցը** յաւէտ թաղելու տխուր հեռապատկերին առջեւ կ'ուռճանայ, կը ձեւաւորուի, կը դարձնուի մեր մէջ այսօր կարենալ ըսելու համար թէ ան է արդէն, կը վերապրի, հաւանաբար քիչ մը անտաշ, քիչ մը տժգոյն ներքին իր պայքարին վերջ եւ սակայն հպարտ դաւանանքի մը ամբողջ վայրենի ոյժովը: Մենք երկիւղածութեամբ կը խոնարհինք այդ ոյժին առջեւ, ան որբա'ն անտաշ, նոյնքան եւ զօրեղ անհատականութեան մը մարմնաւորումն է հաւարական շատ համեստ այն իրականութեան մէջ որ Ազրատախնամինն է, անբիծ, մարուր հաւատքն իսկ է ան որ գիտցաւ իշխել մեր վրայ, որ գիտցաւ իշխել եւ մեր շուրջի իրականութեանց վրայ, փոթորկալից, զանգուածային շարժումներու, ցնցումներու խորքէն ծնցնելու համար մեզի այն որ առաւել րան երբեք անհրաժեշտ էր ցուցնելու, կշռելու համար մեզի հաւարական կեանքի, գործակցութեան արժէքն ու անոր չափանիւր ընկերային

իրականութեան մէջ. ստեղծելու վերջապէս նոյն այդ հաւարական մեր գոյութեան համար յենակէտ մը հաւատարիմ ու ապահով ուր երթալին միանալ, ծուլուիլ, դարբնուիլ մ'ը բոլոր, բոլոր հաւատալիքները, դարբնուիլ կազմելու համար հիմը աւելի՛ վեր, աւելի՛ նուիրական բանի մը, հաւատքի տաճարին, այն տաճարին որ մերն է, այն տաճարին որ շինուած է մեր իսկ երկիւղած հաւատքով գործակցութեան, եղբայրութեան սիրոյ հաւատքով, ան չի փչիր եթէ նոյնիսկ նիւթական իրականութիւնները արտաքին աշխարհին այլակերպուին, ձեւափոխուին ու սպառնան իրենց հետ կործանել աննիւթն ալ. նիւթը պիտի կործանէր, աներեւութանար հաւանաբար անգամ մըն ալ չգալու համար, բայց ինչ որ կայ աննիւթ մեր մէջ, իբրեւ առանցքը մեր ընկերային հաւատալիքներուն, վաղը նորէն պիտի գտնար իր դաշար գործունէութեան, եթէ այսօր քանդէին իր կառուցածը: Ահա թէ ինչու մեր **Զուարթնոցը**, համեստ իր խորքին ու ծագումին մէջ. ունի արժէք մը գէթ մեզ համար, հոն է որ կը հաշտուին, կը միանան, կը նոյնանան իրար նիզակող բոլոր հեթանոս ոյժերը մեր մէջ, հոն է որ մեր սկանակի անփորձ քայլերը կ'առաջնորդուին, կ'օժտուին մեր յարգելի գրողներուն անզուգական ոգիովը, կազմելու համար հիմնական սիւնը մեր գործին ալ մեր ամբողջ հաւարական կեանքին ալ. արդարեւ լ'նչպէս երախտագէտ չըլլալ անոնց՝ որոնք անձանթ, անշուք անկիւնէ մը եկած կոչին ի լուր պաշտելի պարզութեամբ մը ու հաւատքով եկան տրամադրել ամբողջ ազնուական խորքը իրենց մտքին ալ, իրենց հոգիին ալ, իրենց կեանքին ալ ամբողջութիւն մը իմացական եւ հոգեկան ոյժերու, որոնց դաշնաւորումը մեր օրերու տժգոյն իրականութեանց խորքին առաւել քան զօրավիզ մը, կենսատու ոյժ մը եղաւ գոնէ մեզ, նախածեռնարկողներու համար, եւ ինչո՞ւ չըսել, ամբողջ մեր յարգելի հասարակութեան համար ալ, քանի որ, վստահ ենք թէ մեր անփորձ քայլերուն վրայ բարեացակամ, ներող ակնարկ մը նետելէ վերջ ան, հասարակութիւնը պիտի գտնայ, պիտի գգայ, պիտի ապրի ամբողջ կեանք մը շինուած, կերտուած ցեղի մը իմացականութեամբ եւ հոգեկան տուեալներովը անոր:

Այս բոլորով մէկտեղ մենք շատ հեռու ենք նոյնիսկ գոհացուցիչ գործ մը արտադրած ըլլալու յաւանութենէն, նման մտածում մը, հասարակութեան կողմէ, սխալ եւ անիրաւ վճիռ մը պիտի ըլլար մեզ հանդէպ ինչ որ կ'ուզենք շեշտակի վեր հանել, մեր յարգելի գրողներուն գիտակցութեամբ, հասուն իմացականութեամբ մը լեցուն բարեացակամ ոգին է այդ. չենք կրնար հրապարակով մեր հիացումն ու երախտագիտութիւնը չի յայտնել անոնց. թող անոնց վերայ ըլլայ յաւէտ օրհնութիւնը տառապած թշուառ հոգիներու, որոնց համար գիտցան բան մը տալ իրենցմէ. բան մը որ չունի՛ անուն, որ չունի մարմնաւորում ալ, եւ անով իսկ կը դառնայ նուիրական. հաւանաբար շատ սպրտած խորհուրդն է այդ իրենց հոգիներուն:

ԱՂԲԱՏԱԽՆԱՄ ՄԱՐՄԻՆ ԿԵՏԻԿ ՓԱՇԱՅԻ



ԱՄԵՆ. Տ. Տ. ՄԵՍՐՈՊ Ս. ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԱՐՈՅԷԱՆ
ՊԱՏԻՄԱՐԻ ԼԱՅՈՑ Կ. ՊՈԼՍՈՅ

ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ ՀԱՅՈՑ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Կ Պոլիս 20 Յունիս 1932

ՀԱՄԱՐ 1817

Հետաձայն : Սր. 1328

Ազնուաշուք Տիար Նախագահ

և Պատ. Անդամք-Անդամունիք

Այգասախնամ Մարմնոյ

ԿԷՏԻՎ ՓՂԵՂՅԻ

Պատ. Ազնուաշուք Տիար Նախագահ հաստատութեան քանդակա-
հինգամեակին առթիւ գովելի գաղափարը ունեցած էր վերա-
հրատարակելու «ԶՈՒՍԻՓՆՈՅ» Տարեգիրքը եւ անոր հասոյթով
մղում տալու թաղից բազմակարօտ չքաւորներու եւ աղքատիկ
եւ կսեռ ուսանողներու օժանդակութեան գործին:

Կը գնահատենք Պատ. Մարմնից անդամներն ու անդամու-
հիները որոնք սրտագին եռանդով ու բոլորանուէր փարած են
այս մարդասիրական ձեռնարկին, նպատակ ունենալով ամօրեւ
վիշտը դժբախտներու եւ անպաշտպան խլեակներու:

Տարակոյս չունինք թէ ամէնուն համակրալից վերաբերու-
մին եւ աջակցութեանը պիտի արժանանայ Ձեր այս գեղեցիկ
եւ սրտի մօտիկ ձեռնարկը, որուն արդիւնաւորումը անտարա-
կուսելի է, ծանօթ ըլլալով մեզ սիրելի ժողովուրդին բարեսի-
րական զգացումներն ու զսոցողութեան լայն ոգին:

Կ'օրհնենք Պատ. Ազնուաշուք Տիարին, ամէն յաջողու-
թիւն մտղթելով, եւ մնամբ Հայրական Սիրոյ Ողջունիւ

Աղօթարար

Պատ. Տիարք Կ. Պոլսոյ

ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ԻՆՉ ՈՐ ՈՒՆԻՄ

«Ինչ որ ունիմ զոյն չեղի իստի»

Գործ Գ. 6

Սիօնի բարձունքին վրայ խորխտաբար կանգնող Հերովդեսեան փառաւոր տաճարը մէկէ աւելի դռներ ունէր արտաքին ու ներքին գաւթները առաջնորդող Այդ մուտքի դռներուն մէջ ամենակարեւորն էր այն՝ որ ճանչցուած էր «Գեղեցիկ» անունով: Ան, ըստ Յովսէփոսի, այնչափ մեծ ու ծանր էր որ կը ծխնիններուն վրայ դարձնելու համար քսան հոգիներու ուժին պէտք կար, և իր յարակից մասերով, համակ գրուագեալ և ոսկեղօծ, կը ներկայացնէր գեղար ւեստական գլուխ գործոց մը:

Այդ գուռին առջեւ էր որ կը նստէր ի ծնէ կաղը, աղքատ ու մուրացիկ: Ու այդ գուռէն ներս կը որ կը մտնէին երկու առաքեալներ, օրուան իններորդ պահուն իրենց աղօթքներն ընելու համար սուրբ տաճարին սրբազոյն մը ընդունելուն մէջ: Ի տես այդ զոյգ մը բարեպաշտիկներուն կ'երկարին կազ մուրացիկին ձեռքերը սոփորականին պէս՝ ստանալու համար սոփորական ողորմութիւնը: Կ'երկարին աղքատին պարապ ձեռքերը՝ կազ գալու համար լեցուն, կանխիկ մատուցուած հազար օրհներգներու իբր վարձ:



ՎԵՐ. Ս. Պ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

Պետրոս ու Յովհաննէս կը գլխան խեղճին վրայ: Բայց ի՞նչ ընեն, ի՞նչ կ'ընեն ընել: Գրոցանին պարապ է, քըսակին՝ թափուր: Բայց կը դառնան ու կը նային իրենց հոգուն խորը և ահա կը գտնեն հոն ինչ որ ունին. ինչ որ պէտք է տալ: Չունին արծաթ և ոսկի, բայց ունին հազարներէ զօրութիւնը: Կուտան զայն աղքատ կաղին. նա ան այդ զօրութիւնով կ'ելլէ, կը քալէ, կը քալէ ու կ'օրհներգէ:

Հոպատակ չունինք կատարուած հրաշքին կարելիութեան կամ անկարելիութեան սահմանները ոտնակոխել: Մենք կ'ուզենք անդրադառնալ այն սկզբունքին որուն հաւատարմորէն ծառայելիքն Առաքեալներ և որուն շնորհիւ կատարուեցաւ այդ զարմանալի հրաշքը:

Պետրոս ըսաւ. «Ինչ որ ունիմ ան կուտամ»: Ոչ մ'իայն Պետրոս ու Յովհաննէս, այլ նաև մ'իւս բոլոր առաքեալներ, և ամէն զարու Քրիստոսի

ճշմարիտ հետևողներ նոյն սկզբունքով շարժեցան և գործեցին: Այսպէս շատ բան կը պարտի անոնց որ ապրեցան, տուին և գնահատեցին ինչ որ ունէին, բարձրագոյն ազգակիցով. «Ինչ որ ունիմ զայն կուտամ»:

Մենք՝ Քրիստոնեաներս, եթէ իրապէս այդպէս ենք, կանչուած ենք ապրիլ ու շարժիլ նոյն սկզբունքով: Պէտք է ցուցադրենք ինչ որ ունինք, պէտք է տանք ինչ որ ունինք, պէտք է ճանչնանք և գնահատենք ինչ որ ունինք:

* * *

ՅՈՒՑԱԳԻՆԵԼ ՈՒՆԵՑԱԾԸ

Պետրոս և Յովհաննէս նոյն օրը ցուցադրեցին ինչ որ ունէին: Արդէն ատկէ տարբեր բան չէին կրնար ընել: Անոնց մէջ ապրող զօրութիւնը յայտնաբերութեան կը ճգնէր: Երկնաւոր Հօր զաւակներն էին. պարտ էր որ մարդիկ անոնց վրայ տեսնէին բարի գործերը աստուածատուր: Երկրի աղերն էին, պէտք էր որ իրենց համբ տային Աշխարհի լոյսերն էին, անհրաժեշտ էր իրենց ճառագայթները արձակելն ամէն կողմ, «Ճբագը չեն դներ դըրուանի տակ»: Իմած էին կենաց Ջուրէն և անոնց ներսիդին կենաց Ջուրի աղբիւրներ հոսած էին, պէտք էր որ հոսէր այդ ջուրը ընկերութեան խաւերուն մէջէն, հոսող աղբիւրը չէ կարելի խցել, կը պոռթկայ ան տեղէ մը:

Պետրոս ու Յովհաննէս, բոլոր Առաքեալներ և ամէն զարեբու ճշմարիտ հաւատացեալներ ցուցադրած են ինչ որ ունեցած են:

Յուցադրութիւնը երկինքի գործ է: Երկինք միշտ կը ձգտի պարզուիլ Տեսանողներու և մարգարէներու աստիճանաբար պարզուող երկինքը ժամանակի լրումին ցուցադրած է Սիրոյ ամենապատուական պտուղը, Խաչով՝ Խաչեալը: Ու ան դեռ կը ցուցադրէ ինչ որ ունի: Այսօր քիչը գիտենք, բայց վաղը շատը պիտի պարզուի:

Յուցադրութիւնը նաեւ գործն է բնութեան Բնութիւնը միշտ կը բացուի ու կը պարզուի Ան աստիճանաբար օր ցուցադրէ ինչ որ ունի, նախ ծիլն ու ցողունը, ապա տերեւը, կոկոնը ու ծաղիկը:

Ու մարդ, երկինքի ու բնութեան այս զաւակը, անշուշտ չպիտի կազմէր բացառութիւն մը: Յուցանողէսներ կը կազմուին, գիտական, գեղարուեստական ու ճարտարարուեստական շանդէսներ կը սարքուին ազգայնական ոգիի պոռթկումին: Պալատներ ու պալատանման շէնքեր կը կառուցուին մեծածախս ու բազմաշխատ: Փանկ շորերով կը զարդարուին իրաններ, ու թանկագին գոհարներով կը շողջողան ականջի օղեր ու մատներու մատանիներ: Ասոնց ամէնուն մէջ իր ունեցածը ցուցնելու մարդկային բուռն տենջն է որ յագուրդ գտնել կը ճգնի:

Բայց երկու տեսակ ցուցադրութիւն կայ: Մին ունեցածը ցուցադրեն է իսկ միւսը՝ չունեցածը: Դժբախտաբար շատ են անոնք որոնք իրենց չունեցածը ցուցադրելու ախտէն վարակուած են: Օրինակներ կ'ուզէք. խիստ շատ են:

Գլուխը պարապ է և գիտութենէ ու փիլիսոփայութենէ կը ճառէ: Քսակը տասը փարա չունի, ունեւորի հովեր առած է: Գրոցանը հազարը չունի ու առեւտրական ասպարէզին մէջ տամնակ հազարներ ունեցող կ'երեւի: Տուրուտական ասպարէզին մէջ տամնակ հազարներ վրայ ուտելու հաց չունի, նին մէջ գլուխը դնելու բարձ սե սեղանին վրայ ուտելու հաց չունի, դուրսը լորտի դաւակ կը թուի: Գեղեցկութիւն չունի, ոչ դէմքի, ոչ սքրտի, ու

չղարներու եւ ներկերու տակ, պահուստատանքային ճարձերով և կիտ-տ մերկ իրաններով գեղեցիկներու գեղեցիկը երեւիլը՝ ճգնի:

Չկայ աղբակ մը մարդուն յառաջգիմուկեան և զարգացումին արգելք եղող այնքան շատ որքան անոր տննջը ցուցադրելու ինչ որ շունիկ Որքան ունեցածը ցուցադրել ընական ու օգտակար է, նոյնքան շունեցածը ցուցադրել անընական և վնասակար է:

Տէրունական պատուէրն է, «Տեսնեն ձեր բարի գործերը»: Բայց նոյն տանն Ան կը զգուշացնէ որ մարդոց երեւնալու համար չկատարուի որ եւ է բարիք կամ առաքինութիւն:

Այո՛, պիտի ցուցադրենք ինչ որ ունինք, բայց այդ ցուցադրութիւնը պիտի չըլլայ ցուցադրութեան սիրոյն համար: Փնտուռածը արուեստակիալ ցուցադրութիւն չէ այլ ընական: Պէտք է ապրիլ մեր ունեցածը, ու ան ինքնաբերաբար պիտի ցուցադրէ իր քաղցրահամ պատուէները:

Ուրեմն ապրէ՛ ինչ որ ունիս: Ապրէ՛ ինչ ձիրք ու տաղանդ որ նախախնամութիւնը չնորհած է քեզիս: Ու մանաւանդ ապրէ՛ երկինքի մեծագոյն շնորհքը քեզիս: Ապրէ՛ Յիսուս Քրիստոսը:

* * *

ՈՒՆԵՑԱԾԸ ՏԱԼ

Պետրոս և Յովհաննէս Դեղեցիկ զբան առջև ոչ միայն ցուցադրեցին այլ նաև տուին ինչ որ ունէին: Արծաթ և ոսկի շունէին բայց ունէին Յիսուս Քրիստոսը և տուին զայն, եւ Անով քաղցի ի ծնէ կազմ՝ խեղճ ու թըշուառ: Անոնք առած էին տալու համար, և Վարդապետէն սորված էին տալ միայն, ու տուին:

Տալու ենք ինչ որ ունինք: Աստուածային պարգևներ մեր մէջ անգործութեան զատապարտելու համար տրուած չեն մեզիս: Անոնք տրուած են մեզի որպէս զի տանք:

Մենք տալու ենք որովհետեւ մեր Վարդապետը ու Փրկիչը այդպէս ըրաւ եւ մեզի այդպէս ընել սորվեցուց: Եթէ հետեւողներն ենք մեր հաւատքի առաջնորդին ու կատարողին՝ պէտք է տանք և անպատճառ տաք: Ձեր առեր էք, ձեր ալ տուէք: Այո է Տէրունական ազգու պատգամը:

Մենք տալու ենք որովհետեւ մարդկութիւնը այդ կը պահանջէ մեզմէ: Կարօտութիւն և թշուառութիւն մեր շուրջ առած են: Անոնց տակ տուայտոյ կեանքեր օգնութեան ձայներ բարձրացուցած են: Մեր ականջներուն հասնող աղեկտուր ճիշերուն, և մեր աչքերուն առջև պարզուող սրտաճմիրկ տեսարաններուն առջև կարելի չէ մեզի համար անտարբեր գտնուիլ եթէ սիրտ ունինք կարեկիր:

Մենք տալու ենք որովհետեւ մեր շահն իսկ այդպէս կը պահանջէ: Կուզենք առնել որպէս զի շատը ունենանք: Բայց չպիտի առնենք և շատին չպիտի տիրանանք մինչեւ որ շտանք ինչ որ ունինք: «Տուէք ու ձեզի պիտի տրուի»: Այո է Յիսուսական պատգամը, այո է տիեզերական պատգամը: Առանց տալու չկայ առնել, առանց պարտուելու չկայ լեցուիլ: Շատին ճամբան քիչէն կ'անցնի: «Տուէք ու ձեզի պիտի տրուի»: Պիտի տրուի, բայց կոխուած եւ լնփլեցուն պիտի տրուի:

Եւ ինչ միտիթարական է տեսնել որ երկինքի վարձքը չէ համեմատա-

կան ծառայութեան չափին կամ տրուածին չափին, այլ անոր մէջ խառնուած հոգիին որ կը շինէ որակը: «Ապրիսը կայ Աստուածային՝ անոր որ տուած է սրտանց իր ունեցածը, եթէ երբեք ան կ'աւելլայ այդին մէջ աշխատուած մէկ ժամ միայն, կամ դանձանակին մէջ ձգուած որբեւայրիական լոկ երկու լուծայ:

Տո՛ւր ինչ որ ունիս:

* * *

ԳՆԱՀԱՏԵԼ ՈՒՆԵՑԱԾԸ

Պետրոս և Յովհաննէս գիտէին թէ ինչ ունէին և գիտէին թէ ինչ կ'արժէր իրենց ունեցածը: Կազմուեցին զբամ էլ սպասէր, բայց անոնք Յիսուսը ունէին: Մտերայիկին ականջներուն ո՛վ գիտէ որչափ տարօրինակ ու խորթ հնչեց Յիսուս անունը երբ Պետրոս ըսաւ. «Յիսուսի անունով ելի՛ր ու քալէ՛ս»: Ու որչափ խորթ կը հնչէր այդ անունը շրջաններու ականջին: Բայց որքան ալ հանրային կարծիքը անհաշտ ըլլար այդ անունին և որքան ալ անարգանքով վերաբերուէր ժողովուրդը այդ անունին հանդէպ, Առաքեալներ, սահայն, գիտէին թէ ինչ կ'արժէր այդ անունը: Ու այդ անունը քալել տուաւ կազմին ու վերջ տուաւ մտերայիկ կեանքին:

Որչափներ կան որ իրենց ունեցածին յարգը ճանչցած չեն և անոր համար կորսնցուցած են զայն թանկագին գոհարներ, հնագիտական մեծարժէք առարկաներ ճանաչողութեան և գնահատութեան պակասի պատճառով ձեռքէ թռած են: Արտին մէջ պահուած գանձը զոր մէկը գտաւ ու զայն ձեռք անցնելու համար իր բոլոր ունեցածը ծախելով նոյն արտը գնեց, մէկ օրինակն է ձեռքէ հանուած գանձերու:

Եւ ինչ տաղանդներ ու կարողութիւններ կորսուած են անգործութեան զատապարտուած ըլլալով, որովհետեւ անոնց տէրերը գիտակցութիւնն ունեցած չեն իրենց ունեցածին և չեն գիտցած զանոնք գնահատել իրենց խակական արժէքովը:

Արժէքներ անպատճառ կախում չունին առարկաներու մեծութենէն, ծանրութենէն կամ փայլէն, այլ՝ անոնց մատուցած ծառայութենէն: Կառուցուած չէնքի մը պատերուն մէջ իւրաքանչիւր քար իր տեղն ունի կարեւոր՝ հետեւաբար իր արժէքը: Բնկերութեան հսկայ շէնքին կառուցուածքին մէջ ալ իւրաքանչիւր անհատ իր կարողութիւնով իր մասնաւոր տեղն ու ծառայութիւնն ունի ճանչցի՛ր ինքզինքդ, և գրաւէ քու տեղդ նոյնիսկ եթէ ան ըլլայ ծածկուած անկիւն մը:

Մասնաւորելով մեր խօսքը Քրիստոնեաներու, անոնք ամէնէն աւելի պէտք է գիտնան թէ ինչ ունին եւ ինչ կ'արժէ իրենց ունեցածը:

Դո՛ւք, ո՛վ Քրիստոնեաներ, Առաքեալներուն նման Յիսուսը ունիք: Կ'արժէ՛, մեծապէս կ'արժէ ան թող աշխարհ արհամարհանօք նայի անոր, թող նիւթապաշտ մարդկութիւնը սնապաշտութեան կառուցած գեղեցիկ դռներուն առջև տակաւին ձեռք կարկառէ արծաթի ու ոսկիի: Բայց դուք գիտցէք թէ ինչ որ ունիք և կուտաք աշխարհին՝ շատ աւելի կ'արժէ քան արծաթ ու ոսկի: Ան պիտի գայ կազմի կերպով մեան քայիլ և անգամաւոր զնայանքին ոստնուլ տալ:


Անգլո-Պօէր պատերազմի միջոցին դեռ անգլիական օգնական ուժեր չի

հառած Պօէրնէր տիրող դիրքերը դրաւած միշտ կը ծեծէին Անգլիական անպաշտպան դիրքերը և անոնց մէջ ապաստան գտած փոքրաթիւ խումբերուն մահ կ'սպառնային: Այդպիսի տկար դիրքի մը մէջ գտնուող անգլ. զինուորներու ջոկատ մը սոսկալի կրակի ենթարկուած էր Պօէրնէրու կողմէ: Օգնական ուժեր կ'աւանային, ու իրենց շարքերը կը ցանցառնային միշտ իյնող զինուորներու պատճառով: Այլ ճար փնայած չէր: Պէտք էր պարզել Պօէրական դրօշակը, ճերմակի վրայ կարմիր խաչը: Փնտուցին ճերմակ լաթ մը, գտան բարձր երես մը, բայց նեօրկը, կարմիր ներկը, սուրկէ ճարէին զայն:

Երկար շուրջումէ ու վարանումէ վերջ յառաջ քայլեցին երկու անձնուրաց զինուորներ, բայցին իրենց դաստակները, հոսեցուցին արիւնը, ու այն արիւնով գծուեցաւ կարմիր խաչը ճերմակին վրայ: Բարձրացաւ արիւնաներկ դրօշակը: Փրկուեցաւ ջոկատը:

Ունիս արիւնաներկ դրօշակը: Վեր առ ու պարզէ՛ զայն: Անոր կը կարօտի ամբողջ աշխարհ: Ան պիտի ըլլայ վէրքերու սպեղանին, ցաւերու դարմանը, թոյներու զեղծափը, տեղացող մահառիթ սլաքներու զէմ պաշտպան անխոցելի վահանը: Անով պիտի կանգնին ու քալեն տաճարներու դռներուն դուրսը, և նոյնիսկ ներսը, նուիրման սեղաններուն շուրջը, քաշկուտուող անդամալոյժ կեանքեր:

Ս. Պ. ՄԱՆՈՒԿԵԱՆ



ԿԱՐԵՎՅՈՒԹԵԱՆ ԶԳԱՑՈՒՄԸ

Տիեզերքին անհուն տարածութեանը մէջ, Բիրտ Ոյժին իշխանութիւնը կը ծաւալի ընդհանուր, իր համակ լրուածութեամբ: Հզօրը կը տիրապետէ, անհզօրը կը քաւէ: Զօրաւորին է բաժին՝ կեանքին ամէն նպատակը պայմանները, իսկ տկարին է նստի՝ կեանքին բոլոր աննպատակ պարագաները: Զօրեղին է սահմանուած՝ ապրել կեանք մը յովալի, մինչ վատոյթին է ճակատագրուած՝ ճարակիլ կեանք մը ճղճիմ, և ըլլալ զոնը յաճախ ոյժին:



ԳԱՐԵՎ ԿԱՐԵՎԵԱՆ

Բայց թէ ինչո՞ւ...: Հարցի՛մ կ'ընտալի, որուն չէ հնար պտտասխանել: Տիեզերակ ն կեանքին մասլամած Առեղծուածը, որ գատապարտուած է մնալ յաւէտ անլուծելի:

Զէ՞ր կարելի արդեօք տիեզերքին՝ գոյանալ յորինուածքի ձեւի մը մէջ այնպիսի, ուր կեանքը չկազմէր փողոտում, յօշոտում, ուր հզօր ու անհզօր ըլլային համարժէք, ուր ընդհանուր գաշնակութիւն մը տիրապետէր կեանքի՝ համաձոյլ, համատարր երեւոյթի տակ համատարած:

Ի՞նչ իմաստ կայ արդեօք սքօյուած բնութեան այս գժպի՛ հակասութիւններուն, հակապատկերներուն մէջ...:

Եւ երբ հոտաւ այն պահը, ուր մարդուն միտքն արթնցաւ այլազան պատճառներու ազդեցութեանը տակ երբ մերկացաւ ան իր վայրէ մենաւոր կեանքէն և սկսաւ ապրել կեանք մը համախումբ, մարդկային ընկերութիւնը կազմուած էր, Քաղաքակրթութիւնը՝ հիմնուած:

Մարդն ալ եւս ընկերային կեանք մը կ'ապրէր, որ դարերու ընթացքին մէջ հետզհետէ պիտի դարձանար, պիտի բարդաւաճէր, և պիտի ստեղծէր

4223-2011



բարձրագոյն դասակարգը կենդանային աշխարհին մէջ, Մարդուն միտքը կը գործէր, կը հնարէր, և ընկերային կեանքը հետզհետէ կը ճոխանար, կը բարձրանար:

Այդպէս լարուած էր իմացականութիւնը պիտի շարժէր այլևս անընդհատ, և նորանոր քաղաքակրթութիւններ պիտի գոյանային:

Բնութեան կոչոտ, անտաշ կեանքը չէր ալևս ապրէր մարդը, այլ արուեստին սրբագրած կենցաղը կ'ապրէր, և որ պիտի այլափոխուէր, պիտի յեղաշրջուէր ժամանակին անդադար հոլովմանը հետ, այլազան փուլերէ պիտի անցնէր, այլազան նորանոր երեւոյթներ պիտի ընծայէր:

Ընկերային կեանքն ալ, զանազան գործօններու ազդեցութիւնովը, աստիճաններ գոյացուց մարդկային զանգուածին մէջ, քանի ոյժին տիրապետութիւնը կը շարունակէր դեռ, եթէ ոչ գաղանային փողոտումի ձեւին տակ, այլ գէթ բռնութեան, խորամանկութեան, նենգութեան այլազան երեւոյթներու տակ: Զօրաւորը կ'իրաւանէր, կը վայելէր, անդօրը կը զըրկուէր, կը տուայտէր:

Եւ այսպէս ընկերային յօրինուածքին մէջ գոյացան, գլխաւորաբար, երկու ներհակ հատուածներ: Ընչեղ հատուած եւ ընչազուրկ հատուած, որոնք իրենց սկզբնական յիճակին մէջ, եթէ չունէին այնքան ցայտուն տարբերութիւն, այլ անջրպետը հետզհետէ սկսաւ լայնանալ անոնց միջեւ, ծաւալել, քանի ճարտարարուեստը յառաջդիմեց և տնտեսական յեղաշրջում գոյացաւ ընկերային կազմաւորութեանը մէջ, մթերելով հարստութեան մեծագոյն մասը անոր մէկ հատուածին կողմը, և միւս հատուածը զրկելով նոյն իսկ կեանքի անհրաժեշտ պայմաններէն:

Ու միթէ այս անարդար հարստութեան բաշխումը՝ քաղաքակրթութեան դժպիսի թերութիւնը չկազմէր: Պիտի գա՞յ արդեօք այն օրը, ուր հնար պիտի ըլլայ մարդուն՝ սրբագրել ընկերային կազմաւորութեան այս անհեթեթ սխալը, որ սեւ արատ մը կը յօրինէ քաղաքակրթութեան ճակտին վրայ խարանուած:

Բայց հարկ է որ մտածուածները նախ փոխուին, սրբագրուին: Եւ այն ատեն միայն պիտի կրնայ գոյանալ ընկերային այն մեծ յեղաշրջումը, որ մարդկային հատուածները պիտի միացնէ, պիտի հաւասարէ, և միատարր մարդկութիւն մը պիտի կազմէ, առանց արժանիքի եւ ազարժանիքի նկատումի, որոնք առդէն իրենց կազմութեանը մէջ ընդօժին հանգամանքներ կ'ընծայեն սոսկ, առհաւային հակամիտութեան երեւոյթին տակ պատկերած, և որոնց մասին չէ կարելի մարդը համարել համարատու, հաստատական կամ ժխտական ձեւի մէջ:

Այլ միջնեւ այն ատեն, գէթ առ այժմ սփոփարար երեւոյթ մը կ'ընծայէ օժանդակութեան այն ընթացքը, զոր ընչեղ ցոյց կուտայ, եթէ ոչ իր ամբողջական տարրութեան մէջ, այլ դոնէ մասնակի պայմաններու մէջ, հանդէպ ընչազուրկին, եւ որ նոյնինքն կարեկցութեան զգացումին արտադրոյթը կը կազմէ:

Կարեկցութիւնը մարդկային բարձրագոյն զգացումն է, թէպէտ ըլլայ այն՝ իր հոգեբանական վերլուծումին մէջ, երբն համակրութիւնը հանդէպ իրեն իսկ՝ տարածուած ոչ եսին վրայ, թէպէտ ըլլայ այն՝ նոյնինքն անձնասիրութիւնը՝ տարրալուծուած այլասիրութեան մէջ:

Քաղաքակրթութեան մարդկութեան գլխաւոր յատկանիշներէն մին կը կազմէ կարեկցութեան զգացումը, որ կը նօսրանայ, կ'ազօտանայ, կը սահմանափակուի քանի կ'իջնէ քաղաքակրթութեան սանդուխներէն վար, կ'անցնի

վայրի մարդուն սահմաններէն ու կը հասնի կենդանական մարդերը:

Զէ՞ մի որ կենդանին ալ ունի կարեկցութեան զգացում, թէպէտ ըլլայ այն շատ ազօտ, շատ տարտամ, շատ սահմանաւոր, և կը կարեկցի ան՝ իր ձագերուն, իր նմանին, երբ կը տեսնէ անոնց տառապանքը, անոնց տուայտանքը: Մնողական և մանաւանդ մայրական գորովի ինչ ցայտուն պատկերներ կ'ընծայեն կենդանական այլազան դասակարգեր: Գիշատիչ գաղանն իսկ գէթ իր կորիւններուն հանդէպ գորովի զգացումով է տոգորուն: Իսկ հաւալուած մայրական խանդաղանքի գերագոյն օրինակը կրնայ կազմել, երբ իր արւունջը կը սուսցանէ իր ձագերը, եթէ նոյն իսկ ըլլայ այն առասպել Մարդակերպ կապիկները փոխադարձ օգնութեան, այլասիրութեան ինչ այլազան երեւոյթներ կ'ընծայեն, և ինչպէս կը փութան ձեռք կարկառել իրենց նմանին, երբ վտանգի մէջ կը գտնուի, դարմանել զայն՝ երբ վիրաւոր է, և խնամել՝ երբ հիւանդ: Վայրի մարդն ալ կարեկցութեան զգացում կ'արտայայտէ այլազան ձեւերու տակ, կը պաշտպանէ իր ընկերը երբ թըշնամուոյն յարձակման է նշաւակ, կ'օգնէ անոր երբ կը տեսնէ զայն դժնդակ կացութեան մէջ:

Կարեկցութեան զգացումը, ինչպէս ամէն զգացում, հոգեբանական երեւոյթ մըն է: Ուղեկային կազմաւորութեան արտադրոյթը: Եւ իր նախնական վիճակին մէջ կոչու ու անտաշ, երբ ուղեկային կազմաւորութիւնը դեռ չէ զարգացած, կը նրբանայ, կ'ազնուանայ, քանի միտքը կ'ուռճանայ, կը հասունանայ:

Երբ զգացումը, իր ընդհանուր հանգամանքին մէջ, շղայպատուած է մտածման հետ՝ համակշիւ, իրապէս ազնիւ երեւոյթ մը կ'ընծայէ: Իսկ երբ կը տիրապետէ ան մտքին, կը վարտուի, կը մոլեգնի, քանի զերծ է հակակշիւ կապանքներէ, քանի ազատ է դործելու անսանձ, ու կը պատկերէ տեսիլ մը իրապէս անազնիւ:

Կարեկցութեան զգացումն ալ, հետեւաբար, նոյն այդ պայմաններուն մէջ կը գտնուի, և ազնիւ է երբ մտածման հետ համընթաց կը քալէ, իսկ անազնիւ՝ երբ մտածման հակակշիւն կը զերծանի: Կարեկցութեան զգացումին արտայայտութեան երեւոյթները կը հաստատեն անոր ազնիւ կամ անազնիւ երանգը, ու կը կազմեն անոր իրապէս այլասէր հանգամանքը կամ պարզապէս եսին գոհացմանը փոքրօքի փրկանքը: Հարապատ կամ պիտակ երեւոյթներ՝ կարեկցութեան զգացումին արտայայտութեանը, որոնց առաջինը, անշուշտ որ, արժանի է տարփողանքի և վերջինը՝ ստգոտանքի:

Մարդն այսպէս եսասէր եւ այլասէր յօժարութիւններու խառնարան մըն է, և որուն մէջ եսասէր յօժարութիւնը կը բռնակալէ, երբ անոր զգացումները, իրենց համակ ամբողջութեանը մէջ, չեն նրբացած, չեն ազնուացած, և այլասէր յօժարութիւնը կը տիրապետէ, երբ անոր զգացումները իրենց լրութեանը մէջ, փափկացած են ու գրգացած, կենսաբանական և հոգեբանական այլազան պատճառներու ազդեցութեանը տակ:

Եսասէր զգացումը, իր բիրտ հանգամանքին տակ, կը ցուցադրէ մարդը իր գաղանային վիճակին մէջ, մինչ այլասէր զգացումը, իր ազնիւ երեւոյթին տակ, զայն կը պատկերէ իր գերագոյն պայմաններուն մէջ:

Եսասիրութիւնը՝ անբարոյութիւնն իսկ է, քանի՞ մարդը, իբր ընկերային էակ, թաքուն պայմանաբարութիւն է կնքած ընկերային այն կազմաւորու-

թեան հետ որուն մէջ կ'ապրի, իրաւունքի և պարտքի սկզբունքներու հիման վրայ հիմնուած: Եւ երբ ինքն իր իրաւունքին կը տիրանայ, իր ետին պէտքերը կը հոգայ լիովին, հարկ է որ իր պարտքն ալ կատարէ, օժանդակէ իր նմանին՝ անոր կեանքին պէտքերուն գոհացմանը մէջ: Քանի չի կատարեր իր այս պարտքը, կը թերանայ իր թաքուն յանձնառութեան հանդէպ, կը մեղանչէ, կ'անբարոյանայ:

Որովհետեւ, ի՞նչ է արդէն բարոյականը, իր իսկական իմաստին մէջ, եթէ ոչ յարգանք ընկերային թաքուն կամ ակնյայտ յանձնառութիւններու նկատմամբ: Բարոյականը զուտ մարդկային հանգամանք ունի, քանի անբարոյ է բնութիւնը ինքն իր մէջ, և ընկերային կազմաւորութեան հիմը կը կազմէ ան, քանի ընկերային կազմաւորութիւնը անհատներուն փոխադարձ յանձնառութիւններուն կռուանին վրայ է հաստատուած, և այդ յանձնառութիւններուն իրագործումն է որ ընկերային կազմաւորութեան տեւակաւնութիւնը կ'ապահովէ: Երբ կը դադրի փոխադարձ իրաւունքի եւ պարտքի սկզբունքին կիրարկումը, կը քայքայուի ընկերային կազմաւորութիւնը, կը փլչի, կը կործանի:

Յեղափոխական, շարժումներն, ընդհանրապէս, դժխեմ արտագրոյթը կը կազմեն իրաւունքի և պարտքի սկզբունքի խտտումին: Չէ՞ մի որ անթուրութիւնը երբ ծայրագոյն աստիճանի կը հասնի, կ'ընդվզի, կը ծառանայ յըզփանքին դէմ ու կը ճգնի վայն տապալել, վշրել, քանդել:

Եւ ինչո՞ւ, երբ ընկերային կազմաւորութեան մէկ հատուածը կը յղժանայ հաճոյքի վայելքներուն մէջ, ուրիշ մէկ հատուածը կը տուեայտի անթութեան գալարումներուն մէջ: Միթէ այս՝ ընկերային յօրինուածքին յոռի կազմակերպութեանը դժպիտի մէկ տեսիլը չկազմե՞ր: Ե՞րբ արդեօք հնար պիտի ըլլայ սրբագրել ընկերային կազմաւորութեան այս ահաւոր թերութիւնը, անհետացնել թշուառութիւնը:

Հեռաւոր հորիզոնին վրայ կը կայծկլտայ աղօտ նշոյլ մը, որ գուցէ պիտի մեծնայ հետզհետէ, պիտի շողայ հետզհետէ, և ընկերային ընդհանուր երանութեան շքեղախալ Արեւը պիտի կազմէ, ապագային...:

Իայց, բարէ՛, հարկ է որ թշուառութիւնը գալարուի դեռ տուեայտանքի պրկումներու մէջ քստմանով: Չէ՞ հնար արդեօք վայն ամօրել գէթ մասնակի, մինչեւ հասնի այն պահ, ուր ընկերային յօրինուածքին մէջ պիտի գոյանայ այն գերագոյն յեղաշրջումը, որ նոր կեանք մը պիտի կերտէ ընդհանուր մարդկութեան համար, ընդհանուր ընկերահարութեան, ընդհանուր համերաշխութեան նոր պայմաններու մէջ՝ տեսլական Այլ արդէն չէ՞ մի որ անհատական նպատակի ձեռնարկներ, հաւաքական կարեկցութեան կազմակերպութիւններ նոյն այդ ազնիւ նպատակին ձգտած են միշտ: Չէ՞ մի որ կարեկցութեան զգացումը կը կատարէ, գէթ օգնութեան ձեւին տակ, այն դործը՝ զոր մտածումը պիտի նկատէր ընկերային պարտականութիւն հրամայական: Եւ այս պարագան է, ս շատատեօ՞ր այն գաղափարը թէ՛ զգացումը կը կանխէ միշտ մտածումը, թէ՛ զգացումը կ'իշխէ միշտ մտածման վրայ, երբ չէ կըցած ան զօրանայ, գէթ գաստխարակութեան պատուաստով:

Դարերու երկար ընթացքին մէջ, ընկերային յօրինուածքին այլազան բաժանումները կարեկցութեան զանազան կազմակերպութիւններ կերտած են, սփոփելու համար զրկանքին տուեայտանքները: Եւ այսպէ՛ս, ամէն շրջա-

նի մէջ ալ կարեկցութեան զգացումը ջանացած է սատարել ընչազուրկին, և հաստատած է ազբատանոցներ, անկեղանոցներ, հիւանդանոցներ, ժամանակին պայմաններուն համաձայն:

Իսկ այսօր կարեկցութեան զգացումին հետ զուգակից կը գործէ նաև մտածումը: Միտքը զօրացած դաստիարակութիւնով, ընկերային հարկաւոր պարտականութիւն կը նկատէ այլեւս ամօքումը զրկանքին, մեղմացումը թշուառութեան, եթէ ոչ տակաւին ամբողջական անհետացումը անոնց:

Ընչեղն այլեւս նպատակ է որ կուտայ ընչազուրկին, ողորմութեան ձեւին տակ, այլ պարտքն է որ կը վճարէ, հարկաւորաբար: Ընչազուրկը ընկերային պարտապահանջ մըն է և ընչեղը պարտատէր: Չէ՞ մի որ ընկերային անհաւասարութիւնը, տնտեսական մարդկին մէջ, հրէշային երեւոյթ մը կ'ընծայէ, և արդիւնք է սոսկ ընկերային յօրինուածքին յոռի կազմակերպութեանը: Չէ՞ մի որ երբ ընչեղը ներքին թէ արտաքին այլազան նպատաւոր պարագաներու ազդեցութեանը տակ, որոնք երբեք իրեն համար որ և է արժանիք չեն կրնար կազմել, կը յաջողի հարստութիւն մը ձեռք բերել, պարտական է զայն նոյնինքն ընկերային կազմաւորութեան:

Ընկերային յօրինուածքը, իր իսկական իմաստին մէջ, ընդհանուր ընկերահարութիւն, ընդհանուր համերաշխութիւն կ'ենթադրէ: Ընկերային քաղաքակիրթ կեանքը, որ մարդուն ստեղծուածն է, իր արուեստական հանգամանքին մէջ, սրբագրութիւնն իսկ է բնութեան վայրի կեանքին, որ իր ընդհանուր երեւոյթին մէջ, այլամերթութիւնը կը պատկերէ սոսկ վայրագ:

Կարեկցութիւնը, ուրեմն, իր արդի կիրարկումին մէջ, պարտականութեան ազնիւ գաղափարը կը ցոյցանէ: Կարեկցութեան ամէն արարք՝ պարտականութեան մը կատարումը կը նշանակէ, և ամէն պարտականութեան կատարում՝ բարոյական աւելի կամ նուազ արժէք մը կ'ընծայէ:

Ընկերային մարդ-անհատը այլազան պարտականութիւններ ունի, գէթ մասնաւորաբար, իր նմանին հանդէպ, և բռնադատուած է կատարել զանոնք, հարկաւորաբար, քանի հրամայական նպահանջն է այն ընկերային կազմաւորութեանը պահպանումին: Եւ այդ պարտականութիւններուն գլխաւորն է՝ օժանդակութիւն ընչազուրկին, որ անպատասխանատու զոհն իսկ է կեանքի դժխեմ պայմաններուն, և որուն հարկ է անվերապահ սատար կանգնել ու ամօրել վիշտերը, իբր դժնեայ արգասիք ընկերային թերի կազմակերպութեան:

Ի՞նչ ազնիւ դեր կը կատարեն, ուրեմն, այն հաստատութիւնները, այն կազմակերպութիւնները, որոնց նպատակը կը ձգտի պայքարել ընկերային մեծ Սիալին դէմ, միջնորդել ընչեղին և ընչազուրկին միջեւ, սատարել թշուառին, մեղմացնել անոր ցաւերը և խրախուսել զայն կեանքին տառապակոծ ծփանքներուն մէջ:

Որքա՞ն վե՛ է գործը, նոյնքա՞ն մեծանձն է գործողը:

Եւ հարկ է որ, այսպիսի այլաձե՛ր հաստատութիւններ, կարեկից կազմակերպութիւններ աւելի և աւելի ծաւալ գտնեն, իրենց գործունէութեան սահմանները ընդարձակեն, իրենց տարրութեան չափը զօրացնեն և ընդգրկեն մարդկային ամբողջ թշուառութիւնը, քանի, արդի պայմաններուն մէջ, դեռ չկայ ուրիշ միջոց դարմանելու ընկերային մեծ Անիրաւութիւնը:

Գոնէ կարեկցութեան ձեւին տակ, գէթ մասնակի, սրբագրուի այն ան-

հեթեթ սխալը, զոր մարդկային ընկերութիւնը, իր նախնական կիսավայրենի վիճակին մէջ, որդեգրած է բնութենէն, անգիտակից, եւ որ սակայն ամօթի սեւ խարան մը կը կազմէ, ճակտին վրայ դրոշմուած, քաղաքակրթութեան արդի շրջանին մէջ, երբ միտքը բաւական իւր զարգացած է, իր ընդհանուր գիծերովը, ըմբռնելու համար այն դժպիտի անարդարութիւնը, որ կը տիրէ ընկերային յօրինուածքին կազմակերպութեանը մէջ:


Երանութեան քով Թշուառութիւնը, Յղիանքին քով Զրկանքը, Յազուրդին քով Անօթութիւնը ... Ի՛նչ քստմնելի, ի՛նչ սարսուռի հակասութիւններ..., որոնց հանդէպ կ'ընդլզլի մ'իտքը, եւ կը ջանայ դարման գտնել:

Բայց ի՛նչպէս հնար է սրբազրել ընկերային այս ահաւոր Սխալը. մինչեւ որ չգոյանայ այն մեծ յեղաշրջումը, որ պիտի այլափոխէ ընկերային յօրինուածքին կազմակերպութիւնը իր հիմերուն մէջ իսկ:

Եւ այն ատեն Արդարութիւնը պիտի գահակալէ ընդհանուր, իր համակ շքեղութեանը մէջ:

Կարեկցութի՛ւն, այո՛, վսե՛մ զգացում: Բայց աւելի վսեմ չէ՞ Արդարութեան տեսլականը...:

ԳԱՌՆԻԿ ՍԻՆԱՆԵԱՆ



Կեօիկ Փաշայի Ազնաւանումի տաղաւարը, շինուած 1922ին բարեւեր Տիկին Մարիամ Բարսեղեանի կողմէ:

ԱՂՔԱՏԱԽՆԱՄԸ ԿԱԶՄՈՒԹԵՆԵՆ ՄԻՆՉԵՒ ԱՑՍՈՐ

Համաձայն գրքիս Ա. Թիւին մէջ մեր քրած խոստումին Մարմնիս քսանեւ-
հինգամեակին զուգարկուող Բ. և Գ. միացեալ այս հատորին մէջ կը ջանանք
աւելի մանրամասն տեղեկութիւններ, վիճակագրութիւններ և զբամական
վիճակ տալ Աղքատախնամիս ծագման և գործունէութեան մասին, պրպտե-
լով հին արձանագրութիւններ և ճշգրիտ թուականներ:

Կէտիկ փաշան իբրեւ բարեկեցիկ թաղ մը, թերեւս շատ աւելի կանու-
խէն ունեցած ըլլայ մարմիններ՝ որոնք բոլորովին անջատ կամ օրուան թա-
ղական խորհուրդներու կողքին, օժանդակած ըլլան թաղին կարօտեալներուն
ու զպրոցին աղքատ ուսանողաց: Գժրախտաբար սակայն կարելի չեղաւ որոշ
արձանագրութիւններ գտնել այդ շրջաններուն վերաբերեալ, հակառակ մեր
թափած ջանքերուն:

Միակ վաւերական աղբիւրը որ ունինք մեր առջեւ, այդ ալ նոյն շր-
ջաններու թաղական խորհուրդներու արձանագրութիւնները կը կազմեն,
քանի որ ուրոյն Աղքատախնամի ատենագրութիւններն ու արձանագրու-
թիւնները կը պակսին նոյնիսկ մինչեւ ութը տարի առաջ:

15 Յունուար 1908 թուականին (բոս նոյն շրջանի թաղական խորհուրդ
արձանագրութեան) Կէտիկ փաշայի մէջ կը կազմուի աղքատախնամ մարմին
մը թաղին երկսեռ աղքայիններէն: Սակայն գործունէութեան շատ կարճ
շրջանէ մը վերջ կ'ստիպուի միանալ Գում գաբուի Չորից թաղից Աղքատա-
խնամին, ուր իբր Կէտիկ փաշայի ներկայացուցիչ կը գտնուին Տեառք Վահ-
րամ Ասատուրեան և Գրիգոր Քէմաճեան:

Բաւական երկար ժամանակ իբր Չորից թաղից Մարմին կը շարունակեն
իրենց գործունէութիւնը, սակայն հետզհետէ վէճերը ծայր կուտան և կը
ստիպուին անջատուիլ:

19 Օգոստոս 1914 թուականին կրկին կը կազմուի թաղին մէջ ուրոյն Աղ-
քատախնամ մարմին մը հետեւեալ անձերէ.

- Տեառ Զակոր Զամոյաքճեան
- » Յոյակիմ Կիւլէրեան
- » Վահրամ Ասատուրեան
- » Յարութիւն Չիլտէմեան
- » Գրիգոր Չորեան

- Տիկին Մաքրուհի Կարապետեան
- » Մարիճա Բակլաճեան
- » Մարիամ Բարսեղեան
- » Թադէւհի Գայլզճեան
- » Սրուանցտեանց
- » Աղաւնի Վարդանեան

- Տիկին Արուսեակ Սալյեան
- » Պայծառ Գմբէթեան
- » Մարիամ Խաչերեան
- » Թագուհի Պասմաճեան

Օրիորդ Տինանեան

որոնք հազիւ երկու տարուայ գործունէութեան շրջան մը կ'ունենան և կը լուծուին, որոյ հետեւանքով աղքատներու հոգածութեան գործը կը մնայ նոյն շրջանի թաղական Խորհուրդին վրայ, որ յաճախ վէճ կ'ունենայ Գում գաբուի Կարմիր Խաչի Օյանգակ մասնախումբին հետ, առարկելով անոր ըրած ոտնձգութիւններուն, որովհետեւ յիշեալ մասնախումբը իբրեւ ընդհանուր բարեխրական մարմին մը յաճախ կուգար նուիրահաւաքութիւն ընել թաղէն: Նոյնիսկ յաջողած էր Պատրիարքարանէն արտօնութիւն առնել եկեղեցւոյ մէջ սնակ շրջագայեցնելու և Աղքատախնամին յատկացուած սնակի հասոյթն ալ ինք առնելու:

Թաղական Խորհուրդը ճարահատ, ծագած վէճերուն առաջը առնելու համար կ'որոշէ կրկին Աղքատախնամ մարմին մը կազմել և իր 18 Յուլիս 919 թուականին գումարած նիստին որոշում կուտայ այս ուղղութեամբ: Բայց դժբախտաբար այս որոշումը չգործադրուիր: 16 Ապրիլ 1920 թուականին կրկին կ'արժարժուի այս խնդիրը, և նոյնիսկ պաշտօն կը յանձնուի Գեր. Տ. Հմայեակ Վարդապետին որ աղքատախնամ մարմին մը կազմէ: Սակայն հազիւ 7 Մայիս 1921 թուականին կարելի կ'ըլլայ նոր մարմին մը կազմել հետեւեալ տիկիններէ և օրիորդներէ՝

- Տիկին Գ. Գայլքճեան Ատենապետուհի
- Օր. Հ. Գաղանճեան Ատենադպրուհի
- Տիկին Մ. Բարսեղեան Գանձապահ
- » Վ. Համբարեան
- » Ք. Մինասեան
- » Ա. Վարդապետան
- » Ա. Ռէյիլեան
- » Մ. Կարապետեան
- » Ա. Մէհտէրեան
- » Պ. Սուրեան
- Օրիորդ Թ. Տինանեան
- » Ֆ. Հայրապետեան.

Այս կազմը նորիւ ժրջան անդամուկներու, փայլուն գործունէութիւն մը կ'ունենայ, և իր պաշտօնը կը շարունակէ մօտ երեք տարի: Կը լուծուի նոյն շրջանի թաղական Խորհրդոյ հրաժարումովը:

Այս շրջանին էր, 1922 Ապրիլին, Տիկին Մարիամ Բարսեղեան իր իսկ անձնական միջնոցներով շինել կուտայ այժմ եկեղեցւոյ շրջափակին մէջ գլխաւոր առաջաւարը, ու կը նուիրէ Աղքատախնամին: Ինք ալ այդ կամդին բոլոր անդամուկներուն հետ իսկապէս անձնուէր գործունէութիւն մը կ'ունենայ:

Մինչեւ 1926 թուականը աղքատներու հոգածութեան գործը մեծ մասամբ կը բեռնաւորուի կրկին նոյն շրջանի թաղ. Խորհրդոյ վրայ, թէեւ Տիկին Ա. Ռէյիլեան, Օրիորդներ Թ. Տինանեան, Ա. Մալեան, Մ. Գուլումճեան առժամաբար կ'ստանձնեն անդամակցութիւնը Աղքատախնամին, և կ'աշխատին իրենց կարողութեան սահմանին մէջ օգտակար ըլլալ թաղ. Խորհրդոյ:

ԱՂՔԱՏԱԽՆԱՄ ՄԱՐՄՆՈՅ ՆԵՐԿԱՅ ԿԱԶՄԸ



'Նստողներ' ձախէն աջ.—Օր. Քրիստինէ Գարամանեան (Գանձապահ), Տօբ. Պ. Վարժապետեան (Պատուակալ Նախագահ), Տիկին Հայկանոյ Գարամանեան (Բ. Ասենապետ):

Ոտի վրայ՝ ձախէն աջ.—Օր. Ազատուհի Փալիպեան, Տիար Կարո Ղազարեան (Ա. Ասենապետ), Օր. Արմենուհի Անեմեան, Տեարժ Պետրոս Յրէնկեան, Յարութիւն Հանրմեան (Հաւուակալ), Օր. Կասարինէ Շաւուրեան (Բ. Ասենապետ), Տիար Սանակ Մանուկեան (Ա. Ասենապետ), Օր. Մառի Գորձակասարեան:

23 Նոյեբեր 1926 թուականին կրկին կը վերակազմուի Աղքատախնամը հետեւեալ կերպով:

- Տիկին Հ. Դարբինեան Ատենապետուհի
- Օրիորդ Ա. Կիրակոսեան Ատենաղայրուհի
- Տիկին Ն. Թադէոսեան Գանձապահ
- Տիկին Տէօլլէթեան անդամ
- » Ռէյլիցեան »
- Օրիորդ Մ. Գուլումահեան »
- » Կ. Շատուրեան »
- » Ա. Աճէմեան »
- » Գ. Խարբուզիան »
- » Ա. Ղազարեան »

Շնորհիւ Ատենապետուհի Տիկին Հայկանոյց Դարբինեանի անխնջ աշխատանքներուն, այս կազմը կ'ունենայ շատ օգտակար և կանոնաւոր գործունէութիւն մը: Շարաթական կանոնաւոր նիստեր կ'ունենայ, եւ ամսավճարի գրութեան աւելի մղում կուտայ: Իր պաշտօնավարութիւնը կը շարունակէ մինչեւ 1929 թուականը:

14 Օգոստոս 1929 թուականին նոյն ժամանակուայ Թաղական Խորհրդոյ հրաւերով մեծ մասամբ նոր անդամներով կը կազմուի նոր մարմին մը, նախագահութեամբ Գեր. Տ. Հմայեակ Ծ. Վ. Պախլիյարեանի, հետեւեալ կերպով.

- Տիար Տօքթ. Պ. Վարժապետեան Ա. Ատենապետ
- Տիկին Հայկուհի Ղազարեան Բ. »
- Տիար Կարօ Ղազարեան Ա. Ատենաղայր
- Օրիորդ Աղատուհի Փափազեան Բ. »
- » Քրիստինէ Գարամանեան Գանձապահ
- » Արմենուհի Աճէմեան Հաշուակալ
- » Աստղիկ Եագոսեան Անդամ
- » Արշալոյս Զափանեան »
- » Կատարինէ Շատուրեան »
- Տիար Յարութիւն Հանրմեան »
- » Պետրոս Յրէնկեան »
- » Սահակ Մանուէլեան »

Քանի մը ժողով վերջ այս կազմին վրայ կ'աւելնայ նաև Տիկիններ Հ. Դարբինեան, Հ. Գարամանեան և Ն. Թադէոսեան: Տիկին Հ. Ղազարեան կը հրաժարի և նոր անդամներու յաւելումով դիւանի կազմութեան մէջ պղտիկ փոփոխութիւն մը տեղի կ'ունենայ, Տիկին Հ. Դարբինեան կ'ըլլայ Բ. Ատենապետուհի իսկ հաշուակալութեան պաշտօնը կը յանձնուի Տիար Ա. Մանուէլեանի:

Հոս պարտք կը համարին ք յիշատակութեան արժանի քանի մը մանրամասն տեղեկութիւններ տալ յարգելի Տիար Տօքթ. Պ. Վարժապետեանի մասին երբ պատահութիւն կ'ունենանք յիշելու հոս իր անունը իբր ատենապետը սոյն կազմին:

Տիար Տօքթ. Վարժապետեան իր հեղահամբոյր ու առաքինի բնաւորութեամբ արդէն, ծանօթ է մեր բոլորին: Գրեթէ Աղքատախնամ մարմիններու կազմութեան առաջին շրջաններէն սկսեալ քսանեւէինք երկար տարիներ

անընդհատ իբր Աղքատախնամի բժիշկի, անձնուիրարար դարմանելէ զառ ներկայացուած հիւանդները, յաճախ մեծագոյն զօրավիգը եղած է սոյն մարմիններուն գործունէութեան և յարատեւման նստ անգամներ անձամբ քացած, պրպտած է խաներու անկիւնները և գտած՝ լքուած, դարմանումի կարօտ չքաւոր հիւանդներ, որոնց բժշկական անխնայ հոգածութիւն ընելէ վերջ նիւթական օժանդակութիւն մ'ալ ըլլալուն պատճառ եղած է:

Այսքան վեհանձնորէն կատարուած մարդասիրական պարտականութիւն մը ոչ միայն անհամար աղքատներու երախտագիտական զգացումներովը պիտի դիմաւորուէր անտարակոյս, այլ և կազմուած ու լուծուած մարմիններն ու առհասարակ բոլոր թաղիցիյն գոհունակութեան ու շնորհակալութեան անհուն բաժին մը պիտի ունենային իրենց սրտին մէջ, յարգելի բժիշկին նըկատմամբ: Զգացում մը երախտագիտութեամբ խառն որով ներկայ մարմինը պատիւ է նկատած իրեն զինք ունենալ յետ այսու իբրեւ պատուակալ նախագահ Աղքատախնամին:

Իր իսկ ատենապետութեամբ յիշեալ մարմինը շատ փայլուն գործունէութիւն մը կ'ունենայ, հասոյթի նոր աղբիւրներ կը մտածէ, և այս շրջանին է որ որոշում կուտայ տարեգրքի մը հրատարակութեան, եւ հակառակ տըրուած այնքան կարճ ժամանակամիջոցին, անխոնջ աշխատութեամբ մը կը յաջողի իրականացնել սոյն ծրագիրը:

Պէտք է խոստովանիլ որ Գեր. Տ. Հմայեակ Ի. Վ. Պաթիթիյարեանը անձնական անուրանալի զոհողութիւններով զօրավիգ կ'ըլլայ սոյն գործին յաջողութեան, առանց նկատի առնելու ժամանակի անձկութիւնը սիրայօժար յանձն առնելով տարեգրքին կազմութեան զժուարին գործը: Եւ կը յաջողի ալ ի գլուխ հանել զայն:

* * *


Առժամեայ թաղական Խորհրդոյ հրատարակէն վերջ նոր կազմուած Թաղական Խորհուրդը զնահատական նամակով մը գրելով միեւնոյն կազմը նոյնութեամբ կրկին պաշտօնի կը կոչէ 13 Մարտ 932ին որ կը շարունակէ պաշտօնավարել յարգ, հետեւեալ կազմով.

Տիար Կարօ Ղազարեան	Ա. Ատենապետ
Տիկին Հայկանոյշ Գարամանեան	Բ. »
Տիար Սահակ Մանուէլեան	Ա. Ատենադպիր
Օրիորդ Կատարինէ Շատուրեան	Բ. »
» Բրիտինէ Գարամանեան	Գանձապահ
Տիար Յարութիւն Հանրմեան	Հաշուակալ
» Պետրոս Ֆրէնկեան	Անդամ
Օրիորդ Արմենուհի Աճէմեան	»
» Աղատուհի Փափաղեան	»
» Մառի Գործակատարեան	»
» Արշալոյս Չափանեան	»

Բանի մը ժողով վերջ Օր. Ա. Չափանեան իր անձնական գործերուն չափազանցութեան պատճառաւ կ'ստիպուի հրատարիլ և կազմը կը մնայ տասը հոգի:

Մեզ համար քիչ մը գժուար էր նախկին օգեւորութեամբ շարունակել





այս գործը, քանի որ կարգ մը նպատակաւոր և անհիմն ըսի ըսաւներ, իսկապէս ջլատելու ձգտած էին մեր եռանդը: Սակայն Աղքատախնամ գործին նուիրականութիւնը մեզ կ'ըստիպէ անտեսել բոլոր չարամիտ գրգռութիւնները ու կրկին փարիւ մարդասիրական այս գործին, բնական է մեր կարողութեան ներած չափով:

Եւ այսօր երբ Աղքատախնամի կազմութեան քսանեւէինգամակին առթիւ կ'որոշենք վերհրատարակել մեր «Զուարթնոց» Տարեգիրքին Բ. և Գ. միացեալ հատորը, եւ կ'որոշենք միեւնոյն ատեն 1932 տարւոյ Նոյեմբերին տօնել քսանեւէինգամակը Մարմնիս, ուրիշ նպատակ չունինք եթէ ոչ գաղափար մը տալ յարգելի հասարակութեան մեր գործունէութեան և ընդգրկած ուղիին մասին: Երկրորդ՝ աւելի կենսականը, նւթական հասոյթ մ'ապահովել թաղիս բազմաթիւ կարօտեալներուն, քանի որ չունինք հաստատ եկամուտներ: Միակ հասոյթը բացառիկ ջանքերով գլուխ հանուած այս ձեռնարկներէն պիտի գոյանայ թէեւ մեր անդօր ուսերը այս քան ծանր բեռան տակ միշտ կ'ըլլու հակամէտ է, սակայն ինչպէս ըսինք գործին նուիրականութիւնը և բարեսէր ազգայիններու եւ թաղեցիներու բարեացակամ ոգին քաջալերանք պիտի ըլլան եւ ոյժ պիտի տան մեզ որ կարենանք առանց ընկրկելու հասնիլ մեր ընդգրկած ուղիին գազաթնակէտին:

Մարմնիս գործունէութեան մասին քիչ մ'աւելի մանրամասն գաղափար տալու համար ստորեւ կուտանք դրամական վիճակագրութիւն մը վերջին քանի մը շրջաններու յատուկ:

Աղքատախնամը կազմութեան շրջանէն ի վեր չէ ունեցած հաստատ եկամուտ արտադրող կալուածներ և ըն. միակ հասոյթի աղբիւրները եղած են շրջագայուած պնակները, ամսավճարները և բացառիկ ու պատահական նուիրատուութիւնները:

Որով, 1926 Նոյեմբեր 28էն մինչեւ 1928 Նոյեմբեր 1, մօտ երկու տարւոյ գործունէութեան շրջանին Աղքատախնամը կ'ունենայ 752 ոսկի 85 զրէլ մուտք մը և 727 ոսկի 27 զրուշ ելք մը:

Իսկ 1929 Օգոստոսէն մինչեւ 1931 Սեպտեմբեր 13 կրկին մօտ երկու տարուայ գործունէութեան շրջանի մը Աղքատախնամը կ'ունենայ՝

Իբր մուտք	Ոսկի	Ղրուշ
Ամսավճարներէ	206	85.5
Պնակի հասոյթ	469	56.5
Նուիրատուութիւն	368	15.5
Փոխան ածուխի նուէր	146	72
Տարեգրքէ զուտ հասոյթ	187	75

1379 04.5

Իբր ելք	Ոսկի	Ղրուշ
Տեւական նպաստընկալներու	430	40
Բացառիկ աղքատներու	285	05.5
Դեղագիրներու	200	55
Ածուխի	94	70

1010 70.5

Այս շրջանէն սկսեալ ցարդ Աղքատախնամին կողմէ դրամանուած և խը-

նամուտ են 602 երկսեռ մեծ ու պզտիկ հիւանդներ որոնց 366 հոգին իգական սեռէ և 236ը արական: Այլքատախնամս իր պիւտէէին ներած չափով աշխատած է հիւանդները իրենց տեղւոյն վրայ դարմանել, ապահովելով իրենց բժշկական հոգածութիւն և մեռնող որպէս զի անոնք բեռ չըլլան Ազգ. Հիւանդանոցին վրայ: Իսկ բացառիկ պարագաներուն երբ հիւանդը զինքը խնամող մէկը չունենար, և կամ հիւանդութիւնը տեղւոյն վրայ դարմանել կարելի չըլլար, հարահատ կ'ստիպուէի զայն զրկել հիւանդանոց:

Այս առթիւ պարտք կը համարինք մեր մասնաւոր շնորհակալութիւնները յայտնել յարգելի ակնաբոյժներ Տեարք Տօքթ. Շահպաղեանին և Տօքթ. Միսաքեանին որոնք Այլքատախնամիս կողմէ իրենց զրկուած աչքի հիւանդները միշտ սիրայօժար՝ և մարդասիրաբար դարմանած են:

Միւս դարմանուած հիւանդութիւններու տեսակները. —


	Հիւանդ
Թոքային ուռականութիւն	100
Շնչական գործարաններու	115
Կրիբէ	121
Ստամոքսի	61
Սրտի հիւանդութիւնէ	33
Յօդացաւի	46
Երիկամունքի	30
Արզանդի	17
Ջղային	28
Արտաքին (վէրքի բուժման)	22
Մորթային	12
Սիֆիլիզ	7
Աչքի	10
	<hr/> 602

Իսկ 1931 Սեպտեմբերէն մինչեւ 1932 Մայիսի վերջը Մարմինս ունեցած է 603 ոսկի 27 շրշ. մուտք մը և 437 ոսկի 40 շրշ. ելք: Եւ այժմ Պատ. Թաղականութեան մօտ ունի հինէն ի վեր պահեստի գումարներէն գոյացած 116,70 ոսկի պահեստի գումար մը, կալուածոցին մօտ ի պահ դրուած 200 ոսկի, հատ մը 1911ի Եփիպտական ու հինգ հատ ալ Անատօլու Երկաթուղիի պարտաթուղթեր:

Այս առթիւ Մարմինս պարտք կը համարէ իրեն մասնաւոր շնորհակալութիւն յայտնելու յարգելի Թաղեցիներուն, որոնք ամէն առթիւ ո եւ է գիմուսի առջեւ աջակցելով մեզ, իրենց բարոյական ու նիւթական օժանդակութիւնը բերած են: Եւ վստահ ենք որ ա,ս անգամ ալ, մեր ձեռնարկը իրենց կողմէ բարեացակամութեամբ դիմաւորուելով գրքին սպառման համար իրենց Թանկագին աջակցութիւնը չտրուի զանաւ:



Կ. ՓԱՇՍԻ ԲԱՂ, ԽՈՐՀՈՒՐԴԻ ՆԵՐՎԱՅ ԿԱԶՄԷ
 Քալիւն սպ նուած՝ Լորդֆէր Պարմագեան (Բ. Ասեմպիս), Երուսեղ Յիւզիսեան (Ա. Ասեմպիս), Աստուածատուր Գարակեօզեան, Քալիւն սպ ոսկի վրայ՝ Կարապետ Գալստիան, Օճիկ Պարթիպանեան (Գալստիան) և Պօրոնեան (Ա. Ասեմպիս):



Ազնուաշուք Տիար Աստուսյան և Պատ. Անդրապատ Աղստախանյան Մարմնոյ
Կեցիկ Փաշա

Ստանալով Ձեր Յուլիս 14 թիւ
նամակն՝ հասու եղայ թէ՛ թաղիս
ժրջանն Աղքատսխանյան մարմինը
երբեմնի «Ձուարթնոց» անուն
գրքին կրկնութիւնը այս անգամ
ևս փափաք ունեցած է անգամ
մը եւս ի լոյս բերել, յօգուտ և
ի նպաստ կարօտ աղքատաց: Ո-
րուն համար յարմար տեսած էիք
ունենալ իմ նկարս ալ իբր թա-
ղին օրուն անարժան ֆարո-
զիչը:



ԵՋՆԻԿ Ծ. ՎՐԴ. ՊԱՊԱԵԱՆ

Ձեր իմ մասին ցոյց տուած
յարգանքը՝ տեղի տուաւ մեզ
անգամ մ'եւս կրկնել այն օրհնու-
թիւնները որ արդէն ընդմիշտ
մեծ գոհունակութեամբ հետեւե-
լով Ձեր աղքատասէր բարեմօյն
գործունէութեանց չէի դադրած
յատենի Ս. Եկեղեցւոյ հայրական
մաղթանքներս ու շնորհակալու-
թիւններս յայտնել առ ի քաջա-
յերութիւն Ձեր փութաջան և
աղքատասէր զգացմանց:

Արդ՝ այժմ ի՞նչ նոյն այն հայրական մաղթանօք նորանոր յաջողութիւն-
ներ ցանկանալով միանգամայն իւրաքանչիւր անդամոցը համար իբր տիրա-
տուր գնահատելի աշխատութեանց Աստուածային վարձատրութիւնը կը
հայցեմ յաջողութիւն, կարողութիւն մաղթելով: Պատիւ կը սեպեմ ներփակ-
եալ կենդանագիրս Ձեզ զրկել եթէ երբեք հնար է գոհացում տալ Ձեր
փափաքանաց, հանդերձ շնորհակալութեամբ և օրհնութեամբ՝

Մնամ միշտ աղօթարար
լրութեան Ազգիս Հայոց
Քարոզիչ Ս. Յովհաննէս Եկեղեցւոյ
ԵՋՆԻԿ Ծ. ՎՐԴ. ՊԱՊԱԵԱՆ

1901 10 10 10 10 10 10

1901 10 10 10 10 10 10

1901 10 10 10 10 10 10

1901 10 10 10 10 10 10

1901 10 10 10 10 10 10



ပြန်ပေးရန်

Անհուն հանոյ՞ով եւ հպարտութեամբ կ'օժտեն մեր գիրքը սոյն յօրուածով զոր այն-
ժամ ազնուօրէն եւ իմաստութեամբ յեցուն ոգիով մը բարեհաճած է գրել մե-
ծայարգ Ասենապետը մեր Ազգ. Ընդհ. Ժողովոյ:

Նկատի ունենալով իր անցուցած երկարատեւ անհանգստութիւնը եւ սակաւին
հանգիստի հաւանական պէտքը, գրեթէ անյոյս խնդրանք մըն էինք ըրեր իրեն ու-
նենալու համար իր այնքան յարգելի ու համայն ազգէն փնտրուած **դասը**: Բայց
անս ան կը պատահանէ մեզ մեծութեամբը ամբողջ իր խորքին զոհեղով շատ
հաւանաբար իր հանգիստն ալ, — «Գեռ մասնեռ բոլորովին չեն հպատակիր ինձ
գրելու համար» կը գրէր ան մեզի, յայտնի էր որ, դեռ նոր ապաքինման համբուն
մէջ, յարգելի Բրոճէտօրը պէտք ունէր ամէն բանէ առաջ հանգիստի, եւ սակայն
կը զոհէր զայն չգրկելու համար մեզ իր այնքան քանկ գրութեանէն, հոս, անստուի
մը պատմութեան կապելով ինչ որ կայ իբր կատարելագոյն իսէալ մարդկութեան
համար, եւ ինչ որ ինք սնուցած, մեծցուցած ու ապրած է բոլորէն առաջ իր
մեծ մարդու բովանդակ խորքին մէջ:

Ս Է Ն - Ք Լ Ո Ւ Ի Ա Ն Տ Ա Ռ Ը

Իմ այժմու ընտելալարին մօտիկն է Սէն Քլոտի աշխարհահռչակ անտա-
ռը, ուր կ'երթամ յաճախ, երբեմն օրը երկէցս, առաւօտ եւ յետ միջառուր.
Ժառերուն տակ նստարանի մը վրայ հանգչելու, մերթ ընթերցման պարա-
պելով, մերթ ծանօթներու հետ շաղակերտելով, միշտ մաքուր օդը ծծելով
եւ շուրջանակի վայելչութիւնն ըմբոշխնելով:

Սէն Քլոտ փարիզ քաղաքին ամէնէն հին ու ամէնէն շքեղ արուարձան-
ներէն մին է, Սէն գետի ափանց վրայ տարածուած, Սէվուի դրկից դրացին:
Հոս կը կանգնէր կայսերական հոյակապ դղերակը, ուր կը բնակէր նախապէս
Լուգուլիոս Չորքտասաներորդի եղբայրը, ծանօթ իբր Monsieur: Մառի Ան-
թուանէթ ապա տիրացաւ անոր, եւ հոն էր որ Պոնաբարթ կայսր հռչակուե-
ցաւ:

Հայր Յովհաննէս Թորոսեան, իմ պատուական հայրենակիցս եւ յարգելի
բարեկամս, — որ իբր Միխիթարեան պատասխանատու պաշտօններ վարած է
թէ՛ ի Պօլիս եւ թէ՛ այլուր, եւ բազմաթիւ տարիներ Աբբահօր մահէն վերջ
աթուակալ եղած է Ս. Ղազարու վանքին մէջ եւ ներկայիս մեծա-
ւորն է Մուրատեան վարժարանին Սէվուի մէջ, — ինձ կը պատմէր թէ
այս դղերակը մասնաւոր նշանակութիւն մ'ունի իրենց եւ մեր համօրէն ազգին
համար, քանի որ հոն էր որ Նաբուլէօն Պոնաբարթ ստորագրած էր իր հրա-
մանագիրը, ազատ կացուցանելու համար Միխիթարեան Միաբանութիւնը,
երբ ուրիշ Միաբանութիւններ իտալիոյ մէջ ցրուելու կը դատապարտուէին:

Փրուսիացիք այրեցին այս դղերակը 1871ին, երբ փարիզ մտան յաղթա-
կանօրէն, եւ տիրատեսիլ աւերակներն մաքրուեցան 1893ին, ու փառայեղ
հրապարակի մը վերածուեցաւ ծաղկազարդ աճաններով, արձաններով, ազ-
րիւններով պնտուած: Ի՞նչ պատմական յիշատակներ դուրսդուած են այս

դղեակին հետ ֆրոնտայիք, որ կ'ատեն այս յիշատակները, կործանելին չենք, բայց անկարող են ջնջել նաև պատմութիւնը:

Այս դղեակին յարակից էր Սէն Քլուէի անտառը, որ Սէնի ափերէն կը տարածուէր դէպի վեր մօտակայ բլուրը, մինչև այդ բլուրին բարձրագոյն գագաթը և յայնկոյս: Չորս հարիւր եկամար, իբր ութը հարիւր արտավար, ընդարձակութիւն մ'ունի, ծառերու խիտ շարքերով, անցքերով, ջրվէժներով արձաններով զարդարուած այլեւայլ ոճով աւազաններով: Անցքերուն մէջ տեղ տեղ ծառերուն ճիւղերը երկուստեք կը միանան իրարու և կը կազմեն դալարագեղ կամար մը անցորդին գլխուն վերեւ պաշտպանելով զինքը թէ՛ անձրեւէն և թէ՛ արեւուն ճառագայթներէն:

Բազմաթիւ են ծառերուն տեսակները, կաղնի, շոճի, բարտի, բայց մեծագոյն մասը սղոցի Ծառեր կան որ արդէն ճերայած են, և իրենց վերջին տարիներն է որ կ'աղբին յայտնապէս: Ուրիշներ, նորատունկ, իրենց մատուղաշ տարիքին առուղութեամբ, կ'աճին, կ'ուռ ճանան և կը պատրաստուին փոխանորդելու իրենց նախահայրերը, որք սահմանուած են տապալելու ընդհուպ:

Ո՛րքան ախորժելի է թռչուններուն խանդալից երգահանգէսին ունկընդերել այս անտառին մէջ: Բազմաթիւ են այս թռչունները և բազմատեսակ. անվախ՝ վասն զի ոչ ոք կայ զիրենք հարուածող կամ հալածող: Իւրաքանչիւրը ունի իր ցեղին յատուկ երգը, խառնիխուռն և ուժգին, այլև ներշնչանակ: Ախորժելի է ինձ համար ի մասնաւորի ունկնդրել իրենց, ո՛չ միայն որովհետեւ ախորժալուր են, այլ նաև և մանաւանդ որ կը յիշեցնեն ինձ իմ մանկութեանս օրերն իմ սիրական գիւղիս մէջ: Ինչ շեշտեր որ կը լսէի, երբ մեր պարտէզներուն ու այգիներուն մէջ կը դեզերէի, նոյն ընտանի շեշտերն են՝ որ կը լսեմ հոս: Մարդիկ եւս կը խօսին լեզու մը, որ իմ մանկութեանս մայրենի լեզուն չէ: Երկրէ երկիր կը տարբերին բարքերն ու լեզուները: Թռչունները կը դալարային այնպէս ինչպէս մեր պուրակներուն մէջ, հաւերը կը կթկթան, արագաղները կը խօսին այնպէս ինչպէս մեր հաւնոցներուն մէջ, շուները իրենց հաչիւնը կը պոթիկան այնպէս ինչպէս մեր փողոցներուն մէջ, կատունները կը մլաւեն, կը մուլտան այնպէս ինչպէս մեր բնակարաններուն, անկիւններուն մէջ, սիրասուն մանկիկները կը ճուռողեն այնպէս ինչպէս մեր տուններուն անեակներուն մէջ, ևն, ևն., և այս ամէնը, գիշեր թէ ցերեկ, յարկի մը մէջ թէ բացօթեայ ծառերուն տակ, իմ մտքիս մէջ կը զարթուցանեն գողտրիկ յիշատակներ, որ կը յուզեն զիս ի խորոց:

Ես ալ մին եմ անտնցմէ, որ սրտագին հաճոյք մը կ'զգան անտառէն, հաճոյք մը՝ խոր ու ինքնայատուկ: Անտառին խորհրդաւորութիւնը, իր ստուերոտ աչքերը, խիտ շարքը ուղղաբերձ ծառերու, որ յաղթականօրէն պայքարած են մթնոլորտային ամէն կարգի յարձակումներու դէմ և տարիներով տոկայած, սոսափիւնը անհամար տերեւներուն, այս ամէնը անոյշ լծէեւ յաճախ մեկամաղձոտ տպաւորութիւն մը կը ներգործէ մեր վրայ, և այդ պատճառաւ էր որ երբեմն հաճոյքով կը թափառէի, կը մոլորէի Պէլլորատի և Ալէմտաղի ընդարձակ անտառներուն մէջ:

Սակաւաթիւ շին անտառները ամէն երկրի մէջ, ընդարձակ ու ճոխ անտառներով շրջապատուած է այն վայրը, ուր ես ամիսներէ ի վեր կը բնակիմ, և խիտ ու յաղթանդամ ծառերը, որ իմ պատուհանիս առջև խրոխտօրէն կը բարձրանան, լայնածաւալ անտառի մը նմանութիւնը կը կրեն: Բայց եզական է Սէն Քլուէի անտառը իր շքեղութեամբ ու մեծավայելութեամբ: Յրանսական յաջորդական ինքնակալներն, որոնց կալուածն եղած է այն,



ՔՐՕՅ. ԱԲՐԱՀԱՄ ՏԷՐ ՅԱԿՈԲԵԱՆ

ոչինչ խնայած են իրենց առաստիւլական հարստութենէն անոր չքնադուլթեան համար, և այսօր այնպիսիք որ այլ և այլ երկիրներ ճամբորդած են լայնօրէն, ու այդ երկիրներուն զանազան տեսարաններուն ծանօթացած են մտերմօրէն, կը հաստատեն թէ ոչինչ տեսած են այլուր Սէն Քլուի անտառին նման, թէ աննման է այս անտառը իր տեսակին մէջ:

Արքունիքը իրեն յատուկ հաճոյքին ու վայելքին համար պատրաստած էր այս անտառը, արքունիքին զբօսանքի, պտոյտի, որսորդութեան վայրը: Ի՞նչ վեհաշուք անձինք ձեւած են անոր անցքերուն մէջ: Ի՞նչ խնջոյքներու, հանդէսներու ականատես եղած են այն հնամեայ ծառերը, որոնց ճիւղերն այժմ կը տարուբերին ամէն հովէ, և ի՞նչ դէպքեր կընային անոնք մեզ պատմել հիմա, եթէ կարող ըլլային խօսիլ:

Պարիսպներով պաշտպանուած էր բովանդակ անտառը, և միայն արքունական ընտանիքը, իշխանք սւ իշխանուհիք իրաւունք ունէին մուտ գործելու հոն իր սիգապանծ դուռներէն:

Իսկ հիմա:

Ահա իր ներկայ կացութիւնն է որ շատ մը լուրջ խորհրդածութիւններ կը թելադրէ մեզ:

Պանծալից զղեակը հիմնայատակ կործանած, վաղեմի փառքերն անհետացած, կը մնան դեռ սէգ ու այլամերժ դուռներն անտառի, բայց ժողովուրդը, ամէն դասակարգի ու հասակի անձինք մուտ կը գործեն հոն ազատօրէն: Այն հասարակ ժողովուրդը որ երբեմն հազիւ կը համարձակէր իր աչքերը բարձրացնելով դէպի այն՝ անոր գեղն ու շնորհն դիտելու համար, անոր իրական տէրն ու տիրականն է դարձած այսօր: Արդարեւ հարուստ կտուքեր այսօր ալ կը բերեն փարիզէն ու արուարձաններէն փարթամ պարտներ ու նազելաշուք տիկիւններ, որ կուգան հոն առողջ օդ ու ակնապարար տեսարաններ փնտռելու, բայց ալքատն ալ, ընկերութեան յետին անդամն ալ ունի այդ իրաւունքը հաւասարապէս: Այդ երբեմնի արքունի անտառին մէջ, այսօր բացուած են ասփալթով ծածկուած պողոտաներ, ուր ինքնաշարժներն ու հեծելանիւններ կը սուրան անդադար: Մանուկներու խինդն ու ծիծաղը կը լսուի հոս հոն: Ստուերներու մէջ ընկողմանած են շատեր: Շատեր հոս դալարիքին վրայ բազմած՝ զբաղած են իրենց ուտելիքովն ու ըմպելիքովը: Երիտասարդներ մարզական խաղերով կ'զբօսնուն: Կանայք իրենց ձեռագործովն կը պարսպին ընթերցման մէջ են մխրճուած ու մանք, և ո՛չ ուրեք լուրովիկո մը, Պօնաբարթ մը, որ իր սպառնալից հայեացքով ու իր շաշոյ խաղաղանով ահաբեկէ այս գոեհիկ այցելուները և ի փախուստ մատնէ զանոնք սարսափահար:

Այս ժողովրդեան նախահայրերը գրեթէ դար մը առաջ, ո՛չ եւս կարող ըլլալով հանդուրժել բռնակալութեան ծանր թաթը որ կը ճնշէր գիրենք ա՛յնքան անդթօրէն, սկսան **Ազատութիւն, Հաւասարութիւն, Եղբայրութիւն**, գոռալ անաւոր տեսարաններու ու սահմուկեցուցիչ արեան ճապարհներու մէջ: Արդեօք այդ բառերը կը ներկայացնէին խաբուսիկ երազ մը, որ յօդս պիտի ցնդէր յաջորդ վայրկեանին պատրանքի ու յուսախաբութեան անախորժ դառնութիւնը միայն թողով իրեն զինի: Ազգաժողով մը կ'զբաղեցնեն հիմա ալ մեր խորհուրդները: Եւրոպական ազգերու գաղնակցութեան դաղափարը կը տատանի մեր աչաց առջեւ: Արդեօք այս ամէնը երազ մ'է, որ գոյութիւն ունի միայն երազատեսներու գանկին մէջ և դատապարտուած է խաղառսպուռ անհետանալու ընդհուպ: Ո՛չ, երազ մը չէ՛ անամէջ:

այլ տեսիլ մը փառայել, որ անյեղլիօրէն սահմանուած է մարմնանալու, իրականանալու: Ե՞րբ: Մարդկային միտքը ստակ չէ ճշդել այդ հարցման պատասխանը:

Բայց կը խրախուսեն, կը սրտապնդեն զմեզ անցելոյն պատմութեան անժխտելի դասերը: Անդադրում բարելաւման ընթացք մ'եղած է մարդկային սեռին պատմութիւնը ամէնէն նախնական ժամանակներէն մինչեւ այսօր: Մէկը որ պատեհութիւն ունի Սէն Գլուի ծառերուն տակ խոկալու, ու իր շուրջը պարզուող տեսարաններուն վրայ զմայլելու, չէ կարող չը յիշել թէ ի՞նչ նշանակալից փոփոխութիւններ տեղի ունեցած են այս երկրին մէջ, փոփոխութիւններ՝ զորս երազելոյն իսկ աններելի յիմարութիւն մը պիտի համարուէր երբեմն: Ի՞նչ նոյնօրինակ փոփոխութիւններ ամենուրեք: Ի՞նչ ծանրակշիռ փոփոխութիւններ մեր օրերուն, մեր աչքերուն առջեւ: Միշտ ծանրակշիռ փոփոխութիւններ մեր օրերուն, մեր աչքերուն առջեւ: Միշտ անխառն լուսազօյնը: Մենք ենթականերն ենք այդ փոփոխութեանց եւ լաւէն դէպի լուսազօյնը: Մենք ենթականերն ենք այդ փոփոխութեանց եւ հետեւաբար չենք կարող ըստ արժանւոյն կշռելու, գնահատելու զանոնք, ինչպէս պիտի կշռեն ու գնահատեն յաջորդ սերունդներ իրենց խաղաղ պահերուն մէջ:

Բնական օրէնք մը կայ, որ անա՛ ի տես կուգայ մարդկային տեսութեան հորիզոնին վերեւ յամր այլ յարատեւ ու անդիմադրելի: Անհատը գիտակցօրէն կամ անգիտակցօրէն, կամայ կամ ակամայ ճակատագրուած է իր սեռին ծառայելու: Բնութիւնը յայտնապէս սեռն ու ցեղն է որ ունի ի նկատի և ո՛չ թէ անհատը: Անհատը իր դէրը կը կատարէ և կ'աներեւութանայ Յեղը կը յարատեւէ: Այսպէս է կենդանին, այսպէս է մարդը:

Արդարեւ յոյժ զօրաւոր բնազդ մ'է նաև եսականութիւնը, ևսին սէրն ու պաշտպանութիւնը, առանց որոյ անհատը գիւրաւ պիտի թարչամէր, թառամէր յաճախ առանց ուռճանալու: Բայց սա որոջ կը թուի թէ նոյն իսկ այդ եսականութիւնն ու անհատապաշտութիւնը սահմանուած է ցեղին օգտին ու զարգացման ծառայելու:

Ծառայութիւն, այլասիրութիւն, յօգուտ մեր ընկերին անձնամոռաց աշխատանք, անա՛ ինչ որ կը հրամայէ բնութիւնը, անա՛ ինչ որ անյողզողօրէնք մ'է բնութեան:

Այդ օրէնքին է որ կը հպատակի կէտիկ փաշայի ձեր Ազքատասխամը ինչպէս կը հպատակին բոլոր նմանօրինակ հաստատութիւններ ու ընկերակցութիւններ: Այս օրէնքն է որ Քրիստոնէութիւնը այնքան յստակօրէն պարզեց ու ուժգնօրէն շեշտեց:

Աշխարհ գեռ պատրաստ չէ այս օրէնքը լիովին ըմբռնելու: Աւելի նուազ պատրաստ է զայն իւրացնելու և կիրարկելու: Բայց օրէնքին ուժը չը նուազիր: Օրէնքը չը շեղիր: Մարդիկ կրնան անտեսել զայն, ըմբոստանալ անոր դէմ և հետեւը բայց օրէնքը կը յառաջանայ հաստատ քայլերով հակառակ ամէն խոչնդոտի: Ապագան ու լիախատար յայլթանալն անորն է անվարան: Խիստ է խթանին դէմ աքացել:

Յեղը, հաստատութիւնը և ո՛չ թէ անհատը: «Թագաւորը մեռաւ, կեցցէ թագաւորը»:

Ուրիշ իրողութիւն մ'ալ կը պարունակէ այս օրէնքը, իրողութիւն մը՝ որուն աշխարհ տակաւին բոլորովին անպատրաստ կ'երեւի մօտենալու: Միեւեռ նոյն բնական օրէնքը կը տիրապետէ ո՛չ միայն անհատին և իր համայնքին յարաբերութեանց մէջ, այլ նաև ազգերու, պետութեանց յարաբերութեանց մէջ ընդհանուր մարդկային ցեղին հետ: Ազգերն ու պետութիւններն ալ ան

հա ոներու նման դեր մ'ունին կատարելու. և երբ այդ դերը կ'աւարտի, կը լուծուին, կը քայքայուին ճակատագրականօրէն: Բայց մարդկային ցեղը կ'ընթանայ յառաջ:

«Իմա չէ՞ այս Բարեւոյնը իր ամբակուռ պարխպներովն ու անառիկ ամբողջներովն, իր անսպառ փարթամութեամբը» Այո՛, քուկդ է այն հիմա, բայց դուն ալ, քու Բարեւոյնդ ալ պիտի տապալիք, անչքանաք, անհետանաք, երբ արդէն կատարած էք ձեր գործը: Մարդկութիւնը պիտի քալէ, զօրանայ ու զարգանայ հետզհետէ:

Իրենց համար չէ որ կ'ապրին ազգեր ու պետութիւնք, այլ համայն մարդկութեան բարօրութեան համար: Միջազգայնականութիւն, ազգերու, համերաշխ գործակցութիւն, այս է բնութեան պահանջը, և դէպի հոն կ'ընթանայ պատմութեան հոսանքը անդիմադրելի թափով:

«Մի հօտ և մի հովիւ», — այս է բնութեան անդառնալի վճիռը:

Եւ ո՛րչափ շուտ ըմբռնեն ու իւրացնեն այս էական սկզբունքը ազգք և աղինք, այնչափ աւելի պիտի փութացնեն իրենց ճշմարիտ երջանկութեան թուականը:

Ահա քանի մը խորհրդածութիւններ, զորս կը թելագրէ մեր զրացի Սէն Քլուի անտառը:

ԱՐՐ. ՏԵՐ ՅԱԿՈՒԲԵԱՆ

Բարիկ
24 Յունիս 1932



ՓՈՒԱԴԱՐՁ ՎՍՏԱՀՈՒԹԻՒՆ

ԵՒ

ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՐԿԵՇՏՈՒԹԻՒՆ

Այսպարհ պէտք ունի խաղաղութեան ֆալաքականութիւնը իր բազմաբարդ պահանջներովը՝ կը դժուարացնէ շրջադարձութիւնը կեանքի մեքենային: Անհատն ու ընկերութիւնը ծանրաբեռնուած են աննախընթաց մտահոգութիւններով: Ոյժերու անաւոր դերսպառում մը այլապէս կը խախտեն գոյութեան հաւասարակշռութիւնը: Դարուն մեքենականութիւնը, որ շանցեալի հանդարտիկ քալքը վերածած է հեւ ի հեւ վազքի մը, ուղիւնով նուազեցած է կեանքի անհարթութիւններն ու հոգեկան ընկճումները: Հին տնտեսութիւնը, նոր գործօններով եւ գործելակերպով, կ'առաջնորդէ ընդհանրապէս այսօր ալ հին ու նոր աշխարհները վաղեմի աւանդութեանց ուղի կտրելով է անուղիղի ներշնչումներով: Գիւտերու եւ լոյսի դարը դեռ չէ ձեռք բերած իր ապահարզանը Սովորովէն ու խաւարէն, որոնց առհաւուրութեամբ կը տառապի մեր պառաւ աշխարհը:

Ձեռք անգիտանալ հրաշալիքները՝ որոնցմով ճոխացած է մեր դարը: Իմացականութիւնը կատարած է իր հսկայական նուաճումները ամէն մարդի մէջ: Ժամանակաշրջանը, ուր կ'ապրինք, ձերբազատ ան դարն է արդարեւ: Ազատ խորհուրդութիւնը նախապաշարունակութեամբ դէմ: Ասիկա ճշմարտութեան մէկ երեսն է սակայն:

Անհատն ու ընկերութիւնը ըստ երեւոյթից նոյնը չեն այսօր՝ ինչ որ էին երէկ: Ընդհանուր ահեարկ մը ներկայի քաղաքակրթութեանց եւ անցեալի վրայ՝ բաւական է ճշմարտելու այս յարակարծիքը: Մարդկային ընդունակութիւնները այսօր անչափելի համեմատութեամբ ընդլայնուած տարողութեան մ'են հասեր: Տեսողութիւնը թափանցած է անհունապէս մեծին ու հեռաւորին եւ անբաժանելիօրէն փոքրին ու անընդմիջաբար մօտաւորին գաղտնիքներուն, անջրպետի արգելքները վերացնող տեսանողական ներդուրութեամբ մը՝ զոր կուտան մեզի հեռադիտակն ու մանրադիտակը: Կողմութիւնը օժտուած է ընդունարանով մը, ուր անմուռն օդալիքները աշխարհի ձայները կը հաղորդեն հարազատութեամբ եւ ահիթարթային արագութեամբ: Ձեռքն ու ոտքը իրենց մղիչ ու շարժիչ ոյժերը փոխանցած են մեքենաներու՝ որոնք ժամերը կը վերածեն մանրերկրորդներու եւ մղոնները՝ ոտնաչափերու: Մարդիկ կարծես կը մրցին այն երագութեան հետ՝ զոր աշխարհի եւ աշխարհներու հողովումները կը ներկայացնեն «պարապոլութիւն» կոչուած անսահման լեցնութեան մէջ: Ինչ պիտի ըլլար սակայն ճակատագիրը գոնէ մեր երկրին, եթէ իր թաւալման աստիճանաչափը մէկ հազարերորդով աճէր, աւելի ճիշդ՝ անցնէր ընականոն արագութիւնը:

Մեր անհատական եւ ընկերային ընդունակութեանց գերաճումը ֆիզիկական — մեքենական նուաճումներու մէջ՝ չի անբողջացներ դժբախտաբար մարդկային տիպար քաղաքակրթութիւնը՝ զոր պիտի ուղէինք երազել: Մեր հոգեկան արժէքներու մեքենական խաղաղութիւնները նոյն իսկ մասամբ կը չեղաքացնեն մեր աշխուհական ձգտումները դէպի աննիւթական ստացութիւնը գաղափարապաշտ կեանքի մը վայելքներուն: Եւ հանգստաւետ պայմաններն իսկ, որոնցմով կեանքը կը փորձեն դառնել աւելի տանելի ու հաճելի, չեն նուազեցնէր տաժանը: Վասն զի անհատն ու ընկերութիւնը նոյն չըլլալով ըստ երեւոյթի, ինչպէս ըսինք, նոյն են տակաւին ըստ էութեան: Անհատն ու ընկերութիւնը, այսօր աւելի քան երբեք, կը կարօտին խաղաղութեան, կը հեծեն խաղաղութեան համար: Տխուր նշան է խաղաղութիւնը չկայ, թէ ան հեռու է շատ: Ձի անհատ եւ ընկերութիւն անհաշտ են իրենք իրենց մէջ եւ իրարու հետ: Ձի մարդը դեռ չէ լաջոյած կերտել համարողկային անհատականութիւն մը: Յեղային եւ ազգային այլամերժ անհատապաշտութիւններ, հասակ առած եւ կոչացած անձնական անհատապաշտութիւններէ, կը բնորոշեն ներկայ դարն ու քաղաքակրթութիւնը:

Յարձակողական եւ պաշտպանողական բոլոր սպառազինումները, որոնք կ'սպառեն մարդկային ֆիզիքական եւ հոգեկան ոյժերու ներգործոյթները (energie), նպատակ ունին հաւերժացնելու ցեղային ու ազգային անհատապաշտութիւնները: Խրամատը՝ ցեղերու եւ ազգերու միջև՝ կը մնայ բաց եւ կ'ընդլայնի հետզհետէ: Քաղաքակրթութիւնը կը ձգէ անոր վրայ, ճիշտ է, կամուրջ մը, որ սակայն առասպելական Ձինվաթը կ'իրականացնէ ազգերու փոխարարութեանց միջեւ, յաճախ մազէ մ'աւելի բարակ, արդարեւ կ'ուզենք ակնարկել դիւանագիտութեան:

Ի՞նչ կը ներկայացնէ այդ դիւանագիտութիւնը ստուգիւ:— Պայմանադրական կեղծիքը՝ որ ունի քաղաքակրթութեան բոլոր բարձունքները: Կրնանք ըսել անվարան այլ ամօթով թէ ան ներկայ քաղաքակրթութեան մշակած ու նրբացուցած նոր պատկերն է հին բարբարոսութեան: Տիրապետութեան անկուշտ ցանկութիւնն է այն, որ կը լափէ Ժողովուրդները, կ'սպաննէ ժամանակը: կը շահագործէ աշխատանքը անմար հզօրին. զի իրական հզօրը — ոյժերու աղբիւրը — նիւթական տնտեսութեան մէջ՝ ողջակիզող աշխատաւորն է: Իմացական առաջնորդները — նոյն իսկ գաղափարախօսները — բազիկ եւ ջիդի խաղաղութեանց մէջ՝ տկար այդ ոյժին է որ կը կռթնին այդ զօրութիւնն է որ շարժման մէջ կը դնեն:

Ընկերային — տնտեսական ներկայ քառսին մէջ, ուսկից երբեմն լոյսի յանկարծական փայլատակումներ կ'երբեին, խաղաղութիւնը կը մնայ ըղձակէտ մը: Ընկճուածներու յերարանը եւ մերթ լծակը արգար ըմբոստացումներու իրական խաղաղասէրները չեն անոնք՝ որ խաղաղութիւնը կը ջատագովին, կը բանաձեւեն ու . . . կ'սպառազինեն. այլ անոնք՝ որ զայն կուզեն, որոնցմէ յափշտակուած է այն:

Եւ խաղաղութիւնը չի՞ դարձնէ Յեղային եւ ազգային անհատապաշտութիւններ, առաջնորդուած զօրաւորին իրաւունքով, կը դանդաչեցնեն ու կ'արգելեն խաղաղութեան յառաջընթացըն ու գալուստը: Փոխադարձ անվստահութիւն եւ աշխարհաքաղաքացիական անդարկելուութիւն, ծնած ու զօրացած ցեղային ու ազգային անհատապաշտութիւններէն, կը բազմապատկեն թուղթէ ցանցերը — դաշնագրութիւնները —, ծածկելու համար առաւելապէս պատերազմներ ողբկոչող սպառազինումները:

Հերպերտ Հուլըր Ամերիկայի Նախագահը, այդ ցանցը մասամբ պատ-
ռելու փորձ մը կ'ընէ իր վե'րջին պատգամովը, ընդհանուր սպառազինմանց
մէկ-երրորդի զեզը առաջարկելով:

«Ժամանակը եկածէ—կ'ըսէ իր քառամեայ պաշտօնավարութեանի՝ վերջակէ
տին հասած նախագահը—որ մենք որդեգրենք աւելի լայն ու վճռական մեթոտ
մը՝ կրճատելու սպառազինման ճնշող բեռը՝ որ կը ծանրանայ աշխարհի աշխա-
տաւորներու ուսին: Ասիկայ պիտի ըլլայ ամենակարեւոր մէկ քայլը զոր աշխարհ
պիտի կրնայ առնել՝ փութացնելու համար տնտեսական վերականգնումը: Մենք
պէտք է ճանրայ բանանք ընդդէմ փոխադարձ վախի եւ ներդաշնակօրէն գոր-
ծագրութեան պակասին, արդիւնք պատերազմական սպառազինման, որոնք
կ'սպաննեն մարդկային վստահութիւնը աշխարհի մէկ ծայրէն միւսը»:

Մասամբ ըսի, վասն զի 15,000,000,000-ի խնայողութիւնն ապահովեց
այս խելացի եւ գործնական առաջարկը դէռ չի երաշխաւորեր վճռական-
խաղաղութիւնը. վասն զի այսպիսի քայլ մը թէեւ «մեծապէս պիտի կրճատ-
—ինչպէս կը հաւաստէ նախագահը—յարձակողական ոյժը բաղդատմամբ
պաշտպանողական ոյժին բոլոր ազգերուն մէջ», բայց քանի տակաւին կայ ու
կը մնայ պաշտպանողական անհրաժեշտութիւնը, «տիկա կը նշանակէ անվստա-
հութեան նուիրականացումն ու տեւականացումը: Եւ որչափ ատեն կայ փոխա-
դարձ անվստահութիւնը պիտի ըլլայ նաեւ աշխարհարտադարացիական ան-
պարկեշտութիւնը, ուրիշ խօսքով՝ զաղտնի դիւանագիտութիւնը, ընկերային չա-
րիքներու գլխաւոր մէկ ծարիքը կամ ծրարը կայսարդական»:

Եթէ իշխանաւորները, ժողովուրդներու եւ մասնաւորապէս աշխատաւոր-
ներու նման, կ'ազնն իրական խաղաղութիւնը պէտք է անկեղծօրէն մօտե-
նան հարցին, տեսնեն բուն վերքը, գտնեն դարմանը, փոխեն ընկերային
քմբռնումները, կերտեն ու զօրացնեն համաարդկային անհատականութիւն
մը, սպառազինելով դայն փոխադարձ վստահութեամբ եւ աշխարհաքաղաքա-
ցիական պարկեշտութեամբ, ջն'ջելով եւ ոչ թէ կրճատելով ռազմական բոլո-
սպառազինումները եւ ստեղծելով հոգեկան եւ բարոյական արժէքներու վրամ
հիմնուած նոր ու արդար հասարակարգ մը:

Դաստեարակչական ներկայ ոգին ու ծրագիրը փոփոխելու եւ դանտնք
ընդհանուր ուղղութեամբ մը վերակազմելու անհատեշտութիւնը պէտք է
չարժեն ընկերային ամբողջ մեքենան՝ աշուարհի ամէն կողմերը եւ բոլոր
ժողովուրդներու մէջ:

ԳԱՐԵԳԻՆ ԵՊԻՍԿ. ՏՐԱՊԻԶՈՆՏԻ

24 Յունիս 1932
Օբլեկնո. Գաղիֆոռնիա



ԱԶԳԵՐՈՒ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԴՊՐՈՑԸ

1923 Սեպտեմբերին, Ազգերու Ընկերութիւնը հետեւեալ որոշումը կ'ըն-
դունէր.

«Ժողովս թախանձանօք կը խնդրէ անդամ պետութեանց կառավարու-
թիւններէն միջոցներ ձեռք առնել՝ իրենց երկիրներու տղոց եւ երիտա-
սասուններուն ծանօթացնելու համար, հոն՝ ուր այս մտօք ուսուցում մը չա-
ւանդուիր, Ազգերու Ընկերութեան գոյութիւնը եւ նպատակները, ինչպէս
նաեւ անոր Ուխտին բառերը»:

Թէեւ այս պատգամագիրը անմիջապէս բարենշան նախաձեռնութիւններ
բուսցուց շատ մը երկիրներու մէջ, Ազգերու Ընկերութեան ժողովը յարմար
դատեց զայն նորոգել 1924ին, մասնաւորապէս շեշտելով, այս անգամ, իմա-
ցական գործակցութեան կարեւորութիւնը:

Ձեռ գիտեր թէ հայերէն լեզուաւ հրատարակուած ո եւ է օրաթերթ
կամ պարբերութիւն մտածած է մինչեւ հիմա ժողովուրդին ծանօթացնել
բովանդակածի կերպով առաւել կամ նուազ մանրամասնօրէն Մեծ Պատե-
րագմին վախճանին յաջորդող տարին իսկ հիմնուած այս ձեռնարկը՝ որ,
ինչ որ ալ ըսեն իր քննադատները, կը հաւատամ թէ պատմական մեծագոյն
ձեռնարկն է: Այո՛, հին ժամանակներէն ի վեր ազգերը ապաքելն կերպով
փորձած են խաղաղութիւնը տիրել տալ աշխարհի մէջ: Այո՛, Պուալօներու,
Պէռանտէներու, Լամառլիններու, Աքէրմաններու, գեղահիւս տղերը ի նը-
պաստ խաղաղութեան դատին՝ ձայն բարբառոյ յանապատի մ'նացած են:
Բասթօն կը վարանի վճռական կարծիք յայտնելու թէ խաղաղութեան հա-
ւատացող կամ չհաւատացող մտայնութիւններէն ո՛րը պիտի յաղթանակէ
վերջնականապէս: Անտրէ Թէօրիէ աւելի լաւատես է ու սա պատգամը կու-
տայ: «Պատերազմի դաշտին վրայ ինկողներուն գործը աւարտած է: Վե-
րապրողները, ձե'ր գործն է որ կ'սխիւ» Մեծ պատմագէտ Ուէլս կը քննադա-
տէ Ազգերու Ընկերութիւնը, բայց անկարելի չի դաւանիր համաշխարհայի
եղբայրակցութիւնը:

Այն իրողութիւնը թէ մինչեւ հիմա եղած փորձերը սպասուած արդիւն-
քը չեն տուած՝ պէ՛տք է որ զմեզ անբուժելի սկեպտիկներ են. հանդերձու-
մի, բարեջըղումի օրէնքը միայն ա՛յս խնդրին մէջ է որ իր գոյութիւնը զգա-
լի պիտի չընէր, մանաւանդ այսքան խորարմատ եւ այսքան կենճոտ խնդ-
րոյն մէջ:

Աւելի իմաստութիւն չէ՞ որ ժողովուրդները լաւատես օգուով մօտենան
խնդրոյն, եւ իրենց բոլոր ուժովը աշխատին այդ գեղեցիկ երազին իրակա-
նացման, քանի որ, հուսկ հետեւութեամբ, ժողովուրդները իրենք են որ պի-
տի կրնան յաջողցնել գործը:

Ու ժողովուրդէն աւելի «մարդուն հայր»ը, նորահաս սերունդն է որ
պէտք է ճանչնայ զայն, սորվի հիանալ քաղաքակրթութեան այս անդու-
գական երեւոյթին վրայ, սիրել զայն իր բոլոր հոգիովը, օր մը ինքն ալ ա-
նոր յառաջդիմութեան եւ ամբապնդումին գործակցելու համար:

Արդ, ներքեւի է հաւատալ թէ ժողովուրդը, և նորահաս սերունդը հոգեւէն պիտի հետաքրքրուին անո՛ր ու պիտի սիրեն զայն ի սրտանոց՝ եթէ զայն ճանչնան լիակատար կերպով, մարդկութեան ամբողջ բարոյութիւնը ընդգրկող իր բոլոր ճիւղաւորումներովը, և ոչ թէ միայն՝ ոմանց կարծիքով՝ իր գեղեցիկ մտացածին խորհուրդ մը, պատերազմի ջնջումը նպատակ ունեցող։

Պիտի հետաքրքրուին մանուկանդ հիմա որ, ինչպէս թերթերէն կը տեղեկանանք, մեր երկիրն ալ յարմար դատած է անդամակցել Ազգերու Ընկերութեան, այս կերպով 57 թ. բարձրացնելով անոր անդամակցող երկիրներու թիւը։

Մտաւոր ապագայի մը վերապահելով այս պատուական ձեռնարկը կարելի եղածին չափ լիակատար կերպով ներկայացնող աշխատութիւն մը, հոս պիտի պատկերացնեմ՝ շատ հակիրճ կերպով՝ անոր ընդհանուր գլխաւորութիւնը, օգտուելով այս նիւթին նուիրուած հրատարակութիւններէ։

* * *

Ինչպէս ըսի քիչ մը վերջ, էպպէս և խտիրը մտքի առջեւ ունենալու պայմանաւ, Ազգերու Ընկերութեան գաղափարը բոլորովին նոր չէ։ Թնչ բան կայ նոր՝ արեւուն տակ։ Քրիստոսէ վեց հարիւր տարի առաջ, նոյն գաղափարին նուիրուած դաշնակցութիւն մը (Ligue Amphictyonique) գոյութիւն ունէր արդէն Հին Յունաստանի տասներկու քաղաքներուն միջեւ։

Նոյն գաղափարը կը գտնենք նաեւ, սաղմնային վիճակի մէջ, հնութեան մէկ ուրիշ Պետութեան՝ Հուրիտի մէջ, անոր անկումէն առաջ։

Թէ՛ Յունաստանի եւ թէ՛ Հուրիտի մէջ, գաղափարը գործադրութեան գընող մարդոց տկարութեան մասնաւանդ վերագրելի ձախողանքը արդիւր չեղաւ որ զանազան երկիրներու մէջ մարդիկ շարունակէին խորհիլ անոր իրականացման և ամրապնդումին։ Այսպէս, 1693ին, Ուիլիամ Բէն անգլիացին յօրինած էր, այս տեսակետով, ծրագիր մը՝ որ, ընդհանուր կերպով, կրնայ նկատուել իրրեւ կորիզը արդի Ազգերու Ընկերութեան։

Նոյն բանը կարելի է ըսել նաեւ Ֆրանսացի Սէն Բիէռ արքային «Մըշ-քընցեմակն խաղաղութեան ծրագիր»-ին մասին։ Իրմէ՛ դատ բաղմաթիւ ուրիշ Ֆրանսացիներ ալ կ'ըբարդէին նոյն խնդրով։

Արդի Ազգերու Ընկերութիւնը երախտապարտ է նաև Քանդ գերմանացի իմաստասէրին, որ իր «Մըշքընցեմակն խաղաղութեան խաղաղութեան ծրագրին մէջ յայտնած է շատ իմաստուն գաղափարներ։

Վերջապէս, 1899ին, Ռուսիոյ Նիքոլա Բ. Չարը ազգերը հրաւիրեց ներկայացուցիչներ զրկելու լա Հէյի Գետադանափողովին, ուր անոնք փորձեցին մէկ քանի կնճռոտ խնդիրներ կարգադրել ազգերու միջեւ գոյութիւն ունեցող վէճերու մասին եւ պատրաստեցին իրաւարարութեան ատեանը։ Լա Հէյի մէջ կառուցուեցաւ խաղաղութեան պալատ մը՝ որուն երկաթէ դուռները հայթայթուեցան Գերմանիոյ կողմանէ, կրանիթը՝ Սկանդինաւիային կողմանէ, ապակիները՝ Քրիտանական կայսրութեան կողմանէ, մետաքսէ վարագոյններ՝ ձարոնի կողմանէ, դարձանօթներ՝ Չինաստանի կողմանէ, գեղեցիկ արձաններ՝ Միացեալ Նահանգաց կողմանէ, թանկագին փայտեր՝ Հարաւային Ամերիկայի կողմանէ։ 1907ին, ազգերը կրկնորդ անգամ ըլլալով հոն հանգիստում ունեցան։ Երրորդ անգամ մըն ալ զիրար պիտի գտնէին՝ երբ Մեծ Պատերազմը պայթեցաւ։

Ֆրանսայի մէջ, գիւղացիներուն և աղքատ դասակարգերուն հարստահարուելը առաջ բերաւ Յեղափոխութիւնը, զոր պատրաստած էին նոյնպէս գրագէտներ և խորհուրդներ։ Յեղափոխականները իբր նշանաբան ընտրեցին Ադամսթրիմ, Հարաւարոքիւն, Եղաւորութիւն և՛ ոչ միայն Ֆրանսայի մէջ, այլ Ադամսթրիմ, Հարաւարոքիւն, Եղաւորութիւն և՛ ոչ միայն Ֆրանսայի մէջ, այլ

նաեւ հոնիէ դուրս այնպէս կը հաւատային թէ նոր օրուան մը արշալոյսը ծագած էր։ Դժբախտաբար, Յեղափոխութիւնը իր բարձր նպատակէն շեղեցու, և, հակառակ Ազգ. քանդը Ա. Չարին փորձերուն՝ զինաթափութեան և Քրիստոսեայ Պետութեանց հանրապետութեան» մը մասին, Վիեննայի դաշնակցութիւնը (1815) սակարկութեան մը զառաժանեցաւ Պետութեանց ձեռնաց մէջ, ետ առնելու կամ պահելու համար ինչ որ կրնային։

Սակայն, դարձեալ չյուսահանտեցան մարդիկ։ Դարձեալ, քերթողներ եւ մարդարէներ աւետեցին գարունը՝ ձմեռէն վերջ։ Եւ, արդարեւ, ճամբորդութիւնները, գիտական գիւտերը, իրաւարարութեան աճեցուն զարգացումը ամէն ժամանակ աւելի իրարու մօտեցուցին մարդիկը։

1914էն (Մեծ Պատերազմին առաջին տարին) առջի հարիւր տարուան միջոցին 160 վէճ կարգադրուեցաւ իրաւարարութեան միջոցաւ, և պատերազմէն առջի տասնեակնից տարիներու ընթացքին ստորագրուեցան 150 դաշնագրեր, ուր պետութիւնները կը խոստանային ուրիշ երկրի մը հետ չպատերազմել, ցորձափ «իրենց պատիւը կամ կենսական շահերը» վնասուած չըլլալին։ Եւ, Պատերազմին տարին իսկ, Միացեալ Նահանգները եւ Մեծն Իրիտանիա դաշնագիր մը կնքեցին՝ խոստանալով իրաւարարութեան ենդարկել ու է վէճ։ Ծատ ուրախացուցիչ բան մըն է որ, ամէն անգամ որ իրաւարարութիւն փորձած են, փորձը, առաւել կամ նուազ մեծ չափով յաջողութեամբ պսակուած է։ Մէկ քանի օրինակ՝ այս մասին։ 1813ին, ամերիկեան գաղութներուն Մեծն Իրիտանիայէն զատուելէն քիչ յետոյ, վէճ ծագեցաւ Գանատարի և Միացեալ Նահանգաց միջեւ՝ իրենց սահմանագրութիւններուն մասին։ Պատ ստիանատու մարզիկ իրաւարարութիւնը ընտրեցին՝ վէճին լուծման համար, և ոչ միայն խնդիրը խաղաղ կերպով կարգադրուեցաւ, այլև որոշում տրուեցաւ որ այդ հաղտուակը քրիստոնէականութեամբ սահմանադրութիւններու վրայ ոչ ամբողջ ոչ վիճուող պիտի գտնուէր։ Հետեւանք, հարիւր տարիէ աւելի խաղաղութիւն, դրամի և ոյժի ազգօգուտ գործածութիւն։ - Միացեալ-Նահանգաց մէջ, հիւսիսային և հարաւային Պետութեանց միջեւ պատերազմին միջոցին՝ գերութեան ջնջումին համար, անգլիական նաւ մը՝ Ալյապալա՝ Հիւսիսին գէմ միջամտեց և սղիւնը մը ու վաթսունէ աւելի առագաստանաւ ոչնչացուց, ինչ որ գրեթէ տասը տարի տեւող վիճարանութեանց տիգիտուած մինչեւ որ որոշեցին վէճը իրաւարարութեամբ։ Ենթարկել։ Որոշուեցաւ որ Մեծն-Իրիտանիա Յ միլիոն ոսկի վճարէ, ինչ որ շուտով և առանց առարկութեան վճարուեցաւ։ = Նոյնպէս, Չիլիի և Արժանդիին միջին սահմանագրութեան վէճերը գուցէ պատերազմի պիտի յանգէին երբ, 1896ին, երկու երկիրները համաձայնեցան վիճարարութեան թափուելու։ Իրաւարարութեան գիմելու մասին։ Խնդիրը տարիներ տեւեց, մինչեւ որ եզուարդ է։ վերջնական վճիռը արձակեց, զոր ընդունեցին երկու ազգերը։ Այս առթիւ Արժանդիինցի եպիսկոպոս մը, որուն ոյժ տուաւ Չիլիցի եպիսկոպոս մը, առաջարկեց որ Քրիստոսի մէկ մեծայաղթ արձանի կառուցուի Անտանտերու մէջ՝ իրը խորհրդանշան այս խաղաղ լուծման։ Արձանը ինտուեցաւ շատ մը թնդանօթներու մետաղով՝ որոնք պատերազմին մէջ պիտի գործածուէին, և 4000 մեզը բարձրութեան հանուեցաւ՝ զինուորներու և նաւաստիներու կողմանէ։ Սա արձանագրութիւնը կը կրէ. «Այս լուսնը պիտի փոշիանան նախքան Չիլիին և Արժանդիինին խզելը այն հաշտութիւնը զոր ուխտեցին ֆրիչ Քրիստոսի ոտիցը տակ։»

Մնաց որ, առեւտուրը և ճամբորդութիւնները, գիւտերը, գիւտութիւնը և արուեստը ազգերը իրարու մօտեցուցած և միացուցած ըլլալով, այսօր

բոլոր ազգերը իրարու պէտք ունին՝ առօրեայ կեանքին ամէնէն սովորական բաներուն համար: Այս պարագան ալ անշուշտ պատճառ եղած է որ փոխանակ աւերիչ կործանիչ պատերազմին դիմելու — այս իսկ պատճառաւ աւելի կործանիչ դարձած — ֆլասակար՝ թէ՛ յաղթողին թէ՛ յաղթուողին համար, ազգերը ուզեն իրաւաստութեան դիմել, և անզգալաբար ու աստիճանաբար պատրաստուին ընկերութիւն մը կազմելու:

* * *

Երկար տարիներ տեւող միջազգային նախանձներ և կասկածներ առաջ բերին Մեծ Պատերազմը: Անոր սոսկալի հետեւանքները կրեցին ոչ միայն ցամաքային և ծովային զինուորները, այլև, չորս տարիէ աւելի, ամէն մարդ, կիները և տղաներն ալ մէջը ըլլալով, ուսմանը անօթութեան հիւանդութեանց ենթակայ եղանաւ Հաշիւ եղած է որ քառասուն միլիոն մարդ, որոնց տասը միլիոնը զինուոր, զոհ եղան պատերազմին: Սոսկալի պատերազմին վախճանին, մէկ քանի մարդիկ, որոնց գլուխը պէտք է դասել Ամերիկայի այն ատենուան նախագահը՝ Ուիլսոն հասկցան թէ՛ նմանօրինակ պատերազմի մը կրկնումը քաղաքակրթութեան կործանումը պիտի ըլլար, ու 1919 ապրիլ 28ին, փարիզի Ուիլսոն ստեղծեց Ազգերու Ընկերութիւնը:

Ի՞նչ է այս Ուիլսոնը՝ Ներկայ հկարճ տողերուն մէջ կարելի չէ այս վիթխարի ձեռնարկին բարդ կազմակերպութիւնը ներկայացնել: Ուստի, կը բաւականանամ յիշատակելով Ուիլսոնի նախաշաւիղը, որ կուս. տողերու մէջ կը գծէ Ընկերութեան գործունէութեան յատակագիծը:

«Բարձր դաշնագիրները՝

«Նկատելով որ Ազգերու միջեւ գործակցութիւնը զարգացնելու և խաղաղութիւնը ու ապահովութիւնը անոնց երաշխաւորելու համար, կարեւոր է՝

«Ինչ ինչ յանձնառութիւններ ընդունիլ պատերազմի չբխելու:

«Աշխարհատես յայտնութեամբ միջազգային յարաբերութիւններ պահել արդարութեան և պատուոց վրայ հիմնուած:

«Թափել յարգել միջազգային օրէնքի պատուէրները, որոնք յայտնատես կառավարութեանց իրական վարուելակերպի իրը կանոն ընդունուած են:

«Տիրել տալ արդարութիւնը և խղճատուէրէն յարգել դաշնագիրներու բոլոր պարտադրութիւնները՝ կազմակերպուած ժողովուրդներուն փոխադարձ յարաբերութեանց մէջ:

«Յիշատակելու ներկայ Ուիլսոնը որ կը կազմէ Ազգերու Ընկերութիւնը»

«Կ'ընդունին ներկայ Ուիլսոնը որ կը կազմէ Ազգերու Ընկերութիւնը»

«Ինչ ինչ յանձնառութիւններ ընդունիլ պատերազմի չբխելու:

«Աշխարհատես յայտնութեամբ միջազգային յարաբերութիւններ պահել արդարութեան և պատուոց վրայ հիմնուած:

«Թափել յարգել միջազգային օրէնքի պատուէրները, որոնք յայտնատես կառավարութեանց իրական վարուելակերպի իրը կանոն ընդունուած են:

«Տիրել տալ արդարութիւնը և խղճատուէրէն յարգել դաշնագիրներու բոլոր պարտադրութիւնները՝ կազմակերպուած ժողովուրդներուն փոխադարձ յարաբերութեանց մէջ:

«Յիշատակելու ներկայ Ուիլսոնը որ կը կազմէ Ազգերու Ընկերութիւնը»

«Ինչ ինչ յանձնառութիւններ ընդունիլ պատերազմի չբխելու:

«Աշխարհատես յայտնութեամբ միջազգային յարաբերութիւններ պահել արդարութեան և պատուոց վրայ հիմնուած:

«Թափել յարգել միջազգային օրէնքի պատուէրները, որոնք յայտնատես կառավարութեանց իրական վարուելակերպի իրը կանոն ընդունուած են:

«Տիրել տալ արդարութիւնը և խղճատուէրէն յարգել դաշնագիրներու բոլոր պարտադրութիւնները՝ կազմակերպուած ժողովուրդներուն փոխադարձ յարաբերութեանց մէջ:

«Յիշատակելու ներկայ Ուիլսոնը որ կը կազմէ Ազգերու Ընկերութիւնը»

«Ինչ ինչ յանձնառութիւններ ընդունիլ պատերազմի չբխելու:

«Աշխարհատես յայտնութեամբ միջազգային յարաբերութիւններ պահել արդարութեան և պատուոց վրայ հիմնուած:

«Թափել յարգել միջազգային օրէնքի պատուէրները, որոնք յայտնատես կառավարութեանց իրական վարուելակերպի իրը կանոն ընդունուած են:

«Տիրել տալ արդարութիւնը և խղճատուէրէն յարգել դաշնագիրներու բոլոր պարտադրութիւնները՝ կազմակերպուած ժողովուրդներուն փոխադարձ յարաբերութեանց մէջ:

* * *

զորդակցութեանց և տրամանցութեան (transit) ազատութիւնը և պահպանուելու հիւանդութեանց դէմ պայքարը նպատակ ունեցող միջազգային միջոցները:

* * *

Կարելի չէ ըսել թէ Ազգերու Ընկերութեան Ուիլսոն մէջ յիշուած զանազան յանձնառութիւնները մեռելալ տառ մնացած են: Արդէն իսկ իրազորութեամբ իր գործունէութիւններուն մէջէն յիշենք՝ քաղաքական մարզին մէջ՝ Ֆինլանտի և Շուեդի միջեւ գոյութիւն ունեցող Aland կղզիներուն վերաբերեալ վէճին, Վիլնի մասին բոլոնիական-լիտւանական վէճին, Վերին Սիբիրի վէճին, Թունուզի կամ Փրանսական Մարքի մէջ ծնած տղոց հպատակութեան խնդրոյն մասին Յրանսայի և Մեծն-Բրիտանիոյ միջեւ գոյութիւն ունեցող վէճին, Ալպանիոյ սահմանադրութիւններուն վէճին, Իտալիոյ և Յունաստանի միջեւ ծագած վէճին (1923), Յունաստանի և Պուրկարիոյ միջեւ ծագած վէճին (1925) և ուրիշ վէճերու խաղաղ լուծումը:

Գալով ընկերային և մարդասիրական գործին, յիշենք թէ՛ Աշխատութեան կազմակերպութիւնը, որուն գլխաւոր անիւն է Աշխատութեան միջազգային դիւանը, Si vis pacem, cole justitiam (թէ՛ խաղաղութիւն կ'ուզես, արդարութիւնը մշակէ) գեղեցիկ նշանաբանով, կը սահմանափակէ գործաւորին աշխատութեան տեւողութիւնը: Կ'արգիլէ կանանց զիջերային աշխատութիւնը եւ ծննդաբերութեան միջոցին, անոնց կ'երաշխաւորէ առողջութեան պահպանման պահանջին շարժելու և վճարուած հանգիստ կ'արգիլէ տասնեւչորս տարեկանէն վար տղաքը ճարտարութեանց հաստատութեանց մէջ գործածելը, կ'արգիլէ կանանց և տղոց ձեռնոտել տալ կապարի վտանգաւոր աղբը, առողջապահութեան սպասարկութիւններ կ'ստեղծէ՝ գործաւորներուն առողջութիւնը պաշտպանելու նպատակաւ: Գաշնադրութիւններ կը հաստատէ՝ աշխատութեան արկածներու նկատմամբ: Թող չի տար որ նաւերու միջերանցներուն և շոգեկաթսաններուն տեղը տասնեւութը տարեկանէն վար պատանիներ աշխատցնեն: Թէ՛ ծովու թէ՛ ցամաքի վրայ աշխատողները կը պաշտպանէ: Իր ընդարձակ յուրաքանչիւնութիւններով, հաւաքած և համակարգած տեղեկութիւններով՝ Կառավարութեանց, Ազգերու Ընկերութեան և տնտեսագէտներուն կը դիւրացնէ ուսումնասիրութիւններ՝ որոնց համար յիշատակարաններ ձեռք բերելը մասնաւորապէս զօրուար է: Մէկ բառով, Աշխատութեան կազմակերպութիւնը կը ջանայ աւելի արդարութիւն եւ աւելի մարդասիրութիւն ստիպել աշխատողներուն նկատմամբ, և այս կերպով կը ձգտի դասակարգային կոռուր վարտակը:

Առողջապահութեան Մասնախումբը, Համաձայնակներու Յանձնաժողովը և Հանրային Առողջապահութեան միջազգային Գրասենակը ամբողջ աշխարհի համար անդին վաւերացնողութեամբ աղբիւրներ եղած են, ինչպէս նաեւ գործունէութեան հօրը և նոր միջոցներ՝ հիւանդութեան նախապահեստ զգուշութեան և հիւանդատածութեան մարզին մէջ:

Միջազգային գործակցութեան նոր մեթոտներուն շնորհիւ, բազմաթիւ այնիւ խաչակրութիւններ՝ որոնց յոգնազան աշխատութիւնները յաճախ աւուր կը մնային, աւելի դիւրին և աւելի ընդհանրացած յաղորդութիւններ չունեցող Յիշենք, այս տեսակետով, ամփոփել եւ ուրիշ քննարկներու դիմ կանանց եւ տղոց անեւտրիւ դիմ, գերութեան դիմ պայքարները:

Յօդուածիս վերնագիրը մասնաւոր կարեւորութեամբ յիշատակութեան

արժանի կ'ընէ Ազգերու Ընկերութեան Միջազգային իմացական գործակցութիւնը կոչուած ձեռնարկը Այս ձեռնարկը, աշխարհի զանազան երկիրներուն իմացական ճիգերու լաւագոյն համակարգութեամբ մը մտքի աշխատութիւնները խրախուսելով, երկու օգտակարութիւն կ'ունենայ. 1. գիտութիւններուն, դպրութիւններուն և արուեստներուն նպաստամատոյց ըլլալ. 2. ամբողջ աշխարհի մտաւորականները միտքերու մերձեցման աշխատանքին կոչելով՝ խաղաղութիւնը ամրապնդել: Ձեռնարկին այս կրկին նպատակը ցոյց կուտայ թէ Ազգերու Ընկերութեան ամէնէն ներոյժ, ամէնէն արդիւնաշատ և ամէնէն կենսալիւր ձեռնարկն է ան, ապա ուրեմն մասնաւոր գուրգուրանքի առարկայ:

Ձեռնարկին առաջին գործը եղաւ երեւան բերել պատերազմին պատճառած ողբալի աղէտները՝ ուսուցութեան, ուսումնասիրութեանց, հետազոտութեանց մարդին մէջ: Իմացական կեանքին տաղնապին հետ երեւան եկան անոր դարման տանելու միջոցները, որոնք շուտով ձեռք առնուեցան (Նիւթական և բարոյական օգնութիւն այն երկիրներուն՝ որոնք մասնաւորապէս կը կարօտէին օգնութեան, — Ինչպէս սորվեցնել երկու սեռի նորահաս սերունդին՝ Ազգերու Ընկերութեան նպատակները և գործը. Ինչպէս զայն համոզել թէ կարելի է միջազգային գործակցութեան ոգին զարգացնել — չոտովի կրթիչ պատկերախաղի միջազգային Հաստատութիւնը - Միջազգային դպրոցական թղթակցութիւն. — Դպրոցականներու, սկսուածներու ճամբորդութիւններ, ամերիկեան պուպրիկներուն ճամբորդութիւնը ի ձաբոն, և ճաբոնական պուպրիկներուն ճամբորդութիւնը ի Միացեալ Կահանքս, Ազգերու Ընկերութեան վրայ թղթախաղեր, երգ, պատգամ, հրապարակաստութիւններ, եւն. եւն.:

Աշխարհի ամէն մասերէն շատ մը երկիրներ փութացած են պատասխանել Ազգերու Ընկերութեան այն կոչին որ յիշատակուած է յօդուածիս սկիզբը: Այդ կոչին ոգին մտած է դպրոցին միջնորդութիւն մէջ, և զանազան ձեւերով, ամէն ջանք ի գործ կը դրուի հոգեթափանցօրէն նորահաս սերունդը սոգորելու Ազգերու Ընկերութեան նպատակներովը և գործովը:

Կարելի է որ հայ դպրոցն ալ, հիմա մանաւանդ որ մեր երկիրն ալ կ'անդամակցի Ազգերու Ընկերութեան, ուսումնասիրէ քաղաքակրթութեան այս մեծագոյն ձեռնարկը և ամէն նպատակաբարձար միջոց ի գործ դնէ անոր շինարար ոգիովը սոգորելու համար նորահաս սկսեցիկ սերունդը:

Յ. Թ. ՀԻՆԴԻՆԵԱՆ

3 Յուլիս 1932



ԶԱՓԱՀԱՍՆԵՐ ԿՐՆԱՆ ՍՈՐՎԻԼ

Գարեբէ ի վեր ընդունուած ճամբորդութեան կարգ անցած է այն կարծիքը թէ քսան կամ քսանհինգ տարեկանէն յետոյ տարիքի յառաջացումը խոտոր համեմատութիւն կրկրէ սորվելու կարողութեան հետ: Այս կարծիքը պատճառ հանդիսացած է որ շատ չափահասներ լքեն ուսումնին շարունակելու ո եւ է փորձ, և կամ զայն ներկայացնեն իբրեւ չբնականք երկնց ծուլութեան ներկայ հոգեբանական գիտութեան լոյսի տակ սահայն այս կարծիքը շատ բան կորսնցուցած է իր ենթադրուած ճշմարտութիւնէն և հարկ է որ «Ձըւարթնոց» ընթերցողները ծանօթանան այս նոր փորձարկութեանց արդիւններուն հետ:



ՍԷՅ ԱՐՄԵՆԵԱՆ

Գոյրմալիա համալսարանի փոքրէսորներէն Էտուրթ Լի Թօրնտայը 1926—28 ընդարձակ փորձարկութիւններ կատարած է գտնելու համար թէ չափահասներ քսաներկուսէ մինչեւ քառասուն երկու տարեկանին, այսինքն քսան տարուայ ժամանակաշրջանին, բան մը կը կորսնցնեն իրենց սորվելու կարողութիւնէն: Արժէ Թօրնտայը բազմաթիւ փորձարկութիւններէն գէթ մէկը հարեւանցիօրէն ներկայացնել գաղափար մը տալու համար այս փորձարկութեանց ընդհանուր նկարագրի մասին: (*)

Այս փորձը կատարուած է երկար շրջանի համար զատապարտեալներուն՝ ունի իր գոյրոցը: Իւրաքանչիւր բանտարկեալ որ Սինկ Սինկ կ'ուզարկուի իր բանդարգելութիւնէն անմիջապէս յետոյ քննութեան կ'ենթարկուի եւ իր ուսման աստիճանին համապատասխակ դպրոցական կարգի մը

(*) See Adult Learning by Edward Lee Thorndike The Macmillan Company - 1928-New York.

մէջ կը դետեղուի, հոն օրական ժամ ու քառորդ մը դպրոցական պարագմունքներ կատարելու համար: 1926/ին 307 հոգի այս բանտարկեալներէն մասնաւոր քննութեանց կ'ենթարկուին թորնտայքի օգնականներու կողմէ ճշգրտելու համար իւրաքանչիւրին կարողութիւնը դպրոցական դասագրան առարկաներու մէջ: Ասոր կը հետեւի կանոնաւոր դասընթացքը այս նոյն առարկաներուն մէջ, և դպրոցական տարուոյ վերջ ուրիշ քննութիւն մը՝ գտնելու համար իւրաքանչիւրի կատարած յառաջգիմութիւնը: Ապա, բանտարկեալներու կատարած այս յառաջգիմութիւնը բազմատուլեան կը դրուի մանուկ կամ պատանի դպրոցականներու տարեշրջանի մը միեւնոյն առարկաներուն մէջ կատարած յառաջգիմութեան հետ: (*) Արդիւնքը այն կ'ըլլայ որ այս չափահաս (17-54 տարեկան) բանտարկեալներու կատարած յառաջգիմութիւնը կը հաւասարի մանուկ դպրոցականներու մէկ դպրոցական տարեշրջանի մէջ կատարած յառաջգիմութեան ութսուն երկու տոկոսին: Տասնեւութ տոկոսի այս յետամնացութիւնը բանտարկեալներու մօտ սակայն բաւական ազայցոյց չէ փաստելու համար թէ չափահասներու սորվելու կարողութիւնը այդչափով կը պակսի: Վասն զի նկատի առնելու է որ մանուկներու դպրոցական օրը բանտարկեալներու դպրոցական օրէն չորս անգամ աւելի երկար է, և թէ մանուկները շատ աւելի ժամանակ կը տրամադրեն այս նոյն առարկաները սորվելու համար:

Նմանապէս այս բանտարկեալները համաձայն ուշիմութեան փորձերու արդիւնքներուն սովորական դպրոցական մանուկներու ուշիմութեան աստիճանէն աւելը վար են: Այնպէս որ նկատի առնելով բոլոր տուեալները կարելի է եզրակացնել թէ այս չափահասները դպրոցական այս առարկաները աւելի արագ սորվեցան քան թէ պիտի կրնային սորվիլ հաւասար ժամանակամիջոցի մը մէջ իրենց տաս կամ տասերկու տարեկան հասակին:

Աւելի ստույգ արդիւնքներու հասնելու համար թօրնտայք կատարած է բազմաթիւ ուրիշ փորձեր համալրարանի ուսանողներու երեկոյեան դպրոց յաճախող չափահասներու եւ այլոց վրայ համեմատութեան զննելով անոնց սորվեցնելու կարողութիւնը: Իր լեզու սորվելու, մեքենագրութեան, հին սովորութիւնները նորերով փոխելու եւ շատ մը ուրիշ պարզ եւ բարդ մարդերու մէջ տարիքով աւելի երիտասարդներու սորվելու կարողութեան հետ այս միեւնոյն մարդերու մէջ: Իր եզրակացութիւնը այն է թէ

Ա) Սորվելու կարողութեան նուազումը 22 - 42 տարեկանին չէ կարելի ամբողջովին վերագրել մարդու ֆիզիքական կամ մտային վատթարացման:

Բ) Թէ այս «նուազումը» շատ աւելի քիչ է քան մենք կարծած ենք մինչ այժմ:

Գ) Թէ այս «նուազումը» վերոյիշեալ քսան տարուայ շրջանին մօտաւորապէս 13—15 տոկոս է:

Դ) Թէ այս 15 տոկոսի «նուազումը» պատանիի մը 12—13 տարեկանին մէկ տարուայ րնականօրէն կատարած աճումէն աւելի պակաս է, և

Ե) Թէ մարդու սորվելու կարողութիւնը 22էն մինչև 42 տարեկանին աւելի բարձրէն մանուկներու սորվելու կարողութեանէն, եւ հաւասար կամ նոյն իսկ աւելի բարձր է պատանիներու (14—18 տարեկան) ունեցած միեւնոյն կարողութեանէն: Հաշիւի մը համաձայն երկրորդական վարժարանի ուս-

(*) Ասիկա հնաբաւոր է չափաւորուած (standardized) քննութեանց միջոցաւ, որոնք կը գործածուին շատ մը Ամերիկեան դպրոցներու մէջ:

ման առարկաներու սորվելու կարողութեան եւ տարիքի յառաջացման համեմատութիւնը մօտաւորապէս հետեւեալն է.

- 57 տոկոս 14—16 տարիքներու համար
- 84 տոկոս 17—19 տարիքներու համար
- 100 տոկոս 20—24 տարիքներու համար
- 86 տոկոս 25—29 տարիքներու համար
- 87 տոկոս 30 եւ աւելի վեր տարիքներու համար(*)

Այս արդիւնքներու մասին խօսելէն առաջ սակայն պէտք է յիշատակել թօրնտայքէն յետոյ Սթօնի(**) կատարած աւելի զգուշաւոր փորձերը սորվելու կարողութեան «նուազումը» չափը որոշելու համար:

Գիտական մեթոտի անհրաժեշտ պարագաներէն մէկը չափաւելիք յատկութեան կամ առարկայի մը մեկուսացումն է այս բոլոր պայմաններէն որ կրնան անոր վրայ ազդել: Գիտական փորձարկութեան ենթակա մարդն է ուսումնասիրուելիք յատկութեան մը մեկուսացումը շատ դժուար է, որովհետեւ մարդկային յատկութիւն մը պայմանաւորուած է միաժամանակ բազմաթիւ տուեալներով, ու այս տուեալներու ազդեցութիւնը առանձնացնել կամ անոնց մասնակի կամ ամբողջական ազդեցութեան ճիշդ չափը գտնել մեր ուսումնասիրելի ուղած յատկութեան վրայ խիստ շատ դժուար է եթէ չըսենք անկարելի: Օրինակ, մենք երբեք չենք կարող վստահ ըլլալ որ թօրնտայքի բանտարկեալները կամ երեկոյեան դպրոցի ուսանողները նոյն ցանկութիւնը, նոյն ստիպումը, ժառանգական կամ միջավայրային միեւնոյն ազդեցութիւնները կրած են իրենք իրենց մէջ և կամ գտնուք համեմատութեան զննելով մանուկ կամ պատանի դպրոցականներու հետ: Ասոր համար ալ թօրնտայքի արդիւնքները վերջնական չեն կրնար նկատուիլ, եւ թօրնտայք ինք իբրեւ զգուշաւոր գիտնական վերջնականութիւն չի տար իր արդիւնքներուն և նորանոր փորձեր կը յանձնարարէ:

Չափաւելիք յատկութեան մը մեկուսացման առթած այս դժուարութիւններու պատճառով թէ՛ հոգեբանական, թէ՛ բժշկական եւ թէ՛ ուրիշ փորձագիտական աշխատանոցներու մէջ աւելի պարզ կենդանիներ կը գործածուին փորձերու համար: Ու այս կենդանիներէն ամէնէն աւելի յարմար նկատուածն ու գործածուածը ճերմակ մուկն է: (***) Սթօն իր փորձերը կատարած է այս մուկերուն վրայ ֆորձարկութեան ենթարկուած իւրաքանչիւր մուկի ժառանգական անցեալը, միջավայրը, սովորութիւնները և սովորելիքը հաւասարեցուած են բացի տարիքէն որու ազդեցութիւնը փորձարկուած կ'ուզէ ուսումնասիրել: Այս մուկերու կեանքը միջին հաշուով 900 օր է, ահիկա համեմատելով մարդկային կեանքի միջին հաշու: Երկարութեան հետ կարելի է դիւրութեամբ գտնել և իրարու հետ համեմատեցնել մարդու եւ մուկի զանազան տարեշրջանները: Սթօն լաբորիտորիոս մը շինեց, որու որոշուած ճամբաներէն պէտք է այս մուկերը անցնէին որպէս զի կրնային հաս-

(*) Adolt Learning — էջ 53.
 (**) Stone, C. P., Age Factor in animal learning. In Genetic Psychology monographs. Volume 5, No. 1, and volume 6, No. 2.

(***) Ամերիկայի մէջ աշխատանոց մը կայ ուր այս ճերմակ մուկերու սերնդագործութեան կը հսկուի, և անոնց իւրաքանչիւրի ժառանգականութեան եւ կեանքի մասին լիովին տեղեւորութիւններ կը պահուին: Այս մուկերը գիտական աշխատանոցներու կը ծախուին փորձերու համար:

նիլ լաբիւրինդոսին միւս կողմը դրուած կերակուրէն և իրենց քայլը յա-
գեցնելին (ուտելու ժամանակն ու ուրիշ պայմաններ նախապէս հաւասարեց-
ուած էին): Մուկ մը իր ճամբան սորվելէն յետոյ շատ կարճ ժամանակի մէջ
կրնայ այս լաբիւրինդոսը կտրել եւ տիրանալ իրեն սպասող համեղ ճաշին,
իսկ մէկը որ այս ճամբաները չի սորվիր ստիպուած կ'ըլլայ շատ երկար ա-
տեն թափառել լաբիւրինդոսին անկէ փողոցներուն (cul de sacs) մէջ ա-
ռանց լաբիւրինդոսէն դուրս կարենալ ելլելու և հետտեւաբար անօթի փորը
կշտացնելու:

Համաձայն Սթօնի արդիւնքներուն մուկերու սորվելու կարողութիւնը չի
նուազիր տարիքի յառաջացումով, թէ՛ տարիքոտ եւ թէ՛ աւելի երիտասարդ
մուկեր միեւնոյն դժուարութեամբ կամ դիւրութեամբ կը սորվին լաբիւրին-
դոսի այս դասը: Իսկ թէ միեւնոյնը կարելի է ըսել մարդկանց համար առ-
այժմ գէթ չէ կարելի պնդել:

Դեռ ուրիշ փորձարկու մը գտած է որ թէննիսիի անդրադէտ լեռնա-
կանները շատ աւելի կարճ ժամանակի ընթացքին սորված են անգլիերէն գրել
ու կարգաւ քան մանուկները որոնք կը սորվին տարիներ շարունակ դպրոց
յաճախելով: Պատմութենէն ալ օրինակներ չեն պակսիր: Քաթօ՝ Հոռովանցին
Յունարէն սորվի սկսաւ երբ ան ութսուն տարեկան էր, Կիօթէն ութսունը
անցած էր երբ իր «Ֆառուսը» վերջացուց, Թէոֆրաստոս ինսուն տարեկա-
նին նոր սկսած էր իր «Մարդկանց նկարագիրները» գրել եւայլն:

Վերը յիշատակուած եւ բազմաթիւ ուրիշ փաստերու վրայ հիմնուելով
կարելի է ըսել ստուգաբար որ չափահասներու սորվելու կարողութիւնը
նոյնչափ և աւելի լաւ է որչափ պատանիներուն և եթէ կայ «նուազում» մը
ատոր պատճառը մտային վատթարացում եւ կամ բնական անյեղ: օրէնքի
մը ենթակայ չէ շատ հաւանաբար այլ վերագրելի է ուրիշ պատճառներու:

Ձանանք թուել այս պատճառներէն կարեւորները:

Ա) Մոռացում եւ անգործութիւն. — Սորվիլ ուրիշ բան չէ եթէ ոչ գոր-
ծածել, երբ քիչ շատ սորված բան մը չենք գործածեր զայն կը մոռնանք:
Մեզմէ շատերը դպրոցական շրջանը աւարտելէն յետոյ գոյրոյն ու իր ա-
ռարկաները մէկ կողմ կը նետեն իբր թէ իրենց անգամ մը սորվածը անջըն-
ջելիօրէն իրենց ուղիղին մէջ պիտի մնայ իբրեւ իրենց սեփականութիւնը:
Իրողութիւնը աքոր հակառակն է: Մոռացումն է որ անյեղի է եւ որչափ
մէկը աւելի մոռնայ կամ քիչ գիտնայ այնչափ համեմատաբար աւելի դժ-
ուար կը դառնայ նոր նոր բաներ սորվիլ և ընդհակառակը որչափ շատ գիտ-
նայ մէկը այնչափ աւելի դիւրութեամբ, աւելի արագութեամբ, աւելի շատ
ու աւելի լաւ կերպով նոր բաներ կրնայ սորվիլ: Ուրեմն խտացնելով կարե-
լի է ըսել սորվելու համար յպիսի Կ մոռնայ (անշուշտ օգտակարը), Չը մոռնալու
համար պիտի գործածել: Եթէ դպրոցի շրջանաւարտութիւնը չը նկատենք
իբրեւ ուսման վերջաւորում մեր սորվելու կարողութիւնը չափահաս տարի-
ներուն չի կասիր:

Բ) Տրամադրելի ժամանակ և ընկերային գրգռ. — Մանուկի և պա-
տանիի ապրուստը կը հոգացուի իր ծնողներու կողմէ, ասկէ զատ անոնց
ժամանակի տնտեսական արժէքը ոչինչ է կամ գրեթէ ոչինչ, ուստի անոնք
շատ աւելի ժամանակ ենին սորվելու համար: Մինչ չափահասը ստիպուած
է աշխատիլ հոգալու համար իր և իր ընտանիքի ապրուստը և քանի մը
դուրուշ ալ սեւ օրուայ համար մէկ կողմ դնելու: Ասիկա ճիշտ է, և սակայն
մոռնալու չէ որ չափահասի ամբողջ ժամանակը իր հոգեբով կ'ընտուած չէ:

եթէ չափահասը իր սրճարանին, սինէմային, շատ անգամ անօգուտ խօսակ-
ցութեան յատկացուցած ժամանակին մէկ մասը յատկացնէ սորվելուն անի-
կա շատ բան կը սորվի, չէ՞ որ ան աւելի արագ ու քիչ ժամանակի մէջ
կրնայ սորվիլ ինչպէս որ ապացուցինք վերը: Ասկէ զատ հեմա որ մեքենան
կը կատարէ մարդու գործին մէկ խոշոր ժամը աշխատանքի ժամերը աւելի
քիչ են և շատերու կարծածէն շատ աւելի պիտի քիչնան: Այս աւելցած ու
աւելցող ժամանակը շահագործելու է սորվելով:

Ինչ կը վերաբերի ընկերային գրգռութիւն պէտք է ըսել որ ընկերութիւնը
մինչ այժմ չէ քաջալերած չափահասները որ սորվին: Այս սխալ հասկացո-
ղութեան վրայ հիմնուելով թէ երիտասարդը միշտ աւելի արագ կը սորվի
մեր տնտեսական կեանքը կամ վարձել չէ ուղած աւելի չափահասները և
կամ առիթը չէ փախցուցած զանոնք գործէ հանելու հոգեբանութեան
տուեալները այս անգործ ու վայրենի սովորութեան դէմ կը փաստեն: Ասկէ
զատ մեր մինչ այժմ համեմատաբար աւելի կայուն ընկերային կեանքին
մէջ հօրմէն սորվածը մինչև զաւակի կեանքին վերջը բաւական կուզար
կեանքի ապրուստը հարելու համար: Հիմա այլեւս այդպէս չէ, փոփոխու-
թիւններ տնտեսական արտադրութեան մէջ և այլուր այնչափ յաճախակի են
և արագ որ մէկը ստիպուած է միշտ սորվելու ետ չմնալու համար: Ան որ
չի սորվիր և չի յառաջդիմեր կեանքի պայքարին մէջ դատապարտուած է
մեռնելու:

Գ) Ծաղր ու վախ — Ասոնք ալ չափահասներու չը սորվելու պատճառներ
են: Յիմար կարծիքը որու դէմ ուղղուած է այս ամբողջ յօդուածը տեղի
տուած է որ մենք ծաղրի առնենք մարդիկ որոնք իրենց յառաջացած տա-
րիքի մէջ նոր բան մը սորվելու ելած են: Ժողովրդական առածը կ'ըսէ «Ծե-
րի լին շան նոր հնարքներ չիս կարող սորվեցնել», ուրիշ առած մը սակայն
կ'ըսէ. «Երբէք ուղ չէ», այս երկրորդը անտարակոյս աւելի ճիշտ է:

Այս ծաղրին հետ կայ նաեւ վախը «Ես ասորիքս առի ալ չեմ կարող
սորվիլ»: Մարդիկ այնչափ հաւատացած են ասոր որ իրենց չկրնալ սորվե-
լու վախը բաւական է որ նոր բան չը սորվին:

ՅՋՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա) Եթէ կայ ցանկութիւն և կարիք կարելի է և պէտք է սորվիլ: Տարի-
քը իբրեւ աղբակ անկարեւոր է:

Բ) Ռամկավար հասարակարգի մը յաջողութիւնը կախուած է այդ հա-
սարակութեան զարգացման աստիճանէն: Ինչ որ դպրոցը կուտայ 8 — 10 կամ
աւելի տարիներու մէջ բաւական չէ զարգացման համար, շատ շատ ատիկա
միայն սկզբնաւորութիւն մըն է:

Գ. Ներկայ յարաշարժ և փոփոխութիւններով լի կեանքին մէջ ան որ
կը դադրի սորվելէ, կը դադրի տնտեսապէս շահելէ և ապրելէ:

Դ) Անձնական տեսակետով ալ երջանկութիւն կարելի է ձեռք բերել
սորվելով ու նորէն սորվելով, ընդարձակելով մեր հետաքրքրութիւններն ու
ըմբռնումները, ըմբռնելու գերեցկութիւնները որ մեր շուրջն են, մաքա-
ռելով տգեղութիւններու դէմ որ մեր շուրջը կը վխտան, կեանքին տալով
այն ընդարձակ և լեցուն նշանակութիւնը որուն ան արժանի է:

ՍԷԹ ԱՐՍԷՆՅԱՆ

18 Յունիս 1932
Փոլը՛պիս Համալսարան

Կ Ի Ն Ը

ԸՆՏԱՆՈՒՅԻՆ ՍԵՄԷՆ ԴՈՒՐՈ

Հակառակ որ կինը ընտանիքին սեմէն ներս աշխարհ մը ունի ուր՝ բնութեան կաթեցուցած մեծ սէրը կը ճառագայթէ իր շողն ու արեւը, ուր՝ անոր ջերմածոր սրտին զարկն ու ձեռքին գորովոտ հպումը ստացած ամէն ինչ վերըստեղծումի հրաշքէն կ'անցնի ու մահուան արհաւիրքը կեանքի եւ շրգիին մէջ կ'անգայտանայ ու կը ցնդի, ուր՝ ջերմանոցին գուրգուրակի կոկոններուն պէս հոգի ու փթթում կ'ստանայ մանուկը եւ անոր օրրանին տակ դեռատի մօր ննջերգը իր ջինջ թրթռացումով վաղուան յոյսին նո՛ր նո՛ր իղծերը կը վառէ ու խանդի կայծեր կը ղնէ հայրական ծանրատար հոգեբուն մէջ, այս բոլորով, ա՛յո, կնոջ ձեռակերտ այս դրախտին վարդահիւսը շրջապատը հիւմա՛ նեղ կուգայ անոր գլխուն վասնզի լայն հորիզոններու կ'ընթաց անոր միտքը, բըր յաճախ իր ճախրանքին մէջ մեծ մթնոլորտին անբաղիս թեւածումները կը փնտռէ:

Ճարհներ ու դարեր կնոջ սիրտը իր զգացման գորովազեղ ծիրին մէջ անհունացաւ, զօրացաւ ու գործեց մանուկէն մինչեւ մամիկը՝ ընտանեկան յարկին յաճախ մուայլ կամ ծիծաղկոտ կայքին վրայ, անսպառ կորովին լծակովը վերցնելով ամուսնոյ ու մայրական բազմոլոր հոգերը, նուիրումին զմայելի տիպարը անձնաւորած:

Սյլ սակայն վատնուած ոյժին այս մեծ կշիռին դիմաց՝ միտքը թափուր դուրս եկաւ ու մնաց անաշխատ, տկար ընդունարանը միշտ գաղափարի փայլատակող լոյսին. ըսե՛նք թէ շրջապատին բոլոր սէրերովը համազրու իր սիրտը խեղդեց անոր միտքը եւ իր իմացական բիբը տանը կտուրը մինչեւ բարձրացնել բաւականացող անպատուաստ այս ոյժը վերջապէս դժուար սրբագրելի սա՛ համոզումը տուաւ այր մարդուն թէ՛ կնոջ ուղեղը պզտիկ է, կինը տրամաբանութեամբը տկար միտք մըն է, կինը շքեղ երեւոյթի մը տակ պուպրիկ ու զարդ մըն է լո՛կ կամ կամակատար գործիքը այր մարդուն:

Եւ կինը ամացած՝ գաղափարի յեղաշրջիլ թուփին մէջ, ընդերկար չի կրցաւ պատասխանել իրենց.

— Ո՛չ, պարոններ, կինը զարդ կամ կամագուրկ գործիք մը երբե՛ք չէ՛, կինը իր սրտին զոհուածն է, կինը իր մայրական սիրոյն մէջ կապտուած կալանաւոր մըն է եւ բնութեան դրած այս կաշկանդումին՝ այրերը հանգոյց մը աւելի զարկած են երկու սեռերուն ընդմէջ ընկերային ստրկեցուցիլ իրաւակարգի մը ստեղծումով:

Ժամանակը սակայն գործեց հրաշքը եւ քաղաքակրթական մեծաշունչ վազքով քսաներորդ դարը մտաւ մեր աշխարհէն ու մտքերէն ա՛լ ներս. անոր ճանաչիկն սփռած մեծափառ լոյսը կնոջ աչքերը խտխտեց եւ անկասելի վազքին շունչը իմացականութիւնը ցնցեց. բարձրագոյն դպրոց, ֆէմինիստ վարդապետութիւն, մամուլ ու խօսուն բեմեր ակօսեցին ու ընդլայնեցին անոր միտքը որոնցմով գաղափարի շոգի ու սլացումի ոյժ ամբարեց ան եւ ճի՛շդ մատաղ ծիծառնիկի մը ինալու ելլելու բազում փորձերէն վերջ՝ օր մըն ալ իր սաւառնո մին մէջ գտաւ ինքզինքը, որպէս Գորդէժ մը Ռափայելի նկարին դիմաց՝ գո-

չեչով. «Ես ալ նկարիչ եմ»: Եւ հիւմա՛ իր թեւածումին մէջն է ան դէպի որոշ կատարներ, հին կարգը աւերակելով եւ ընկերային օրինագիրքին մէջ տուն տարով սա՛ անվիճելի հատուածին թէ՛՝ «միայն սիրտին ու հոգիին կինը բաւարար ոյժ մը չէ՛՝ այսօր, այլ ասոր բով պէտք է կանգնի եւ գաղափարի կինը եւ ձեռք դնէ աշխարհի լծակին վրայ»:



ՆԵՎՐԻԿ Մ. ՍԵՊՈՒՆԵԱՆ

իմաստասիրական ու տնտեսագիտական գետնի վրայ, այլ ժամա՛ւանդ իրեն միայն վիճակուած բարձրագոյն դերին՝ գաւակներ կրթելու կոչումին բարոյական մեծ նշանակութեանը խորապէս գիտակցի իբր կենսական ու սրբազան հարցը ազգերու ապագային: Կատարելութեան այս բարձունքը ու գերակայ դիրքը երբ բուրգով է գրաւել ֆէմինիստ ոգին ու մայրական կոչումին իմաստը իրար զօրոզ ու ժառանգորդ կինը, կը կար՛ եմ, այլեւս առարկութիւն չի մնար ընտանիքին սեւա՛նքը: Կնոջ ուղեղը պէտք է ըլլայ ան, վասնզի երկու պարագային ալ կատա՛ւնը ներս թէ գուրցը պէտք է ըլլայ ան, կեանքի անթուղիքն, մամուլի գաղափարի գործիչ ըլլա՛յ խօսուն բեմերէն, վարչական անթուղիքն, շրջապատէն: Էջերէն, կամ աշխարհի ամենամեծ շէնքին՝ ընտանեկան ճունին շրջապատէն: Կը մնայ մեզ, ուրեմն, եզրակացնել թէ հայ կինը բացի իր տունին եւ իրենե՛րուն զմայելի նուիրումէն, մտքին մակարդակովը հասած կը համարուի՛ր բազմակողմ այս բարձունքին. «այո՛՞ն, կը կարծեմ, կը մնայ միշտ առարկելի ընդմաստոր համար գիմագծի վրայ, իսկ թէ՛ ո՛չ, լաւագոյն չէ՛ սխալ հասկցած իր ճամբէն ե՛տ զարձնել զինքը եւ ցոյց տալ ճանը ուղիղ ճամբան միայն, որովհետեւ թէեւ իրա՛ւ է որ տիեզերքի մեծ լոյսին տակ խաւար ոչինչ կայ, բայց չէ՛ որ գիշերը կը պահէ՛ միշտ իր արհաւիրքը»:

ՆԵՎՐԻԿ Մ. ՍԵՊՈՒՆԵԱՆ

ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԴԵՐԸ

ՄԱՐԴԱՍՅԻՆ ԿԵԱՆՔԻՆ ՈՒ ՃԱԿԱՏԱԳՐԻՆ ՄԷՋ

Վերնագիրս որ ինձի բարեմտօրէն առաջարկուեցաւ՝ խոստովանիմ որ առաջին անհարկիս բռնայանգի մը երեւոյթը առաւ պարզապէս, քիչ մը չափազանցուած եթէ ոչ բռնապարօսիկ կերպով իրարու զուգորդած ըլլալուն համար ըստ երեւոյթին երկու անկապակից եղբեր — գրականութիւնն ու... ճակատագիր, որոնց առընդէմ շատ շատ անօթի մնացած գրական մշակի մը դառն ճակատագիրն է որ մէջտեղ կը հանէ ու կը փաստէ: Ուրիշ ի՞նչ կապ մնտուել արդեօք: Գրականութիւն՝ ու անոր դերը մարդկային կեանքին մէջ: Կ'առաջնը հասկնալի ու տրամաբանական էր: Բայց ի՞նչպէս յարակցել գրականութիւնը ճակատագրի հետ. ա՞յգ. քան անագնութիւն մ'ունէր արդեօք գրականութեան տարրութիւնը մարդկային իրականութեան մէջ: Հաւատացէ՛ք որ ցարդ չէի խորհած այս կարելիութեան մասին:

Փոքրիկ մտածում մը, սակայն, բաւական եղաւ գոյութեան լիւրջ իրաւունք տալու՝ զուգահեռի վրայ գրուած գրականութիւն — ճակատագիր յարակցութեան: Խորհուրդներս գացին զէպի Ժողովուրդներու ճակատագրին բնորոշման ու բախտորոշման մէջ այնքան կարեւոր դեր մը խաղացող պարզակը, կրօնքը, ու պարզուեցաւ ամէն ինչ: Ի՞նչպէս ուրանալ գրականութեան դերը մարդկային ճակատագրին մէջ՝ երբ «Քուրան» մը, օրինակ, բախտորոշ դեր է կատարեր ձիւղալթարէն մինչեւ Մալայական արշիպելագոս երկարած գոտի Ժողովուրդներու քաղաքակրթական ու մշակութային գիմագիծը կազմելու մէջ: Եւ կամ Հրեան որ մի՛ միայն իր «Թօրա»ին ու «Թալմուտ»ին ապաւինած՝ դարերու մէջէն կերտեր ու վարեր է իր ուրոն ճակատագրերը: Ու ահա «Զէնտ — Ալէտառն», Զրադաշտի կրօնագիրքը, որուն ճակատագրական շրջանակին մէջ կ'իյնան Հայեւպարսիկ պատերազմները Վարդանի օրերունը նոյնը և Հնդկաստանի մէջ, ուր՝ «Ալէտառն»երու, «Պրահմանան»երու և Պուտտաներու հետեւորդներ՝ հանապազօրեայ արիւնայի կռիւ կը մղեն գրական տարբեր գլուխ գործոցի մը ետեւէն՝ դացող նոյն հնդիկ Ժողովուրդին ուրիշ մէկ զանգուածին հետ: Տարբեր է միթէ կոմիւնիկիտի համալրած չինական կրօնագիրքերու՝ «Քինկ»երու՝ և կամ Լաօ — ցէի «Թաօթէն-Քինկ»ին խաղացած դերը Մայրագոյն Արեւելքի հին պատմութեան մէջ: Եւ նոյնիսկ մեր օրերուն, մեր դրկից Պալքաններուն մէջ՝ ուր՝ Սերպ և Խրուսթ, նոյն ցեղէն և նոյն լեզուէն Ժողովուրդ, մշակոյթով ու քաղաքակրթութիւնով եւ ճակատագրով կը տարբերին իրարմէ, պարզապէս Լատին և կամ Սլաւ Աւետարան կարգալու տարբերութիւնը ունենալուն համար: Ահա, ուրեմն, կը տեսնենք թէ՛ «Աւետարան», «Քուրան», «Թալմուտ», «Ալէտառն», «Վէտառն», «Շիւքիսի» ու «Թաօթէն-Քինկ», բոլորն ալ գրական հսկայ արտադրութիւններ. բախտախաղի մէկ մէկ քուէի քար եղած են

Ժողովուրդներու ճակատագիրը վճռելու մէջ: Հոս, քանի որ ամենալայն առումով ամէն ինչ որ գրուած է՝ գրականութիւն է, կրօնականէն անմիջապէս վերջ պէտք է առնել նոյն տարրութիւնով և ոչ նուազ եռանդով քարոզուած ուրիշ դաւանանք մը — համայնավարութիւնը: Անոր աւետարանը եղող Գարլ Մարքսի «Իրամագլուխ»ը աշխարհը արդէն փոթորկած, աղանդներու ու ռազմաճակատներու է բաժնած, ընկերվարութեան ամէն մէկ երանգէն մինչեւ Ստալինեան կամ Թրոցքիական քոմունիզմ: Ի՞նչպէս ուրանալ գիրքի մը յառաջ բերած այս արմատական յեղափոխութիւնը: Դարձեալ, ի՞նչ բախտորոշ փորձաքարի մը կը յանձնէ մարդ ինքզինք՝ երբ ձեռք կ'առնէ Տարլինի մը «Տեսակներու Ծագումը» և կամ Հէյքէլի «Տիեզերքի Առեղծուածը» բանապաշտ գիրքերը: Անաստուածութեան ի՞նչ մեծ քարոզութիւնն է որ կը կատարուի, օրինակ, ինկլըստի մը գրութիւններով, գեռ պօլշէվիկեան «Անաստուածներէն շատ առաջ» Եթէ գրականութիւն ըսելով չէք հասկնար անպատճառ քերթուած վէպ կամ թատերգութիւն, այլ գաղափարի գիրքեր ալ ուրեմն կը տեսնէք թէ մե՛ծ է կարգալու ու գրելու ազդեցութիւնը Ժողովուրդներու և անհատներու ճակատագրին վրայ:

Բայց, այս տղ-գրական մարդին առարկոյնը գոհացնելու համար՝ յատկապէս պիտի սահմանափակուիմ միայն գեղագիտական գրականութեան կալուածներուն, և նկատի պիտի առնեմ ոչինչ ուրիշ քան վէպ, թատերգութիւն ու քերթուած կարգացող հասարակութիւնը: Անշուշտ, այս սեղմ տողերուն մէջ անկարելի է ամբողջ համաշխարհային գրականութեան ընձեռնած օրինակները ընթերցողին ցոյց տալը: Սակայն չեմ կրնար չիշխել մի քանի ցայտուն պարագաներ գէթ, ուր սանկ հասարակ վէպ մը բաւական եղած է բարենորոգչական դեր կատարելու մարդկային ընկերութեան մէջ, պետական միջամտութեամբ: Լաւագոյն օրինակը պիտի ըլլար հանրածանօթ «Աղբար Թոմասի Տնակը» որ Ամերիկեան քաղաքական պատերազմը բռնկուցի նպաստ գերիներու ազատագրմանը երբ նախագահ Լինքոլնի օր մը ներկայացուցին կարճահասակ հեղինակուհին՝ մեծ Ամերիկացին զարմացումով ու շիպումով բացազանչեց. »Այս է միթէ այն փոքրիկ կինը որ մե՛ծ պատերազմ յառաջ բերաւ: Եւ կամ նոյն Ամերիկացին օրինակ մը բերելու համար դարձեալ՝ մե՛ր օրերէն կ'առնեմ Ափթըն Սինքլէրի «Ճանկը» վէպը, ուր ան ցոյց կուտայ Լեհ ընտանիք մը որ Ամերիկա կը գաղթէ իբր աւետեոց իտէալ երկիր՝ և կ'իյնայ Շիքախի պահածոյ մտի դործարաններէն մէկուն մէջ, բայց շուտով կը հիասթափուի, հակամարդկային ու շարաշահող աշխատանքի մը տակ: Օրուան նախագահը իրող վէլթ՝ այս գիրքը կարգալով կ'ստիպուի միջոցներ տնօրինել նման շարաշահութիւններու գէմ վէճով մըն էր միայն այս պետական միջամտութիւնը: Ընթերցողներու համար կամ բէն կուգան Տիքընդի վէպերն ալ, ի նպաստ անտէր ձգուած տղոց, և կամ պարտքի գրանցի Ամէն տեսակէ ու վիճակէ մարդիկ՝ վէպը չէ՞ որ պատճառ եղաւ Պարբերակի մը անագին գումար մը կտակելուն՝ չբաւարներու յատուկ պալատի մը շինութեան համար: Աւելի ցայտուն և յամառ օրինակներ կրնաք յիշել Ռուս գրականութիւնէն, ուր ցարական հին օրերէն սկսեալ յանդուգն գրիչներ ձայնած են տիրող ապականած բարքերը ու պետական - վարչական յուս գրութիւնը, աչք առնելով բանտ ու քարտը ինչու է որ նոյնիսկ Թօլսթոյ մը իր «Յարութիւն»ին մէջ ա՛յնքան կը ծանրանայ բանտերու նկարագ-

բութեան վրայ՝ որ եթէ ոչ մատնանշելու համար անոնց վատ դրուածիւնը:

Գարննալ, կրնայ առարկուել թէ ամէն վէպ քարոզչական չի կրնար ըլլալ, և թէ միտումաւոր գրականութիւնը զուտ գեղագիտական չէ: Սակայն ի՞նչ է գրականութիւնը ինքնին վերջ ի վերջոյ՝ եթէ ոչ մարդկային խտեւաներու և հոգեկան յոյզերու արտայայտումը, Գեղեցիկին անունին տակ Գիւցազներգութիւններ, «Մահապարթա», «Շահնամ», «Իլիական» կամ «Ենէ-ական» ազգեր ու ժողովուրդներ են յուզեր, ցեղին առաքինութիւններուն, թուրքներուն, իտալացիներուն ու նուաճումներուն խորհրդանշաններն են եղեր «Էտտա», «Նիսիլուենկին», «Պէօվուֆ», «Ռոլանի երգ», «Սիտ» կամ «Քալէ վալա» մէկ մէկ աշխարհական աւետարաններ են եղեր եւրոպական ազգերու նախահայրերէն մնացած, ճակատագրականօրէն ճշդելով ցեղին կոչումը, նկարագիրը, խառնուածքը ու խտեւանները: Եւ կամ անոնք եղեր են ամբողջ դարաշրջաններու, որոշ մտայնութիւններու ու քաղաքակրթական հանգրուաններու հզօր ամփոփոյժ - արտայայտութիւններ, «Արթուրեան Ռոմանսները» աստեղտական - սիրային շրջանին, Տանգէ մը՝ միջնադարեան միսթիկ մշակոյթին, Թասսօ մը՝ Վերածնունդի շրջութեան, Միլտոն մը՝ մաքրակրօնութեան դուստր օրերուն, բոլորն ալ համայնագիտական հայելին ու բանալին որոշ ժամանակամիջոցի մը: Ժամանակի ու Միջոցի կապումները զրոյ անցնող ու ամէն ժամանակի, ամէն տեղի պատշաճօղ համամարդկային գիւցազներգութիւններ չն՞ոն արդեօք Շէյքսպիրի մը և կամ Կէօթէի մը գործերը, իրենց ամբողջութեանը մէջ, Եւ հակառակ իր արտաքին պարզութեան՝ որքան բարդ ու համամարդկային խորութիւն ունի Սէրվանթէսի մը «Տօն Քիչօթ»ը, որ տակաւին այսօր բնութեան ու մեկնութեան առարկան է իւրաքանչիւր սպանիացի գրողի:

Ամէն մեծ գրական երկ անուամբ գիւցազներգութիւն մէ, ըլլայ ան ծափածոյ ներստական բանաստեղծութիւն, արձակ վէպ, քնարերգակ քերթութեամբ թէ բնական կտոր: Մեծ գրագէտներ իրենց գիւցազներգութիւնները, այսինքն՝ ժամանակի ու շրջանի խտեւաններուն ու հուստեան գիւցազնացման պատկերը՝ տուած են օրուայ տրամագրութեան յարմար եզրանակով մը: Հիները չափածոյ գիւցազներգակ բանաստեղծութեան միջոցը կը գործածէին, բայց երբ ճաշակները ու տրամագրութիւնները փոխուելուն Պայրըն ու Փուշքէն, Շէլլի ու Մլուսէ, Հայնէ ու Լէոպարտի քնարերգեցին դուրուն գիւցազներգութիւնը, Աւելի յետոյ, Իպսէն մը բնագրեց իր օրուայ գիւցազներգութիւնը, իսկ հիմա՝ ահա նոր գրագէտներու փաղանգը որ կը վիպէ՝ այսօրուայ գիւցազներգութիւնը: Ամէն մեծ գրական երկ գիւցազներգութիւն մէ, ընդհանրական կամ անհատական կեանքի Կօլլոսը թիկնի մը կը գիւցազներգէ Վիքթորիական վերջացող շրջանին համայնապատկերը իր Ծորայթ Ոսկա»ով: Թոմաս մանի մը «Մոգական Լեռ»ը կուտայ այսօրուայ եւրոպայի մտայնութիւններուն տիպարները, Անտուէ ժիտ մը՝ համամարդկային տենչին ու մեղքին անբարոյապաշտութիւնը կը գիւցազներգէ, Մարսէլ Փրուսթ մը սայօններու ու ննթագիտակից յոյզերու շարժարուած խոստովանութիւնը կ'ընէ, ձէյմս ձօյս մը նոյն ֆրոյտական ներքնաշխարհին մէկ գիւցազներգութիւնը կուտայ, Սինքլէր Լուիս կը գիւցազնակերտէ: Ամերիկեան «Գործի մարդ»ը, Ռէյմոնթ կը գիւցազնավիպէ Լեոն գիւղացին ու բնութիւնը, Փիրանաէլլօ և Ունամունօ կը գիւցազնակերտեն անհատականութեան առեղծօրածը, Ունտաէթ կը գիւցազնակերտէ իտալ կիները, Հասանն ու Կօքթի կը գիւցազնավիպեն անթութիւնը ու անտառանգները, իսկ Կլասիկօ կը գիւց-

ցազներգէ աշխատանքն ու Հինդամայ Փլանը — մեծ գրագէտներ մի՛շտ կը գիւցազնակերտեն: Այս է գրականութեան ամէնէն յատկանշական ու էական գերը կեանքի մէջ, իր մշակութային ճակատագրական ազդակ — միշտ ամփոփել, խտեւանցնել կեանքի երեւոյթներն ու ձգտումները, մոռալ թէ Կպտուն, խտացնել, գիւցազնացնել և իր կտեւէն տանիլ ամբողջ ընթերցող հասարակութիւնը:

Նա՛տ է բնաշրջուած գրականութեան գերը մարդկային կեանքին մէջ այն օրերէն ի վեր երբ Ասորացի թագաւորներ «Կիլիամէշ»ի սեպագիր պնակիտները պահ կը դնէին Նիսուէի մատենադարանին մէջ, ու Եգիպտացի փարաւոններ «Մահուան Գիրք»ի պապիրոսներէն հատ մը կը զետեղէին իւրաքանչիւր բարեկեցիկ ննջեցեալի դագաղի ներսիղին: Այսօր գրականութիւնը ընկերարանական գեր է որ կը խաղայ աշխարհի երեսին, արտացոլացնելով ժամանակի պատկերները, հոգեբանութիւնը, ձգտումները ու սպրումները, ամբողջովին: Կարգա՛ Սուսէն Ռոլան մը եւ կամ Պարպուս մը՝ հաղորդ ըլլալու համար այսօրուայ հակադրային ազատամտութեան, կարգա՛ Վիքթօր Մարկըրիթ մը՝ տեսնելու համար այսօրուայ մանչ-աղջիկը, ու դարձեալ կարգա՛ Արեւմտեան ճակատին վրայ նորութիւն շփոթեցնող տեղեկանալու համար պատերազմի սպրումներուն թէ ինչո՞ւ սեռային ազդակ կը տիրապետէ մեր առօրեայ կեանքին՝ կարգա՛ Լօրենսը, Վիրճինիա Վուլֆը, Արտուր Հաքսլին, Լընսմանը, Վիլքիլը ու նո՞ր բանակը հոգեվերլուծող Եյանգուգններու: Եթէ կ'ընդես Նիւ Եօքթի գլխ կեանքին ծանօթանալ՝ կարգա՛ Տօն Տասսօը, եթէ կը փափաքիս Շուէտի պանդոկապետներուն մասին գաղափար մը ունենալ՝ պէտք է կարգա՛ Սիվէրցը, եթէ Պուտափէշթի կեանքի, մասին է որ տեղեկութիւն կ'ընդես՝ ահա Պապիկը, իսկ եթէ Ռուսմանիոյ դատարկագործներն են որ քեզ կը շահագրգռեն՝ դիմէ՛ ֆանայիթ իսթրաթիին Գրականութիւնն է այսօրուայ ժողովրդական համայնագիտարանը. ամէն երկիր, ամէն դատ, ամէն շարժում ու ամէն տեսակէտ իր բոլոր տիպարներով տեղ բռնած է հոն: Գրականութիւնը informationի մեծագոյն ազդեցն է այսօր, հաճելի, զբօսեցուցիչ, հրահանգիչ ու դատարարակիչ: Իր սկզբնական գերը՝ ան բնաշխարհ է արդէն, ասպարոսակերով ուրիշ շատ մը գիտութիւններու ու արուեստներու կարուածներէն ներս, աղա՛տ ու անկաշկանդ: Ան կը պատմէ ամէն բան, Յարերու թաղէն, մինչեւ Նիւ Եօքթի անթութի մաքսանհնգները կամ Հօլիվուտի սինէմայի աստղերը: Թղթատար օդանաւէն մինչեւ յիմարանոց, կրնա՞ք բանալ, կարգա՛ զբօսնուլ ու բա՛ն սորվիլ: Գրականութիւնը—Ես «արուեստը արուեստին համար»ի տեսակէտէն չեմ մօտենար անոր—կը սորվեցնէ՛, սակայն ո՛չ հին օրէնքի ըրածին պէտ տափակ «բարոյական» վնասելով մէն մի էջի կամ վէպի մէջ Բարոյականը միշտ կարգալով ու մաքուրը սերտելով չէ որ ձեռք կը բերուի. յաճախ զիտուած վերծ ու աննպատակ մէկ ուսումնասիրութիւնը կամ պատկերացումը «անբարոյական» կոչուածին՝ աւելի բարոյացուցիչ կ'ըլլայ քան հաղար քարոզ: Մնաց որ, Անգլեւամերիկեան դարձնութիւնը արդէն մի՛շտ պատրաստ է Լօրենսի մը, ձօյսի մը և կամ Կէրթըրու Շիվանի մը յանդիմանութիւնը խափանելու:

Այսօրուայ գրականութիւնը կը «բարոյախօսէ» տարբեր եզանակով մը աւելի ազդու և աւելի համոզիչ ու գրաւիչ: Հին գլուխ մարդիկ՝ «մարդ մի՛ մեռցնել, ոճի՛ր է, մե՛ղք է» պիտի ըսէին իսկ այսօր Թէոտոր Տրայզըր մը կուտայ ոճի՛րի մը գաղափարին ննթագիտակից ծնունդը, անոր իսկական պատճառները ու շարժիչներուն, պարագաներուն և ծնողքին վիճակած

պատասխանատուութեան բաժինը: Հին գլուխ մարդիկ, դարձեալ, պիտի ըսէին՝ «մէկը մէկ մի՛ արհամարհէք, ամօ՛թ է, մի՛ դք է»: Իսկ այսօր իւճին



ՅԱԿՈՒ ՄԱՐԹԱԵԱՆ


Օ՛րի մը նո՛յն այդ պատուէրը արդիական արուեստով մը կը տպաւորէ մեր վրայ, տարով հոգեվերլուծական մէկ պատկերը ա՛յն մարդուն որ «մազոտ կապիկ» է կոչուած միլիարատէրի մը աղջիկէն: Դարձեալ, հին գլուխ մարդիկ պիտի ըսէին՝ «մի՛ շնար, ամուսնական հաւատարմութիւ մը պահէ՛», տափակ խօսք մը, չոր ու ցամաք բարոյախօսութիւն մը: Այսօր վերճինիա վուլֆ մը իր «Տիկին Տալուէյ»ով կուտայ կնոջ մը պատկերը որ բարոյագէտ է, մաքրակրօն է, հաւատարիմ է, սակայն ենթագիտակից տենչ մը ունի իր մէկ այցելուին հանդէպ, որուն ինք ալ հաղիւ թէ տեղեակ է, հաղիւ թէ պատասխանատու է: Կրկին դարձեալ, հիները—ա՛հ մի՛շտ այդ հիները—չոր ու ցամաք կերպով պիտի պատկերացնէին շուքեան ու նախանձի տե-

սարաններ: Ա՛յսօր,—այո՛, մի՛շտ, ա՛յսօր—Տնփկտ Կարնէթ մը նո՛յնը կը ներկայացնէ մեզ տարով մարդ մը որուն կինը օր մը յանկարծ աղուէսի մը կը փոխուի և կը շնայ ուրիշ աղուէսներու հետ, իր մարդ-ամուսնոյն խորհրդաձոճութիւններուն ու տպաւորութիւններուն ներքեւ: Այսօր, արուեստը փոխուած է, ընթերցողին բանականութեան և յոյզերուն զիմու՛մ՝ ընելու ձեւը տարբեր է, և մանաւանդ՝ մոլութեան՝ մէջ մարդկային պատասխանատուութեան չափը նուազած է, շնորհիւ հոգեվերլուծման միջոցաւ երկան հանուած ենթագիտակից—անպատասխանատու մղումներու:» հիմա գրականութիւնը և բարոյախօսութիւնը կը հետաքրքրուին «մարդիկ ի՞նչ ոճի կը գործեն և ի՞նչպէս» է աւելի՛ «ինչո՞ւ կը գործեն և ի՞նչ ենթագիտակից մղումն է» հարցով: Գրականութիւնը ահագին դեր մը կատարած է ոճի ընթացքի ու պատասխանատուութեան նոր կշռաչափ մը հաստատելու մէջ:

Այս սեղմ գրութեան մէջ՝ անշուշտ անկարելի է մի առ մի թուել ու սպառել գրականութեան կատարած դերը մարդկային կեանքի մէջ: Այս հարցը, սակայն, չպիտի թողու՛մ առանց մատնանշելու ուրիշ հական կէտ մը՝ որ ա՛յնքան մեծ դեր խաղացած է ի՛մ կեանքիս մէջ անհատապէս: Գրականութիւնը պատճառ եղած է որ սերտեմ ու ճանչնամ բազմաթիւ ազգեր ու լեզուներ, տեղեկանամ անոնց բարքերուն, կենցաղին ու սովորութիւններուն, սերտեմ անոնց առաքինութիւնները, իտէայներն ու բարի մարդիկը, Համաշխարհային գրականութիւնը սերտողը՝ եթէ անկեղծ է և ուզողամիտ՝ ուշ կամ կանուխ համամարդկային կ'ըլլայ, ու չի կրնար ատել ո՛ր և է ցեղ կամ լեզու, քանի որ իւրաքանչիւր ժողովուրդ իր գրականութիւնով—հոգ չէ

թէ որքան ճշգրիտ ըլլայ ան—մէկ անհրաժեշտ մասնիկը կը կազմէ համատարած ամբողջականութեան մը որ մարդկային գրականութիւն կը կոչուի: Եղբայրական զգացումին, տիեզերական միութեան, համագործակցութեան ու սիրոյ սկզբունքին տարփոցումը, ճանաչումը ու հաստատումը՝ ահա այն խոշոր գերը որ կը վիճակի գրականութեան վերջ ի վերջոյ խաղալու համար այս փոթորկայոյց աշխարհին մէջ: Մասնագէտներ, լեզուագէտներ այսօր բուն ազբիւրէն կը կարգան օտար ցեղերու գրականութիւնները, լեզու չգիտցողներ՝ թարգմանութիւններու կ'ապաւինին, բայց եւ այնպէս՝ մանաւանդ ընդհ. պատերազմէն վերջ՝ մարդիկ աւելի՛ կը կարգան օտար գիրքեր ու հրատարակութիւններ, աւելի մօտէն կը ծանօթանան իրարու, ու աւելի շուտ է որ միջցեղային նախապաշարունակներ ու ատելութիւններ կը հարթուին, կը շփոթուին այս ծանօթութեան ու համակրութեան շնորհիւ: Ա՛յսպէս և այն ատեն է որ՝ Գրականութիւնը իր իսկական դերը խաղացած պիտի ըլլայ մարդկային կեանքին ու ճակատագրին մէջ:

Յ. ՄԱՐԹԱԵԱՆ



ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ ՊԻՏԻ ՍԿՍԻ ԾՆՈՂՆԵՐԷՆ

Այսօր մնացած է արդեօք մէկը, որ շղիտնայ թէ դաստիարակութիւնը արուեստ մըն է ձգտող խնամելու մարդը, այն ձեւով որ ի յայտ գան կամ ամբանան «Մարդ» ցեղին այն ամէն առաքինութիւնները, որ կ'ապահովեն անհատին ու ընկերութեան ֆիզիկական թէ՛ հոգեկան բնականոն կեանքը և ջնջուին այն ամէն անկատարութիւնները, որ կ'սպառնան անոր կրկնակ կեանքերուն Տեսակ մը պարտիզպանութիւն ըսենք, որ փոխանակ, զոր օրինակ, վարդենիններու, կ'աշխատի մարդու վրայ:

Եւ պարտիզպանը, մեծ գիտութեամբ և մեծ համընթացաբար կը կուտակէ իր բոյսին վրայ այն ամէն յատկութիւնները՝ ձեւի, գոյնի, հոտի, որոնք կը գոհացնեն իր գեղեցիկ ճաշակը: Այսպէս՝ սերունդէ սերունդ կը գեղեցկանան ծաղիկները, կը կատարելագործուին, զուգահեռաբար ընթանալով իրենց մասին կազմուած իտէալին՝ շինգ թերթեան վայրի վարդի դէմ կան այսօր ընտանի վարդերու հազարաւոր դանակներ (varieté) և չգ' սցուելի թէ ո՞ր կանգ պիտի առնէ այդ թիւը:

Դարերու ընթացքին ընտանի կենդանիներու վրայ տարուած գիտակից խնամքները հրաշք գործած են, ստեղծելով պահանջուած յատկութիւններով ցեղեր, և իւրաքանչիւր երկիր ունի այսօր և պիտի ունենայ վաղը և շարունակաբար իր պահանջները գոհացնող կովեր, ձիեր, խոզեր եւն: Հազիւ երեսուն տարի մը կայ որ ֆրանսացի ոստիկանապետ մը L'épine, արթուն և հեռատես, ստեղծեց ոստիկան շուներու ցեղը, որմէ անհնգուեցաւ Գերմանիոյ մէջ ուրիշ ցեղ մը՝ բանակինը, ցեղեր, որոնց մեծածախս, հուժկու ներկայացուցիչներն այսօր, առ ի չգոյ՛ն պատերազմի, զիջած են օրիորդներու հազարութիւնը փայտաշէտու Պոլսոյ փողոցներուն մէջ: Վաղը ո՞վ գիտէ ինչքան ցեղեր երեսուն պիտի գան մեր աչքին առջև:

Կենդանաբոյժներն և բուսաբոյժներն իրենց հրաշալի արդիւնքներուն հասնելու համար երկու դօրեղ ազդակներ կը գործածեն, միջավայրը և սևընդագործութիւնը:

Առաջին ազդակը, որ ամէնէն հինն է, կը կայանայ ստեղծել ընտանի գառնայիք բոյսին շուրջը միջավայր մը՝ առաւելապէս նման անոր, որուն մէջ ի սկզբանէ անտի վարժ էր ապրելու և որուն առաւելապէս պատշաճած էր: Ա. միջավայր հողի, օդի, լույսի, այսինքն կուտակում ուժերու: Բ. յօտում՝ աւելորդ ճիւղերու, այսինքն խնայողութիւն կեանքի ուժի Գ. պաշտպանութիւն արձախել վնասակետը դէմ, կլիմային անկանոնութիւններէ և մակաբոյժներէ:

Այսինքն 1. կարողութիւններու զօրացում, զարգացում և 2. կեղծոնացում դէպ ի որոշ, գիտակից ուղղութիւն:

Պրնդագործութեամբ 1. կ'ընտրէ ցեղին ազնուագոյն յատկութիւնները ներկայացնող անհատներն իբրև ծնող, կամ 2. պատուաստով կը գումարէ երկու ծնողներու յատկութիւնները, այսինքն գիտակից ընտրողութիւն լաւագոյն տիպարներու:

Հոս չկրկնենք այն հինցած գանգաւոր թէ աւելի հոգ տարուած է կենդանիներու և բոյսերու ազնուացման քան մարդոց, ոչ թէ անոր համար որ վերուտրիչ է դաստիարակներու, այլ վասնզի տեսնալը դարձանէր ի:

Դաստիարակութեան մէջ, ցարկ ի գործ դրուած ազդակը միջավայրն է կզած միայն: Ընտանիքի բնական և դպրոցի արուեստական միջավայրները զիրար լրացնելու ձեւով կը գործեն քաղաքակիրթ երկիրներու մէջ և գործածելով նրա թակահան թէ հոգեկան սնուցման, յօտման, պաշտպանութեան միջոցները:

Հայ դաստիարակութիւնը վար չէ մնացած ուրիշ ազդերու դաստիարակութեանէն թէ՛ իր սկզբունքներուն և թէ՛ մանրամասնութեանց մէջ:

Դարերու փորձառութեամբ ստացուած ճշմարտութիւն մ'եղած է այլևս թէ անօղջ միտքն, անօղջ մարմնոյ մէջ վնասուելու է:

Այս զիջութիւն զիւրին է հետեւեցնել թէ մարմնին է գլխաւոր լծակը կրթութեան, թէ բնականոն մարմնական զարգացումը գրաւական մը, էական պայման մըն է դաստիարակութեան: Թէ ախտագէտներու դաստիարակութիւնը դժուարին և ամուլ աշխատանք մըն է:

Արդարեւ այդպէս ըլլալն էր տրամաբանական, քանի որ ուղեղը՝ զգալու, խորհելու, գործելու կեղծոնական գործարանը, ուստի և դաստիարակութեան գլխաւոր մէկ յենակէտը, մարմնոյ մաս է այսպէս՝ ինչպէս են սիրտն ու ստամոքսը:

Համաշխարհային մեծ պատերազմին անհամար, աղիտարեր, երկարածիք ներհանքներէն մէկն այլ այդ շրջանին ծնած ու գէշ սնած մարդիկներու մտաւոր ու զգացական տկարութիւնն ու աններգաշնակութիւնն է, որ զիմտաւոր ու զգացական անյարմար բրած է յարատեւ ճիւղի և նկարագրի բնիք մասնաւորաբար անյարմար բրած է յարատեւ ճիւղի և նկարագրի տղուներութեան ու ազնուութեան և լուրջ ուսման, այն ատիճան որ Հայ Գողթոյը և մասնաւորապէս որբանոցները աղիտալի տառնապ մը կ'անցունեն դաստիարակութեան տեսակէտով:

Այսօր գաղտնիք չէ թէ մեր ներկայ ուսանող սերունդը, մտաւոր անցեալի հաշուով, ամէնէն տկարակազմն է մարմնով արդար է նաեւ որ ամէնէն թիթեւամիտն ու թիթեւաբոյնը ըլլայ միանգամայն: Վասնզի տկարանէն կազմ և լուրջ աշխատանքի լծուողները մահուան դատապարտուածներ են, որոնք կ'սպասեն մեռնի գործադրութեան իսկ թիթեւամտութիւնը, ծուրուորոնք կ'սպասեն մեռնի գործադրութեան իսկ թիթեւամտութիւնը, ծուրուորոնք կ'սպասեն մահուան զէմ, իբրեւ խնայողութիւն մտային կամ զէնքերն են՝ սպառման և մահուան զէմ, իբրեւ խնայողութիւն մտային կամ մարմնական ուժերու: Ընկերային յոյժ կարեւոր այս կէտին վրայ նախապէս մարմնական ուժերու: Ընկերային յոյժ կարեւոր այս կէտին վրայ նախապէս մարմնական ուժերու: Ընկերային յոյժ կարեւոր այս կէտին վրայ նախապէս մարմնական ուժերու: Ընկերային յոյժ կարեւոր այս կէտին վրայ նախապէս մարմնական ուժերու: Ընկերային յոյժ կարեւոր այս կէտին վրայ նախապէս մարմնական ուժերու:

Համաշխարհային մեծ պատերազմի իր ամենի գլանով ճնշեց, ճմլեց նաև չափահասներու մարմնն ու հոգին ամենօրեայ անօրինակ մտատանջութիւններով, անհաւասարելի սրտագոցերով, անբուժելի վիշտերով, անմոռանալի սուգերով: մշտատեւ անձկութիւններով, մահուան յարակալ տեսիլով: Արդե՛ւնք, այն որ այսօրուան չափահասութիւնն ալ չունի իր տարիքին տակուտութիւնը: Պայքարի, ինքնամոտրութեան ուղղամտութեան ուժը կորուսած, ինքն ալ հովիւրուն դէմ չուղեր ու չկրնար մաքառել ու անձնատուր է ամէն հոսանքի, վասնզի ու է ուժ ճիգ շահանջներ ու խարկանքը կուտայ գնացքի, նոյն իսկ յառաջիմութեան:

Չափահասութիւնն ալ հակեցաւ ուրեմն թիթեւամտութեան, ծուրուութեան և հաճոյակատարութեան և բան մ'աւելին այն է սերնդական կա-

մաւոր ամբողջական: Այս ամէնը բնագրական ինքնապաշտպանութիւնն սպառնա-
ռու մտնողն էր: Տեսակ մը օրը օրին կեանք, դուրի հեռատեսութեան, շրջ-
ջահայեցողութեան, երասիրութեան կարծի կեղեւին մէջ ամփոփուած կեանք
ինքնախնամ, ինքնահոգ որ թոյլ չտար զերուստի, այսինքն այլասիրական
վասնուստի:

Ծննդեան զէմ մաքառումէ պարտասած ամոններու պատահական նոյն
իսկ ակամայ ճգնիմ սերունդը, աւելի կ'իջեցնէ նոր սերունդի արժէքը:

Այս իրողութիւնները խորհիլ հուսան:

Պատերազմն ուրեմն ոչ միայն միլիոնաւոր զիակներով ծածկեց երկրի մը
բնակչութեան հոծ կերպարը՝ իր ամէնէն կարեւոր և կարկտան շրանոյ կէ-
տերուն վրայ, այլ և մնացողներուն արժէքը իջեցուց: Թէ քանակը նուազե-
ցուց և թէ՛ մանաւանդ որակը եղծեց:

Այսօր իւրաքանչիւր ժողովուրդ իր սերնդագործական կարողութեան մէջ
հարուածուած, վիրաւորուած է:

Արդար և անհրաժեշտ է ուրեմն սահմանաւորել սերնդագործութիւնը,
լուսաւորել ծնողներն իրենց ծնողական պարտականութեանց մասին, չլնո-
ղուէ որ հաճոյքը, բազմը կամ բնագրը վարեն այդ ընկերային աւագ գործը:
Մարդ էակը՝ բնագրական ամէն գործ բանականացնելու, գիտականացը-
նելու ընդունաւ, էակ մըն է: Այսօր, բանակը չափահաս դարձած երիտա-
սարդին զինավարժութիւն կամ պատերազմի արուեստն ուսուցանելէ առաջ
ամիսներով քայլել կ'ուսուցանէ անոր, որ առնուազն քսան տարիէ ի վեր կը
քալէ: Դպրոցներուն մէջ ընդհանուրին կը սորվեցնեն, ուսուցում, խմելու,
քնանալու, չնչելու, խաղալու, աշխատելու գիտական բանաւոր ձեւերը: Այս
ամէնը ձգտին պահպանելու անհատին կեանքն ու առողջութիւնը:

Սերնդագործութիւնը նուա՞յ կարեւոր գործ մըն է քան շնչողութիւնը
կամ քայլուածքը: Ընդհակառակը, իր անհատական և ընկերային բարձր հե-
տեւանքներով, գերազանցապէս նկատելի, գիտականացնելի, կատարելագոր-
ծելի գործ մըն է: Արդարեւ ընտանիքի մը մէջ զաւակ մը սիրոյ, գուրգու-
րանքի, խնամքի և մտատանջութեան առարկայ մ'ըլլալէ դատ խղճահարու-
թեան ալ պատճառ մըն է իր տկարութիւնով, ախտաժեւտութիւնով, մտա-
յին կամ հոգեկան անընդունակութիւններով, հակընկերային հակուձեւերով և
գործերով: Ո՞ր մայրը կամ հայրը չհպարտանար իր զաւակով, անմիջապէս
որ ան ծնի: Դարաւորապէս երկրագործ ժողովուրդի ներկայացուցիչ այդ մը,
ո՞րքան կը փառաւորուի արգ զաւակի մը ծնունդով, մայր մը ո՞րքան իրա-
ւամբ կը մոռնայ իր ցաւերը, երբ իր բարեկամները գովեն իր նորածնին
գեղեցիկութիւնը: Եւ որ ծնողն է որ չխղճահարիլ թերակազմ ծնունդով, կամ
ո՞րը չսաճնար իր զաւակներուն ու է մէկ թերութիւնով, նոյն իսկ այն
պարագային որ անոնց պաշտպանութիւնն ստանձնէ ճարահատ:

Թողունք ընտանի ասուակորներն ու թուղունները, ծառերն ու ծաղիկները:
Աւելի քան կէս դարէ ի վեր շերամի թրթուրները կոտորու և շերամարոյծ-
ները մոխրի վրայ նստեցնող չորս տարափոխիկ հիւանդութիւնները, իրենք
ծնողներու մէջ կը սահմանափակուին, շնորհիւ Բասդէօուի, փճացնելով այն
ձուերը, զորս ածող ծնողին մարմնոյն մէջ մանրագէտը երեւան բերած է այդ
մահացու հիւանդութեանց սերմերը:

Մարդուն որդին շերամի թրթուրէն ալ պակաս արժէքունի միթէ: Մեղք
ու ամբի չէ՞ միանգամայն որ մարդ իր սերունդին նուազ գիտապէս հոգա-
ծու ըլլայ քան անարգ թիթեռնիկի մը, որ իրեն գուրպային, չապիկին, թա-
ւիչին նիւթերը կը հայթայթէ միայն: Մեղք ու ամբի չէ՞ որ մեռաքնատու

թրթուրի մը ապահովուի առողջ սերունդ և մօր մը սերունդը թողուի բազ-
դին ու բնագրին, այսինքն քոյր ոյժերու ժամը հասած չէ՞ այլևս որ ծնու-
ցումն ալ առնուի գիտական ու գիտակցական շրջանակի մէջ:

Հեռատեսութիւնը պատկն է քաղաքակրթութեան: Ինքնամոռաց հողմա-
վար ընթացք այլևս այսպէս ըլլալու է: Պէտք է կազմակերպուել թո-
քախտին, ֆրանկախտին, ջերմամիզութեան, կուրխին, ջերմին և օրբեցողու-
թեան զէմ, որոնք, մալթելի էր որ մէկ անգամէն անճիտէին հիւանդը, փո-
խանակ արտադրելու կիսատ կազմ մը, որ անկրթելի է ու անկրթ պիտի
մնայ և շատ անգամ պատուհաս, իսկ միշտ բեռ ընկերութեան, տկարներու,
ոճրագործներու, խարդախներու, աւազակներու, յիմարներու, ապուշներու,
խելագարներու և ամէն կարգի անօգուտ կամ վնասակար տարրերու երկ-
րաչափական յառաջդիմութեամբ յարածուն բանակով:

Մինչ մէկ կողմէն պատուհաս արտերուն ծաւալուն հրդեհին խուժումը
հարկ կայ կասեցնելու իր տարածման մէջ հորիզոնական մակարդակի վրայ
ներկայ սերունդին մէջ, միւս կողմանէ հարկ կայ արգիլելու անոնց ուղղա-
ձիկ էջը յաջորդ սերունդներուն մէջ. ժառանգութեան անցած արտ մը իր
զիմակաւոր, անմիջ և ոչ պիտի կամ խորշելի, ոչ սոսկալի կերպարանին
պատճառաւ շատ աւելի լայնօրէն մուտք կը գործէ ժողովուրդի զանգուա-
ծին մէջ և հիզրայի անդամագրելի բազուկներուն մէջ հետզհետէ կ'առնէ
կը ճգմէ անպատասխանատու անմեղ սերունդները: Եւ Աստուած երբ անի-
ծէ, կ'ըսուի, եթէ սերունդ միանգամայն կ'անիծէ: Եւ բժիշկներն իրենց
բոլոր օգնականներով՝ քիմիական, բնագիտական, թէ բնախօսական և հի-
ւանդանոցներով, դատաւորներն իրենց պատժական օրէնքներու կազմածով,
ոստիկաններու, փաստաբաններու, բժիշկներու բանակով ու բանտերով,
դատարանները՝ հանրային կրթութեան բոլոր կազմակերպութիւններով և
իրենց մանկավարժական գիտութեամբն ու արուեստով տարիներ ի դուր պի-
տի ճգնին քաւելու ծնորայ վարկենին մեղքը:

Այլևս կասկած չէ մնացած որ ժառանգուած ախտերը մարմնը հար-
ուածելու հետ միասին կը հարուածեն մարդն իր ամէնէն փափուկ գործա-
րանին ֆալսակրթութեան գործարանին մէջ: Անոնք ոչ միայն կրկասեցնեն քա-
ղաքակրթութեան ընթացքը, այլ և զայն ետ կը դարձնեն իրենցմէ խարան-
ւածներուն մէջ: Ներկայիս, եթէ քաղաքակրթ երկրի մը կամ քաղաքի մը
բնակչութիւնը աչքի առջեւ բերենք, դժուար չպիտի ըլլայ մեզի՝ համոզուել
թէ հազուագիւտ են, եթէ գտնուին, այն շքնաղ տիպարները որոնք համա-
պատասխանեն 1932 տարույ ըսենք, քաղաքակրթութեան: Մարդոց բազ-
մութիւնը, եթէ շարժենք իրենց քաղաքակրթութեան աստիճանովը, շարքին
վարի ծայրը պիտի կորսուէր քարի դարուն խաւարին մէջ, մինչ վերի ծայ-
րը պիտի մխրճուէր ապագայի լոյսերու, հեռաւոր փարոսներու մէջ:

Քաղաքակրթութեան առաջնորդներու մօտէն հետեւելով ընթանալ ըստ
ինքնեան դժուարին գործ մըն է, առանձնաշնորհեալ օժտուածներու տըր-
ուած. իսկ երբ դարեւոր տեսողութեան մէջ ստացուած [և հալ] ամբա-
ցուած առաքինութիւնները կամ ընդունակութիւններն ալ փճացնեն ժառան-
գական արտերու թոյները, և շլթայաղերմ ընեն հազիւ զսպանելու մոլեգին
վարպ գնագիններն այլամերթօրէն անասնական և մարդկութիւնը հետզհետէ
վերագործեն իրեն նախնական վիճակին, դժուար չէ գուշակել թէ կրնայ
գալ օր մը ուր նախամարդ թաղէ ներկայ եւրոպական քաղաքակրթու-
թիւնը իր զանգուածին անդամագրելի ուժին տակ եւ այլուր վերսկսի իր
Պենելոպէի կտաւը:

Ո՞վ գիտէ, ո՞վ պիտի կրնայ հերքել թէ արիւնահեղ մեծ պատերազմն ինքն ալ 20րդ դարու քաղաքակիրթ դիմակին տակ ապրող ախտածէտ հագերանուծեան վրայ խարսխաց չըլլայ ի խորոց:

Ծնող անուանին արժանի անձ մ՞ուշեմն, կին թէ այլ, նուիրական պարտք պէտք է որ համարի ամուսնանալէ տղաջ, պատրաստուել անոր տեղեկանայ, ծանօթանալ այն ամէն կենսաբանական օրէնքներուն, որոնք կը վարեն սերնդագործութիւնը և որոնց այդանելի տղիտուծիւնը անտեղի՛ և բողոք յորդառատ արցունք կը հեղու ընտանիքներու մէջ: Յետամնաց արցունք անսպասու են և լոկ սիրտ կը մաշեցնեն: Բանաւորն այն է որ մարդ յարմար ժամանակին կանխահոգ ըլլայ, կանխու գիմագրաւէ և թոյլ չտայ որ պատահի աղէտը:

Եւ քսաներորդ դարու կնոջ մը ամօթ չէ՞ որ գիտնայ զանազանել գոյնեւրու անհամար երանգներ, սորվի հիւրասիրութեան ամէնէն նոր եղանակները, կամ նրբագոյն ասեղնագործութեանց վարպետ մ՞ըլլայ, կարենայ վիճարանիլ շարժանկարի կամ վէպերու դիւցազններուն կամ ուհիներուն վրայ, կամ ննջասենեակ մը, հիւրասրահ մը ճաշակով կահաւորել, յարգարել, հպարտանայ անուշեղէններու, կարկանդակներու ճարտարութեամբ, գիտնայ դաշնակ անել, երգել կամ նկարել, կամ համել կերակուրներ եփել ու հանգէտներու մէջ վիպակներ, ոտանաւորներ ստորագրել, վէպեր հրատարակել, հագուստ կամ գուլպայ կարկտել, եւ չգիտնայ թէ պէտք է ծնիլ կամ ի՞նչպէս ծնիլ, աւելի ճիշդ, ընտանիքին և ընկերութեան ի՞նչպէս տալ առողջ ու կրթելի վաւակ: Ինչպէս խնամել, ինչպէս մեծցնել զաւակ մը, փառք ու պարծանք աշխարհի Ամօթ չէ՞ որ վաւակն սփինքս մ՞ըլլայ անոր համար ուրուն առջեւ պոչն ու բոքէն պարզած են իրենց բոլոր գազանիքները:

Ձաւակ մը վերջապէս, նուա՞ղ արժէքաւոր է քան ո՞ր և է ասեղնագործութիւն կամ վէպ: Միթէ նուա՞ղ շնորհաւորելի է կին մը իր յաջողած վաւակով քան իր պատրաստած cakeով ու puddingով:

Դատապարտելի չէ՞ որ այլ մը տարիներ փոխ դպրոցներու մէջ կամ ոչ, տարիներ աշխատի երկաթ ձեծելու արհեստը ձեռք ձգելու համար, տարիներ գերծակ վարպետի մը գլուխ ծռելու համակերպի այրեր կամ կիներ ճաշակաւոր կերպով զբեստաւորելու համար, գիտնայ ճաւել քաղաքականութիւնէ, կարենայ վիճիլ նարտի կամ թղթախաղի նրբութեանց վրայ, գիտնայ կտաւ կամ կերպաս հիւսել, կառուցուածքի հրաշալիք անդրատանտեաններ անվտանգ ձով իջեցնել և սուրայնել ամենի այլքներուն վրայ, նրբագոյն մեքենաները յղանալ ու կազմել, բազմազան ճառագայթները ձերբակալել ու իրեն դերի գարծնել, գործարանաւոր մարմիններ համադրել, քաղաքներ հիմնել, օրէնքներ դնել և չխորհիլ կենսաբանական օրէնքներու վրայ ու չը գիտնալ թէ ի՞նչպէս պէտք է վարուել ու ինչպէս չվարուել որ կարելի ըլլայ կազմել մարմնոյ աշխատանոցին մէջ՝ համագործութեանց ամէնէն հրաշալին, ինքնաշարժ մեքենաներու կատարելագոյնը:

Գործարաններն՝ իրենց արտադրած մեքենաներուն վրայ չեն դրօշմեր գտնէ իրենց անունը, երբ արտագործութեան տեսակը ցած նկատեն իրենց համբաւէն, իսկ հայր մը կրնայ նոյնն ընել երբ իր սպասածը չըլլայ ան:

Անխմաստ չէ՞ տարիներ տքնիլ, ճգնիլ հարստութիւն գիղելու և գիտապէս ու գիտակցապէս չպատրաստել այն սերունդը, որ իրմէ աւելի պիտի օգտուի անկէ: Որո՞ւ համար այդ կալուածները յարկ յարկ, միլիոններ բարդ բարդ, խեղճ, փոքրուղեղ ապուշի՞ մը համար, որ երախայի մը չափ անկարող է ինքզինքը կերակրելու, թէ ո՞ր և է աշխատանքի անընդունակ խելագա-

րի մը որ պիտի սպառի ու պիտի սպառէ անհաշիւ՝ մինչև կեանքի մտմը մարի վերջապէս:

Անհանգուրծելի չէ՞ որ այլը յոխորտայ իր խելքին վրայ և չկարենայ խելացի սերունդ ծնուցանել:

Թողո՞ւ է որ անտեսանելիօրէն փոքրերը, բոյս թէ կենդանի, մանրէներն իրենց աննշմարելի թոյներու հոսանքին տակ քշեն տանին երկրագունդիս կեանքին բարձրագոյն յաջողած մարդը: Արդեօք մայր բնութիւնը յոխորտացող կազմի իր արմատին տակ սօրք մը դրած է անպիտան:

* * *

Երանելի ժամանակ այն ուր քարոզիչ մը կը բացագանչէր, կ'աւաղէր «Ինչ կ'արժէ մարմինը շահիլ և հողին կորսնցնել», այսօր հարկ կայ ուրիշ ձայնի վայ աւաղելու. ի՞նչ կ'արժէ ապրիլ և հողին ու մարմինը կորսնցնել:

Ապրիլը արուեստ մըն է զոր ի գործ դնելու կոչուած է ամէն մարդ, արուեստագէտ, արհեստաւոր, գիտուն, տգէտ, այլ թէ կին, մանուկ ու ծեր անխորաբար, և ամէն գործէ առաւ: Ուստի հարկ է որ զայն սովոր մարդ շատ կանուխ և գործէ ցմահ. վասնզի ամէն զբաղումէ կրնայ հանգստեան կոչուել, բայց կեանքի արուեստի կիրարկումէն մահը միայն զերծ կրնայ կացուցանել:

Որքան զժբաղուածութիւններ, յուսախաբուծիւններ, տառապանքներ պիտի կանխարգիլուէին և ի փոխարէն կեանքը ո՞րքան դիւրատար, երջանիկ պիտի դառնար ու ցեղը պիտի ազնուանար եթէ մարդիկ ըմբռնէին ազբուլու արուեստին գոյութիւնն ու կարեւորութիւնը և խոնարհէին զայն առնելու՝ անոր վարպետներէն, բժիշկներէն, և բժիշկներն ալ անշահախնդրօրէն լուսաբանէին, տեսական հոգածութեամբ առաջնորդէին ժողովրդեան հոծ բազմութիւնը, առանց սահմանափակելու իրենց խորհուրդները պատահա կան հրաւերներու մէջ:

Պէտք է ընդունիլ ամբապէս թէ որդեծնութիւնը ընկերային գործ մըն է: Արդարեւ անիկա իր հիման մէջ իսկ սոսկ անհատական չէ և ծնողներէն մին՝ միւսին բերելիք չարիքին համար ընկերային ձեւով պատասխանատու է: Եւ մեծ մեծ ընկերութիւնը պարտաւոր է ինքզինքը պաշտպանելու բոլոր թերի ծնունդներուն դէմ: Սպարդա կը փճացնէր զանոնք: Կեանքի ըմբռնման ներկայ ձեւին մէջ կարելի չէ նոյնն ընել, մանաւանդ որ այսօր կարելի է կանխարգիլել ընկանոնէն չեղումները:

Ինկերութիւնը պարտաւոր է մէկ կողմանէ տարածել որդեծնութեան գիտութիւնն ու արուեստը ձեռնհասներու միջոցաւ՝ բժիշկ, դաստիարակ, ծնող և ուրիշներ, միւս կողմանէ առանց արգիլելու ամուսնութիւնը, կարգաւորել որդեծնութիւնն, ըստ պարագային առժամապէս կամ առ յուսէտ սահմանափակելով զայն:

Արժանապատուութեան տեսակ մը վիրաւորանք կը տեսնեն ոմանք, որ ընկերութիւնը միջամտէ ընտանիքի այնքան մտերիմ մէկ անկեանս: Այդ առարկութիւնն ընդունելի պիտի ըլլար, եթէ բժիշկներն արդէն հարկադրաւոր չհրաւիրուէին այդ անկեանին մէջ ծագած հրգեհը մարելու: Ասկէ զատ, կրթութեան խնդիր ալ է: Տեսակ մը կեղծարուածութիւն կ'ուզայ մեզ հինէն, որ մեզի չթոյլատրեր խօսիլ ոչ միայն սեռային հիւանդութիւններու վրայ,

այլ և թորախտին ու լուսնոտութեան, որոնք իրենց անուններով ալ չեն յորջորջուիր յաճախ:

Երբայցեւոյ մէջ, Ա. Գրոց գիտութեամբ կ'առաջնորդուէին ամուսնութիւնն ալ, որդեծնութիւնն ալ, եւ ոչ ոք մտքէ կ'անցնէր գայթակղիլ կամ ընդդիմել: Վասն զի ամէն ոք հոգածու էր իր սերունդին այնչափ, որչափ իր անձին:

Առարկութիւն մըն ալ կայ որ կը կարծէ թէ որդեծնութիւնը կարգաւորելը համարժէք է մարդը՝ ոչխարներուն, շուներուն հաւասարեցնելու: Ի՞նչ ի՞նչ ընենք, եթէ մարդուն արդասաւորման օրէնքները կը հպատակին ստնաւորներու մէջ տիրող ընդհանուր օրէնքներուն: Ընդդիմելն կէտ մը չփոխէր իրականութեանէն: Դարձեալ, թէ ընտանի կենդանեայ վրայ կիրարկուած ընտրողութիւնը (selection) կարելի չէ կիրարկել մարդոց վրայ, քանի որ առաջնոց կենցաղն ու վարմունքը մարդոց հսկողութեան տակ է, իսկ մարդոց, որպէս ազատի, կենցաղը ոչ միայն չէ կարելի, այլ եւ ներքին չէ հակակշռել:

Նախ այսօրուսն անկարելին չէ անհրաժեշտաբար վաղուանը:

Յետոյ ազատ է մարդ, որքան ատեն որ անփնտո է: Ոճրագործ մըն ալ նոյնքան ուժգնութեամբ ունենալու է իր ազատութենէն ճառելու: Վասն զի մեղապարտ նկատուած ոճրագործը ծնած ու ապրող մը կը վիրաւորէ կամ կ'սպաննէ, իսկ ախտաժեշտ մը մեռած կը ծնուցանէ կամ ծնելէն առաջ կը վիրաւորէ անդամանելի կերպով: Չեմ գիտեր թէ ո՞ր արդարութիւնն է այն, որ երկրորդին աւելի ծանր պատիժ մը չպիտի սահմանէր: Խղճի ո՞ր դատաւորն այս դարուս պիտի համարձակէր արդարացնել ծնողները իրենց տգիտութեան մէջ: Աղիքսանդրիոյ մատենագրանն այրող զինուորին արդարացումը թէ կարդալ չգիտեր, բաւելո՞ւ է միթէ այն պարագային:

Եւ ընտանի ստնաւորներէն դանաղանուելու ամէնէն բանաւոր միջոցն է անոնցմէ բարձր գիտութիւն եւ գիտակցութիւն ունենալ: Փոխանակ սպասելու որ փնտրի, վտանգի ենթակայ ընկերութիւնը պատճառ ունենայ ինքզինքը պաշտպանելու ապագային համար, իւրաքանչիւր ոք թող ինքն ունենայ արդարութիւնն ու ընկերային ոգին՝ իր ծնողական բնազդները կամ բնախօսութիւնը գիտականացնելու, այսինքն հետաքրքրուի որդեծնութեան արուեստով եւ նպաստէ իր յեղին աղնուացման՝ իր իսկ աղնուացմամբ:

* * *

Կանխահաս չէ որ բժիշկները, թօթախելով իրենց գիտողի դերը, արգելիչ իրաւունքներով գործնապէս առաջնորդեն երիտասարդութիւնն՝ ամուսնութեան եւ ամուսնեան՝ իրենց կենսածին գործունէութեան մէջ, լեցնելով այսպէս կղերին՝ դասալքմամբ բաց թողած տեղն ու պաշտօնը:

Կանխահաս չէ դարձեալ որ Հայ դպրոցը արիարար թօթափէ ժառանգական անտեղի ամօթխածութիւնը և ի սէր իրեն յանձնուած թանկագին աւանդին, նոր սերունդին ուսուցանէ, ինամեալ մանրամասն ծրագրով՝ մը, անհատական և ընկերային կեանքերն ապրելու արուեստը համընթացոր ուրիշ գիտութեանց եւ արուեստներու:

Կանխահաս չէ որ ձեռնհաս անձանց հրատարակութիւններով, բանախօսութիւններով ընդհանուր շարժում մը այս ուղղութեամբ առաջ բերուի:

մտքերուն մէջ, որոնք յաճախ առ ի չգոյ՛ կարեւոր նիւթերու, ունայնութիւն կը ծամծմեն, մոխելով ուժ ու ժամանակ թանկագին:


Կանխահաս չէ որ ձեռնհաս ծնողք գիտակցին իրենց պարտականութեան և յանձն առնեն կատարել պայն մտերմօրէն իրենց դաւակաց մօտ, չթողլով որ իրենց դաւակները խաղաղիկ դառնան իրենց բնազդներուն ու տգիտութեան և կեանքն ընդունին ինչպէս որ է, և անոնց քովն ի վեր մղեն զիրենք՝ ապրելու կեանքը քսաներորդ դարու գիտութեան, փորձառութեան համաձայն:

Այսպէս, դաստիարակութեան ընձեռելով սերնդագործութեան ազդակը, կարելի կ'ըլլայ զայն գէթ բարձրացնել բուսարուծութեան կամ կենդանաբուծութեան աստիճանին:

Եւ խորհի՛ւ թէ մըջիւններն ու մեղուները, միլիսնէր, անյիշատակ դարերէ ի վեր այնքան ստուգապէս գիտն որդեծնութեան օրէնքները որ կանոնք հեղինակօրէն կը կիրարկեն իրենց ընկերութեան համար անհրաժեշտ արուեստը, էգերու կամ գործաւորներու համեմատական թիւը պահպանելու համար, այսինքն իրենց ընկերութիւնը բազկացնող տնտեսներու քանակն ու որակը կրնան տիրաբար վարել, իսկ Մարդը... տակաւին աչքերը կը չփեթթին աւելնալու համար:

Ա. ԳԻԿՈՂՈՍ ԵԱՆ

Շիրի 5 - 9 - 32



[Faint, illegible text in the upper left section of the page, possibly bleed-through from the reverse side.]




[Faint, illegible text in the lower left section of the page, possibly bleed-through from the reverse side.]

ԳԵՂԱՐՈՒԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ



ԲՐԱԿԱՐԱՐԱՆԻՇ



Էփիկոնոս,

մեծնոյ ստեղծարարիկը

Հոռոմ
[Պատկեր թիվ 1]

ԳԵՂԱՐՈՒԵՍԻ ՇՐՈՇԱԿԵՐՏՆԵՐ

«L'arte è un mezzo per conversare
congli uomini. nou un finē. (*)»

P. MUSSORGSKY

Ա.

Սկզբունքներու ճնտնդը և անոնց հետզհետէ բարդաւածումը արդիւնքն



Ա. ԳԱՐԻԳԵԱՆ

է մարդկային հոգեկան Արդաշը-
ման անմիջական երեւոյթներուն.
որոնք, դարերու ընթացքին են-
թարկուելով տիեզերական թա-
ւայումի բացարձակ, տիրական և
անվերջանալի օրէնքին, յղիւե-
լով, և միանգամայն ներշնչուելով
ընտելեան արտաքին գեղեցկու-
թենէն, ու ազդեցութիւնը կրելով
անոր ներդաշնակութիւնը ստեղ-
ծող աներեւակայի ուժէն, զոր
կը պատկերացնենք մեր իմացա-
կանութեան առջեւ, ըստ մարդ-
կային երեւակայութեան, որուն
առանցքն է մեր հոգեկան բարձր
ու անսահման ըմբռնողութիւնը՝
լոյսի ու խաւարի մարտնչման,
երկրագունդս շրջապատող այս
կապոյտ մթնոլորտին մէջ:

Հարկ չկայ ընդհանուր ուրուա-
գիծը պատկերացնել գեղարուես-
տի սկզբնական անորոշ շրջանին.
(որը, աւելի կարծիք է, քան թէ
չօշափելի իրականութիւն մը.)
Երբ որ մեզի հարկաւորն է
պարզել անոր արտաքին ու ներ-

քին աղբ բնորոշող խնաստասիրական մեկնումի կէտը, որը՝ իր կարգին՝ հո-
գեկան ծանր երկունքէ մը վերջ, լոյս կ'ընծայէ մէկ մասնիկը իր ներքին աշ-
խարհի տեսիլքին, որուն մէջ թաքնուած կան նպասակը, մասնումի բացար-

(*) Գեղարուեստը մտքոց հետ կենակցելու զգացումներու ու զարգացման
միջոցն է. սակայն, ո՛ր վերջաւորութիւն մը: Պ. Մուսորսկի

ձակ անհասականութիւնը,*) մտային զարգացման աստիճանը իր թոյր կասարե-
չութիւններով, ու որոնց կը յայտդէ ձեռի ու գոյնի ընդհանուր ներդաշնակու-
թիւնը. ուր, ճաշակի ուժն է որ կը տիրայեց:

Ու այսպիսի վիժխարի, ու հոգեկան ուժեղ կառուցուածքով գեղարուես-
տի գործ մը, երբ իր յղացումը կը պարտի մարդկային ոգիին, ու որը իր
կարգին իր լոյսը կ'ստանայ տիեզերքէն, դատապարտուած է նաեւ մեռնելու
լոյսի այս անմահութեան հետո(**)

* * *

Տեսանք, թէ՛ գեղարուեստը մարդկային հոգեկան աշխարհի վեր-
ջացական ապրումի զանազան վիճակներն է որ կ'արտայայտէ, որոնք, ուղ-
ղակի հետեւանքներն են կեանքի ստեղծած անմիջական պահանջներուն:

Եթէ նկատի առնենք մարդկային քաղաքակրթութեան պատմութիւնը
սկսեալ իր նախնական դարաշրջաններէն, այն եզրակացութեան կը հասնինք,
թէ՛ մարդը ի բնէ յատկութիւնն ունի գեղեցիկին երկրպագելու, և զայն
տեղծելու ըստ իր հոգեկան կարողութեանը:

Շատ մը երկիրներու մէջ իմացական կարողութիւնները մնացած են ան-
մշակ, ոմայ՝ սկզբնական շրջանին խի, արդէն գոհացած են բնութեան
ստեղծածով: Այսպէս, որքան որ արեւելքի ժողովուրդները ունեցած են
խորհրդապաշտ երեւակայութիւն մը, սակայն անոնք յարատեւօրէն չեն
մշակած այդ ուժը, ու կամ եթէ ջանացած են զայն ի լոյս բնծայելու,
ընդհանրապէս արտադրած են այնպիսի գործեր, որոնք չեն համապատաս-
ներ իրենց զարհուրելի երեւակայութեան, ապա, հսկայական աններգաշնակ
տաճարներ, գոյութիւն չունեցած հրեշի գլխով և մարդու կերպարանքով
աստուածներ, ու ամէնէն կարեւորը զոր ամէն բանի սկիզբի ու վերջի
օղակն է, այն է, մարդկային դասակարգերու բաժանումը ու քարացումը,
զորս նիւթական ուժով շլթայած է մարդկային նոյնի՛սկ ազատ գաղափա-
րականը:

Ու այս դարաշրջաններու(***) Գեղարուեստի բոլոր արտադրութիւնները
կը կրեն իրենց արտայայտութեանց շեշտին մէջ գաղափարի կաշկանդիչ այս
թշուառ դրոշմը:

Շատ ու շատ տարբեր է յունական գեղարուեստի ընդհանուր աշխար-
հայացքը ու անոր հաղարուժէկ տեսակի ստեղծագործումները, որոնց ազ-
դեցութիւնը այնքան դարեր տեւած է ու դեռ կը շարունակէ տեւել իր ե-
զակի ու զտուած նկարագրով: Զարմանալի է անոնց կրօնքը, որ աւելի
գիւցազուններու համաստեղութիւն մըն է, քան թէ մարդկային խղճմտան-

(*) Ռոմն մեկնումի կեռք, արևու զօրութեամբ քալանցելու է թոյրին
զգացողութեան մեջ այնպիսի հաւասար ներդաշնակութեամբ մը, որ սիրելի ըլլայ
ու միակզանայն օգտակար, ինչպէս արևու յոյսը ու անոր զօրութիւնը: Ա. Գ.

(**) Եւ կամ հնչադակը. քե՛ կ'ը գեղարուեստական գործ մը պակսի վերը
յիշած այս կամ ոյն հիմնական առաքինութիւններէն, մարդու կեանքին չափ,
անժամանակեայ սարճամ սեւականութիւն մը պիտի վարէ, մի՛շտ ըլլալու ու չը-
լալու սարակուսանով: Ա. Գ.


(***) Խօսքս Բրիտանոս առաջուան ֆալափախրութեան մասին է, եգիպտական,
Բաբելոնական, Ասորական եւ այլն երկրներու. իսկ հոս, մասնաւորապէս դասա-
կարգերու փոխան լեզուականին որ աւելի շեշտուած է, ու ուշադրութեան
արժանի: Ա. Գ.



Էպոկոսն (Գործ երեք արտեստագետներու 50 ր. Գ.է առաջ) Հուս
[Պատկեր քիւ 2]



Faint, illegible text at the bottom of the left page, possibly a caption or description of the image above.



ᐱᐱᐱᐱᐱᐱ ᐱᐱᐱᐱᐱᐱ

ᐱᐱᐱᐱᐱᐱ ᐱᐱᐱᐱᐱᐱ

ᐱᐱᐱᐱᐱᐱ
[Inshur p/a 3]



Միքէլ Անճելո

Մոսկովսկի

Հոմեր

[Պատկեր թիւ 4]

քի բարձրագոյն մշակմանը ծառայող, ընդհակառակը ան հիմնուած է ներ-
դաշնակութեան այն սկզբունքին վրայ որ Փիթագորասեան գործոցի հիմնա-
կան օրէնքն է, և տեսակ մը գործնական պատգամը, որոնք ի յայտ կուգան
իրենց կազապարուած ու շատ ճշգրիտ համեմատութեամբը: Անոնք, իրենց
արտայայտութեան շարժուածիւն մէջ, Գեղարուեստի տիեզերականութեան
աղբեցութիւնը կը կրեն, սակայն, հեռու Սոկրատի անսահման առաքինու-
թենէն ու Պլատոնի գաղափարապաշտութենէն:

Կրօնքը իմաստասիրութեամբ կը մեկնէ տիեզերքի գաղտնիքը, ու մարդ-
կային մտքը լուծելով զայն իր հոգեկան անհուն խորհուրդին օգնութեամբ,
կը միացնէ զայն կեանքին, և ըստ Պլատոնի — «Մարդիկ ծնելէ առաջ
եկ'ապրին Տիեզերական հոգիի մը մէջ. ու կը խողան իրենք իրենց մէջ այն
բազափարի մասին, որ օր մը պիտի աճի անհատականութեան մը մէջ, ու
պիտի յիշէ ներշնչումը ու խողումը այն սկզբունքի մասին, որուն իրակա-
նացումը, ու յաւիտեական բեղմնաւորումը կախում ունին կեանքի ու գա-
ղափարի ստեղծած զուգաւորումէն»:

Եւ սակայն, դիւցադնական ոգի ունեցող Յունական Գեղարուեստը չէ
կրցած ամփոփել մարդկային մտածումի բարձր գաղափարականը. թէ՛ ար-
տադրել այնպիսի հրաշակերտներ, որոնց մէջ տիրապետէ կրօնքի յաւիտե-
ական ազատամտութիւնը ենթակայ տիեզերական անյերջանալի ուժին ու
խորհուրդին: Երկրորդ, միացնել այն ինչ որ մարդկային զգացումին կը վե-
րաբերի. ու սնուցանել այնպիսի գաղափարներ, որով մարդկութիւնը բարո-
յապէս բարձրանայ ու տիրանայ իր հոգեկան անձանօթ կարողութիւններուն:

Յունական գեղարուեստին Տիեզերականութիւնը կը կայանայ իր գեղեցի-
կաբիտական անդոյդ ներգաճակութեան սճին մէջ, որուն աղբեցութիւնը
պիտի թագաւորէ, եթէ Գեղարուեստի անձայրածիր երկնքին մէջ, տեղի
չունենայ սկզբունքներու արմատական յեղաշրջում մը: (*) [Տեսնել թիւ 1 նը-
կարը]:

Երկու նշանակալից գլխաւոր կէտեր գիրար կը խաչաձեւեն Յունական
Գեղարուեստին մէջ, ու մէկը միւսին խոտոր կը համեմատի. առաջինը, իր
սկզբնական շրջանին մինչեւ Բիթիաս ու Ռեմն Ալեքսանդր. երկրորդը այս
մեծ աշխարհակալին մահէն վերջ: (323 Քրիս. առաջ)

Առաջինին շեմ մօտենար. քանի որ անոր զանազան կ'տեսրը անուղղա-
կիօրէն շօշափեցի- երկրորդ, նպատակ է պարզել այնպիսի նիւթեր, որոնք
իրենց արտաքին երեւոյթներով արթնցնեն մեր ներքին աշխարհին մեզի
նոյնիսկ անձանօթ մնացած ձերքերն ու ընդունակութիւնները: (**)

(*) Կերկայ ձգսումները քեռ սաքալերից ևև. և սակայն իրենց ինչ ինչ դա-
նումներուն մէջ, քաջալայտօրէն կը կրկնեն Յունական, Հռոմական վերա-
ծնունդի ազդեցութիւնը:

(**) Հոս անշի պայծառ օրինակ մը տալու համար յիշեմք վերածնունդի և
տակաւակի վարպետներէն մէկն. որ է, Antonio Allegri անուամբ. (1489-1534) երջնուած Եփեսոսէն ու
Միխի Անճէրիսէն ստեղծելով նուրբ, անուշ նայումով ու անձանօր մտածումի
մէջ քաջնում դեմքեր: Ան երբ առաջին անգամ կը տեսնայ Ռաֆայէլի շնոր-
հալի ու երկնային շունչով օժտուած Աստուածայինները, յանկարծ ինքն իր մէջ
կ'զգայ զարթնումը այլ ձիրքի. որ յետոյ զինք անմահացուց: Ան ինքնաբերաբար
կը կոչէ իր ներքին ձայնովը (Passione) ևս ալ նկարիչ և: «Auch'io sono pittore»
Ա. Գ.

Ոլիմպոսը անմահացնելէ, Եւ Հոմերական երեւակայութիւնը երականաց-
նելէ վերջ, կը մնար կերտել մարդկային զգացման արտաքին ու ներքին,
վշտի ու ուրախութեան զանազան վիճակները:

Երկու դպրոցներ հիացման արժանի են. առաջինը Pergamo (Իդիքի ձիւ-
սիւսային կողմը 240 թուականին Քրոս, առջ Բաթալ Ի Թագաւորութեան
օրով) երկրորդ մեզի ծանօթ Rodi կղզին: (Այսօր այս կղզին կը պատկանի
Իտալացոյց) Այս երկու դպրոցները գրեթէ երկու դար շարունակ յառաջդի-
մեցին ու շատ ճշգրիտ կերպով վերլուծեցին մարդկային զգացումի զանա-
զան վիճակները. (ցաւ, վիշտ, տառապանք ու այլակերպական այլ և այլ
գիւցազներու երեւոյթներ) անոնք այս անմիջական ու կարճ ժամանակամի-
ջցի յեղաշրջման ընթացքին, մարդկային միտքը բարձրացուցին մինչև այն
գագաթնակէտը՝ որը՝ անծանօթ էր նոյնիսկ Ոլիմպոսի գիւցազուններուն, ու
որոնք նկարագրուած են Հոմերի լոյս էջերուն մէջ որպէս մարդկութեան
կատարեալ տիպարներ: Անոնց ցաւը գիւցազնական արճամարանք, ու այ-
լարանական հպարտութիւն միայն ունի: Սակայն, իսկական մարդկային ցաւը,
բողբոջ է իր սկզբնական շրջանին, իսկ վերջին հառաջանքները, ուժերու
աստիճանական սպառումը, կը քանդէ ու կ'օշնչացնէ իր բոլոր նախկին
յաղթանակները. ու կը տիրապետէ այն ուժը զոր կ'անուանենք մարդկա-
յին Ոգի:

Նոյնն է երկրորդ դպրոցին արտադրութեան մէկ գլխաւոր կերտումը,
սա տարբերութեամբ, թէ՛ առաջինը կ'ապրի իր վերջին վայրկեանները հե-
ռու հայրենիքէն ու սիրելիներէն, իսկ երկրորդը կը տառապի, որուն ցաւը
աւելի ողբերգական է, ու կրկնապատկուած, որովհետեւ դաւաճան հօր եր-
կու որդիները կը զոհուին իրենց հօր, Լայոկոնի գործած մեծ ոճիրին համար.
ու հոս, ցաւը թէ կ'ապրի մարմարի ցրտութեան մէջ և թէ, զմեզ կը սա-
ռեցնէ իր ուժգին զգացումի բարձր կերտումը: (*) [Ճե'ս թիւ 2 պատկերը]

Որքան որ քաղաքական անցքերը այս կամ այն ուղղութեամբ նպաստեն
և կամ ճնշեն դեղարուտոտի Բացարձակ Ազատականութեան, ընդհանրապէս գե-
ղարուտոտը չի տարուի որ և իցէ հոսանքէ: Ան իր վսեմ ու գերմարդկային
բարձր աշխարհայացքով, կը մնայ ընդհանուրի սեփականութիւնը. որովհե-
տեւ այս ընդհանուրի շփումէն կ'ստեղծուին բարձր իմացականութիւններ,
որոնք, հիմ ունենալով լոյսի Աստուածութեան Տիեզերական աղբիւրը, կը
մեկնին անոր անծայրած իր սկզբունքի գերադոյն մէկ կէտէն, անոնցմէ յա-
ռաջ կուգան մարդկային իմացական ըմբռնողութեան զանազան վիճակնե-
րը, որոնք, նախքան իրենց գաղափարի գոյութիւնը հաստատելը, կ'ապրին
ներշնչումի անորոշ շրջան մը, ուր, կը վերլուծեն կեանքը. կը թափանցեն
անոր ամէնախոր ու ամէնայետիւն խորոշները, ու սպա, կ'իջնան ասպարէզ,
մարմնացած իրենց գաղափարի առոյգ վարդապետութեամբը: Ինչպէս, Մով-
սէս, Զրադաշտ, Պուտտա, ու Հրէից Մեսիան (Յիսուս) իր Աստուածային վեհ
և անպարտելի վարդապետութեամբ:

Ան իր պարզ, ու ամէնուն հասկնալի վարդապետութեամբ, նուաճեց Աշ-
խարհակալ Հռոմը, ու օշնչացուց Հելլենականութենէ սերած քմահաճոյքի
հեթանոս, մերկ, այլարանական աստուածները:


Բարոյականի հաստատ, ու ուղղամիտ հիմերու վրայ բարձրացած այս


(*) Տես Վիրգիլի էնեական Բ. գիրք, էջ 58. քարգմանութիւն Հ. Արսէն Ղա-
զիկեանի +.

Յ. Վերտուկ

Գրեմիլ Կորբ

[Պատկեր՝ քիւ 5] Մարիա






Թինթրո ըւթրոյ, վ. երազտունը Ս. Մարկոսի մարմնոյն Միլանօ
[Պատկեր թիւ 6]



«Անդրանիկ Կոչարի ընտանիքը»
[Բնակարանը]



Սյուն (Հ.Յ. անուան)
[Պատկեր Քիւ. 7]

«Անդրանիկոսի և Վահրամի»

Մեծ ընտանիք

երկնային կոնքը, ստապոյ ազգերու հոգեկան աշխարհայայցքներուն ճնոր
 շրջան մը բացաւ: Անոր յաղթանակը իր երկնային վարդապետութեան մէջ
 լուծեց հեթանոսական բարքերն ու սովորութիւնները: Երկա՛ր. անորոջ, ու
 խոր լուսնէնէ մը վերջ, որ ներշնչման շրջանն էր): Տիեզերքի խորէն
 լոյսի հակադասական դանդաղում մը կը շափահարէր իտալական թերակողմն,
 ուր, կը պայթէր մտքերու յուերթական հրաբուխը որ նոր լոյսով ողողեց
 Սպոլոնի աւանդական տաճարը. անոր կայծերուն առաջին նախակարա-
 պեաները եզան Ֆիրէնցեցիք, (*) որոնք, տասներկու դարերու քրիստոնէա-
 կան կրօնքին ուժեղ խորհրդ սպաշտութեամբ, ողջունեցին իրենց անդրանիկ
 մուսայով. որ է, Տանգէ Ալլէկէօրի, որոն մասն ստուերը, իր մտքի անսահ-
 ման երեւակայութեամբ, թափանցեցաւ Գիտղքի ցուրտ անդունդները, մարմ-
 նացուց մեղքը ու ինք իսկ շիւժեցաւ տառապանքի այս աշխարհին մէջ, քա-
 լեց, երգելով արցունքը... ու լուծեց դադափարի իսկական արժէքին պատ-
 կանոյ աներեւակայելի գաղտնիքը. ան իր թռիչքով հասաւ լոյսի անսահ-
 ման ավերքը, (**) որուն սուրբ ճնուեղը դարեր յետոյ Միլտոն աւելի աստ-
 ուածացուց, մանաւանդ, իր թռիչքին ազատ սրայքը որ կը վերադառնայ
 դարձեալ հոն, ուրկէ որ ծնաւ իր իսկ էութիւնը: Թողունք որ իր իսկ քնա-
 լով երգէ. (***)

«Արդ խրոխտագոյն թեւով քեզի կը գառնամ
 «Ստիւգիսն իճէն պըրձած, թէպէտ ընդերկար
 «Այն մըթին տեղը բանտուած, միչգեռ ես
 «Իմ թրուշանքիս մէջ՝ արտաքին ու միջին
 «Խաւարներէն երբ կ'անցնէի երգեցի
 «Վի՛նն ու գիշերն յաւերժական, այլաճայն
 «Նուագներով որփէ սկան փանդիւնէն»:

Գեղարուեստի այս հի նական յեղաշրջումը աւելի ընդլայնեց սահմանա-
 փակ հորիզոնները. այլեւս անձանօթ չէին Յունական ու Հռոմէական կանո-
 նաւոր ու պերճ ոճերը. մանաւանդ՝ ճարտարապետութիւնը որ կատարեալ
 այլակերպման ենթարկուեցաւ, թէ Արեւելքի, և թէ Արեւմուտքի բոլոր
 քաղաքակիրթ երկիրներուն մէջ: Ինչպէս կ'ըսէ (Alfred de Musset)
 «Յունական անդրի մը իրանը երբ իրին համար գաղտնիք մը չէր ներկայա-
 ցնէր, ու Բիթթիասի սրտին շքեղ գաշակաւորումը այլեւս անձանօթ
 չէր...»

Ուրեմն, ինչպէս կը տեսնուի, պատահածը վերածնունդ չէր. և այս բաւը
 ընդ S. Reinachի ճիշդ ընտրուած չէ. ան կ'ըսէ թէ՛ երկու սխալ կը պա-
 րունակէ, ան թէ՛ գեղարուեստը մեռած ըլլար և դարձեալ երեւնար իր նախ-
 կին կերպարանօք. իրականութեան մէջ, գեղարուեստը մեռած չէր. որովհե-
 տեւ ինչ որ մեռած է կրկին շի դառնար. միւս կողմէն գեղարուեստը աշա-

(*) Քիւրեցի Բաղաթը միջին իսալիոյ, Թոստանայի մայրաքաղաքն է, ուր առա-
 ջին անգամ, ծաղկեցաւ Գեղարուեստը. ու այնուհետեւ սովորական դարձաւ ըսել
 «Իսալիոյ Աթենքը»:
 Ա. Գ.

(**) Տես Տակդի «Աստուածային կասկեղզուքիւնը» քրգմ. 2. Արսէն Ղա-
 զիկեանի: +
 Ա. Գ.

(***) Միլտոնի «Գրախոս կորուսեալ», քրգմ. 2. Արսէն Ղազիկեանի: + Գիտ.
 Բ. կշ 85.
 Ա. Գ.

կերտներ ունեցաւ և ոչ թէ ընդօրինակողներ: Կոր դեղարուեստը իր ձեւերը կ'ստանար հինէն ու իր ճարտարապետակ անդարդի հիւսուածքը ողեւորուած էր բոլորովին ասորեր ներշնչուած, որ կազմուած էր տասը զարերու: Քրիստոնէականութեան շունչովը: Ինչպէս գէտ մը որ երբեք չի սահիր գէպի իր ակը, այնպէս ալ մարդկութիւնը չի վերսկսիր իր անցեալը: (*) [Տես պատկեր թիւ 2]

Բազմաթիւ ձիրքերու ու ընդունակութիւններու տէր վերածնունդի ամէնատաղանդաւոր գէտքերէն մին, Լէոնարտո տա Վինչին ծն. 1452ի Վինչի Փիզայի ու Ֆիրենցէի միջև. ու մեռած է Ամպուա (Amboise) 1519ին (Գաղիա):

Նասեր մոգ մակդիրը կուտան, որովհետև ան օժտուած էր գիտութեանց ու գեղարուեստի բոլոր ճիւղերուն մէջ, որպէս բացարձակ: ու կատարեալ ըմբռնող:

Ինքզինքը աւելի գիտնական կը կարծէր, քան թէ արուեստագէտ, սակայն, այսօր մի միայն կը մնայ իր տաղանդին ամէնագործար ձիրքը, նկարչութիւնը:

Անոր նկարած կամ ուրուագծած անձերուն արտայայտութիւնները ընտրող գլխաւոր գծերը, կարծես անհատի մը ամբողջ էութեան նկարագիրն է որ կը զննեն, ու անոնցմ: Իւրաքանչիւրը ունի իր նկարագրին յատուկ, նաև գիմագիծը. ինչպէս կը տեսնենք հոս իր վերջին ընթրիքին մէջ, թէ ամէն ոք շարժումի զարմացական ձեւին մէջ է. ու արդէն Յիսուս արտասանած է իր կարծ, ու խորհրդաւոր խօսքը թէ՛ «Այս երեկոյ, ձեր մեջքն մեկը զիս պիտի մտնէ»: Վարդապետը հոգեով յօժար է, սակայն մարմնով տկար. իր աջ կողմի երրորդը՝ թաղուած դժոխային ստուերի մէջ, կը գիտէ Փրկիչին ճշմարիտ արտայայտութիւնը, մինչ աշակերտները շուարած, իրարանցումի մէջ են, ու ամէն ոք խղճմտանքի դատաստանին առջև կ'ուզէ իմանալ թէ ո՞վ է: այդ մէկը: [Տես պատկեր թիւ 3]

Առանց նկատի առնելու Ռաֆայէլի տաղանդին եզակիանութիւնը, որուն դերը շատ նման է Յունաց Բիթիասին՝ ու Սպանիացոց Տիէկո Վելասքուէսին. 1599-1660) (**) մօտենանք Միքէլ Անճէլոյին, այն վիթխարի մտքին, որուն մոգիչ մօտքը քանդակեց քանանայապետ Յուլիոս Բի գամբանը:

Անոր գլխաւոր կերտուածքը շրէից կրօնքին հիմնագիր Մովսէսն է, որուն բողոքը կը համապատասխանէ իր անմիջական շարժումին, որ կ'ուզէ լուծել Ենոփայի զօրութեան անսահմանութիւնը: [Տես պատկեր թիւ 4]

Միքէլ Անճէլոյն համագրեց Աստուածաշունչը միացնելով անոր Քրիստոնէութեան «Վերջին Դատաստանը» ու Տանդէի անդուգական տեսիլքը, ապա,

(*) S. Reinach «Ապոդոն» ընդհանուր պատմութիւնը գեղարուեստի մեակերպարեսան (plastche):

(**) Տիէկո Վելասքուէս իր նախնական ֆայլերը ըրաւ ի Մատիս. ուր, Սպանիոյ քաղաւորը Դաւոյ Ե. Դիցիսանոյի նկարներու շատ շուրջ հաւաքածոյ մը ունէր: Ան երկու տարի իսպիս անցուց, սակայն վեներիկցիները (նկարիչները) ուրիշ օգտակարութիւն չունեցան, եթէ ոչ ի յայտ բերել իր իսկ ստղանդը, որ անհասակաւ էր: Ահա թէ ինչպէս կը խօսի իր իսկ հիւսցողը Պոննաթ (Bonnat) «աներ օդը գոր կը շնչենք, մերն է, անոր երկինքը այն է որուն սակ կ'ապրինք»: Իր նկարած անձերուն դիմաց կ'զգացուի այն սպաւորութիւնը, թէ մեր առջև կ'ապրին կենդանի ետիւններ: Տես S. Reinach «Ապոդոն»:

Ա. Գ.




Ռուպէն

«Գրութիւնը»

Մատիս

[Պատկեր թիւ 8]




Վ. Յ. Միլեր

«Յրեհասաները»

Բարիկ

[Պատկերի թիվ 9]



Միկանդիկնի

«Փեկի Գուռք»

Հում

[Պատկեր № 10]

ի բ իսկ նկարագրին պատկանող զգացումի մասյլ աշխատանքը որ գերի է կեանքին, ու իր ազատ հոգին՝ հնթակայ Տիեզերքի կապտա օրէնքին:

Ան իր այս հոգեկան բարձր համերգը շարագրեց Սիֆսիլեայի մասրան մէջ, ի Վլասիկան (Հոռոմ) որմէ ներշնչուեցան բազմաթիւ արուեստագէտներ ինչպէս Պ. Պ. Ռուպէնո (1577—1640) որուն արտադրած նկարները ուղղակի վարմանք կը պատճառեն: Երկրորդ, Վենետիկոյ «Միքէլ Անճէլօն» որ է՝ Եսպոյա Ռուպուսի ալ անուամբ կոչուած է Թինթօրէթոյ (1518—1514) թէև նետեւորդ մը չեղաւ Միքէլ Անճէլոյի և սակայն անոր լոյսին, ու շարժումին մէջ ապրեցաւ ու ինքնիրմէ ստեղծեց լոյսի ու արուեստի զիրար խաչածեւող տարօրինակ խոյեր: Իր ինչ ինչ գործերը (մանաւանդ դէմքերը) կը նմանին հոլանտացի նկարիչ Ռեմբրանթի. այս երկրորդին անհատականութիւնը կը շեշտուի աւելի իր կեղանածիւր լոյսի կենդանացումին մէջ՝ որ մեր տեսողութիւնը կը հրաւիրէ նկարին գլխաւոր կէտին վրայ: (1606—1669) Ինչպէս Միքէլ Անճէլօն ստեղծեց իրեն պատկանող հսկաներու յեղ մը, այնպէս ալ Ռեմբրանթ յղացաւ լոյս մը նման հիւսիսօտօպայլին, որուն մթնոլորտին մէջ, միայն ինք է որ կ'ապրի, ու կ'երագէ: [Տես թիւ 5 պատկերը]

Վ.

Ինչպէս որ բնութիւնը իր հազարումէկ ստեղծագործումներով վերջ է վերջոյ ի լոյս բնծայեց մարդը, նոյնպէս իտալական վերածնունդը իր զբւրխաւոր ուսուցմասիրութեան նիւթ բնորեց մարդկային մարմինը, որուն իմացականութեան, ու երեւակայութեան մէջ, թագնուած էր նաև բնութեան մէկ ճառագայթը: [Տես թիւ 6 պատկերը]

Շատ պարզ կը ականուի իտալական նկարչութեան գերի կողմը, թէ, ան երբեք չէ զբաղած իր դարը պատկերացնելու այնպէս, ինչպէս պատկերացուցած է Ֆրանսիի նկարչութիւնը. ապա, իր բոլոր արտադրութիւնները եղած են գաղափարական* ունենալով մէկ սկիզբ, ու տարբեր ճիւղաւորումներ: (Անշուշտ բացառութիւնները յարգելի են): Մինչ Ֆրանսիայը իր մէջ ամփոփած է թէ մէկը և թէ միւսը, այսինքն իրականը ու գաղափարականը. մանաւանդ գաղտանկարը, որուն անվերջանալի գեղեցկութիւնը իտալական «Հերոսական»ին արժէքը պակսեցուցած է: (**)

(*) Չի մոռնաւ շնչու թէ, իտալական վերածնունդի և խորեակի, բոլոր արուեստագէտները, ինչպէս Ֆրանսիայի Լիֆիֆի, Ա. Փոլլաօրօ, Ա. Տեյլ Գասսենիոյ, (Լեոնարտօ վաուսի) և վերոգիտ, Յ. Պեյլիէի, Գիլբերտսիոյ. և ինքն իսկ Մասսաչիօն, իրենց գործերուն մէջ կը պակտացնէին իրենց ժամանակա-կիճները, (անձերը), սակայն երբ հասաւ ոսկեդարը իր գագաթնակէսին, Շեօնսո, Ռաֆաէլ, Միքէլ Անճէլօ, և շատ ուրիշներ, գծերու կասարկագործումը հասցուցին իր բարձրութեան, ու իրականութեան հետ, մեր մտքի ալ-մեր և նր կրկան սեւեւ ու ըմբռնել: Այս վերածնունդի ֆունդամենտը յսակօրէն կը սրամարտէ Թ. Թեյլ իր «Իտալական նկարչութիւնը և վերածնունդը» գործին մէջ:

(**) Իտալացի, իրենց գործերուն մէջի դասակարգի մասը իրենք իրենց կ'սեղծէին, առանց ընդհանրական ընդօրինակելու, ու ասոր համար է որ հերոսական կը կոչուի, առանց հերոսական դրոշմի:

Ա. Վ.

* * *

Անցեալ դարուն, և անկից առաջ, գաշտանկարը նկարչութեան մէջ շատ կարեւոր տեղ մը սկսած էր գրաւել, մանաւանդ Ֆրանսականը որ աւելի իրապաշտ հովուերգական ուղղութիւն մը առած էր, որուն առաջինն է ժ. Ֆ. Միլէթ, և որուն վրձինը հարազատօրէն պատկերացուց գիւղը ու անոր աշխատանքի անխնայ ներսը, գիւղացին:

Միլէթ պատկերացուց հարազատօրէն, առանց խորհուրդի օգնութեան՝ այս բարձրութեան հասաւ Յ. Սէկանթինին Ալպիաններու Մոզը, որուն բաց կապոյտ երջինքին մէջ մխուած, արձանացած են ժայռերու հսկայ կռահները, ու կարծես կը խոկան լոյսի ովկիանոսին մէջ, որոնց գագաթներու ինչ ինչ էմասերուն վրայ գեռ կը խայտան ձիւնի բեկորները...: [Տես թիւ 9 պատկերը] Սէկանթինին իր արուեստական (tecnica) ոճով, կը մնայ եզակի (ինչպէս Կ. Բուէլիաթին):

Ըստ իս. Սէկանթինին Ութը հարիւրի իտալիոյ (և կընամ բսել ամբողջ աշխարհի) ամենամեծ գաշտանկարին է անոր գոյներու ներդաշնակութիւնը նման է համերգի մը որուն ձայնանիշերը (note) պարզ ու խորհրդաւոր ձայներով հետզհետէ կը փիւրկանան լոյսի ու ստուերի ելեւէջներու աճումով:

* * *

Ներկայ Դարու առաջին կէսը գեռ երկունքի մէջ է, իսկ գեղարուեստի իմացականութիւնները գեռ կ'ապրին իրենց ներշնչման անորոշ շրջանը, և ապագայ ձգտումները կ'ստեղծեն ինքն ներշնչման եզանակէն, ու չիմայ, այդ (ներշնչման եզանակը) ու բարձունքը գեռ անձանօթ է, բայց և անպէս, գոյութիւն ունի: [Տես թիւ 10 պատկերը]

Ա. ԳԱՐԻՊՍԱՆ.

16 Յունիս 1932
Միլանո



ԳԻՄԼԿԵՆ

ՀՈԳԵԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԻՈՐ ԵՐԵՒՈՅԹՆԵՐԸ ԳԻՏՈՒԹԵԱՆ ԱՌՋԵՒ

Բարեկամիս՝ Ս. Քարեանին,

Թէեւ՝ դասական ծանօթութիւններու սահմանին մէջ թափառող անհատներու համար զեռ խարէութիւն կամ պատրանք կը նկատուին անոնք, բայց այդ դարմանալի երեւոյթները, շատնց արդէն ուշը զբաւած են կարգ մը ազատամիտ գիտուններու, որոնք անգոհներով հասարակաց կործիրը և



ՏՕՔԹԻ ԲԷՇԻՇԵԱՆ

նոցին զեկափարը մնաց, երբ 1925ին կը գտնէր կենդանակաւն հիւշիկն և իբր երկը կարգի ճառագայթումները, խոր անջրպետ մը կը բանար անշունչ և կենդանական աշխարհին մէջ, քանի որ մաթեմատիքական բարձագոյն հաշիւներով և բնագիտական ամենանուրբ փորձերով կենսակաւն ուժի մը անկախ գոյութիւնը կը հաստատէր մահուրէն վերջ, և այսպէս փիլիսոփայական և գիտական աշխարհը կը զնէր հոգե-կենսաբանական նոր ըմբռնողութեան մը անհերքելի փաստերուն առջեւ:

օրուան նախապաշարուածները, խոր ուսումնասիրութեան ենթարկած են զանոնք, կատարելապէս անկախ՝ վարդապետական կամ բարոյական մտահոգութիւններէ, այլ պարզապէս ճշմարտութեան ծառայելու գազափարական ձգտումով:

Ներկայիս այլեւս ոչ մէկ կասկած կայ անոնց գոյութեան մասին, զէթ լրջօրէն անոնցմով հետաքրքրուող անհատներու համար:

Մտային կամ հոգեկան յեղաշրջման ի՞նչ աստիճանի վրայ ալ գտնուինք այսօր, այսուհետեւ որպէս ճշմարտութիւն չենք կրնար բնութենիլ կարգ մը մտածողներու այն վճիռը, թէ կեանքը՝ բնագիտա-տարբարանական երեւոյթ մըն է լոկ: Տօքթ. Շարլ Լանրի, որ ամբողջ 35 տարի, Սորբոնի մէջ զգայութիւններու բնախօսութեան աշխատա-

Առանց այս վաստերու իսկ, ամենակարկառուն նիւթապաշտներուն հո-
մար անգամ, կետերը զեռ կը նկատուի տիեզերքի մեծագոյն խորհուրդը:
Ինկ անոր կողմին, ֆիզիքական կամ հոգեկան աշխարհի մէջ, զեռ որքան
անբացատրելի երեւոյթներ կան, որոնց էութեան մասին ամենատարած գա-
ղափարն իսկ չունինք:

«Հակառակ՝ զարուս անհուն յատնողիութիւններուն, հետազոտման
խիստ ընդարձակ զաշտ մը կայ զեռ մարդկային իմացականութեան
առջեւ: Ներկա ինչ որ գիտենք անձանթի իրականութեան վրայ
բացուած պզտիկ պատուհան մըն է լիկ...» Այսպէս կ'արտայայտուէր մեզ
վերջերս, փրօֆ. Նարլ Ռիշէ, մարդկութեան հանճարեղ գիտուններէն մին
երբ պատիւը կ'ունենայինք իրեն այցելելու իր հսկայ մատենագրասին մէջ,
ուր՝ իր բազմահարկ հոտորներուն կողքին, աննշմար տեղ մը չէ որ կը
բռնէին հոգեկան երեւոյթներու ռեսուսիտիւթեան յատկացուածները:

Արդարեւ, մարդոց ծանօթութեան չրճանակը անհունօրէն սեղմ է. զեռ
կը լրացրէ տգիտութեան անհզոր ուղիէնտսի մը մէջ, ուր ամէն ինչ խոր-
հուրդ է: Յաճախ ամէնէն աւելի լաւ ճանչուած իրերուն և իրողութիւննե-
րուն խորքը անբացատրելի կը մնայ մեզ: Նիւթը, հակառակ՝ իր ներթա-
փանցման խոր աշխատանքին, ելեքթրոններու մէջ է պարփակած իր կազ-
մութեան գաղտնիքը: Ուժի և նիւթի փոխ յարաբերութեան տեսութիւննե-
րը վերջնականօրէն հաստատուած չեն: Համատարած ելեքտրի մը վարկածը,
որպէս նախատար՝ տիեզերական գոյութեան, այսօր հազիւ հասկնալի է
չափ քիչերու: Իսկ կեանքի էութեան մասին ոչ մէկ մտածող կրցած է բնագ-
հանուր համոզում յառաջացնել: Անտուզութեան և խարխափումի այս շըր-
ջանին, մեզ նոր մտահոգութեան կ'ենթարկեն կարգ մը հոգեկան կաշուած
երեւոյթները, որոնք կատարելապէս անբացատրելի կը մնան գիտական ար-
գի օրէնքներու առջեւ:

Տասնեակ մը տարիներ առաջ, Փարիզի Բոգիզոնցակամ հաստատութիւնը
(Institut Métapsychique), որ այս կարգի երեւոյթները՝ գիտական հոգի վրայ
ռեսուսիտիւթեան պաշտօն ունի, հրաւէր կ'ուզէր հարեւրէ աւելի բարձր
մտաւորականներու, որ իրենց մէջ կը հաշուէր բազմաթիւ գիտուններ, հո-
գեբաններ, գրական մեծ գէմքի և բժիշկներ, որոնք՝ ներկայ ըլլալէ վերջ
խտորէն հակակշռուած փորձերու, կ'ստորագրէին օրուան ատենագրութիւ-
նը, խոստովանելով որ մեծիմաստ քնանային փերձ, արդարեւ տեղի կ'ունենա-
յին, այնպիսի տարօրինակ և անսովոր երեւոյթներ, որոնք անբացատրելի
կը մնային օրուան գիտութեան առջեւ:

Մեր տարաբաղք բարեկամը՝ Տօքթ. Կիւսիտով ժըլէ, որ զեկափարն էր այդ
հաստատութեան, 1923ին՝ մեզ բացատրած էր երեւոյթներու բոլոր տարօ-
րինակ կողմերը, այլաձին ուժիբու ազդեցութեամբ՝ ձեռք ձգուած կայս-
պատուները և բոլոր լուսանկարները զոր ստացած էին փորձերու պահուն,
ցոյց տալով թէ ինչպէս երեւան կուգային այրակազմակիրային (ectoplas-
mique) կաշուած երեւոյթները և թէ ինչպէս ենթակայները կը կորսնցնէին
իրենց ծանրութիւնն մաս մը և այլն:

Նոյն տարին, Փարիզի մէջ կը գումարուէր փորձառական հոգեբանու-
թեան Յըզ համաժողովը, որուն՝ այս տղերք ստորագրողը կը մասնակցէր
իբր պատուիրակ Ուե փոյ Այս համաժողովը, իր ռեսուսիտիւթեան այլա-
զան հիւզաւորութեան հանդիսաւոր մէկ ուրիշ արտայայտութիւնը կ'ըլլար
այդ հոգեկան երեւոյթներուն: Այդ թուականէն քանի մը ամիս վերջ, Վար-
շաբոյ մէջ կը գումարուէր ուրիշ համաժողով մը, փրօֆ. Նարլ Ռիշէի նա-

խագահութեան տակ և նոյն նպատակով: Իսկ 1927ին, Փարիզ, Սորպոնի մէջ
կենտրոնի մէջ արիւսիշիֆի նախաձեռնութեամբ և փրօֆ. Ռիշէի նախագա-
հութեամբ կը գումարուէր ուրիշ համաժողով մը, որուն կը մասնակցէին
աշխարհի ամէն կողմէ փութացող բազմաթիւ փրօֆէսօրներ, բժիշկներ, հո-
գեբաններ, ռեսուսիտիւթեան համար հիմնովին, այնքան սղողուն և անա-
ւարկելի դարձած բազմաթիւ երեւոյթները, զորս գիտութիւնը և գիտուն
ներ գարերէ ի վեր կը մեր էին ռեսուսիտիւթեան օրոնց առջեւ այլևս կա-
րելի չէր լուս մնալ:

Այս բոլոր իրագործութիւններուն մէջ, ամենակարեւորը՝ բազմաթիւ
գիտնականներու մտայնութեան կրած փոփոխութիւնն էր: Ատենօք, կեղծիք
և սուտ նկատուած այդ երեւոյթները, սխաժ էին իրա անութեան գոյն
ստանալ և հետօքքերը վերինք ամէնէն աւելի ժխտողներն անդամ:

Այդ անսովոր երեւոյթներու գոյութիւնը մարդկութեան չափ հին էր սա-
կայն և կը կազմէր նախնայ քախուն գիտութիւններու հիմք:

Ս. գրքի մէջ յաճախ կը հանդիպինք նախապեկոյց երազներու, մարգա-
րէութիւններու, ոգեկաշուներու և տեսիլներու պատմութեան:

Ամէն ազգ, իր ծոցին մէջ ունեցած է այդ խորհրդաւոր երեւոյթներէն
բաժին մը:

Միջնագարեան կախարչներու և վհուկներու ի գործ դրած արուեստը,
ուրիշ բան չէր, այլ գործնականացումը կարգ մը հոգեկան տուեալներու:

Բնականաբար դանտը զէպի բարին, մանաւանդ շարք գործածողներ
չափ եկան, ինչպէս նաև զանոնք կեղծողներ և շահագործողներ, որոնք հետե-
ւանք, թաքուն գիտութեան ծառայողները վարկաբեկուեցան և խոստօրէն
պատժուեցան որպէս՝ սասանայի կնք գործ ունեցող շարագործներ, ինչ որ տե-
ղի տուաւ այնպիսի նախապաշարութեան, որ կը շարունակուին մինչեւ
այսօր և այս իսկ պատճառաւ շատ քիչ գիտնականներ միայն բարոյական
քաջութիւնը ունեցած են, ընդհանուրի արհամարհանքին և ծաղրանքին են-
թարկուած այս երեւոյթներով զբաղելու: 18րդ դարուն, չնորհիւ Մեսմերի,
այդ երեւոյթները նկատի առնուեցան «կենդանական մագնիսականութիւն»:
անունին տակ, քանի որ մագնիսական քունի ենթարկուած անհատներէն
չատեր կը դառնային շրաշալիքէն պայծառատես, կը նշմարէին խիստ հեռի
վայրեր և կը հասկնային հոն տեղի ունեցած եղելութիւնները: Անոր յաջոր-
դեց հիփնօթիզմի՝ քննածութեան շրջանը: Մինչ այդ՝ 1847ին, Նիւեօքքի շըր-
ջանին պզտիկ քաղաքներէն մին բնակող ընտանիքի մը տան մէջ տեղի
կ'ունենային տարօրինակ բաներ, սարսափը հետապուցած էր այդ ընտանի-
քը, իսկ անոր տեղ կուգար հաստատուել ուրիշ մը, ֆօքս անունով, որուն եր-
կու գեռատի աղջիկները ուղեցին լուծել խորհուրդը: Արդարեւ, այդ տան
պատերուն մէջէն կը լսուէին զարմանալի ձայներ, տան կան կարասիներէն
նաև կուգար նոյն աղմուկը: Երբ՝ հարցում մը ուղղուէր, պատասխանը
կ'ստացուէր մասնաւորաբար պատրաստուած այրուէնի միջոցաւ: Լսուած
ձայնը կը թուէր ըլլալ իմացական: Անձանթը կը պնդէր թէ ինքը՝ տանը
մէջ սպանուած և հոն թաղուած մեռելի մը ոգին էր, կ'ըսէր նաև ոճրա-
գործին անունը և կը յայտնէր ամէնքին համար անձանթ բաներ, որոնք
սակայն յետագային կ'ստուգուէին:

Այս պատահարէն կը ծնէր ոգեհարցութիւնը, որ վարակման մը հանրա-
մանքը կ'ստանար տարածուելու համար ամբողջ աշխարհի մէջ, որ բազմա-
թիւ գիտուններ և գիտական մարմիններ անոր նկատմամբ կ'արտայայ-
տուէին թեր սե զէմ:

Անգլիոյ մէջ մանաւանդ պայքարը եղաւ խիստ զօրաւոր և ուր գիտունները բաժնուեցան երկու դասակարգի: Նըքսթը կը մերժէր մասնակցելու այդ հոգեկան երեւոյթներու քննութեան և ըրաք, Թէնտալ, Քարթնիքը սլեպտիկ էին: Միմիայն նշանաւոր գիտուն Վիլհելմ Քրուքն էր (յնագէտ տաքարան, հոգեբան) որ առանց կանխակոչ կարծիքի և աննախապաշար կերպով նուաբբքրուեցաւ անոնց սվ: Արդէն 1869ին տասն եւ հինգ տարուոյ լուրջ հետազոտութիւններէ վերջ, զոր այնքան խմաստուն կերպով կատարեցին երեք նշանաւոր հոգեբաններ՝ կրքնէր, Միէրս, Փոտնոր, Լոնտոնի հոգեբանական ընկերութիւնը, այդ երեւոյթներու նկատմամբ եկամ էր հետեւեալ եզրակացութիւններ. Ա. — Լուսած ձայները երեւութաբար կուգան պատերէն, ցեղանէն և տան կան կարասիներէն: Բ. — Առանց հարմի տեղի կ'ունենայ առարկաներու տեղախոխում: Գ. — Այս ձայները կը լսուին, և առարկաները կը սեղափոխուին յաճախ ներկոյ կողմերու փոփոքին համաձայն: Դ. — Եղած հարցումներու պատասխանները յաճախ հասարակ բաներ են, կան ալ սակայն որ արտասոյտը կերպով նշանակալից են և անձանօթ ներկաներու համար: Ե. — Այս երեւոյթներու արտագրութիւնը շատ կը գիրանայ մասնաւոր անհատներու ներկայութեան:

Տեղեկագիրը կ'ըսէր նաեւ որ փորձի պահուն կը նշմարուէին նաև ձեռքեր, ոտքեր, դէմքեր, երգօճոնը կը նուազէր ինքնաբերաբար, փակ սենեակի մէջ կը տեսնուէր յանկարծ դուրսէն եկած ձագիկներ, պոռ դներ և այլն:

Այս բոլոր երեւոյթները՝ գիտականօրէն առաջին անգամ հակակոսովր եղաւ Վ. Քրուքն, որ տարիներու ամբողջ հետազոտութիւնէ վերջ կ'ըսէր հետեւեալը. «Եւմ կրնար արտայայտուիլ իմ տեսած բոլոր երեւոյթներու պատճառին մասին, բայց մարդիկ թող գիտնան որ անոնք իրական են, որքան իրական է բնագիտական կամ տարրարանական ամենանախնական իրողութիւն մը...»: Քրուքն զանոնք կոչեց նոգիկաւ երեւոյթներ և կրկին սխալ փորձերու (1870 - 1873), ըստ՝ տակ և հասաւ հետեւեալ եզրակացութիւններուն: Ա. — Ծանր մտքներու շարժում առանց հարմի: Բ. — Կահաւրասիներէ և պատերէ լուսած ձայներ: Գ. — Մարմիններու ծանրութեան նուազում: Դ. — Երկրի աննիւթականացում: Ե. — Լուսեղէն տեսիլքներ՝ ամպի, մարդկային մարմնի կամ անդամներու ձեւի տակ: Զ. — Ընթերցում՝ անթափանց մարմիններու մէջէն: Իսկ Ֆլորէնս Քուք անունով մէքսիկոսներ կայութեան օր մը պատահեցաւ արտասոյտը լսան մը: Փորձի պահուն երբ այս ենթական կը քննարկ, յանկարծ փակ սենեակին մէջ կազմուեցաւ, արտասոյտը գեղեցկութեամբ, կատարելապէս ողջ և ոչ մէկ ձեւով մէտիոմին նմանօր կնոջ մը ձեւը, որ կը քալէր, կը խօսէր, կը լուսանկարուէր և յանկարծ կ'անհետանար մէտիոմին արթննալու պահուն: Այս խորհրդաւոր էակը կը կոչուէր Katie King, որ մեռած էր և զեռ կրնար երեք ասրի այսպէս նիւթականանալ: Երբ 1874 մայիս 21ին կրկին երեւցաւ, ներկաներուն տուաւ իր մազէն՝ փունջ մը և ձերմակ հագուստէն՝ կտոր մը, որպէս յիշատակ: 24 տարի վերջ, գիտական համաժողովի մը մէջ, երբ Վ. Քրուքն հասած էր արդէն իր փառքի գագաթնակէտը, յատարարեց պաշտօնապէս, որ երբեմնի իր փորձի արդիւնքներէն (մանաւանդ Katie Kingի նկատմամբ) ոչինչ ունէր գեղջելիք:

Հարկ է ըսել որ Վ. Քրուքն սգեհարցական ընկերութեան անգամ չէր և այդ երեւոյթներու մէջ կ'ընդունէր գիտական ուրիշ բացատրութեան կարելութիւնը:

Մէկ քանի տարի առաջ, Revue Métapsychique-ի թիւերէն մէկուն մէջ փրօֆ. Ե. Ռիչէ, կ'ըսէր թէ ինչպէս Վ. Քրուքնի հետ, երկար ատեն քննած էր սիրտն ու բազկերակը Katie Kingի, որ մարմնացած էր փորձի պահուն և անհետացած՝ մէտիոմի արթննալուատեն:

Բնականաբար, ոգևտացական ընկերութիւնը, իր վարդապետութեան իր փաստ ձառայելոց այդ և ասոր նման բազմաթիւ երեւոյթները, վերադարելով զանոնք ոգիներու գործունէութեան: Այսպէս՝ 1858ի Ալան Քարտէքի կողմէ հիմնուած էր զեռ միջնաւ ասոր շարունակուող Revue spiriteի այդ ընկերութիւնը, իր բազմաձայար անդամներու մէջ կը հաշուէր նաև Լէօն Տյնիի, Կապրիէլ Տըլանի, Երլթայի Ֆլամարիօնի, Ալբր Գլիլլըր Լօճի նման գիտուններ:

Սակայն և այնպէս, հոգեկանցական երեւոյթներու բոլոր հաստատացուները չեն եղած ոչ սգեհարցական և ոչ ալ քեօզօփիլ (Աստուածիմաստական) ընկերութիւններու անդամ 1870ին էր միայն որ սգեհարցական ընկերութիւնը մտաւ գիտական հոգի վրայ: Բանի որ իր զննութիւնները միացուց փորձառնական աւելի հաստատ մեթոտներու տուեալներուն Այս ուղղութեամբ սգեհարցութիւնը մեծ ծառայութիւն մատուց, արդի հոգեկանցութեան ոտը պիտաւոր հետեւողները եղած են Քրուքն և Ե. Ռիչէ վերջ, Աբրովիչ, Ռոպալ, Վ. Տէյմս, Վ. Պարէթ, Ս. Օ. Լօճ, Լօմպրօզ, Սիալիկ, Տիւրվիլ, Տիւրմարիօն, Փըլէյ, Մարքովիլ, Կոքթ, Երէնի Նոյնիկ, Կոքթ, Օսթի, փրօֆ. Հանս Տիիի, Ռ. Սիւտըր, փրօֆ. Ներ Քալամալի, Պիօթամձի, Պօա, Մօրսէլի, և այլն և այլն:

Ներկայիս, այս նոր գիտութիւնը, որ թագունին է բոլոր գիտութիւններու, կը նկատուի հոգեբնախօսութեան մէկ անձանօթ գլուխը և ուրիշն զարմանալի չէ որ ամէնէն աւելի անով զբաղողները գիտուններ ու բժիշկներ են:

Մարդկային կազմը, զեռ կը մտայ այնքան խորհրդաւոր իր ներքին ծալքերուն մէջ, մանաւանդ իր ուղեկային գործունէութեամբ, որ յաճախ, բազմաթիւ մտաւորականներ՝ և նրազիցակցակալին կուտան աներեւակայելի զէր և կ'ենթադրեն որ կան մեր մէջ զեռ շատ անձանօթ ուժեր, որ մեծ զեր մը կը կատարեն այդ հոգեկան կոչուած երեւոյթներու մէջ: Այսպէս կը մտածեն հոգեկանցական երեւոյթներուն նիւթապաշտական հասկացութեամբ մօտեցողները, ինչպէս Ե. Ռիչէ, Ե. Նոյնիկ և այլն իսկ կան ուրիշներ, նոյնքան գիտուն և ձեռնհաս, որ կը մօտենան սգեկաշտական տեսակէաներու: Արգարեւ, բնազգարար կը մզուինը զէպի խորհրդաւոր ուժերու գոյութեան, երբ ո և է իրական երեւոյթ մեկ կը թուի արտասոյտը, անբացատրելի կը կարծենք թէ նոյնքան հաստատ գագաթալի կազմութիւնը անոնց պատճառի նկատմամբ մեծ յառաջիկութիւն մըն է ընդունիլ այդ երեւոյթներու գոյութիւնը և յետոյ մեկ կը մտայ սպասել գիտութեան ապագայ յայտնութիւններուն, խոտտօմանով միանգամայն, ինչպէս կ'ըսէ փրօֆ. Ե. Ռիչէ, «après la mort» մէջ գրած իր մէկ յօդուածով, թէ՛ նոգիկաւ երեւոյթներու մէջ խկապիւն շփոթեցողից պարագաներ շատ կան:

Մենք՝ գիտութեան արդի միտներով նախապաշարուող չենք, և շատ ալ արժէք չենք տար անոր միտուններուն: Երբ օր մը Ե. Հանրիկերու թիւր աւելեալ, հաւանաբար ամենատեղեկալիներն անգամ իրենց կարծիքը փոխեն անձանօթ ուժերու բնութի մասին: Հարկ չենք տեսնել որ մենք չենք անաջնորդուիլ որ ոչ սգեհարցական և ոչ ալ Աստուածիմաստական զպրօցի

տուեալներէն և անդամ չենք այդ ընկերութիւններու, բայց կ'արժէ գիտնալ մարդկային կազմի նկատմամբ անոնց տուած կարգ մը բացատրութիւնները որոնք աւելի որոշ կերպով կը պատկերացնեն հոգեկան երեւոյթներու բնոյթը:

* * *

Հին մագնիսագէտները նշմարած էին որ կարգ մը ենթակայաներ, որ արտասովոր գերզոյգանութեան տէր են, եթէ մագնիսական քունի մէջ ըլլային, կը ներկայացնէին տարօրինակ վիճակներ, օրինակ՝ կը խօսէին իրենց համար կատարելապէս անձանօթ լիզուներ, կորսուած առարկաներու տեղը կ'ըսէին, աստաճանաչութիւններ կ'ընէին և այլն: Ոգեհարցական և աստուածաբանական (théosophique) ընկերութիւնները շուտով իւրացուցին մագնիսագէտներու ձեռք ձգած արդիւնքները և աւելի յառաջ տարին մէջօրինակ երեւոյթներու ուսումնասիրութիւնները, ըստ ատենց՝ մարդկային կազմը կը բաղկանայ չորս մասերէ: Այս բաժանման, ներկայիս դեռ կարելի չէ մօտենալ գիտական հաստատ ոգիով, բայց կարելի է զայն ընդունիլ որպէս վարկած, քանի որ բազմաթիւ երեւոյթները բացատրելու գիւրութիւնը կ'ընծայէ, մինչ գիտութիւնը, անոր տեղ լաւագոյնը դեռ չէ կրցած դնել:

Մարդկային կազմը ուրեմն, ֆիզիքական, եթերային, աստղային և մտային մարմիններէ կը բաղկանայ: Ֆիզիքականը կեդրոնն է բնախօսական պաշտօնէութեան, ինչպէս՝ մարտոյութիւն, շնչառուութիւն, արեան շրջան, շարժողութիւն և այլն: Եթերային մարմինը, որ միացման գիծն է ֆիզիքականի և մտայիններուն, կը պարունակէ բնախօսական կենսատու ուժը, ձեռով մը կեանքի շունչն է ան, որ ֆիզիքական մարմնի ծնելէ քանի մ'օր առաջ երեւան կուզայ և այդ մարմնին մուկներէն քանի մ'օր վերջ միայն կ'անհետանայ: Աստղային մարմինը կեդրոնն է մարդկային զգացողութեան, երեւակայութեան, կիրքերուն և աշխարհային զուարճութեանց: Անոր միջոցաւ կը բացատրուին հեռազգածութեան երեւոյթներու և տեսիլներու պարագաները: Իսկ մտային մարմինը, կամքի, իմացականութեան, բարձր եւ ազնիւ մտածողութեան կայանն է: Ան՝ իմացական «ճանն է ինչ փիլիսոփաներուն և հոգիներ վերջին հանդերձանքը: Փրօֆ. Տիւրօլի, բազմաթիւ փորձերով ցոյց տուաւ որ ֆիզիքական մարմինը պարզապէս կազապար մըն է, գործիք մը, յատուկ՝ կարգ մը անտեսանելի մարմիններու, ուր կ'իշխեն մարդկային խիզճը, իմացականութիւնը, հոգին: Ան ցոյց տուաւ նաև որ կարելի է այդ մարմինները, նոյն իսկ ողջ մարդոց վրայ, անջատել իրարմէ, մագնիսական ուժերու գործածութեամբ:

Գնդապետ Ա. Ռօշալի (Փարիզի բազմաբուստեան վարժարանի երեսնամի ներձուս անօրէնը) տեսաւ որ մագնիսական քունի ենթարկուած անհատը աստիճանաբար կը կորսնցնէ իր զգայնութիւնը, որը կը փոխանցուի ենթակային շրջապատող օդի խաւին, այնպէս որ այդ զգայնացած օդը երբ գրգռուի, ենթակային անմիջապէս իր մարմնին համապատասխան մէկ կէտին վրայ կը զգայ անդրազգած արդիւնքը: Մագնիսականութեան շարունակութեամբ, ենթակային աջ և ձախ կողերէն կ'արտահոսին եթերային հոսանքներ (տեսանելի՝ փորձի ներկայ եզոց զգայուններու կամ մէտիոմներու), որոնք՝ անոր ձախ կողմը, իրմէ քիչ մը հեռուն, կը կազմեն իր կրկինը: Մինչ այդ ատեն լուսաւոր տեսնուած մէտիոմին մարմինը կը մթազնի և կը դառնայ տեսակ մը անկենդան նիւթ, քանի որ իր բոլոր ֆիզիքական և հոգեկան բարձր կարող-

յութիւնները ամբարուած են կրկինին մէջ, որը կազմուած է եթերային, աստղային և մտային մարմիններէ: Կրկինը կրնայ ճամբորդել և քանի մը երկվայրկեանի մէջ այցելել աշխարհի ամենահեռուոր վայրերը, տեսնել, լսել, հասկնալ, ստուգել և իմացնել արդիւնքը՝ իր ֆիզիքական մարմնի միջոցաւ փորձի ներկայ կողմերուն:

Մենք անձնապէս կատարած ենք այս կարգի փորձեր և ստացած ենք խիստ հետաքրքրական արդիւնքներ, մանաւանդ Սուրբոյ և Եգիպտոսի միջև և իսկ եղաւ ատեն մը, Մ.ի մէջ երբ հաւաքական կեանքի անհրաժեշտութենէ մզուած, ստիպուեցանք այդ արտասովոր միջոցներուն գիմել, ստանալու համար կարգ մը տեղեկութիւններ, որոնք ստուգուեցան յետագային:

Այս փորձերու պատճառով, կը կարծուի թէ ենթակայն կալմական մասին մէջ բաժանում տեղի կ'ունենայ և անոր աստղային մարմինն է որ կը ճամբորդէ, կը տեսնէ, կը քննէ: Ուրեմն տեսալ մը երկուսում (dédublement) տեղի կ'ունենայ: Արդարեւ, մարդոց երկատման պարագան, հաղուազէպ չէ, թերեւս մեղմէ շատեր գիշեր ստեն, յունի մէջ երկատման կ'ենթարկուին և կը զրկին իրենց կրկինները հետեւ իրենց սիրելիները իրենց կ'սպասեն: Յաճախ, անգիտակցաբար, մարդ իր կրկինը իր քովը կ'ունենայ իրմէ անջատ, որ եթէ անտեսանելի կը մնայ սովորական աշխարհ համար, լուսանկարչական ազակին սակայն չլքելով անկէ տպագրուելէ, կամ նշմարել՝ կը դառնայ իր շուրջ՝ գտնուող այնպիսի անհատներու որ մէտիոմական յատկութեամբ օժտուած են և կամ օժին ճրգ զգայարանը մը երբեմն, ենթակային անջատուած կրկինն, շրջակայէն և տիրոջմէն հարկ եղած նշմարել ստանալով շատերու համար իսկ տեսանելի կը դառնայ բնական պայմաններու մէջ: Խիստ հետաքրքրական է Լիվոնիոյ (Ռուսիա) մէջ պաշտօնավարող ուսուցչուհիի մը, Էմիլ Սաժէին պատմութիւնը, զոր խիստ վաւերական աղբիւրներէ քաղելով Լօմպոզո Տիւրօլի, Տիւրչիլի և այլն կը յիշատակեն Գոլբոցի աշակերտները միշտ երկու ուսուցչուհի կը տեսնէին ամէն տեղ, զատարանին մէջ, պարտէզի, գրասենյակին առջեւ գրած պահուն, այնպէս որ շատ մը ճիշտներ իրենց զաւակները հեռացուցին վարժարանէն և ի վերջոյ, Գոլբոցի անօրէն թիւնը կը հեռացնէ իր կարգին խեղճ էմիլ Սաժէն, ձեռքը տարով բարի վարուց լաւ վկայագիր մը: Տասնութը ամառան պաշտօնավարութենէ վերջ, ուսուցչուհին արտասուսովոր աշխարհ կը հեռանար վարժարանէն, ըսելով. «այս պատճառին համար 19րդ անգամն է որ կը հեռացուիմ պաշտօնէս»:

Հանճարեղ մարդիկ յաճախ տեսած են իրենց կրկինները: Կէօթէն Ֆրէտէրիկէն բաժնուելէ վերջ, բուն յուզումներու պահուն ինքզինքը կը տեսնէր որ իր գէմ նստած էր: Կի տը Մօփասան իր հիւանդութեան սկիզբը, տխրութեամբ և մեղամազդոտութեամբ համակուած իր կրկինը տեսած ըլլալէն շատ ազդուած, գրեթէ «ձօրլան»: Ալֆրէտ տը Միւսէն, միշտ իր կրկինը կը տեսնէր, մանաւանդ իր կեանքի էն եղերական վայրկեաններուն: Այս ուղիւթեամբ ունի սքանչելի բանաստեղծութիւն մը:

Յաճախ կը պատահի, որ կրկինը երեւան գալու պահուն, ենթակային խոր թմբի մէջ կ'իջնայ և արթննալէ վերջ կը պատմէ իր տեսածները, որ միշտ կը համապատասխանեն իրականութեան:

Պատմութեան մէջ նաև երկատման օրինակներ շատ կան, Յիսուսի ժամանակակից Աբուլոնիուս տը Թիան և մոզ Սիմոն յաճախ տարբեր տեղեր ալ

կը տեսնուէին: Վեսպասիէն կայսրը, Սերափիսի տաճարին մէջ կը տեսնէր Պապիլիզը որ իրմէ սակայն մղոններով հեռի կը գտնուէր այդ պահուն: Անն Քլէման քահանայապետը, պատարազի միջոցին, յանկարծ մարեցու և արթննալէ վերջ պատմեց թէ Փիլոս գնացած էր նորակառոյց եկեղեցի մը օրհնելու համար իսկապէս Փիլոսի մէջ զինքը տեսնողներ եղած էին: Անն Սէնթ Ալֆօնս տը Լիւզօրի իր կրկինին միջոցաւ տեսած էր Քլէման ԺԲ. ի մեռնիլը և անմիջապէս լուր տուած էր իր ծանօթներուն, ինչ որ յետոյ ստուգուած էր: Միշին դարու կախարչները, իրենց կրկիններով իրենց թշնամիներուն շարքը հասցնել կը մտածէին: Փորձով տեսնուած է որ երբ կրկինները վերաւորուին, անմիջապէս ֆիզիքական մարմնոյ համապատասխան մասին վրայ երեւան զուան հարուածին ախտանիշները:

Տիւրքի շատ մը վկաներու ներկայութեան զարմանալի փորձեր ըրաւ և երեւան բերաւ շատ մը մէտիոմներու կրկինները. զոր զրկեց հեռի վայրեր, ուր անոնց վրայ կասարուած փորձերը անմիջականօրէն կ'զգացուէին ֆիզիքական մարմնոյ վրայ: Կրկինին դէմքին ինքնուրուած ապտակի հարուած մը, ֆիզիքական մարմնոյ վրայ անուրի սարսուռ մը և դէմքին վրայ խոր կարմուռութիւն կը յառաջացնէ: Այս կրկինները կը տպաւորէին լուսանկարի ապակիները, կը նշեցնէին երեքտրական զանգակները, կը շարժէին և օդը կը հանէին շարք մը առարկաներ, և այս բաները տեղի կ'ունենային, հաւանաբար՝ մետիոմին շարժողական ուժի արտաքսաւորումով:

Շատ հաւանական է որ ոգեհարցալան փորձերու պահուն պատահած զարմանալի երեւոյթներու գաղտնիքը կապուած ըլլայ մէտիոմին ունեցած դեռ անծանօթ ուժերուն հետ, գէթ այս կը թելադրեն մեզ Տիւրքի կատարած փորձերը և այսպիսի երեւոյթներու արտադրման համար մէտիոմ կոչուող որոշ անհատներու ներկայութեան անհրաժեշտութիւնը: Վերջին տարիներուն տեսնուած և հաստատուած փորձերով նաեւ կ'ապացուցուի որ ոգիներէ յաճախուած տուները անոնք են ընդհանրապէս ուր ընակողներէն ոմանք մէտիոմալան յատկութեամբ օժտուած են: Իսկ երբ այդ անհատները կը հեռանան իրենց տեղէն, հոն ամէն ինչ կը վերստանայ իր հանգարտութիւնը:

Դեռ պրպտման ահագին աշխարհ մը կայ հասկնալու համար թէ արդեօք, այդ երեւոյթները լոկ մէտիոմական ուժերու արդիւնք են, թէ ոչ անոնց միջոցաւ ազդող, գործող արտաքին ազդակներու: Հարցը կենսական կարեւորութիւն ունենալուն համար չենք կրնար գոհանալ տրամաբանական թուած կարգ մը բացատրութիւններով և փորձերու արդիւնքով:

Ոմանք անսաման վարկ կուտան անգիտակցականին և զայն տպաւորող եթերային թրթռումներուն:

Ամբողջ տիեզերք անհուն թրթռումներու ցանցին մէջ է, խօսքը, մտածումը յառաջ կը բերէ խիստ բարդ ալիքներ: Երբ ան փոխանծուի ու է առարկայի, կ'ըսէ Լաքոփըի, կրնայ ամբողջ դարեր ճառագայթել այդ առարկայի միջոցաւ: Ճայնական ալիքները որ կը տարածուին միջնորդութիւն մէջ, չեն կորսուիր բնաւ, երբ հանդիպին իրենց յատուկ ընկալուչի, անմիջապէս կը փոխակերպուին իրենց սկզբնական վիճալին: Եթէ գիտութիւնը կրցած է այսօր, որոշ գործիքներով կորզել անմիջապէս արտադրուած ու է ձայնական ալիք, հաւանաբար վաղը նոյն գիտութիւնը գտնէ ուրէջ գործիք մը, աւելի կատարելալ, կարենալ կորզելու համար ձայնական այնպիսի ալիքները, որ դարերէ ի վեր անհունին մէջ, աշխարհէ աշխարհ կը սառնան ինտենսիվ

գիտէ, անհատին բան չէ երեւակայել որ օր մը թերեւս, գիտութիւնը կարենայ կորզել այն ձայնական ալիքները, որ Քրիստոսի լուսան քարոզին կը պատկանին, և կամ կիկերոնի պերճախօսութեան: Այն ատեն մեզ կարելի պիտի ըլլայ լսել Քրիստոսի կամ կիկերոնի ճիշդ ձայնը, և խօսակերպը Մտածումը նաեւ ձայնի նման, միջնորդութիւն մէջ կը յառաջացնէ ինքնապատուկ թրթռացումներ և կ'ընդունուի այսօր որ մարդկային ենթադրականացանէ որ լաւագոյն ընկալուչը կը կազմէ այդ թրթռումը: Անցեալները բժշկական ժողովի մը մէջ, ջլային կարգ մը երեւոյթներու մասին եզամ դասախօսութեան մը առթիւ, մեր տարեց արուեստակիցներէն մին հարց կ'ուզէր դասախօսին թէ ինչօ՞վ կարելի էր բացատրել նախազգացումը: Եթէ մեր յարգելի արուեստագէտը նոգիզակցափոխուի անգիտակցած ըլլար, այդ հարցը պիտի չընէր: Երկարագոյն մը կը բացատրուի մտածման փոխանցմամբ, կան անհատներ որ շատ զգայուն են և արթննալ ի՞նչակի մէջ իսկ, կը կորզեն մտածման այն բոլոր ալիքները որ իրեն հետ կապ ունին:

1921ի ամբան, ուղեցիներ փորձ մը ընել մտածումներու փոխանցման մասին: Մ. Բալպըին զլխաւոր հիւանդանոցը կը գտնուէր մեր զեկապարտութեան տակ: Հիւանդապահուէններէն մին, որ շատ զգայուն էր, կրնար որպէս փորձի ենթակայ ծառայել մեզ: Օր մը, պատուիրեցիներ որ իրիկուան ատեն մեզ սպասեն մինչև ժամը 1ը, առանց քնանալու: Ոչ ոք տեղեակ էր մեր կատարելիք գործին մասին ժամը 9ին, մեր մեր ընակարանին, թելադրեցին որ օրիորդ X-ը, քնեմումութեան ենթարկուի և այս տեսեց հալիւ 10 վայրկեան: Հետեւեալ առտու երբ հիւանդանոց այցելեցինք, զեկապարտը (Պ. Ռուբին Ղէքիմեան) և ուրիշներ պատմեցին որ նախորդ իրիկունը, ժամը 9ին ատենները երբ միշակ էին, յանկարծ օրիորդ X. սկսաւ պոռալ ըսելով որ զինքը քնացնել կ'ուզէ և յանկարծ քնացաւ, մինչ ամէն ոք ձեր գալուստին կ'սպասէր: Բարեբաղդարար քիչ ատեն վերջ օրիորդը ինքնարբարար սխալեցաւ փորձը յաջողած էր ուրեմն: Այդ վայրկեանին, ուրիշ հիւանդապահուէնի մը նամակ գրելով զրոյցած էր: Առանց իրեն բան մը հասկնելու թելադրեցինք տնօրէնութեան սենեակէն որ ինքզինքը պրկուած պիտի զգայ անմիջապէս և պիտի չկրնայ ոտքի ելլել, երբ զինքը գտնուի կանչեն: Արդարեւ, երբ զեկապարտը կ'երթայ ըսելու իրեն որ Ժիշը զինքը կ'ուզէ տեսնել, կը պատասխանէ որ քիչ ստաջ իր ամբողջ մարմնոյն մէջ ջլային ցնցումներ զգացած էր և հիմակ կը գտնուէր տեսակ մը անդամալոյծ վիճակի մէջ: Տասը վայրկեան վերջ, արուած հակառակ թելադրանքներու հետեւանօք, օրիորդը կը վերստանար իր նախկին վիճակը և կուգար մեզ անձամբ պատմելու եղածը:

Այս փորձը զոր հազարեցիներ փր. Բ. Ն. Ռիշի Նկատուեցաւ խիստ հետաքրքրական և թելադրեց որ Revue Métapsychiqueի մէջ հրատարակենք մանրամասնութեամբ:

Կան անհատներ, որ մտածման ալիքներէն գիտակցարար ազդուելու գերզգայնութիւնը չունին, որով անոնք՝ անմիջապէս չեն կրնար գտնուի փոխակերպել համապատասխան գաղափարի, այն ատեն, անոնց ենթադրականացանէ որ այդ գործը կը կատարէ գիշեր ատեն, իրեն հասած մտածման ալիքները վերածելով symbolique երազներու: Պատահելիք ու է չէ դժբաղ կամ երջանիկ պարագայ, մեզի նախ երազի միջոցաւ ինք յայտնի կ'ըլլայ առարկայօրէն տեղի ունենալէ առաջ: Իսկ մէտիոմները իրենց քուսին մէջ, կը կորզեն յաճախ այնպիսի զարմանալի ալիքներ որոնք մեքենա-

կանօրէն և անմիջապէս կը փոխակերպուին իրենց համադաստասխան գաղափարներուն: Մարդկային անգիտակցականը անհուն ուղիէն մըն է, որ դարաւոր գոյութեամբ ժառանգաբար իրեն փոխանցուած գաղտնիքներուն մտածանքներուն, տենջանքներուն անհակնալի և խորհրդաւոր մէկ շտեմարանը կը կազմէ: Ո՛վ գիտէ, եթէ երբեք դարեր առաջ ալըրոյ անհատներու կեանքի բովանդակ պատմութիւնը կամ գլխաւոր դէպքերը արդէն չեն փոխանցուած փորձի մէջ եղող մէտիոմի ենթագիտակցականին, և կամ անոր անգիտակից մասը, իր ըրած զարմանալի արտայայտութիւններուն խորհրդաւոր աղբիւրը չքաղեր, միջոցի մէջ գտնուող այլ և այլ կարգի մտածման ալիքներէն: Մօրիս Մէթէրլինի կը պատմէ որ օր մը, աւերակ վանքի մը այցելող կարգ մը օտարներու հետ կը ծանօթանայ և այն օրն իսկ, գիշեր ատեն ոգեհարցական, նիստ մը կ'ուենանան նոյն վանքին գաւթի մէջ: Ներկաներէն մին որ մէտիոմ էր, կ'ըսէ որ հոն, վանքին մէջ, հինգ դար առաջ մեռնող վարդապետի մը գերեզմանը կայ, ցոյց կուտայ անոր տեղը, խորութեան չափը և տապանազրին արձանազրութիւնը: Երբեք այս բոլոր տեղեկութիւնները պատմութեամբ փոխանցուած չէին և ենթական անծանօթ էր անոնց, իսկ այս տեղեկութիւնները իրեն հազարդոցը եղած է մեռնող վարդապետին ոգին: Հետեւեալ օրը ամէն ինչ կ'ստուգուի: Մ. Մէթէրլինի հաւատացեալ մը ըլլալով միասին, կ'ըսէ թէ մի գուցէ վարդապետին այդ պատմութիւնը, զարէ ի դար, սերունդէ սերունդ փոխանցուած ըլլայ մինչև մէտիոմ, որուն ենթագիտակցականը, յարմար մէկ առթիւ դայն կ'արտայայտէ այսպէս:

Արդարեւ, հսկայ յայտնութիւններու մթերանոց մըն է մարդկային ենթագիտակցականը. նա՛ բնական անձին շարունակութիւնն է և անգիտակից կեդրոնը՝ փրօֆ. Կրասսէի, ուր կ'ամբարտեան կեանքի բովանդակ շրջանի մէջ ընդունուած և մուցուած տղաւորութիւններն ու յիշողութիւնները, կազմելով այսպէս անտեսանելի, անզգայի և խորագոյն մասը մեր հոգեկան ուղիէն: Արդեւ, որուն մակերեսային ծփանքներն են միայն որ կը կառուցանեն բոլոր գործունէութիւնները մեր գիտակից եսին: Ուրեմն, մարդուն անձնաւորութեան շատ փոքրիկ մեր մասն է որ կը յայտնուի գիտակցութեան մէջ և կը լուսաւորուի բանականութեան ճառագայթով:

Ահա կարծիքներու տարբերում, ուրիշ կը յառաջանայ ոմանց հոգեպաշտական, իսկ ուրիշներու նիւթապաշտական համոզումը: Շատ բնական է սակայն որ գիտական մարդիկ, որ շոշափելի և առարկայական փաստերով միայն կրնան գոհանալ, խորհրդաւոր ազգակներու օգնութեան գիմելէ առաջ՝ ռեալիստներն անհատին պէս անծանօթ ուժերու խորհուրդը:

Ներկայիս, որքան որ ալ հոգեպաշտական շարժումը մեծ ծաւալ ստացած է, հոգեկան կոչուած երեւոյթներու մէջ հոգեկան, անդենական ուժերէն աւելի, ֆիզիքական անծանօթ ուժերու դերը կը նշմարուի: Կրնայ պատահիլ սակայն որ գիտական նոր յառաջգիմութիւններ և արտասովոր պարագաներ ամէն տեսութիւն և համոզում վեր ի վայր շրջեն: Սպասենք ուրեմն և գիտնանք ներկայիս սաչափ որ այդ երեւոյթները բնական են և կան անհատներ որ ճիշդ զգայարանք մը ունին, որու միջոցաւ անոնք յարաբերութեան մէջ են ֆիզիքական կամ հոգեկան աշխարհի այնպիսի ալիքներուն հետ, որ կուգան ամէն կողմէ, տիեզերքի անհուն հեռաւորութենէն, ինչպէս նաև մարդկային մտածման անիմանալի խորքէն կրօնքի և ընկերային վարդապետութիւններու հիմնադիրներ, տեսնողներ, մարգարէներ, հանճարեղ արուեստագէտներ և մտաւորական արտասովոր դէմքեր յաճախ ունեցած են գեր-զգայնոտ բնաւորութիւն, որ արտաքին յատկանիշներէն մին է այդ յաւերժութեան և հիանալի զգայարանքին:

Յիշատ կենք կարգ մը խիստ վաւերական օրինակներ որ կը վաստեն հոգեկան երեւոյթներու և միեւնոյն ատեն ճիշդ զգայարանքի մը գոյութիւնը:

Վ. ձէյմս, մարդկութեան փառքերէն մին. կը պատմէ հետեւեալը. Օր մը Enfieldի մէջ, Պէրթ անունով աղջիկ մը կը կորսուի, և կը կարծուի թէ մօտակայ լիճի մը մէջ խեղդուած է: Այս ուղղութեամբ եղած ամէն ջանք անօգուտ կ'անցնի սակայն Տիկին մը որ կը ճանչնար Վ. ձէյմսը, պատահարէն քանի մ'օր վերջ, իր երազին մէջ կը նշմարէ Պէրթին մարմինը և ճիշդ խեղդուած տեղը. ինչ որ կ'ստուգուի երբ հազար տեսակ աշխատանք ապարդիւն էր մնացած:

Տիկին Կրին, Լոնտոնայի մէջ կ'երազէ որ իրեն անծանօթ երկու կիներ, որ կառք նստած էին, ճիշտ քնուելով ջուրը կ'իյնան և կը խեղդուին, մինչ անոնց յարգեայ գլխարկները կը ծփային լճին մակերեսին վրայ: Արթնաւուն պէս դայն կը բացատրէ իր շփոթներուն: Արդ ճիշդ այդ պահուն, իսկապի ունենալով երկայնութեան (longitude) տարբերութիւնը, Տիկին Կրինի քննադատութեամբ բարեկամուհի մը հետ, կառքով ըրած պտոյտի միջոցին լիճը կ'իյնայ և կը խեղդուի:

Պ. Վինկֆիլտ. Հնդկաստանի ծովագետը, իր գրաստանին մէջը դեռ արթուն եղած ատեն, յանկարծ կը նշմարէ իր եղբայրը որ տփօգոյն էր և տխուր խկապէս այդ պահուն, իր եղբայրը, Անգլիոյ մէջ, որտեղութեան մը ատեն, ճիշտ ինչպէս վերջ կը մեռնէր:

Պ. Սմիթ, Լոնտոնայի զբոսաշրջաններէն մէկուն պաշտօնակալ, իր կնոջ հետ խօսած ատեն յանկարծ կը նշմարէ իր բարեկամներէն մէկուն կրկինը: Ճիշդ նոյն ժաման, արդարեւ Fried իր տան մէջ յանկարծամահ կ'ըլլար:

Վ. Ղիւկո, այդպիսի պատմութիւն մը կ'ընէ իր գրքերէն մէկուն մէջ: Ատանկ հազարաւոր ստոյգ դէպքեր կան:

Բայ, փրօֆ. Ն. Ռիչէի, կարելի է այս երեւոյթներուն տալ շորս կերպ բացատրութիւն:

Ա.— Անոնք կրնան ըլլալ յերիւրածոյ, կեղծ կամ չափազանցուած պատմութիւններ: Արդ՝ կարելի չէ, զէթ անոնց մէկ մասին ստուգութիւնը կատարածի տակ գնել, երբ կատարելապէս արժանահաւատ ազբիւրներէ քաղուած է խտորէն հակակշիռ ենթարկուել վերջ:

Բ.— Հոս, կարելի է գիմել զուգադիպութեան Բայ Ռիչէի ըրած հաշիւներուն, զուգադիպութեան համեմատութիւնն է 1/100.000.000: Հակասակ այս անհունօրէն պղտիկ թիւին, գեռ զուգադիպութեան հաւատացողներ կան և նոյն իսկ բարձրօրէն մտաւորական դասուն մէջ: Պէրկսոն, 20րդ դարու մեծագոյն փիլիսոփաներէն մին, որ հաւատացող մըն է հոգեկան երեւոյթներու. կը պատմէ թէ իրիկուն մը, Փարիզի աշխարհիկ երեկոյթներէն մէկուն մէջ, խօսքը դարձաւ հեռազգածութեան (télépathie) մասին: Հոն գտնուող ըմբռնողներէն մին, որ միեւնոյն ատեն հաշիւաւոր փրօֆէսօր մըն է, ըսաւ թէ ինքն ալ գիտէր այդպիսի խիստ ստոյգ պատմութիւն մը, զոր իրեն պատմած էր խելացի և արժանահաւատ տիկին մը: Սր մը, տիկինը արթուն պատմած էր խելացի և արժանահաւատ տիկին մը: Սր մը, տիկինը արթուն եղած ատեն իր սենեակին մէջ կը նշմարէ իր ամուսինը, հակատէն վերաբերուած որ գետին կ'իյնար: Արդարեւ ճիշդ այդ պահուն, իր խեղճ ամուսինը որ սոյալ էր, հակատէն վերաբերուած կ'իյնար պատերազմի դաշտին վրայ: Բայ իրեն, այդ՝ պարզապէս զուգադիպութեան պարագայ մըն էր և ոչ աւելի: Պէրկսոն կ'ըսէ որ տեղը չէր հասկցնելու այդ բժիշկին թէ սխալ կը տարամարանէր: Երեկոյթը ըմբռնող պահուն, երիտասարդ օրիորդ մը կը մօտե-

նայ Պէրլսօնին և կ'ս հասկնէ անոր, թէ ըստ իր համեմատ կարծիքին, բժիշկը սխալ բացատրած էր երեւոյթը և հարկ կ'զայ ողջմտութիւնը էր գրած իր խօսքերուն մէջ... Այս, կ'ըսէ Պ. Բիլսոն. իրատե՛ք ունէր օրերոցը, քանի որ զուգահիշութիւն մը որքան ալ ճշմարտ ըլլայ, չկրնար սեղանոյն, ժամուն, տեսարանին մանրամասնութեանց համեմատական նոյնութիւնները տալ, ինչպէ՛ս ամենահարուստ պատերազմական նկարիչը, երեւակայութեամբ չկրնար նոյնութեամբ գծել ճիշդ որոշակ վայրկեանի մէջ տեղի ունեցած դէպքի մը ամբողջական մանրամասնութիւնները:

Գ. — Ոգեհարցները կ'ընդունին, մտնողներու ստեղծարարական արտայայտութիւնը որ յաճախ շատ երեւոյթ կը բացատրէ բայց չեն կրնար գոհացնել կ'ըսէ Ռիչէ անոր համար. Ա. — որ յաճախ կան դէպքեր ուր մանուկ պարագան գոյութիւն չունի: Բ. — Որ կրկինը միշտ կը տեսնուի գրեթէ մէկ անհատի, կամ շատ քիչերու: Գ. — Որ բնախօսութիւնը շարտաներ մեզ թէ մտածումը գոյութիւն կրնայ ունենալ առանց ուղիղի:

Գ. — Այս, ոչ բացատրութիւն մըն է և ոչ վարկած, այլ կոլեկտիան բուն արտայայտութիւնը որ կը փաստուի փորձարկութեամբ: Արտաքին աշխարհի կարգ մը դէպքերը, եթէ չեն ներգործեր մեր պայարարներուն վրայ, բայց կը սպասուին մեր իմացականութիւնը: Ի՞նչ ճամբայով, չենք գիտեր, այլ կը հաստատենք որ իրականութիւնը մեզ կը հասնի յաճախ խորհրդանշական ձևով, ինչպէս վերի օրինակներէն մէկուն մէջ, ուր տիկին կրկին կենթադիտակցական կ'ստանայ կոլեկտիան ըստը և գիշեր ատեն զայն կը փոխակերպէ symbolique երազի:

Բազմահարգ օրինակներ կուզան այսօր մեզ համոզել որ մեր մէջ թաքուն գգայնութիւն մը կայ (cryptesthésie) բառը փրոֆ. Շ. Ռիչէինն է) զոր կրնանք երեւան գնել բազմաթիւ փորձերով:

1922ի սկիզբները, Ալէքսանդրէթի ֆրանս. հիւպատոսի տան մէջ, ուր հաւաքուած էին քաղաքային և գիւնդական կարգ մը պաշտօնականներ, ներկայ ըլլալու համար մեր կողմէ կատարուելիք շիֆնոստիան կարգ մը փորձերու, մեր որոշած ենթականերէն ոչ մին կ'կամ ըլլայուն, մտածեցինք քննարկել իտալացի հիւպատոսին 14—15 տարեկան տղան: Այս պատանին, շուտով մը քննարկէ մեր ըստը սկսաւ իրեն կողմ հարցումներուն շատ ստոյգ պատասխաններ տալ: Մատակցական արգի կառավարիչ Լէօն Քէյլա, որ այն ատեն կը պաշտօնավարէր Ալէքսանդրէթի մէջ, ուղից գիտնալ թէ քանի բանալի ունէր իր գրպանին մէջ, կենթական բաւ թէ այդ հարցումը ընողը, Պ. Քէյլան է, թող գիտնայ սակայն որ գրպանին մէջ կայ երկու շղթայ, մին ունի 3 բանալի, իսկ միւսը՝ 8ը, ինչ որ շնտակ էր: Պ. Իճալմ, որ մաքրատան քննիչն էր, մէկ ամիսէ ի վեր իր ակնոցը կորսնցուցած էր և չէր կրցած գտնել, մեր հարցումին վրայ, կենթական բաւ որ ակնոցը ինկած էր հանդերձարտնին կոնակը, մէկը գրկուեցաւ որը վերագարծաւ փնտռուած ակնոցով:

Օր մը, Ռիչէ կը հարցնէ Լէօնի կոչուող մէտրոմի մը թէ արդեօք ի՞նչ կ'ընէ Բ. Լանկուա (իր աշակերտը), Լէօնի կը պատասխանէ թէ հիմակ անոր ձեռքը ալեկցաւ կարմիր հեղուկով մը, ինչո՞ւ ուղարկուեց թէ հիմակ անոր անկողնու վրայ, Պ. Լանկուա աշխատանքին մէջ, պրօմ թափած էր իր ձեռքին վրայ, որ այրած էր:

Մ. քաղաքէն բաժնուելէ առաջ, ուղիցինք հասկնալ թէ Ալէքսանդրէթի քաղաքապետական բժիշկը ո՞վ էր: Ենթական 14 տարեկան աղջիկ մը, քնէածութեան տակ մեզ պատասխանեց բժիշկին անունը և բաւ միտնոյն ատեն որ քաղաքապետական. ժողովը վիճար իր պաշտօնէն: Կենացնել պիտի տայ, ինչ որ ստուգեցինք մէկ շարաթ վերջ:

Ուրիշ աւելի խորհրդաւոր անձնական պարագայ մը, որ չիթուածան մատնեց հոգեր. համաժողովի բալմաթիւ անդամները և զոր հրատարակեցինք Psychic Magazineի 1922 Հոկտ. թիւին մէջ (Փարիզ):

1921ի վերջերը, Ելան ինձ հարցաբերու որ տան մը մէջ առարկաներ կը կորսուէին: Մտածեցի որ տան տիրուէին, նաւանաբար գիշերաչափի մըն էր (somnambule) և ինքն էր գողցողը: Հետեւեալ օրը, կարգ մը բարեկամներով այցիլեցի այն սենեակը ուր կը կորսուէր կարգ մը աննշան առարկաներ: Սենեակը ունէր 2 պատուհան և մէկ դուռ: Պատուհաններու բեկիկը գոցելէ և կնքելէ վերջ սենեակին առարկաներու գիրքը, և թիւը նշատի առի և մէջտեղի սղանին վրայ, որ ծածկոց մը ունէր խոշոր, ձգեցի անձանթ ու ժին ուղղուած երկտող մը և մատիտ մը, յետոյ դուռն էլանք և կնքուեցաւ նաեւ դուռը, որուն բանալին ևս առի քուս: Տան տիրուէին, ձերու ակիին մը այդ գիշերը անցուց բարեկամի մը տան մէջ, Հետեւեալ օրը կեսօրին տեսանք որ կնքուած սենեակը բացուած չէր և դուռն ու պատուհաններու կնիքները կը մնային ան՛ղծ: Իսկ ներսը՝ մուկի ծակ մը անգամ չկար ինչ որ տարօրինակ էր, այդ սեղանի ծածկոցին չէր ուղիղութիւնն էր, կորսուած էր նաեւ անձանթ ժին ուղղուած երկտողը, իսկ մատիտը կը գտնուէր սենեակին մէկ անկիւնը զետեղուած ճիւղակի վրայ, ու բարձ մը ինկած էր և անոր մատիկ, ամուս մը՝ տեղափոխուած: Տեղակի վրայ կը նշմարուէր նաեւ փոշի և սոքի հետք...

Այս զարմանալի դէպքին առթիւ սկսայ յիշել այդօրինակ ուրիշ դէպքեր որ երբեք տեսնուած էր եւրոպայի մէջ: Հարկ էր գտնել այդ առարկաները ստացողը: Իմ քով գտնուողները ամբողջ ափի բերան մնացած էին:

Տան սպասուէին, 12 տարեկան աղջիկ մը, անմիջապէս հիֆնոսական քուսնի կենթարկեցի և ըսի որ աչքերը բաձայ և ինչ պատմէ թէ ինչ կը տեսնէ իր շուրջը: Աղջիկը յանկարծ տփռուեցաւ և սկսաւ վախէն զողալ, թեկադրեցի որ չվախնայ և զիս տեղեակ պահէ իր տեսածներուն մասին: Այն ատեն հանգարտօրէն շաւ ուր իր դէմ կար Մարի Տ կ'ըմբռնուէր անունով օրիորդ մը, որ մուսած չէր, և ինքն էր այդ առարկաները ստացողը, թէ ձերմակ շրջապատ մը կը կրէր: Այդ պատճառով գիտեցի որ մտնողն էր մէկ մը դէպի վեր և մէկ մըն ալ դէպի վար, տիվանի սոքն կողմը կը նայի, երբ պատճառը հարցուցի բաւ որ գիտեցի կինը կ'ըսէ որ տիվանին տակը գրամ պահուած է, պետք է գտնել և տալ տանտիրոջ, իսկպէս, տան տիկինը հոն քանի մը սովորած պահած էր: կարգ մը կարեւոր պատճառներով, երկար պրպտուածի ժամանակ չունեցանք և խնդրը ոչ մէկ ձեւով չուարանուեցաւ մեզ համար:

Ուրեմն, կան անհատներ որ հիֆնոսիզմի տակ կ'ստանան որոշ գեր-զգայնութիւնը, հասկնալու համար ինչ որ կը խուսափի մեզ, հասարակ մահկանացուներու:

Ահա՛ ուրիշ քանի մը օրինակներ նաեւ որ նոյնքան վաւերական են: 1906 Յունիսի օր մը, ժամը 10.30ին երկու բարեկամներու ներկայութեան տիկին Ռ. կը գոչէ յանկարծ «Պանիս, մահը ընտանիքի շուրջ կը բախարհ» հետեւեալ օրը, ժամը 3ին կը լսուի Փարիզի մէջ, Սերպիոյ թագուհիին, Տրակաի սպանութիւնը: Թագուհիին հայրը կը կոչուէր Փանիս:

1914 Յունիս 31 թ. իրիկունը, Փարիզէն քիչ մը դուրս, Կոմս Իւլիօ Պալիէրի, որ զարմանալի պայճառատեութեամբ մը օժտուած էր, կը գոչէ յանկարծ «Հիմակ նշանաւոր անձնաւորութիւն մը պիտի սպանուի... Ահ,»

որքան արևն... Ժամը քանի՞ է... 21 40... Այո, Պուլվար Տէգիթալին-
կողմը բան մը կ'անցնի...»: Իսկապօ Ժամը 21ը 33 անցած, Պուլվար Տէգիթ
թալինի վրայ կ'սպաննուի մեծ հրետորը՝ ժօրէս:

Այս գասակարգէն են նաև կարգ մը պայծառառու կիներ, որ վաղձն ա-
նունով ծափօթ են Արեւելքի մէջ և որոնց հազարաւոր նմանները կը վըրս-
տան Եւրոպայ, կան նաև ուրիշ երեւոյթներ որ կատարելագոյն հակաորա-
մաբանական և հակաքրիստոսական կը թռչին ըլլալ: Տօրթ. Շ. Նօյնիկ. 1927ին-
Սորպոնի մէջ գումարուած հոգեբանական միջնագոյն. համաժողովի ներկայա-
ցուց խիստ զարմանալի պարագայ մը: Karl Weber անուամբ Երիտասարդ մը,
արթուն վիճակի մէջ, Միւնխի ընդամաթիւ փրօփետօրներու ներկայու-
թեան և կատարելագոյն հակալիցուած պայմաններու տակ, օգը բարձրա-
ցած էր 25 անգամ:

Վաւերական զեռ հազարաւոր տեսակ պատմութիւններ կան, որոնք շատ
աւելի խորհրդաւոր են և ամինասկեպտիկներն անգամ մտահոգութեան կեն-
թարկեն: Այլեւս, արգա-ատելի կը թուի մեզ այն յայտուն վճիւր կարգ մը
գիտուններու, որոնք կ'ուզէին աշխարհն ու իր խորհուրդները բացատրել
մէկ քանի բնագիտա-տարրարմական օրէնքներով, առանց կռահելու որ
այդ օրէնքներն անգամ բացարձակ չեն միշտ:

Իսկ հոգեբանական երեւոյթները, զեռ շատերու համար, աւելորդօրոյց
տուութեան հետեւանք կը համարուին և ամն մարդ, ինքն իրեն իրաւունք
կուտայ կարծիք յայտնելու անոնց նկատմամբ:

Փրօֆ. Շ. Ռիչէ, որ միակ գիտունը եղած է մեծ այս ճիւղով պարզօր
գիտուններու մէջ կ'ըսէ հետեւեալը:

«Երբ քիմիագէտը ո՛ր է փորձ կ'ընէ իր աշխատանոցին մէջ, չհեռա-
քրքուի բնաւ քիմիագիտութենէ հասկնող մարդոց ը'ելիք առարկութիւն-
ներով: Ոչ գրագէտը, ոչ երաժիշտը, ոչ աստղագէտը, ոչ ժուրնալիսը և ոչ ալ
նպարակաճառը հոն ո՛ր է կարծիք ունին, միայն քիմիագէտներն են որ
անոր փորձի պայմանները և արդիւնքը քննելու իրաւունք ունին:

«Նոյնն է պարա ան բոլոր մի ս գիտութիւններու նկատմամբ:

«Եղո՛ւկ, գարով հոգեգանցագիտութեան, որ շատ աւելի գոռու գիտու-
թիւն մըն է քան բժշկութիւնն, քիմիաբանութիւնը, մաթեմատիքը, (քանի
որ կը պահանջէ բազմաթիւ գիտութիւններու համագործիւնը և նաև հոգե-
գանցական մասնաւոր հմտութիւն, որ ձեռք կը ձգուի առնուազն քանի մը
հարիւր հասոյններու ընթերցումով և փորձարկութեամբ), խնդիրը կը փո-
խուի և ամէն ոք իրաւունք կը կարծէ ունենալ կարծիք յայտնելու: Ոչ բժիշկը,
ոչ փատաբանը, ոչ գրագէտը, ոչ մաթեմատիկոսը, ոչ աստղագէտը ձեռն-
հասութիւն չունի վիճելու հոգեգանցակալ երեւոյթներու շուրջ, երբ պատ-
րաստուած չեն այդ ուղղութեամբ:

«Անոնք պիտի ըլլային այնքան ծաղրելի, որքան ո՛ր է մէկը կրնայ ըլլալ
երբ առանց բժշկական, օրէնագիտական կամ քիմիական ծանօթութեան, վէճի
կը բռնուի բժշկական նոր մէթոտներու, օրէնքի տրամադրութեանց, կամ
քիմիական այս կամ այն տեսակի նկատմամբ՝ նոյն ճիւղերու կատարելա-
պէս ծանօթ անհատներու հետ:

Ու այս բոլորէն վերջ, հա ատը ունենանք գիտութեան վրայ. ան՝ կրնայ
զեռ հրաշքներ գործել, բայց մնանք միշտ համեստ, քանի որ բացարձակ ճշմար-
տութեան պիտի չհասնինք բնաւ. որքան ատեն որ մարդ ենք և կեանքի խոր-
հուրդը՝ հաւանաբար մեզ համար մնայ միշտ անլուծելի առեղծուած մը:

Պարիզ

ՏՕՐԹ. ՄԻՃԻ Կ. և ԳԻՇԵՆԱՆ

Տնօրէն-խմբագիր՝ «Առողջ կեանք» թժշկական հանդեսի

Գ Ի Տ Է Ք Թ Է Ո Չ

Այսօր ամէն մարդ հեւիճեւ կը հետեւի աշխարհի ամբողջ անցուզարձե-
րուն, կը հետաքրքրուին թէ ո՞վ է աշխարհի զեղեցիկութեան թագուհին, ո՞վ
է ամէնէն երկարակեաց մարդը և կամ ո՞վ է շարժապատկերի ամէնէն փայ-
լուն ասուլը եւ այլն, բայց շատեր կ'անգիտանան իրենց և զաւակներուն ա-
ռողջութեան ամէնէն մեծ աղբակը եղող սկուաներուն գործունէութիւնը և



ԲԵՆԵԱՄԻ ՊՕՂՈՍԵԱՆ

խնամք չեն տանիլ անոնց՝
թէ եւ ախտասալու ատենը
չուշանար, բայց ի՞նչ օգուտ:
Պէտք է գիտնաք թէ
մարդկային մարմնի վրայ
առողջ կեանքի գոյութեան
համար ամենէն էական գոր-
ծարանն է մարտոյական
գործարանը, որուն շատ
կարեւոր մէկ մասը կը կազ-
մեն սկուաները:
Այսօր գիտական օրէն
հաստատուած իրողութիւն
մըն է թէ առողջ կեանքը
առողջ սկուաներ ունեցողին
վրայ կը տեսնուի և աւելի
առաջ կը իրթալով կրնանք ը-
ել թէ նախախնամութիւնը
կեանքի կանոնաւորման հա-
մար բերանը սկուաներով
յինամ է, որովհետեւ մարդ-
կային մարմնի վրայ ասոնք
իրենց գոյութեամբ դեմք
զեղեցիկացնելէ, խօսակցու-
րեւ և նպաստելէ շատ շատ
կարեւոր դեր մըն ալ կը
կատարեն նպաստելով մարմնոյն ամնաւ: Շատ անգամներ գարմանատանս մէջ
գժրազգաբար կը տեսնեմ շատ մը մանուկներ, որոնք կորսնցուցած կ'ըլլան
իրենց մարմնոյն ամնաւ համար այդքան կարեւոր եղող սկուաներէն մէկ քա-
նին և որուն հետեւանքը ըլլալով, ոմանք ալ կ'ունենան անկանոն ատամնա-
շարքեր: Ծնողքներ պէտք է գիտնան թէ, սկուաներուն գոյութիւնը անհրա-
ժեշտ է մանուկներու վրայ անոնց ամնաւ տեսակէտէ՝, այս պատճառաւ
ծնողք մը որքան խնամք կը տանի իր զաւակին մնունդին, հանդիստին, պէտք
է նոյնքան և աւելի խնամք տանի անոր սկուաներուն, որովհետեւ մանուկը

գեւ անելու, կատարելագործուելու պէտք ունի, անոնց մէկ հասին իսկ չդու-
յաւթիւնք մեծ գրխանք մը կ'ըլլայ իրեն:

Կեանքը, որուն տէրն է, բնութեան պարզեցումը աւանդ մըն է իրեն
յանձնուած և ճնշոյթներ անոր օրինաւոր պնդողանուտին բարոյական պար-
տականութիւնը ստանձնած են: Սերմնի ճնշոյթներ պէտք է գիտնան ակաւ-
նեցուն աճումը, և ըստ այնմ խնամք տանելով իրենց զաւակներուն ակաւ-
նեցուն, պարզեւեն անոնց համերաչիւ, բնական ու կանոնաւոր աճում եւ
զործունէութիւն:

Մարդիկ իրենց կեանքին մէջ երկու անգամ ակաւայ կը հանեն (dentition),
որոնց առաջիններուն կ'ըսուի կաթի ակաւներ (dents de lait), իսկ երկ-
րորդներուն տեւական ակաւներ (dents permanentes):

Առաջին (dentition)ը տեղի կ'ունենայ մանուկեան շրջանին: Երբ ծնած
եղբայր մը ամբողջ աճանները ստորին և վերի ճնտոնեքու տիւրներու խո-
ռոչներուն մէջ բանտարկուած և լինտերով ծածկուած կ'ըլլան, ակաւները
երբիան չձնած մօրը սարմին մէջ արդէն կազմուած են: Երբ անգամներ
մէկ կամ աւելի պահուելով ծնած եղբայրներ թէեւ տեսնուած են բայց
ասիկա բացառիկ պարագայ մըն է: Եղբայր մը երբ 6-7 ամաւան կ'ըլլայ,
ակաւները իրենց խոռոչներուն մէջ աճման հետեւանքով գէպի վեր կը
բարձրանան և լինտերը ծակելով զուրս կ'ելլեն հետեւեալ որոշ և մասնաւոր
օրէնքներով.

Ա.— Իրարու նմանող ակաւները մէկը աջ և միւսը ձախ կողմը ըլլալով
իւրաքանչիւր ճնտոնի վրայ գոյգ կ'ելլեն:

Բ.— Ստորին ճնտոնի ակաւները վերի ճնտոնի վրայ իրենց համապա-
տասխան ակաւներէն աւելի առաջ կ'ելլեն:

Գ.— Ստորին և վերի ճնտոններուն վրայ (Arcades dentaires) ակաւները
կարգով կը բուսնին: Ամէնէն առաջ կեդրոնի հերձատամները (insisives
centrales), յետոյ կողմնային հերձատամները (insisives laterales), առաջին
սպորթիքները (premières molaires), շնատամները (canines) և ամէնէն վերջը
երկրորդ սպորթիքները (deuxièmes molaires) կ'ելլեն հետեւեալ որոշ ժամա-
նակներուն.

6-8րդ ամսուսն մէջ ստորին ձեւնի կիդրոնի աջ և ձախ 2 հերձատամներ կը բուսնին	
7-10	» » վերի » » » » » »
8-16	» » ստորին » կողմնակի » » » » » »
10-18	» » վերի » » » » » » » »
22-24	» » ստորին » աջ և ձախ առային » սորթիքներ » »
24-26	» » վերի » » » » » » » »
28-30	» » ստորին » » » » » » շնատամները » »
30-34	» » վերի » » » » » » » »
32-36	» » ստորին և վերի ձեւններուն աջ և ձախ երկուսի 4 սորթիք- ները կը բուսնին:

Ինչպէս կը տեսնուի արուած սոյն յուշակին համեմատ 3 տարեկան մանուկ
մը կաթի ակաւները ամբողջացուցած կ'ըլլայ, իւրաքանչիւր ճնտոնի վրայ
կ'ունենայ տասը և ընդամէնը քսան ակաւներ հետեւեալ տեսակ և թիւերով՝

հերձատամ 2 շնատամ 1 սորթիք 2 սորթիք

$$\text{Վերի ճնտոն} \quad \frac{4}{4} + \frac{2}{2} + \frac{2}{2} + \frac{2}{2} = \frac{10}{10}$$
$$\text{Ստորին ճնտոն}$$

Եղբայր միեւնի է, վերջերորդ տարիքը ակաւներուն սոյն թիւը կը պա-

նէ. 6-7 տարեկանին ստորին և վերի ճնտոններուն աջ և ձախ կողմերը ու
ետեւը մէյմէկ հատ ըլլալով չորս հատ սպորթիք ակաւներ կը հանէ, որոնք
իրենց երած տարիքին անունով վեց տարեկանի ակաւայ (dent de six ans) կը
կոչուին, այս ակաւներով մանուկը ունեցած կ'ըլլայ ընդամէնը 24 ակաւներ
և սոյն թիւը կը պահ: մինչեւ իր 12 տարիքը: 12 տարեկանին նոյն ձեւով
չորս ակաւայ եւս կը բուսնի, որոնք ալ կը կոչուին տասներկու տարեկանի
ակաւայ (dent de douze ans) և մանուկը կ'ունենայ 28 ակաւներ. որմէ վերջ
16-20 տարեկանին չորս հատ ակաւներ եւս կը բուսնին. անոնք ալ իմաս-
տութեան ակաւներն (dent de sagesse) են, որ այս կերպով ակաւներուն թիւը
կը հասնի իր ամբողջութեան՝ 32ի: Այս վերջինները երբեմն կ'ուշանան և
կամ իրենց խոռոչներուն մէջ բանտարկուած մնալով բնաւ չեն բուսնիր:
Մանուկին 6 և 12 տարեկանին հասած ակաւները տեւական են որոնք իր
կեանքին մէջ մէկ անգամ միայն կ'ելլեն և չեն փոխուիր, բայց դժբաղդա-
բար ճնոյգքներէն ոմանք կաթի ակաւայ կարծելով զանոնք, փատած ալ ըլ-
լան անխնամ կը թողուն և կամ քաշել կուտան. այս կերպով մեծ զրկանք
մը կ'ընեն իրենց զաւակներուն, որովհետեւ անոնք տեւական ակաւներուն
առաջին և երկրորդ սպորթիքները կը կազ են:

Պէտք է գիտնալ թէ փոխուող ակաւները միմիայն կաթի ակաւներն են.
որոնք ինչպէս կարգով կ'ելլեն, միեւնոյն կարգով ալ կ'իջնան և իրենց կը
յաջորդեն տեւական ակաւները: 7ուկէս տարեկանին ստորին և վերի ճնո-
նեքուն կեդրոնի չորս հերձատամները, 10-10ուկէս տարեկանին ութը առա-
ջին և երկրորդ սպորթիքները և 12 տարեկանին չորս շնատամները կ'իջնան:
Կաթի ակաւներուն արմատները իրենց խոռոչներուն մէջ կ'աճին և երբ մա-
նուկը հինգ տարեկան կ'ըլլայ, կը դադրին աճելէ: Այս տարիքէն սկսեալ կա-
թի ակաւներուն տակը գտնուող տեւական ակաւները կը ճնշեն անոնց ար-
մատներուն վրայ, միեւնոյն ատեն ծծելով զանոնք: Կաթի ակաւները այս
կերպով առանց արմատի միայն պակով կը մնան, պակով թէեւ շատ ան-
գամներ լիզուի միջոցաւ երած շարժումով մը կ'իջնայ, բայց երբեմն ալ չեն
իջնար և կը մնան ու այս պատճառով իրենց տակը գտնուող տեւական ակ-
աւները իրենց ուղղութիւնը կորսնցնելով ծուռ կը բուսնին և մանուկը
կ'ունենայ անկանոն ատամնաշարեր, որուն համար երբ կաթի ակաւայ մը
իջնալու ատենը կ'ուշանայ, այդ ակաւն կը քաշուի՝ որով տեւական ակաւն
ազատօրէն կը բարձրանայ և կը կազմուի կանոնաւոր ատամնաշարեր:

Ծնողքներ, եթէ կ'ուզէք զուարթ և առողջ կեանք մը սպրիլ ձեր ըն-
տանեկան բոյնին մէջ, պէտք է գիտնաք այս կանոնները և ըստայնմ խնամք
տանիր ձեր և ձեր զաւակաց ակաւներուն:

16 Սեպտ. 1932

Կ. Փաշա

ԸՆԴՀԱՆՈՒՄԻ ԳՕՂՈՍԵԱՆԸ

Վերաբ. ասամկարդժ



ՋԱՐԵԶ ԿՈՐԲԱՅԵԱՆ

Երգչուհի Տիկ. Լիլուի Սեւումեան - Արզումանեան

ԲԵՆԵՍԻՐԵԿԵՆ

ՊՈԼՍԱՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ ԱՆՑԵԱԼԻ ՄԷՋ

Կեօիկ-փառայի Ողբաստանում մարմնի մեծայտգ սնկամենուն:

Չեր մայիս 20 թուակիր նամակով փախաք կը յայանէք որ Զուարթնոց Տարեգիրքին մէջ հրատարակուելու համար ուսումնասիրութիւն մը գրեմ Պոլսահայ գաղութը անցեալին մէջ նիւթին վրայ:

Թէեւ շատ հետաքրքրական նիւթ մըն է ասիկա, բայց կարելի չէ գո-

հացուցիչ հետազոտութիւն մը ընել անցեալի խորութեան մէջ, միայն ա՛յն պատճառով որ պատմական վաւերագիրներ կը պակսին:


Բայց սաշափը ստոյգ է որ վաղեմի ժամանակներու մէջ հայը իրրեւ առեւտուրի մարդ համբողջած է աշխարհի ամէն կողմ:

Կ. Պոլիս, իրրեւ կեդրոն բիւզանդական կայսրութեան, մասնաւոր հրապոյր ունէր վաճառական ժողովուրդներու համար:

Մեր ազգային պատմութեան սակեղարեան շրջանին կը տեսնենք որ հայ ուսանողներու համար ալ բարձրագոյն կըրթութեան կեդրոն ներէն մէկը եղած է Կ. Պոլիս:

Շատ վստահու-

թեամբ կարելի է ենթադրել որ այդ ժամանակներու մէջ զինուորական եւ վաճառական հայեր արդէն հաստատուած էին Բիւզանդիոնի մէջ:



Տ. Տ. ԲԱԲԳԵՆ ԱԹՈՌԱԿԻՑ Ս. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

Մասնաւոր ուշադրութեան արժանի է յունագաւան հայ զինուորներու քաղաքացիութիւնը բիւզանդական բանակներու մէջ. հայ զինուորներ՝ որոնցմէ ոմանք կըրցան բարձրանալ նոյն իսկ կայսերական զանր:

Հիմնուելով պատմական տուիւններու վրայ, մենք ասկէ առաջ երկու անգամ գրած ենք այս հիւսիսն շուրջ, նախ՝ Հանդես Ամսօրեայի մէջ (1924 էջ 432—441) և յետոյ՝ Ս. Փ. Ազգ. Հիւանդանոցի Ընդարձակ Տարեցոյցին (1926) մէջ, Կ. Պոլսոյ Հայ Դատարիին ծագումը և Կնազոյն Եկեղեցիներ խորագրին տակ (էջ 290—295):

Այդ գրուածներուն ամփոփումը սա է.

Ա.— Վաղիսի ժամանակներէ Հայեր կային Բիւզանդիոնի մէջ, իբրև ուղտանոց, իբրև զինուոր և իբրև վաճառական.

Բ.— Զանգուածային գաղթը սկսաւ Հայաստանէն դէպի Բիւզանդական երկիրներ 930-ին, երբ Վասիլ կայսր Սինեքերիմ թագաւորի ձեռքէն առաւ իր երկիրները և անոր տեղ տուաւ Սերաստիոյ շրջանակը:

Գ.— Խաչիկ Կաթողիկոս (973—992) Հայոց համար թեմական կազմակերպութիւններ ըրաւ բիւզանդական երկիրներու մէջ և եպիսկոպոսներ զրկեց այդ թեմերուն:

Դ.— Միքայէլ Ասորի Պատմագրին համեմատ Հայք և Ասորիք մէյմէկ եկեղեցի ունէին Բիւզանդիոնի մէջ, և իւրաքանչիւր եկեղեցի ունէր քահանայ մը և վաճառականներէ կազմակերպուած մարմին մը:

Այս երկու եկեղեցիներն ալ հրկիզուեցան Ալեքսիս Ա. Կոմնենոսի (1081—1118) հրահանաւ, իբրև արդիւնք քաղկեդոնական վէճերու:

Ե.— Կ. Պոլսոյ հայութիւնը կանոնաւոր Առաջնորդութիւն ունէր 1438-ին, և Առաջնորդն էր Տ. Յովակիմ Արքեպ., որ Կ. Պոլսոյ Թիւրքերու կողմէն գրաւման տարին (1453) Պատրիարք հռչակուեցաւ Փաթիւն Սուլթան Մէհմետի կարգադրութեամբ:

Զ.— Մինչև հիմա երեւան եկած հին վաւերագիրներու համեմատ Կ. Պոլսոյ Հայոց հնագոյն եկեղեցիներու ցանկին գլուխը կը գտնուի Ղաչաքիոյ մէջ Ս. Սարգիս եկեղեցին, որուն յիշատակութիւնը կայ 1360—61-ին գրչագրուած Բերականութիւններու մէջ:

Անա՛քանի մը ստոյգ դէպքեր ու թուականներ, որոնք կը հաստատեն թէ Հայք Կ. Պոլսոյ առումէն (1453) 400 տարի առաջ կազմակերպեալ եկեղեցի մը ունէին այդ մայրաքաղաքի մէջ, իսկ 1433-ին առաջնորդութիւն մը, որ պատրիարքութեան բարձրացաւ 1453-ին:

Կարողիկոսարան Հայոց
Անթիլիաս
1932 Յունիս 27

Բ. Ա. Կ. Կ.



ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՆՈՐ ԿԵՑՈՒԱԾՔԸ ՀԱՆԴԷՊ ԸՂԴԶ. ԵԿԵՂԵՑԻՒՆ

ԳՐԵՑ ՄՍ. Ծ. ԿՐԴ. ՊԱԽԹԻԱՐԵԱՆ

Ամէն անգամ որ, նոյնիսկ մերազնեւելոյ բերաններէն, կը լսենք շուսաւորչական որակումը՝ հայ Առաք. Ս. եկեղեցւոյ հարազատներուն, տխուր և զայրոյթախառն ընդվզում մը կ'ունենանք այդ զիտումնաւոր կերպով յղացուած և անճիշտ յորջորջումին հանդէպ:



Հ. Ծ. ԿՐԴ. ՊԱԽԹԻԱՐԵԱՆ

Ու մերազնեայք՝ լուսաւորիչ Ս. հօր հանդէպ իրենց տածած անսահման սէրէն ու երախտիքէն արբշտ, պահ մը կը մտնան անդրադառնալու:

այն թաքուն ու յետին մտքին, որով հայ եկեղեցւոյ առաքելականութիւնը իր հակառակորդները կը միտին ժխտել:

Հայ. եկեղեցւոյ առաքելականութեան ժառանգը կը սկսի Բաղեղարմի տիկեղեցական ժողովէն՝ Նախամարտի առաջին ընդհարումն է այն ժողովը ուր մենատիրութեան շնորհիւ սկսած է հնչել:

450—451 Քրիստոնէական թուականը լինել թէ շլինելու թուականն է հայ. Առաք. Ս. եկեղեցւոյ և հայ ազգին համար: Երկու հսկայ և հակամարտ ոյժեր միացեալ հակառակ են կազմած ցեղին գոյութեան դէմ: Դարերով ձուլումի քաղաքականութեան հետեւող երկու հոգի ազգեր, սարսփններ և յոյներ, առաջինները կեղծանունն ու հակառակն հայ ժողովուրդին կենաց ու գոյութեան լատափայտին՝ Հայ. եկեղեցւոյ՝ դէմ կը յարձակին զայն Չախնախելու անայլայլ մտասեւեռումով բռնի ու զինուորական միջոցներով, իսկ վերջինները, աւելի վտանգաւոր աւելի ծածկամիտ ծրագրով, կողմնակի յարձակումներով կ'ուզեն դիմադրել զՍ. Յովն Թրթոտոսութեան, ուր հայ ցեղին իւրի ոյժն լուծուելը ժամանակի խնդիր մ'էր միայն:

Մեր ներթիւն գուր կը մնայ Պարսկց զէմ ինքնապաշտպանութեան սրբումը հայ կրօնին, հայ եկեղեցիին ու հայ ազգին: Այլ կ'ուզենք ակնարկ մը նետել ազգատարի այս թուականին զուգարիպող և այն օրերէն սկսեալ դարեր տեւող այն հսկայ բարոյական սպառնալիս, զոր Հայ. Առաք. Ս. եկեղեցին մղեց ընդհանրապէս՝ ընդհանրական-Քրիստոնէական և մասնաւորապէս Օրթոսոսքս - Յունաբանութեան եկեղեցիին դէմ:

307 թուականը այն երկնակարկատ հանդուստան է, ուր հայ ժողովուրդը ի ձեռն Ս. Գրիգորի՝ պաշտօնապէս և գրեթէ հաւաքական ամբողջութեամբ Քրիստոնէական աւազանին մէջ մկրտուեցաւ: Կրօն, վերամշակուած այդ թուականը, տարակոյս չկայ թէ, պիտի ըլլար միաժամանակ մտքի, զազափարիլ-իզուռի ու բրակնուելեան համար եւս նոր վերածնունդ մը:

Յոյն լեզուն, Յոյն մշակոյթը, Յոյն քաղաքակրթութիւնը հզօրապէս ազդած էին հայոց վրայ, որպէս ամէն մարդի մէջ տիրապիտոս ազգի մը տիրան ու գրոջմը: Նախաքրիստոնէական և քրիստոնէութեան առաջին երկու դարերուն մէջէն սկսած այդ ներգործութիւնը ժամանակի սպար կարգի մ'էր վերածած հայ ազգին ձուլումը յոյն տիրող ազգին մէջ: Աթէնք գրականութեան, դաստիարակութեան անչէջ վառարանն էր, ուրիշ շատ մը այլ ձուլումն ու մեջէն սկսած այդ ներգործութեան հետ հայերն եւս կը ստանային իրենց մտքի սնունդը ու անուանէին ձուլումը յոյն տիրող այլ ազգին մէջ: Աթէնք գրականութեան, դաստիարակութեան անչէջ վառարանն էր, ուրիշ շատ մը այլ ձուլումն ու մեջէն սկսած այդ ներգործութեան հետ հայերն եւս կը ստանային իրենց մտքի սնունդը ու անուանէին ձուլումը յոյն տիրող այլ ազգին մէջ:

Հայերը հայու պէս կը մտածէին, հայ աւանդութիւններով կը սնանէին բայց յոյներու պէս կ'արտայայտուէին: Հայ լեզուն յոյն տառերով կ'արտաբերէին և յունական բառեր՝ յոյն գրերու հետ ձեռք ձեռքի բռնած՝ կը սարքէին հայ լեզուին մէջ: Օրթի, Պրոստիմե, Պենետիպիոսի, դեռ փառաւորապէս կը բազմին հայ եկեղեցւոյ ժամասացութեան մէջ: Մտքի բացառիկ յատուկութիւններով և կենսունակութեան տարբերով օժտուած ցեղ մը, անուշտ, դիւրաւ անձնատուութեան սովորակ դրօշը չափիտի յանձնէր:

Պաշտօնական քրիստոնէութեան սկզբնաւորութիւնը եղաւ միաժամանակ Ինքնագիրտակցութեան ու Չարթոնքի այն փառաւորութեանը, ուր մտքի լեզուի, դաստիարակութեան, ցեղային քաղաքակրթութեան և աւանդութեանց պահպանման բնազդն ու ճիւղը ճառագայթեցին:

Հարիւր յիսուն տարուան կարճ ժամանակամիջոց մը բաւական եղաւ որ Սահակներ ու Մեսրոպներ հայ լեզուն օժտեն արդի այրուրէնով և թարգմանիչներ անման հայ լեզուն, ոսկեքանդակ գրաբարը, կերտեն ազամանդակու, յղանան «թագունի թարգմանութեանց» կոչուելու արժանացած լեզուին, գրաբարին, կանոններն ու շարադասական նրբութիւնները և միան-

գամ ընդ միշտ վանեն յոյն գրական-լեզուական յարձակողականը և տասնէ հինգ դարերու մշտնջին մէջէն բուցածհանչ ու ստուգուն փախիլով Ոսկեգարու յուշարձանը կանգնեն, յայթապանս:

Նոր կրօնի, նոր գրականութեան սոյն լուսաշող գիտնականները, տարակոյս չկայ, թէ հաշտ աչքով չպիտի գիտուէին ամէն գնով հայութիւնը իր մէջ ձուլել ճգնող յոյն պետութեան կողմանէ: Ուստի լեզուական ու գրական հակառակն մղուած յարձակողականի ուղղութիւնը փոխել և քրիստոնէական եկեղեցւոյն ընդհանրական բնոյթին և յոյն ժողովուրդին, թուոյն ու քաղաքական զիջքին յենելով սպաքարը տարբեր հակառակ վրայ փոխադրել ծրագրուեցաւ:

Կրօնական միութեան մէջ խառն ամուսնութիւններով և թիւի գերակշռութեան ազանովութիւնով ձուլումի նոր մէթոտ մ'որդեգորուեցաւ: Ինչ որ չվերապեցաւ հայ եկեղեցական վարիչներու յատկատեսութենէ: Ընդհանրական եկեղեցւոյ սուրբերը առօք փառօք ու երկաթաքեղեցական բազմեցան հայ ժամասացութեան մատենաներուն մէջ և մաղ մնաց որ Հայ. Առաք. Ս. եկեղեցին ընկալէր Օրթոսոսքսութեան մէջ, ինչ որ յունական ձուլումի քաղաքականութեան յաջողութիւնն ու պակուսը եղած պիտի ըլլար:

Ուստի Հայ. եկեղեցին իր պաշտօնական գոյութեան առաջին օրէն իսկ ընդգրկեց հնուն քաղաքականութիւն մը, մէկ կողմէն՝ ճիւղանշու եկեղեցւոյ ընդհանրականութեան և միութեան՝ դէմ և միւս կողմէ՝ շիջողունքի նաև Հայ. եկեղեցւոյն ինքնատիպ ու ազգային գրոջմը:

Ս. Գրիգորի ի կեսարիա ձեռնադրութիւնը յաւանութեան և յետին միտք էր ստեղծած յունական շրջանակներու մէջ՝ Հայ եկեղեցին, միշտ, Օրթոսոսքսութեան յուժն ու ճնշող ազդեցութեան ներքեւ պահելու: Ս. Գրիգորի յաջորդներուն ձեռնադրութեանց վրայ անցողակի ակնարկ մը նետենք: Լուսաւորիչն յաջորդեց՝ իր հօրը կենդանութեանը՝ ակնարկ իսկ կողմէ՝ ձեռնադրեալ Ս. Արթուսի Հայրապետ, «... ձեռնադրեց յայսկայականութեան փոխանակ իւր...» (Ազգութեան լեզու էջ 452): Իսկ Ս. Արթուսի յաջորդեց իր ձեռնադրեալ եղբայրը Ս. Վրթանէս, որուն ձեռնադրութեան ալ ստոյգ ու անբուժանազարկ եղբայրը Ս. Վրթանէս, որուն ձեռնադրութեան ալ ստոյգ ու անայլայլ հաւանականութեամբ հայկական էր, քանի որ ձեռնադարձ եւ հիւանդկախ Հայրապետը չէր կարող երկար ճամբորդութեան մը ստիպել և ի վերայ այս՝ ու է յոյն պատմիչ ալ Վրթանէսի ձեռնադրութեան մասին ո'չ մէկ ակնարկութիւն ունի:

Ս. Վրթանէսի յաջորդ Ս. Յուսիկ հայրապետին ձեռնադրութեան համար հայ պատմիչներ ու է ձեռնադրութեան հանդէսի յիշատակութիւն շունին Միայն յոյն պատմիչը Բուզանդ կ'ըսէ թէ՛ զբւս սպորտիակն օրինակին տիւրաց մեծամեծ Նախարարներէն 13 հատ ուղեկիցեցին՝ Յուսիկը կեսարիա զրկեց, որպէսզի զայն ձեռնադրել տան ի կաթողիկոսութիւն (Բուզանդ 30):

Վրթանէսի յաջորդ Փառէն Ա. համար խորհրդացին կ'ըսէ, զբուսիցիս և կացոյցիս» (Խոր. 202) իսկ Բուզանդ նորէն կը յիշէ թէ, «պատարագոֆ եւ հրուպատարագոֆ եւ անիս իշխանոֆ առիս գևացիս կեսարիա եւ անիս ձեռնադրեցիս գևացիս ի կաթողիկոսութիւն հայոց մեծացի» (Բզն. 45): Իսկ Տ. Փառէնի յաջորդ Մեծն ի կաթողիկոսութիւն համար Բուզանդ և այլ յոյն պատմիչներ հազարաւոր ձեռնադրութեան համար Բուզանդ և այլ յոյն պատմիչներ հազարաւոր ձեռնադրութեան շարժումով մը անոր կեսարիա մեկնած ըլլալու մանրամասնեալ պատմութիւններն ունին: (Բզն. 72) և (Սոյ. 2. 24), իսկ Խորհրդանալ սապէս կը գրէ, «եկաց կայսղապատարագոֆ հայոց Մեծն կեսարիա եւ ի Բիզանդիոյ դարձեալ ի կեսարիա եւ կեսարի ի հայս, զամենայն կարգս նորդեաց» (Խոր. 205):

Հայ. Եկեղեցւոյ՝ Լուսաւորչոյ վերածննդեան առաջին հինգ Հայրապետներուն ձեռնադրութեանցը վրայ նետուած պատմական այս ակնարկէն որոշակի կը տեսնուի թէ յունական շրջանակներու մէջ որոշ ձգտում մը կայ՝ միջին, Հայաստանը կենտրոնէն ինքնարկեալ Աթոռի մը վերածելու, իսկ հայոց մէջ ալ շեշտուած մտասեւեռում մը, կրօնական ու է լուծ շրջադրուելու Հայ. Եկեղեցւոյ ճիւղին վրայ:

Մէկ կողմէն մոռացումի թանձր ու անթափանց քողով ծածկել Հայ. Ա. Լուսաւորչոյն առաջին շրջանը, սկսեալ Թադէոսի օրերէն մինչեւ 302 թուականը, միւս կողմէ Հայ. Եկեղեցւոյ ինքնիշխան գոյութեան հիմերուն տաղարի անխնայ հարուածներ իջեցնել,— այս է եղած Օրթոտոքս կրօնական քաղաքականութեան ներքին մտասեւեռումը՝ խոնարհեցնելու համար ձուլում մէջ փրկուելու նպատակաւ ոգորոյ աննուաճ ցեղի մը, Հայ Ազգին, անպարտելի դիմակալութիւնը:

Լուսաւորչէն և Ս. Սահակէն յետոյ եկող մեծ անհատականութիւն մը, Ներսէս Ա. Պարթեւ, ահա միան լամ ընդ միշտ վերջ տալու համար յունական ներքին ու միջին ոտնձգութեանց, ինչպէս կ'ըսէ Խորենացին, զամենայն կարգս նորոգեաց, ի սպաս վերջ տուաւ յունական ձեռնադրութեանց պատճառակալ զէպիսկոսն և հայ եկեղեցին օժտեց նոր օրէնադրութիւնով մը:

Յօդուածի մը անձակ սահմանէն դուրս է Մեծն Ներսէս Պարթեւի կատարած բարենորոգումներուն մանրամասնութեան գործը, միայն բաւականաւնամ յիշելով թէ անկա ձեռնոցն էր, զոր Հայ. Եկեղեցին նետեց Օրթոտոքսութեան և տիեզերական ազդակ մը՝ թէ Հայաստան երբեք չուզէր մէկ կողմէն ընդհանրական եկեղեցիի միութենէն հեռանալ և միւս կողմէն երբեք չկրնար ընդունիլ նախաթոռութեան ու ենթակայութեան սկզբունքը ի ծոց ընդհանրական եկեղեցւոյ:

Մեծն Ներսէսի օրէն սկսեալ, (373 թուական) Յոյն եկեղեցին վրդովումով դիտեց Հայ. Եկեղեցիին խորխոր ժէպը ու երբ 451 թուականը հասաւ իր բովանդակ արհաւիրքով ու հայ ժողովուրդը իր գոյութեան ֆիզիքական կոխը կը մղէր Աւարայրի մէջ ըզգէմ Պարսից, Օրթոտոքս եկեղեցիի անխնայ հարկը մղէր իջեցնել փորձեց Հայ. Եկեղեցւոյ հիմերուն, Քաղկեդոնի ժողովին մէջ ուսածը իջեցնել փորձեց Հայ. Եկեղեցւոյ հարցը յուզելով և ի նպաստ իրեն լուծելով: Աւարայրով նախաթոռութեան հարցը յուզելով և ի նպաստ իրեն լուծելով: Աւարայրով զբաղած Հայ. Եկեղեցին, այս անգամ ալ կորով ու քաջութիւն ցոյց տուաւ իր յոգնաբեկ ու վիրապատ մարմնոյն վրայ դիմակալելու Քաղկեդոնեան յարձակողականը և նախաթոռութեան յոյն ժողովին մէջ նուիրադործեալ սկզբունքը, երբեք չճանչցաւ Քաղկեդոնի տիեզերական ժողովը ու հոն տրուած որոշումները:

Այդ պատմական թուականներէն սկսեալ Քաղկեդոն եղաւ ահաւոր կրօնախնձոր մը Յոյն և Հայ եկեղեցիներու միջեւ, ինչ որ տեւեց դարեր և շատ սուղ արժեք մեզ հայերու:

Յարգ բողոքներէն կը հետեւի թէ Յոյն և այլ օտար եկեղեցիներու որոշ ձգտումներն են եղած.—

Ա. Ժխտել Լուսաւորչէն առաջ հայ. եկեղեցիին կազմուած և անոր անկախ գոյութիւն մը պահած ըլլալը:

Բ. Պնդել ու հաւաստել թէ Հայ. Եկեղեցին միշտ ենթակայ մ'է եղած Յոյն եկեղեցիին և ապա հերձուածող մը՝ Օրթոտոքսութեան դէմ:

Մինչև ըննական եկեղեցական պատմութիւնը անվերաքննելիօրէն վրձնած ու արձանագրած է թէ առաքելական շրջանէն, նոյնիսկ Քրիստոսի աշխարհիկ կեանքի օրերէն սկսեալ, Հայեր Անոր անունը լսած, վարդապետութիւններով հետաքրքրուած և Հայաստան Առաքելներուն համար գործու-

նութեան ամենաակազմուն ու արդաւանց գետիններէն մէկն է հանդիսացաւ:

Յուրա - Թադէոս առաքելին կապողովկոյ մէջ քարոզելը և հոն թէսփրլոր ձեռնադրել և իրեն յաջորդ նշանակելէ յետոյ Հայաստան մտնելը և Պարսից կողմերը յառաջանալով հոն նահատակուելը լատին պատմիչներն անգամ առհասարակ կ'ընդունին (Ազգ. Օրմ. Ա. էջ 25): Գ. զարու բոլոր պատմիչներն առ հասարակ կը յիշատակեն Թադէոսի առաքելութիւնը ի հայս, այս մասին ո՛չ մէկ տարակարծութիւն, սակայն Անոր նահապետութեամբ ո՛չ մէկ հետք է մնացած իր թէ իր քարոզութիւնէն: Նոյնն է պարագան իարթողիմէնո նախազաւան Առաքելին համար: Այնպէս որ օտար պատմիչներ ևս կը խոստովանեն, անխտիր, թէ Թադէոս և Բարթողիմէնո Հայաստան այցելեցին, քարոզեցին, ըստ աւանդութեան մը նոյնիսկ, ասոնք իրար հանդիպեցան Վերտաշատայ ըլուրին վրայ, մինչև հիմա Օթեաց իսալ կոչուած տեղը. (Մի. Ժ. 24) և հոն գիշեր մը միասին անցուցին:

Պատմական դժբախտ իրականութիւն մ'է թէ մեր առաջին Լուսաւորչացի, Թադէոսի և Բարթողիմէոսի Սրբազանից Առաքելոց, կատարած գործը, անոնց լծողած յաջորդներն ու հետքը, ժամանակագրական կարգաւ չեն ճշգրտուած: Այս խոշոր պանդուխտ շին ալ ունի երկու որոշ պատճառներ. մին հեթանոս հայ քուրմերուն անողք հալածանքը և խափանարար յետաշրջականութիւնը հանդէպ քրիստոնէութեան և երկրորդը այն չափազանց պաշտելութիւնը, զոր հայեր ունեցած են երկրորդ Լուսաւորչին վրայ և չեն անդրադարձած Առաքելներէ սկսեալ մինչև Լուսաւորչի անցած ժամանակամիջոցին պատմական կարեւորութիւնը՝ Հայ եկեղեցւոյ Առաքելականութեան տեսակետով: Գարձեալ մեր նիւթէն դուրս կը մնայ զանազան պատմիչներու կողմանէ վաւերական կերպով ըննականօրէն յիշատակուած զեմբերու կեանքերն ու քարոզութիւնները, որոնք անհերքելիօրէն կը հաստատեն թէ մօտաորարայէն 24 հայրապետներ հովուած են Հայ. Անդրանիկ եկեղեցին: (Ազգ. Ա. էջ 41)

Յարգ բողոքներն կարելի է հետեւցնել թէ Հայ. Եկեղեցւոյն Առաքելականութիւնը ու է վէճ շփոթեցնել: Անկա իր անկապտելի հարստութիւնը, անասան հիմը և անխորտակելի պատուանդանն է:

Առաջին Լուսաւորչիները Թադէոս և Բարթողիմէնո Սրբ. Առաքելները, իրենց երկու տասնեակ հետեւորդներով գետինը պատրաստեցին, ակօսեցին, կաղապարեցին, ստիկցին քարերէն ու խիճերէն և Բ. Լուսաւորչը Ս. Քրիստոս ցանց առողջ ու փրկարար սերմը, ինչ որ անցաւ, ուսնացաւ ու ոսկի հունձքով զարդարեց Հայ հոգեւորական, մտաւորական և գիւղարուեստական դաշտը:

Ուրեմն Հայ. Եկեղեցիին ճակատը օտարներէն որպէս պիտակ փակցուած շուտաւարչական (Գրիգորեան) մակերբը, արդիւնք է յետին մտքի մը և հակասումը՝ պատմական մեծ ճշմարտութեան մը թէ Հայ. Եկեղեցին կը կանգնի առաքելական հիման մը վրայ, թէ անկա ընդհանրական եկեղեցիէն բաժնուելով Գրիգոր անուն մէկու մը կողմանէ հերձուածաբար հաստատուած եկեղեցի մը չէ:

Վերջացնելը այնպէս, ինչպէս սկսանք: Մենք Լուսաւորչական հայեր չենք: Մենք Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ զաւակներն ենք, ու կազմենք անոր անասան տեսականութեան և լուսաւոր կենսականութեանը համար:

1932 Յունիս 30 ՀՄ. Ծ. ՎՐԳ. ՊԱԵԹԻՅԱՆՆԵՐ

ԲԻԻԶԱՆԴԻՈՆԻ ՊԱՏՄԱԿԱՆԸ

Կ. Պոլսոյ հիմնարկումիւնը շատ հին է, և կը խօսուի հնուքեան մում խաւերուն մէջ: Այն շքեղ և լայնատարած բաղաքը, որ դարերով մայրաքաղաքն եղած է նախ Հռոմէական-Բիւզանդական և ապա Օսմանեան կայսրութեանց, փոքրիկ տան մըն էր նախապէս, հաստատուած արդի Սարայ Պուռնուլի բարձունքին վրայ, ճիշդ հին սւր հիմայ կը գտնուի Թօփ-բալուկ պալատը:



Կ. Յ. ԲԱՍՄԱԶԵԱՆ

գործար Պաւսանիաս Պարսից ձեռքէն ետ առաւ բաղաքը և վերստին շէնցուց ու բնակելի դարձուց զայն:

Հռոմայեցիք տեսնելով որ Անտիոքոսի և այլոց դէմ իրենց մղած պատերազմներու միջոցին Բիւզանդացիք իրենց կողմը կը բռնեն, Բիւզանդիոնն ազատ և դաշնակից բաղաք հռչակեցին, մոլլ տալով որ Բիւզանդացիք իրենց տեղական անդազան օրէնքներով կառավարուին անկախ կերպով:

Այս վիճակը քանի մը զար տեւեց, մինչև որ Քրիստոսի 330 թուականին Հռոմայեցուց Կոստանդին Մեծ կայսրն (306—337) հռոմէական պետութեան մայրաքաղաքը Բիւզանդիոնը

հիմնարկէ և կը կարծուի, թէ աւանին հիմը դրուած է: Քրիստոսէ առաջ 658ին, Կոնստանդինոս Մեծ արքայն երկու կողմէ, առաջնորդութեամբ Բիւզանդիոն, որով այս նորահաստատ անունը կոչուած է Բիւզանդիոն. հետեւաբար՝ առաջին բնակիչներն ալ եղած են Մեգարացի Յոյներ:

Քաղկեդոնի (Դատր-քէոյ) հիմնարկումիւնը՝ Բիւզանդիոնի բաղաքում մը՝ 70 տարիներով աւելի հին է:

Իր կարեւոր դիրքին պատճառաւ Բիւզանդիոնն հետզհետէ զարգացաւ, բնակիչներով ճոխացաւ և վերջապէս բաղաքի մը կերպարանք ստացաւ: Բայց՝ Քրիստոսէ առաջ 490ին՝ Երբ Պարսից Դարեհ Ա. Սագաւորը Ասիայէն Բուքորի (Վարոք) և Երուսաղիմի եղերքն անցաւ և Յունաստանի վրայ յարձակեցաւ, Բիւզանդիոնի բնակչութիւնը փախաւ ապաստանեցաւ ուրիշ դիւղեր ու բաղաքներ, մինչև որ Ք. Ա. 479ին Լակեդեմոնացի

փոխարեւ և նորանոր շինութիւններով զարդարեց զայն, որով բաղաքն ալ կոչուեցաւ յետոյ՝ Կոստանդինու Բաղաք = Կոստանդինու Պոլիս, հակառակ Կոստանդինի կողմէ: Ենթադրուած անուանուելուն իսկ աւելի ուշ ասոն «Կոստանդինու Պոլիս» անունը ժողովուրդին բերին մէջ եղաւ՝ «Կոստանդուպոլ», որովհետեւ բաղաքին արուարձաններու բնակիչներն համառօտաբար և պարզապէս Պոլիս = «բաղաք» կ'անուանէին զայն, ուստի (կ'երթամ) «ի Կ. Պոլիս» ըսելու տեղ՝ կ'ըսէին **ΕΙΣ ΤΗΝ ΠΟΛΙΝ**.

Հռոմէական մեծածաւալ պետութիւնը Մեծ Թէոդոսի (379—395) երկու որդիներուն միջեւ բաժնուած ժամանակ՝ Կ. Պոլիս հռոմէական Արեւելեան կայսրութեան մայրաքաղաք դարձաւ, իսկ Հռոմը՝ հռոմէական Արեւմտեան կայսրութեան մայրաքաղաք, ամբողջ պետութիւնը որոշապէս բաժնուելով երկու տարբեր մասերու և երկու զատ Թագաւորութիւններու:

Այս հիմնալի բաղաքը Խաչակիրներու յարձակումներով ու զրաւումով (1204) զրկուեց:



Քաղաքի Կաթոլիկ


աւերակ դարձաւ: Այս ժամանակ հաստատուեցան հոս Արեւելեան Լատին կայսրութիւն անուան տակ ծանօթ յափշտակիչներու ու զիջատիչներու վտանակներ, որոնք բաղաքը մերկացուցին՝ իր գարդերէն ու կարեւոր նշաններէն, մինչև որ Հռոմէներն եկան վերստին զրաւեցին զայն, հիմնելով հոն Պալէոլոգոսներու հարստութիւնը (1261), որ տեւեց մինչև Կոստանդին Դրաշաէսի (1448—1453) պարտութիւնը, այսինքն մինչև Կ. Պոլսոյ վերջնական առումը Սուլթան Մէհմեդ Բ. ի կողմէ (29 Մայիս 1453):

* *

Կ. Պոլսոյ մէջ հին ժամանակներէ մնացած զվատոր շինութիւնները կը կազմեն այն եկեղեցիները, որոնց մէկ մասը մզկիթի վերածուած են, իսկ միւս մասը՝ բաղնիքի և ուրիշ գործածութեանց: Բիւզանդական երկու հին եկեղեցիներ ալ, — մին՝ Պալատու հիմնակ-

կուան Ս. Հրեշտակապետը, իսկ միւսը՝ Սամաթիոյ Ս. Գեորգը, — Հայոց տրուած են: Այդի Ս. Գեորգ եկեղեցին բոլորովին նոր է, և կառուցուած է «Յոյներուն նախկին Pervlepto-մենաստանին ճիշդ սահմանին մէջ» ինչպէս «Կոչնակ»ի մէջ (1932, Թիւ 21, էրես 544) ձեռնասորէն կը գրէ Գ. Հնասէր:

Մզկիթի փոխուած Բիզանդական հին եկեղեցիներէն յիշենք նախ հոչակաւոր Այլա-Սօֆիան (արդի Այասօֆիան) և իր փոքր հիանալի ընկերը՝ Սրբոց Սարգսի և Բագոսի եկեղեցին (հիմա՝ Քիւչիւք-Այասօֆիա), Հօրա վանատան բազմադրուագ խճանկար եկեղեցին (հիմա՝ Քանրիյէ), Ս. Անդրէաս մենաստանը (հիմա՝ Հօճա-Մուսթաֆա-փաշա), Սրբոց Պետրոսի և Մարկոսի եկեղեցին (հիմա՝ ՍՊիք-Մուսթաֆա-փաշա), Պամմակարիստոս մենաստանը (հիմա՝ Յէթհիյէ), Սրբուհի Թէոդոսիա եկեղեցին (հիմա՝ Գիւլ-ճամի), Սրբուհի Ա-



Թէֆիք Սարայ

Նաստասիա եկեղեցին (հիմա՝ Սօբուլու-Մէհէմէտ-փաշա), Ս. Ղովհաննէս եկեղեցին (հիմա՝ Միր-Ախար), և ուրիշներ: Յիշատակութեան արժանի է նաև Սրբուհի Իրենեայ եկեղեցին որ պետական թանգարանի վերածուած է, Զարպիսանէի թով:

Հնուժեանց կարգին չենք կրնար լուռութեամբ անցնիլ Պոլսոյ շուրջը պատող բարձրաբերձ պարիսպներու վրայէն, որոնցմէ շատերը բիզանդական արձանագրութիւններ կը կրեն: Այսպէս նաև Զէմպէրլի-բաւն ու Ար-մէլյսանիի երեք յիւսասակարաններ, մէկը միւսէն աւելի հին և աւելի հետաքրքրական:

ԱՅ-մէլյսանիի մօտերը կը գտնուի, Կեղրոնական բանտին ետեւը, Պիկն-պիւր-իւրէկ, որ ցամքած հին ջրամբար մըն է: Այսպէս հին ջրամբար է նաև Ելէրէ-պարան-սուրայ, որ բոլոր իր շրջակայ բնակիչներուն ջուր կը հայծայծէ ցարդ. և կը գտնուի Այասօֆիայի մօտերը Ելէրէ-պարան փողոցին մէջ: Տասնէն աւելի ուրիշ ջրամբարներ ալ կան, որոնց վրայ չենք կրնար ծանրանալ այս արագ տեսութեան մէջ: Բայց կ'արժէ յիշատակել վաղէ-

սի ջրմուղը, արդի «Պօզտուզան-բէմէրի»-ն, որ Պայազիտի բարձունքէն մինչև Սուլթան-Մէհմէտի գագաթը կ'երկարի, որուն վրայ կը բարձրանար երբեմն Առաքելոց եկեղեցին, հանգստարանը բիզանդական թագաւորաց:

Հին բիզանդական պալատներէն յիշենք Բլաֆերմեաց պալատը, Այվան-սարայ, Ոսկեղջիւրի Ռջ. նոյնպէս և անոր ետին բարձրացած՝ Քանրիյէ մզկիթին մօտերը՝ Թէքֆիւր-սարայ կամ Թէքիւր-սարայ, հին Հեբրո ինի պալատը:

Պալատներու կարգին ամէնէն կարևորն է արքայական մեծ պալատն, որ կը գտնուէր Ախլըր-բարուի մօտիկ, ծովեզերքի վրայ, այժմեան Պալլըքհանէ-բախուտի կից, և կը կոչուէր՝ Դուկոլէ-նի պալատը: Իսկ Քուլ-բախուի (հինն Կոնդուկալիսն) արդի նաւամատոյցին,—ուր՝ մանկութեանս՝ ծով ուղևորով ևւ ուղևորանց պոկելով կը խաղայի՝ Նշանիկին հետ, որ տունէն լուացքի տաշտը ծով կ'իջեցնէր ևւ զիս մէջը կը նստեցնէր, իր պատուական հօր՝ ձկնորս Հանի Թագաւորին նմանիլ ուզելով,—մօտ էր Յուլիանոսի նաւամատոյցը, որ հիմա կը կոչուի «Քատըրկա-լիմանը»:

Կ. Պոլսոյ մանաւանդ Պոլսոյ կողմն՝ ամէն մէկ քայլափոխից կը հանդիպիս պատմական շէնքի մը, կոթողի մը, խոյակի մը, արձանագրութեան մը, տաշտի տեղ ծառայող խաչադրուագ զերեզմանաբարի մը, որոնց մասին հատորներ կարելի է գրել, ո՛չ թէ ասանկ կարճ յօդուած մը:

4. 3. ԲԱՍՄԱՋԵԱՆ

Բարիկ



ԷՎԼԻԵԱ ՉԷԼԷՊԻ

(1602 — 1672)

Թուրք երեւելի ճանապարհորդագիր Էվլիա Չէլէպի կամ ինչպէս որ ինքզինքը կը յորջորջէ «Սէյեհա՛նը Ալէմ-ի-վլինեա» Մէհմէտ Չէլէպի բնիկ Կ. Պոլսեցի է: Ծնած է հիւրէթի 1020 թուականին և վախճանած 1090էն րիչ մը վերջը (1602—1672):

Իր պատրաստած 10 հատոր «ճանապարհորդագրութիւն»ովը ոչ միայն իրեն ժամանակակից Արեւելքը նկարագրող ճանապարհորդներէ վար չի մնար, այլ նաեւ կըրնանք ըսել թէ նոյնիսկ գերազանցած է զանոնք:



Գ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

Ասկէ զատ իր լսած ժողովրդական առասպելները, հէքեաթները մանրամասն կերպով գրի առած և աղագայ սերունդներուն յանձնելով անոնց երախտագիտութեանը արժանացած է:

Շատ պարզ թուրքերէն մը գրած է: Միշակ կարողութեան տէր զրազէտ մ'էր ինք և երաժշտութեան ալ բաւական տեղեակ: Սո-լթան Մուրատ Գ. զինքը իր ներկայութեան քանիցս ընդունած և նուէրներով պատուած է. երեւելի Մէյէք Ահմէտ փաշան իր մօրեղբայրն էր:

Էվլիա Չէլէպի «ճանապարհորդագրութեան» մէկ ամբողջական և ճշգրտապարտում աղագրութիւնը գեռ լոյս տեսած չէ: Ասկէ շուրջ 30 տարի առաջ Ահմէտ ձէվտէթ պէյ առաջին անգամ ըլլալով վերոյիշեալ երկը մամուլի յանձնած է. (8 հատոր): Եւրոպական պատմագէտներուն ուշագրութիւնը

Քառասուն տարի շարունակ պտըտած է շատ մը երկիրներ մանաւանդ Թուրքիոյ շուր կողմը և հաւաքած ժամանակին ընկերական կարգ ու սարքին, սովորոյթնէն ընդ մասին խիտ հետաքրքրական և արժէքատու տեղեկութիւններ: Ինքը չափաւոր ուսմունք առած մարդ մը, սակայն արտակարգ կարողութեան տէր «գիտող» մը եղած է: Պտըտած քաղաքներուն գիրքը առանձնապատկութիւնները, մեծ և կարեւոր շէնքերը, բնակիչներուն վարած կեանքը, հաւատալիքները (eroynance) հազուադէպ, կապուստը, բարրաւունքը ճշգրտօրէն նկարագրած է:

գրուած է Էվլիա Չէլէպին գրեթէ զարէ մը ի վեր, այնպէս որ իրեն «Սէյեհա՛նեա» մեծագոյն աշխատանքը, անգիրներէն, հոնգարերէնի և գերմաներէնի թարգմանուած են:

Ձուարթի ոճ մը ունի Էվլիա Չէլէպի, այնպէս որ ճշմարիտ հաճոյք մը կ'ըզայ մարդ անոր գրութիւնները կարդալով: Իր «ճանապարհորդագրութեան» մանաւանդ առաջին հատորը թանկագին տեղեկութիւններ կուտայ ժէ. զարուն Կ. Պոլսոյ անտեսական և ընկերային կարգ ու սարքին վրայ:

Արհեստագետութիւններու և արհեստաւորներու մասին ընդարձակ գրութիւններ նուիրած է: Ան կը պատմէ հոն թէ ինչ ձեւով էանաֆներու (արհեստագետութիւններու) դասերը կարգով կ'անցնէին «Ալայ-Բէօշիւ»ին առջեւէն ուրիշ սուլթանը զիրենք կը դիտէր: Այս հանդէսին «ալայ կէշիտի» այսինքն «թափորներու անցք» անունը կուտային, և սեղի կ'ունենար օրուան սուլթանին հրահանով սովորարար յաղթութեան աւետէ մը կտքը և կապերազուն իշխաններու և իշխանահիներու ամուսնութեանց առիթով: —

«Ալայ քէօշիւ»ն մինչև հիմա կանգուն կեցած է շատ լաւ վիճակի մէջ և կը գտնուի Պոլսոյ կողմը «Բարք»ի մուտքի դրան անկիւնը:

Վերոյիշեալ թափորներու անցքը շատ զուարճալի տեսարան մը կը պարզէր և ժողովուրդը չափազանց հաճոյք կ'ըզար և կ'ըստուր գիտելով զայն:

Էվլիա Չէլէպի ասոնք պատմած ատեն բաւական տեղեկութիւններ կուտայ նաեւ այն ատենուան հայ էանաֆներու մասին, արդէն յայտնի է որ 16րդ դարուն վերջերը Կ. Պոլսոյ մէջ շատ մը ճարտար և արուեստագէտ ոսկերիչներ կային, ինչպէս կը վկայեն օտար հեղինակները 1600 թուականին զոր օրինակ, Տիվրիկէն Կ. Պոլսոյ կը գաղթէ Յարութիւն անուն կաթողիկ հայագիր, և իր ճարտար ոսկերչութեան շնորհիւ յարարներութեան կը մանէ ազգին, և իր ճարտար ոսկերչութեան շնորհիւ յարարներութեան կը մանէ կայսերական պալատին հետ, արքունի ոսկերիչ կ'անուանուի և արքունի գանձատունին քովը իր խանութը կը բանայ: Վերոյիշեալ ոսկերիչ Յարութիւնն է որ հիմնած է Տիվրիկէն գերդաստանը Կ. Պոլսոյ մէջ:

Ոսկերիչ արհեստաւորներէն զատ հո չափ հանած էին Սամ. մայրաքաղաքին մէջ նաեւ հայ մ.ւշտակագործներու և մուշտակափաճառներու դասակարգը: Ասոնց մէջ Էվլիա Չէլէպիին օրովը երեւելի էր Վանցի Ռուհիշան հօճան, մեծ եղարքոսին հայ քիւրքճի պաշին: 17րդ դարուն առաջին կէսին միջոցները Կ. Պոլսոյ մէջ հայ ճարտարագետներու բաւական կարեւոր խումբ մը կար:

1630էն 1630 երեւելի իսլամ Աստուածատուրի մը կը հանդիպինք որ սիրելին ու միտնգամայն եղբորը պէս էր ժամանակին մեծ վէպիլին ու անոր միջոցով մեծ գործեր կը տեսնէր: (Չին օրերու այդ օրերուն հայ մեծատունները 1550—1870 թ. Գ. Մրմըրեան վեհետիկ 1901, էջ 12):

Ըսել է թէ 17րդ դարուն հայերը արդէն շատ մը արհեստներ ի գործ դնելով ամէնէն պատուաւորներէն սկսելով մինչև ամենէն համեստը — աղբորատնին կը հանէին և ընտանիքին կ'աղբեցնէին:

Էվլիա Չէլէպի այս արհեստաւորներուն թափորը մանրամասնօրէն կը նկարագրէ: Այսպէս մուշտակափաճառներուն վրայ խօսելով հետեւեալները կը գրէ:

«Մուշտակագործ արհեստաւորները 500 խանութ ունին Կ. Պոլսոյ մէջ և «1000 հողիէ կը բաղկանան Սոնք գահաւորակներու (թանթըր բէվան) վրայ

« Իրենց խանութները կազմած և հարելը հազարաւոր զբուշ արժեքով ամէն
 « տեսակ մուշտակներով (որոնց տեսակները կը թուէ) զարդարած, թափո-
 « քով կ'անցնին: Ասոնց հտեւէն կուգան, Մանուաւ փաշայի շուկայէն, յոյն
 « մուշտակագործները ուրիշ մէկ մեծ թափորով մը Ասոնք հարելաւոր մուշ-
 « տակներ հակառակ կողմէն հագած, գլուխնին արջի մորթէ տարօրինակ
 « գլխանոցներ (քիւլան) անցուցած կը քալեն իրենց կարգին: Շատերն ալ
 « վերէն վար, զագրի, աւաւճի, գայլի մորթներու մէջ պարուրուած, գլուխը



ԱՆԱՅ ՔԵՕՇՔԻ

յատուկ ոճով մը կը նկարագրէ դայն, ընթերցողին հետաքրքրութիւնը շարժելու
 և երեւակայութիւնը վառ պահելու նպատակով: Չոր և ցամաք կերպով բան
 մը չի պատմեր ան. նկարագրածը համեմել զիտէ յարմար բացատրութիւն-
 ներով: Այսպէս է իւր «ճանապարհորդագրութիւն»ը սկիզբէն մինչև վերջը:
 «Ալալայ կէշիտի» մասնակցողներէն «Ձիթ» կոչուած նկարէն կուտաները
 գործող հայ արհեստաւորները կը յիշէ Եփրատ, Ձէլէպի «Ասոնք, կ'ըսէ, ընդ-
 հանրապէս» ամուրիներու սենեակները (պէքեարխանէ օտալարը) բնակող

«նին սամոյր գլխա-
 «նոցները գրած կ'անց-
 «նին: Ուրիշ խումբ մը
 «եւս, նոյնպէս կեն-
 «գրանին երու մորթէ-
 «րու մէջ փաթթուած,
 «փայրենի «եամեամա-
 «ններու պէս ծպտուած
 «են, զորս տանողին
 «լեղին կը փրթի: Ա-
 «սոնցմէ ամէն մէկը
 «հինգական, վեցական
 «չլթաներով կա-
 «պուած են, և ամէն
 «մէկուն հինգ, վեց
 «մարդ փակած: Ասոնք
 «իրենց անցքին վրայ
 «ատեն ատեն այս տե-
 «սարանը գլխուցնէ -
 «րուն վրան կը յար-
 «ձակին և բազմու-
 «թեանմէջ անանկ հայ-
 «հուշ մը կ'իյնայ զոր
 «կարելի չէ բացատրել
 «Եփրատ Ձէլէպի հա-
 «տոր Ա. էջ 593):

Յայտնի է որ մուշ-
 տակագործերու այս
 թափորը ժողովուրդը
 զբօսցնելու և խնդա-
 ցնելու համար կազ-
 մուած է, բայց Եփրա-
 տա Ձէլէպին իրեն

եւ զպիկացի և Սերաստացի հայեր են: Պարսիկ և հնդիկ ոճով, երեւակայու-
 թիւնը գգուող վերմակի երեսներ, սաւան, վարագոյրներ կը գործեն (Եփր,
 Ձէլ. հտ. Ա. էջ 612)

Ուրիշ «էմնաֆներու» դասակարգներուն կը պատահինք վերոյիշեալ ճա-
 նապարհորդագրութեան մէջ (հատոր Ա. էջ 576) որոնք հետեւեալներն են:
 «Գալէմքեարանը Գուլսեմուսեան» ոսկերիչ-զարդա խորագրիչներ, ասոնց-
 մէ ամէնէն երեւելին, այն ժամանակները, Սիմիթնի օղլու բոււմ Միհայիլն
 էր որ «Ունդափան» խանութ մ'ունէր:

Հայերէն կը յիշուին «Երմէնի յաշատուր» (Ունդափան) և «Այտըն Իրմէ-
 նի» (Պէտէսլուէ Էօնիւ) որոնք նոյնպէս շատ ճարտար վարպետներ էին:
 Ինչպէս որ վերը լսինք անգամ մը, էմնաֆներու դասակարգներուն ամէ-
 նէն բարձր աստիճաններուն նոյնպէս խոնարհագոյններուն մէջ հայեր կը
 գտնուէին: Այս վերջիններէն չի մոռնար յիշելու նաև Եփրատ Ձէլէպի հե-
 տեւեալները քար փոխադրող իշապան հայեր 600 հոգիի չափ կան:

— Ձիւշ պիրէ աթթըրա խալասի, չիւշ! (հաւանաբար — Ձիւշ, պրէ,
 խերգ անիծածս չիւշ! պիտի ըլլայ) ըսելով և հայերէն երգեր կանչելով
 կ'անցնին:

— Բռող (պատանաճի) հայեր, կունակին կուժեր, մարմարի կիրէ պատ-
 րաստուած ճերմակ բուռով լեցուն, ձեռքերնին ծայրը խողի մաղէ շինուած
 վրձիններով երկայն ձողեր բռնած, սեւցած տուները, պատերը կը ճերմակ-
 ցընէին հայերու յատուկ արտասանութեամբ կատակաբար ըսելով, «սէքսէն
 ախանը (ազլէնի) արուպ աղբորը ըրմ, եսթմըլ (եթմըլ) ախա (ազլէ) վե-
 սան (վէրսէն) օլմաղ» (ուժտուն ստակղ առնելով կը ճերմկցնեն, եօթանասուն
 ստակ թէ որ տաս, չըլլար) (անդ էջ 630):

— «Կղմինտրագործները կառքերու վրայ կ'զմնոր բեռցնելով, կ'զմնոր
 շինելով, քիթերնին բերաննին ցիխոտած՝ կ'անցնին, ասոնք հայեր են (անդ
 էջ 629):

— Վոյուղի շինող, մաքրող, հայեր, գործաւորներու պէս խանութ շու-
 նին, ասոնք «ալալայն» (թափոր)ին մէջ «Նուրուս պիր կեարըլ (կէրիլ) ալուր
 «այրըրլասախ (այրըրլասաք) չօք քեար զիյատա (զիյատէ) մը չըխարալ
 «(չըղարալ) խարնըմըլ (քարնըմըլ) աճալըր, պատամ եասախ (պատէմ եէ-
 «սէք): Այսինքն «Սա՛ տեղը կոյուղի մը կայ, բանանք և մաքրենք շատ շահը
 «աւելը՞րդ է միթէ, փորերնիս անօթի է նուշ ուտենք» ի պէս հայերու յա-
 սուէկ թրքերէն բարբառով, բառեր արտասանելով կ'անցնին: Ոտքերնին
 «աղտոտ, սեւ երկայն կօշիկներ հագած, անմաքուր կարճ պարեգոտներով
 «(խրքա) ուսերնուն վրայ «Ֆէրհատի» ձեւ բրիչներ և լայն «պարթընի»
 «ձեւ թիեր բարձած, և իրենց արհեստին վերաբերալ ամանները (կէտէլ)
 «— որոնց մէջ գրած են նուտի գացած, գեղինցած, վարունգներ, չողգամ-
 «ներ և բողկեր ձեռքերնին բռնած կ'անցնին:

«Յիրաւի, կ'ըսէ Եփրատ Ձէլէպի արհեստաւորներու այս դասակարգը,
 «արհեստին բերմունքովը աղտոտ է բայց թէ Գահիրէի և թէ Կ. Պոլսոյ մէջ
 «օգտակար է: Միմիայն այս արհեստաւորներու աշխատութեան շնորհիւն է
 «որ Կ. Պոլիս մաքուր կը մնայ: Վերոյիշեալ «էմնաֆ»ները ամէնքն ալ «Ալալայ
 «Քէօքըրլախի տակէն կ'անցնին հազար տեսակ կատակներով, զորս կարելի չէ
 «գիրով բացատրել: (անդ էջ 632)

— «Ականահատներ՝ թիւերնին 500 է, ասոնց պաշտօնը, պատերազմի ա-

տեն բերդերու տակը ահան բանալ և վառողով օդը հանել է, ասոնք զին-
ւեալ վիճակի մէջ «ալալին կը մասնակցին և Կ. Պոլիս գտնուողները ընդ-
«հանրապէս կեսարացի հայերէ կը բազկանան: (անդ էջ 516)

Ինչպէս յայտնի է «Ալալ կէշիտի» միջոցին, վիլի ցոյց տրուած կեր-
պով «հանափոններու այլ և այլ ... էն քը միմոսական շարժու-
ձեւերով և կատակներով թէ՛ աւագանին և թէ՛ ժողովուրդը կ'զբօսցնէին՝
որդէն թուրքերէն ասացուածք մը կայ «Պէնի ալալա՞մը ալլըրսուն», այ-
՛նինքն «Ձիս կը ծաղրե՞ս»:

Այս տեսակ թափօրներու մէջ հարկաւ գերասանական խուճերը ալ պէտք
էր գտնուիլ: Եվ լիեա Ձէլէպի ասոնք ալ զանց բրած չէ: Ասոնցմէ կարեւոր-
ները մենք ալ իրմէ առնելով հոս կը գնենք:

— «Սէրպի Գօլու» 300 հոգի գերասանական խուճը մը գնու, յոյն, չըր-
եայ և հայերէ բազկացած ամէնքն ալ «մօրը մանածը ծախած» տեսակէն:

— «Ձիւմրիւթ Գօլու» 300 հոգի, նարը գարուի, Եէտի գուլէի, Սուլու-
մանաթըրի (Սամաթիոյ) յոյներէն և հայերէն բազկացած գերասանական,
և գուսաներգական խուճը մը, որուն մէջ յոյները գերակշիռ գեր մը կը կա-
տարէին:

— «ձէվահիր Գօլու» 200 հոգի, ասոնք Ղալաթիացի, ոսկերիչ և գոհարա-
վաճառ յոյներ և հայեր էին: Պետերնին «Բէհլիվան Լասգարա, անունով
գեղեցիկ երիտասարդ մ'էր», ամէն տեսակ խաղարկութիւններու մէջ առա-
գացած: Եղբայրը «Իւսկիւպիւ Էրմէնի» մեծ խեղկատակ մը, հողիտ մ'էր
(անդ էջ 646, 647, 648)

«Ալալ»ին կը մասնակցէին ժամագործներ, «սօփճի»ներ, «պաղիրկեաններ
և այլն որոնց մէջ բազմաթիւ հայեր կը գտնուէին:

Այս թափօր-հանդէսները երկար տեսններ տեղի ունեցած են:

18րդ դարուն փաստաբան M. Guerի կողմէ փարիզ հրատարակուած գրքի
մը մէջ «Ալալ կէշիտի» մը նկարագրութիւնը կայ, որմէ հետեւեալը արժան
կը համարենք հոս արտատպել:

«Ոսկերիչ արհեստակիցներ, հնէիկի պարսիկի և հայու տարազներով
«հարուստ և ճոխ կերպով հագուած, կը քալէին երկու կարգի վրայ երգիչ-
«ներու, նուագածուներու և պարողներու հետ խառն, իրենց գոհարեղէն-
«ներով պնտուած գլխանոցներուն պէսպիսութիւններով ժողովուրդին հաճելի
«տեսարան մը պարզելով»:

«Ասոնցմէ առաջօք կը քալէր ուրիշ խուճը մը, որուն զարդարանքը
«տարբեր էր: Այս խուճըին մասնակցողներէն մի քանին ձեռքերնին թուր
«մը բռնած էին, ուրիշներ նիզակ մը կամ վահան մը: Վագրի մօրթ մը
«վզերնէն քօլմտի վար ձգուած էր: Իրենց «Սքալօն»ի ձեւով գրակը (խոյ-
«բը) սամոյրով եզերուած էր և Վիսարճներու կրածին պէս արծիւի փե-
«տուրներով զարդարուած: Ասոնցմէ շատերը հետերնին կրողակ մը կը քէլե-
«ուսիլէ և արծաթէ սեղանասպասներով լեցուն, որոնք Սուլթանին էրը ըն-
«ծայ սահմանուած էին: (Mœrs et usages des Turcs etc. Par M. Guer. Avo-
cat Tome Premier Paris MDCCXLVII էջ 398)

Եվ լիեա Ձէլէպին 17րդ դարուն ամէնէն երեւելի թուրք զէմքերէն մէկն
է: Անոր «ճանապարհորդագրութիւն»ը վերին աստիճան շահեկան էջեր կը
պարունակէ: Մենք ալ իբր թուրք հայրենակիցներ իրաւունք ունինք իրմով
պարծենալու:

Յարգանք և պատիւ ուրեմն իրեն յիշատակին:

Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
(Գ. Հնատէ)

ԳԵՂԱՐՈՒԵՍ ԵՒ ԿՐՕՆՔ

Մարդկութիւնը միշտ ալ արտայայտած է այն ինչ որ կայ ամէնախոր
ու ճշմարիտ իր մէջ՝ կերպով մը կամ ձեւով մը՝ որ կարելի է նկատել էա-
պէս գեղարուեստական Ամէն անգամ որ մարդու հոգին լեցուեր է անծա-
նօթ երկիւղով մը, ամէնակարող զօրութեան մը գոյութեան գաղափարով,
վսեմ իտէպով մը, և կամ խոր համոզումով մը, ան զիտցեր է՝ արտաքնա-
պէս լեզու տալ այդ զգացման
կամ խորհուրդին՝ այնպիսի
ազդու, տեսական ու գեղեցիկ
ոճով մը՝ որ ուրիշ բան չէ ե-
ղած եթէ ոչ գեղարուեստի
գործ մը:



Ժողովուրդներ ու ցեղեր որոնք
կրօնքը նկատեր են բարձրա-
գոյն իրականութիւնը կեանքի,
միշտ պէտք են տեսի, ու յա-
ջողեր ալ, զայն արտայայտե-
լու գեղարուեստի միջոցաւ
բանի մը որ կը մնայ ըլլալ ա-
մէնապիտ և վայելչագեղ
յղացումը՝ մարդկային մտքի:

Բայց պէտք չէ խորհիլ որ
գեղարուեստը եղած է լիկ
հանդերձանք մը՝ կրօնքին հա-
մար կրօնք ու գեղարուեստ
երկու տարբեր թռիչքներ են
որոնց միջոցաւ կ'արտայայ-
տուի՝ դէպի կատարելութեան
ձգտող՝ մարդկային ոգին: Բայց,
իրբեւ արտայայտութիւնները
նոյն կեանքին, ասոնք կարող
չէն անջատուած մնալու: Ա-

ԱՐԱՍ ԳՕՆՏԱՅԵԱՆ

նոնք՝ միանալով կ'ամբողջացնեն կեանքը, կը բացատրեն զիրար: Առանց՝
անոնց՝ կեանքը պիտի ըլլար անհունորէն աւելի աղքատ, պիտի ըլլար անի-
մաստ: Ամէն մեծ գեղարուեստի գործ, սակայն, խորհրդապաշտ բան մը ունի
իր մէջ: Ասոր համար է որ գեղարուեստը՝ կրնայ նոյնպէս դառնալ մէկ խոր-
հրդանիշը՝ մարդկային հոգւոյն խորունկ, կրօնական բաղձանքներուն, ծարա-
ւին, աւելին ըլլալով, ան կարող է այս բաղձանքներուն տալու՝ անմիջա-
կանութեան պատրանքը, տեսակ մը շօշափելի իրականութիւն, ծնունդ տա-
լով հաւատքի մթնոլորտի մը, ուր՝ այս բարձր իյձերը կը թուին գտնուիլ:

Faint, illegible text in the top left corner of the left page.

קריקל

Main body of faint, illegible text on the left page, surrounding the central title.

סדרת ה'תש"ב



Faint text below the photograph, likely a caption or description of the subject.

ՕՐՐՈՑՆ ՈՒ ԴԱԳԱՂԸ



Ք. ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳՈՒՇԱԿԵԱՆ
(Պատրիարք Երուսաղեմայ)

Պարկեշտուկ բանուորի ամուլ մը երջանիկ,
Այրն, ամբողջ գիւտին մէջ, կանազործը մրակ,
Կ'աշխատէր օրն ի բուն, ու իրիկունը, սիրով,
Իր խոնարհ անակին մէջ կ'անցնէր կուշտը կրակին:

Էինն, աշխոյժ, գործունեայ, ամուսնոյն հանդէպ քաղցր,
Արժանի էր անոր. ու բնութեամբ քաջասիրտ,
Հ. գածու եռանդով կը տնէջար կատարել
Սիրալիր եւ ժրագլուխ կնոջ պարտքերն իր բոլոր:

Միակ վիշտ մը, ցաւ մեծ, կ'ամպոտէր բերկրանքնին.
Քաղցրիկ տուրքը սիրոյ, մանուկ մը դեղձան գլուխ.
Անոնց վրայ չէր ուղղած, բարութեամբ աւլըցուն,
Իր արցունքը ա՛նմեզ, որ աշխարհ մ'է ինքնին:

Մեծ վիշտ մ'էր այս անոնց. զի ա՛մէն յայս իրենց
Խափանուած կը թըւէր. արժգունած բունքերնին
Իրկը սն շունչին տակ արձաթի աւած գոյն,
Կարծես թէ սպասումնին կ'արգիլէր՝ կը ծ դրէր:

Ոսկայն, օր մ'օրհնեց Տէրն անոնց է՛ն քաղցր երազն,
Ու, աչքերը խինդով՝ խորհրդով փաշարուն,
Կինն եկաւ, շիկնելով, հաղորդել իր էր. ան,
Թէ յառաջ բան կաղանդը պիտի լինէր մայր:

Զուարթացաւ, այն աստե՛ն, հիւզին մէջ ամէն բան.
Երջանիկ ու ժպտուն. սա խրձպեց խանձարուն.
Ան, դարձած աղղամարդ, գործիքներն հաւքելով,
Ու գեց թաւ մը շինել սիրասուն հրեշտակին:

Ի՛նչ խնամքով դարձ ու շուրջն այդ գեղջուկ օրրոցին,
Ի՛նչ սիրով կը գամէր անոր մէն մի տախտակն,
Յետոյ, երբ լրջացաւ, կախեց հոն վարագոյր մ',
Հովանի անոր վրայ, ինչպէս թէ մ'ըստ. ասակ:

Փորը կին մտածումնին անբաժան իրարմէ,
Կ'ըզմային տալ անոր շատ ինչ բան որ էր պէտք . . .
Ծագեցաւ վերջապէս օրն՝ ուր բոյնը սիրուն
Ունեցաւ գանձն անոյ՜ջ — Պետիկ-ժան անուանուած:

Ա՛խ, ինչպէս էր չըրնոց այդ ազուտը բերովրէն.
Կիսափակ շուրթին վրայ կը դողար թարմ ժըպիտ մ',
Ան ոսկի ունէր մազ. ու կարծես թէ սընդուս
Էր այան իր դալկահար, ուր վարդ մը կը ծըփար:

Հայրն ու մայրը, ու բախ, զերդ հրեշտակ պահապան,
Կը մնային անոր բով. գիշերներ ծիգ. անբուն.
Աչքերնուն տակ նիրհոց գառնուկին համար հէր
Հիւսելով երազներ սրանչելի իղձ բու:

Քայց, ափսոս բիւր, աւա՛ղ, Գրա՛խտին մէջ հնար է լոկ
 ձաշակել այդպիսի ըզզըլխիչ քաղցրութիւն.
 Խոյացաւ մահն ընդհուպ արնակին վըայ խոնարհ,
 Աւ խըլից գիրկեր՝ էն յոյսն անոնց ծերութեան:

Ի՞նչ էր մեղքն որ զարկաւ, վիշտն անոնց այսպէս խիտ,
 ՅՅ. պէտք էր մռնիլ. Լ՞ր ուրեմըն ծրնաւ:
 Լաւագոյն է որ մարդ չը ծանչնայ բնաւ բերկրանքն,
 Քան տեսնէ վաղանցուկ շողն անոր օր մը միայն:

Մնար քաւրեաւ, քաղցրիկ յոյս հրագներ սիրատարփ,
 Ըրոնցմով կ'ապրէին երբեմն ա՛յնքան անոյշ,
 Աչինջին լոկ բտուներն կը տեսնեն այժմ անոնք,
 Մա՛ն, վիճ մութ գիշերուան ու դժխիւմ անդոմի:

Մայրն յիմար էր դարձած անյոյսի խռովքներէն,
 Բագկաց մէջը սեղմած կարծրացած դիակիկն.
 Նայուածքով մ'երկար, որ կարծես չէր տեսներ ա՛ւ,
 Աչքն յառած անոր պիշ, կ'օրրէր զայն կապուտցած . . .

Հայրն ելած լնրդինրէն, խաչ հոնեց յամբօրէն . . .
 Յետոյ, հուր արցունքի մարգրիտներ կոպին տակ,
 Օրորո՛ւր դատարն, բակելով, ձեր, դողոջ,
 Վարագոյրը՝ պատանք շինեց, փայտն ալ դագաղ:


Ժրգի՛ փրանսերեկն

Թ. Ե. Գ.



ՈՒՒՏԱԻՈՐՆԵՐ ԷՅՈՒՊԻ Ս. ԵՂԻԱՅԻՆ

Էյուզ հնուց ի վեր եղած է մերոնց յոյժ սիրելի ուխտավայրը ընդհանրապէս. և մասնաւորապէս կօշկակար արհեստաւորաց յատուկ ինչպէս և մուշտակագործերուն, այն պէս և երկուսի վաճառականներուն ալ. Ուխտավայրը՝ կարմեղոսի մեծ հերոսին աննման մարգարէին, անուանի և կենդանի ծերացած ազաւնեակին անուան կառուցուած Ս. Տաճարին, որ լեռնակի մը վըայ նետուած է և տիրած իբրև մաշկեակ երկնահիւս, ոչ որպէս մաշկեակն առ Եգիպտի հրաշալի ալ կառնահիւս: Էյուզ Տեֆթեսարի և Նիշանճիի բարձունքները պինդ գրկած, Ոսկեղջիւրի եղբերէն բարձրանալով արեւամերկ ու հերձ և ուսկէց շնչելով ու վայելելով ջերմի ու զարմիկ ճառագայթները սոկեհուր ու լուսավոր, բնութեան առատ ու ազատ ապրումներով, իր ճոխ արքայաշուք դարաստանները, տափաստանները և բուրաստանները ունի, գաշտակներով ու ձորակներով եղբուած ու հովտագարգ: Չորս կողմերը միշտ բնականը և ո՛չ արուեստականը, երկնչելով ստուեր մը չը բերելու կարծես բնականին և բնութեանը:



Գ. ԱՐՔԵՊ. ԱՐՍԼԱՆԵԱՆ

Բարձունքը կ'իշխէ սակայն արքայաչէն սոկեհուր ու հուր շինուած քներու, դարուն ու վայելչութեան ոգիներու ցրլա ցումովը, ու միշտ միսթիք պաշտամունքի սովորոյթովն ու հոլովոյթովն: Էյուզի չափ հնութիւնով ու յայտնութիւնով ֆեաղջ խանէի գետակն է, որ գալար ու դալար եղբերով, լեռներու երկու շարք ծոցերէն, բուռ մը հովիտ ձորերու բացխուփ բացուածքներէն կուգայ դարեաւ ու բարեաւ, միշտ ալ հեղնելով ու ծիծաղելով իրմով հետաքրքրուողին, զբաղողին, ու խրախճանքը վայելողին, որ յար ու շար անցած են անցելոյն ծոցին խրած: Գետը երկնգիւղով հասած ու կասած կը նոյնանայ քղանցքը լիզող ճերմակին: Քայց իր եղբերին հիւրնկալ՝ տուն ու տեղ տուած է բրուտագործներուն, որոնք հա՛ հա՛ կը հասցընեն աղիւս ու կղմինտը բնակարաններու շինութեան:

Եղբրերն մին գրաւած է կիւմիշ սուիկն, որ լիապատ է, ու յղփացած նո-
ճիներու, սոճիներու երկնազու կեցուածքովը ու կուռ շերտաւորումներով
ու ցլուածքներով աշտարակացած անցեալը վերջիչող ու ապրող, որոնց կա-
տարին ու ծոցերուն արեւն ալ գարերու խաղն ու պարը և յոլքը ունի,
նման գունազգի թիթեռնիկներու, որ հոս ու հոն ազատ թեւն ու թռչըր
ունին: Էյուպի գեղը երկնող ու դարպասող գետակը իր մէջ բոլորած ու
պահած ունի երեք կղզեակներ, որոնք երբեմնի պետական աւագանիին ետ-
ընկերուն պարտէզներն են եղած, իսկ հիմակ Պոլսոյ լուսաւորութիւնը հայ-
թայթոյ ելքերտակայանը: Էյուպը հին օրերէն եղած է արհեստներու կեդ-
րոնը թէեւ նախնական ձևին ու ախլին մէջ. Բրոսհակն, իվիթիակն, փե-
կակն, որոնց աշխատաւորները մեծամասամբ հայ վարպետներ են: Էյուպը
խոշոր թաղերու բաժնուած է, ինչպէս Թալաւ պէյ, Պահարիյէ, Վեզիր քեֆֆե
Սագար շէշեկ. Պասլա շայսար, ձամի իկպիտ, որ ունի մզկիթ մը նշանաւոր իր
շինուածքով ու հնութիւններովը ճոխ, ու իր դամբարանովը Սէլաստին
Էյուպի, հոս էր որ մասիշահները իրենց արքայական սուրը կ'ստանային. ինչ
ալ շքեղ ու անօրինակ, վեհափայլ հանդիսութիւններով, արեւելեան աննման
ճոխութիւնով, և իսլամական այնքան բնորոշ միսթիք արարողութիւններով:

Ս. Եղիան Նշանճի թաղին բարձրադիր կառարին է թառած արծուէթեւ,
և շուրջը բոլորած են Բաւիս գըլայի, (այժմ աւան), Թօփ գալիուի, կիւմիշ
սուիկի բլրածածքերը խորտ բորտ փոռուածքով, բայց գեղահոս ու բնահոս
կուշտերով ու գրկերով: Տուննր, հիւղակներ, գամեր անշուք ու ալքատ գուն
ուրեք ալքի դարնող բնակարաններ, հնաւուրց հոյակապութիւններէ պատկե-
րատ ու խօսող, ուր դիտող աչեր անկուշտ ու անյագ շուռ ու շուրջ կուտան:
Նայ թաղը ու բնակչութիւնը աւելի Գր շէշեկի աղբիւրի շինութեան օրերէն
գոյութիւն ունեցած է, երբ գլխաւորաբար վարպետ աշխատաւորներ
պեղած են փապուղիներ, որպէս ճարտար որմնադիր ու ճարտարապետ և
անուանի բրուտներ շուրի այդ մեծ ճամբուն խողովակները (ֆիւնկ) շինող-
ներն են եղած: Թաղն ու թաղեցին 200է աւելի տուն կը հաշուուի եղեր, և
մօտ 200 տարուան թուական մը ունի հոն հաստատուելուն: Էյուպի թաղը
տուած է մտաւորական, արհեստաւոր և այլ ալքատու անուանի անձնաւո-
րութիւններ ցեղին պատիւ բերող: Էյուպի Ս. Եղիան տաճարը շինուած է
1832ին, անկէ առաջ մատուռ ունեցած է ուրկէց բայ ի մէկ ֆեռմակն ուրիշ
յիշատակելի բան մը թողուցած է: Աստուածածին եկեղեցին ալ Բաւիսի
լեռան ստորոտին կառուցուած է բաւակ ն հոյակապ Ս. Եղիան պարոյ ալ
ունեցած է. բայց այժմ թաղն անշքացած, թաղեցին ցրուած, զպրօցն ալ
փակուած: Մայիսի վերջերուն կամ յունիսի առաջին օրերուն է որ կը դիպի
մարգարէին տօնը, դարուն իր կեանքին յիշատակը, ինչպէս հայ ուխտաւո-
րին սրտին ալ մնացած է հազարեակ տարիներու ծնունդ ու միշտ գարունի
խանդն ու եռանկ մանաւանդ հաւատ զէպի իր պաշտելի սուրբերը, պաշ-
տամունքի առարկայ հոյակապ ու յատուկ այդ մեծութիւնները: Նայն իր
ուխտաւորի անշնդ ու զեղ բոլոր մովր դարեր հոլոված է, և ո՛չ մի ուժ,
կամ զօրութիւն, և շատ դառն փորձանքներ ու վտանգներ և աւերածու-
թիւններ գինքը իր սուրբէն ու պաշտպան բարխօսներէն շնն կրցեր բաժ-
նել ու ուժացնել, ան իր պատուամովն ու պաշտամունքովը կը փայլի, կը
բարձրանայ, նոյն ինքն կը մագլցի ուխտաւորի ծանր պողպատ շալակովը ու
զժուարկիր կապոցներովը իսկ, ու ան ամէն հեղ ձոն է, իր սուրբին տօնին,
գերազանց այդ ոգիներուն քովիկը: Յոյսը ուսին՝ սէրը սրտին մուրաւն ու

հաւատը հողուն, ու Ան զե՛ս կը քայլէ և անվախճան պիտի փութայ առանց
պարտասելու, առանց մոլորուելու ու երկուանալու: Մայիս է վերէն արեւը
ամիսներու այս քրմուհին ինչ ալ նոնողիկ դարպասներ, քծինք ու համբոյր-
ներ կը շուայլէ, ծերունազարդ, ու վարդազարդ կուրծքերուն, շահագրամ,
նուռուփար այտերուն, ազու ու աղաւնի աշուկներուն հրածին: Ան վերէն
գոհար ու շափուղայ լոյս կը հոսի լուսածոր, կաթնաթոր, վարէն ալ ծաղկա-
զարդ քրմուհին ոսկերուուն բոյրեր ու թոյրեր ցրցքնած և սարերով ու լան-
ջերով արբեցնող ու ապշեցնող տեսարաններով: Մայիսի գեղանի ու տիրուհի
առաւօտով մը, կենսունակ Ջարթօնքի մը զարթնած է հայ ուխտաւորը, ու
կամար են կապեր ու հիւսեր Ս. Եղիայի տաճարին երգուած Ջարթիքին...
Երգերու զուարթնոցովն ու վերացուցիչովը, Ջարթիք փառք իմ Ջարթիք և
ես զարթեացց առաւօտուց ալէլուիա իտիրնէի դոնէն օճագալար այդ
ճամբաներէն, Գարսիկօմիւրիկի գրկերէն անհ կը թափին, ու կը հասնին թիւ
ու անթիւ ուխտաւորներ, հեղիկ ու մնչիկ բայց լեցունկեկ կապոցներով ու
քայլերով. քանի՛ դուարթներով ու նուարդներով, և որչա՛փ նշաններով ու
շուշաններով, գարնան ծիծղուն ու թռիչուն թիթեռնիկաց ու թռչնոց
նման որ պիտի թառին ու թառուրան երկնածոր լոյսերու մօտիկն ու քովի-
կը սրտաբաց ու հողերուխ Մանուկն ու պատանին, կոյսն ու երիտասարդ,
մամիկն ու ծերուկ ՚ի մի, չորս թաղերէն ժագերէն չա՛ չա՛ կ'երեւին ու կը
փութան յուխտ և երկրպագութիւն ճաճարին Սրբոյն Եղիայի Մէկը ժպիտն
ի շրթունս, մէկն յոյսը սրտին ու գրկին իսկ ամէնը հաւատն ու ուխտը հո-
գիներու խորքին, լաչակ ու շալակ ըրած ու առած կորագիծ. շատեր ալ
ցաւերու ու վշտերու բեռներու տակ կ'ընեն ու նկուն սեւ սուգի կոծերով ու
ծովերով պարոյր, և ալեկոծ ու լճակոց հանգոյն նուազ ու հծծիւն զարձ-
գարձիկ, ասոնք ալ կ'արագեն ագօթելու, կոծելու, արտասուելու, այլ միշտ
խնդրելու ճաճարի այդ վեհութեան, մ'թնոլորտի այդ սրբութեան, վեհ կա-
մարաց սրբանուէր ու գումար մեծ հոյերուն հովանոյն տակ: Ազօթքով
կ'անէանան, մրմունջներով կը վերանան, հառաչներով կը սրբանան ու կը
թեւածեն հո՛ն, հո՛ն՝ ուր սուրբեր ամէն և բիւրաւորը կ'երկրպագեն Ամենա-
կալին ու կ'ակնկալէ իր ուխտերու կատարումին լիացումը ու լրացումը ծո-
ղովուրդը Եղիայի կարմեղսը բարձրացած է լցուած տաճարի գաւթովն ու
բակովն իսկ երգեր գեղալուր, շարականք հիալուր ու մթնոլորտն ողջոյն վե-
հի ու վսեմիւ երկնացած, ու սրտեր ուխտաւորներու՝ սրբացած: Մատաղ-
ներ անմեղուկ ու անմուռկ մեծ իր անմեղունակ աշուկներովը, միւսը իր
անգիտակ կեցուածքովը, կարմիր կակալ աքլորին կուկուրկուն ալ պուկին
կպած, խոյեր ոսկեզօծ եղջիւրներով հպարտ դափուտիով մարտի
կեցած, անհ աղն օրհնուած, ականջներ կտրատուած, ու անոնք անյագ ան-
կուշտ ազը կը լափիղեն, ուխտերու պատարագն ըլլալու իրենց ուխտի
ծրարները թողած Եղիային, կապոցիկները առած մատաղին, ու մուրաւտին,
հոգեկան հաճոյքով արբեցած վայրէջքն ու վերելքը կը կատարեն իրենց
դարձին: Եղիայի մաշկեակը լեցուցած է իրենց սիրտը և հովանաւորած
ամենով:

ԳԷՈՐԳ. ԱՐԿԵՊ. ԱՐՍԼԱՆՅԱՆ

(*) ԲԱԼԻՔԱՆԹՈՒՍ

Պատուհանիս տակը մինակ ու ժպտուն
Դու շքնորհն ես ճրմեռներու տխրութեան.
Գոհարագարդ մատներդ փարած ոսկեզոյն
Ձերդ դիցուհի մերկ ուսերուն բնութեան:

Բաժակներէդ տարփանքիդ բոցն հոտեւան,
Կը կաթկըթէ հոգիէս ներս հեշտաբար,
Հաշիշ մ'է ինձ ինչպէս զինին մեր Գողթան
Որ ես ըմպեմ եւ զինովնամ սիրահար:

Ո՛րբքան զըւարթ դալուկ շողերն արեւուն
Բիլ աչքերուդ երկընթին մէջ կը վառին.
Կուրծքիդ վըրան սիրոյ տենչանքը ծըփուն.
Խռով նուագ մ'է այս անցաւոր աշխարհին:

Ես բառ մ'ունիմ երեք բեւեռ, երեք զիր
Աստուածաչունչ անհուն քերթուածն հոգիիս.
Ծովն ափ ունի, սահման երկինքն ոսկեծիր
Բայց ոչ մահ կայ եւ ոչ ափունք իմ սըրտիս:

Այդ իմ սէրն է շիրմէն անդին մահէն վեր
Եւ մահն ի՞նչ է — շոգեփոխում գոյութեան:
— Երբ կը ծընին նոյն մահիճէն կեանքն ու մահն
Երբ շիրիմն ալ կ'ըզձայ ծաղկին գալըստիան:

Ու դուն ալ՝ երբ, ԲԱԼԻՔԱՆԹՈՒՍ՝ շիկահեր,
Ամէն ճրմեռ փըթթիս շիրմիս եզերքին,
Յամբած սըրտիս ափ մը բերես կեանքի սէր,
Պապակ շքնչիս բոյրըդ խառնես առաջին:

Ա՛հ, դու պարէ, պարէ այժմիկ հոլանի
Յըրտասարսուռ թեւերուն մէջ զեփիւռին.
Ձեփիւռ ու բոյր զերդ վարուժան ու մարի
Սիրահամբոյր կուրծքիս վըրան թող մարին:

Բստուերն ահա լուռ կը յածի աշունին
Վարդ ու շուշան գիրկը մահուան կը պարեն,
Մինչ դուն քոյրիկ ճրմեռներուն դիցուհին
Մեռնող աշնան մըխիթարանքն ես վերջին:

Վեհեթիկ - 10 - Ա - 1931

Հ. ՎԱՀԱՆ ԹՈՎԱԿՆԵՍՅԱՆ

(*) Հոսաւէտ եւ դեղին ձմեռնային ծաղիկ մը:

ԼԻԼԱՅԻ ԾՆՈՒՆԴԸ

Լոյսի արցունքը Դարուր
Աստղերէն մար կը հոսի.
Ծաղիկ կ'ըլլայ ոսկեթոյր
Բուրուճաւէտ լիլայի:

Ու շամանդոյ մը փափուկ
Կը շըպարէ զայն ճերմակ
Մինչդեռ մայիսը ծածուկ
Շնորհք կուտայ եւ տարփանք:

Նայանուշներ երգերով
Ծաղիկն հ, բաշք կը տանին,
Ու կը տընկեն ափին քով
Սըրտիս խոշոր երակին:

Ազբիւրին մէջ իմ հոգ յս
Կնհուսօրէն կը շիկնի
Ու խընկենի սրբութիւնս
Իր շըրթներէն կը հոսի:

Ամէն գարնան սափորով
Բոյր կը ձօնեմ նարդոսի
Կ'երգեմ շուքին տակ խանդով
Երգ մը սիրոյ եւ կեանքի:

Ահա ինչո՞ւ կը փնտռեն
Մարդերը զայն տենչանքով.
Ինչո՞ւ մեղուն լիլայէն
Ետ կը դառնայ միշտ զինով:

Փարիզ 18 Ե. 1932

Հ. ՎԱՀԱՆ ԹՈՎԱԿՆԵՍՅԱՆ

Ծ Ո Վ Ա Փ Ի Ն

Հեռուն փոթորկուող ալիքն ովկեանին
Օր մը կուզայ որ կը հանգչի յաւէտ.
Մութ ամպերուն մէջ կը մարի արփին
Եւ ալ չեն ժըպտիր աստղերն իրար հետ:

Այս համատարած լուռ ափին վրայ
Սիրտ իմ դուն քեղ հետ կը մընաս մենակ,
Դարերն են վայրկեան, բուպասէ մի պահ
Եւ դուն ալ կ'անցնիս ինչպէս մի փայլակ:

Վեհեթիկ 13 Գ. 1931

Հ. ՎԱՀԱՆ ԹՈՎԱԿՆԵՍՅԱՆ

ՊՁՏԻԿ ԼՐԱԳՐԱՎԱՃԱՌԸ

(ՈՒՐՈՒԱԳԻՄ)

Արդէն իսկ մանուկ և մարդ: Անհատականութիւն՝ քիթի, մատներու, չափտի, քալուածքի:

Ո՞րքա՞ն տարեկան: Կը սխալի՞ք: Եօթը՝ հազիւ: Ամառ ձմեռ չկոնկուած բանկոնակ մը, անկապակից կարկոտաններով: Վար քաշուած դրոպաններու պէս բաներ կրկու քովերէն: Գրպան թող ըլլան: Կուրծքը բաց. տաքին ու պաղին հալումներէն երկու միտ: Իննըսուն սանթիմ հասակ, գրեթէ: Բոպի՛կ, այդ ինքնին կը հասկցուի: Երկու արթնքեան շրոթներ՝ աչքերը, խորունկ, մօւթը ինկած: Շարժումներն չի տեսնուիր, ա՛յնքան պղտիկ ու խոր: Հոտ փոխադրուած ըլլան, կարծես, Վոսփորի շոգենաւներու քմշոտ ցոլարձակները: Անոնց ոգեւորութեամբ, շատ հեռուէն իսկ կը մարէ իր ծուխը: Ծուխը՝ ըսելու ձեւ մը պարզապէս: Առտունները՝ վեցէն-եօթը, Հարպիէի կայանը փութացող գործի մարդը: Երկայն ան զինքը չտեսած՝ ուսընդանուր կախուած պայուսակէն դուրս կը ցատքէ անոր նախընտրութիւնը՝ «Ճիւմհուրիէթ», «Միլիէթ», առտուն թերթ մը վերջապէս կարելի չուտիկութեամբ կը գրպանէ դրամը, ցոլարձակները դարձնելով ամէն դի, որսերու ուղղութեամբ:

Շուտի՛կ: Ատկէ լաւ ոսկերիչի աշակերտ մը կրնայ ըլլալ շատ շատ փոխիչի մը վայել լրջութեամբ իր գործին կը հետեւի մէկ երեսով, միւսով՝ կրկէսի քլաուն մը: Կից մը՝ ընկերակցի մը: Երբ մը՝ փողոցը սլքոսացող շունին, պլնտրիկ մը կօշիկ ներկող մարդուն ծոծրակին, ակնթարթի մը՝ մէջ: Հօ՛փ, հանրակառքն ի վեր. հօ՛փ, վար. մանրութեանով ափերը լեցուն: Դեղին ու ճերմակ դրամներ՝ որոնք գրպանի պէս բաներուն խորը կը սահին, առանց շատ արեւի լոյս տեսնելու:

Փողոցի նախակրթարանը աւարտած՝ ստահակութեան կատարեալ փրկասփայ: Սիկարէթը բերանը զնելու, հանրակառքի վարիչներուն ասպարէզ կարգալու ինքնատիպ ձեւ մը ս՛ր...: Բարոյականի վիժուկ մըն է այս տղան՝ մարդ-տղան աւելի ճիշդ պիտի ըլլար: Եւ գրեթէ ժամանակավրէպ մը: Ծնեալ մը: Այո՛, այո՛, ձնեալ մը: Գիտուն տարի առաջուան շրջանէ մնացած թնճուկ մը: Ջրհանկիրներու թթխմորով հասարակ հաց, թանձր կեղեւով: Ի՞նչ գործ ունի քսաներորդ դարուն մէջ: Քաղաքակրթութեան քիթին խընդացող հեգնանք մը: Կը մարի խնդալէն դպրոց գացող տղոց խմբակը տեսնելուն: Թթամատը քիթին ծայրին՝ անոնց ետեւէն կը սուլէ: Հեշտ ճամբորդներ անոնք՝ որ կեանքի մտմտուքը չունին: Քանի՞ փարայ է օխա մը հացը: Ի՞նչ գիտն անոնք... Ի՞նչ գիտն: Օխա մը հացը: Օխա մը հացին գինը...: Հը՛: Առ նուազն վեց եօթ «Ճիւմհուրիէթ». նո՛յնքան ալ ոստում և անպարտութիւն: Ամառը՝ տաք քրտինք. ձմեռը՝ բուքի անտոյնտուկ բաց կուրծքին վրայ: Օխա մը հացին գինը: Ո՛չ, ո՛չ, գիրքերը, տետրակները, մատիտները չեն անոնք: Հա՛ցը՝ հաց է: Անոր ետեւէն պէտք է վազել: Գէտք է վազել զայն ախորժով և առողջութեամբ ուտելու համար:

Եւ, փոքրիկ լրագրավաճառը ատիկա գիտէ: Եւ ատոր համար անիկա հպարտ է: Հպարտ է՝ մէկուն կարօտ շեղող մարդու ինքնաբաւութեամբ, անկախ ըլլալու գիտակցութեամբ: Իր ազատ-մարդու շարժումները կ'ըսեն ատիկա, իր փոքրիկ տնկուած փորը կ'ըսէ ատիկա:

Ու հոտ, կը վերջանան յոռի տպաւորութիւնները: Անտաշ, անկիրթ աղեկը համակրելի կը դառնայ: Ան գիտէ օխա մը հացին գինը:

ՀԱՅԿԱՆՈՅԵ ՄԱՌԻ



ԵՂՆԵ ԱՅԿԱՅԵԱՆ

Խ Մ Ո Ր Ո Ւ Մ

Նոր մտածումներիս հունձքն է
Բարձրամում.
Ես ի՞նչ դառնում եմ օտար
ժամ առ ժամ.
Ես ինձ օտար եմ ինչպէս մահ ու
Մինչեւ վերջին
Չանցառութիւնն իմ խոլութեան:
Իմ խոհական երկինքները
Խռովում ես
Քո գերբնական ներկայութեան
Չօղեսկներով.
Եւ իրերը
Քո խօսքերից փրկուում են,
Ընդոտնելով

Իրենց անյուշ սեռեւումի,
Իրենց դիրքից դրամայական,
Դու այն ես,
Որին Աստուած վերժանում է,
Իբրեւ իրեն ոչ-ինչը.
Եւ դու գիւտն ես ինքնին
Աստուծոյ
Ինքնին Աստուծոյ խի աչքին.
Դու մինչեւ վերջ ինձ հետ ես —
Մտքիս անդունդն է ազամանդ լուսմ
Քո անդրաշխարհեայ հայեացքներով:

Շօշափելիքս աւարեցիր,
Անձս դարձաւ ամպերի խաղ.
Կեանքս կորցրեց իր պալատը
Եո յեղյեղուեց տիեզերքը
Երազների արկածներով.
Երազների Ձինգիզները
Արշաւեցին արարչութեամբ
Եւ Լոգոսը դարձրին էմբլմ
Աբսուրդների
Ու յուշարձան ծամածուող
Աստուածութեան:

Եղար ինձ հոգի.
Փորձեցիր կեանքը
Օժտեցիր ինձ իմ էութեամբ.
Իմ էութեան ներկայութեան
Գիտակցութեամբ:

Յորդորեցիք կարգալ Սուտը
Ճշմարտութեան աչքերի մէջ
Ու ճանաչել անկարելին,
Իբրեւ ալիքն իմ էութեան.
Ու զարհուրել

Ապրած կեանքիս
Արտասովոր ներկայութեան
Յանկարծական յայտնութիւնից:
Եղածներից ոչ մէկը չեա:
Չեղածների մէջ չկաա:
Քեզ գիտցողն իր գիտցածն է.
Քեզ գիտցողի գալիքն ես գու.
Իբրեւ մարդ ծնայ հեռանում եմ
Իբր Աստուած.

Արդ չըզիտեմ՝
Ես իբրեւ մա՞րդ, թե՞ իբր
Աստուած

Պիտի գիտնամ, ինչ որ
գիտեմ.

Պիտի գտնեմ, ինչ որ
գտայ

ԹՇՈՒԱՌ ԱՂՋՆԱԿԻՆ ԱՂԵՐՍՆ

ՈՒ

ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ

Յանուն կարօտեալներու ու անկար հիւանդներու եղած դիմում մը ըլլալ ան նիւթապէս կամ բարոյապէս սրտի շատ մօտիկ է ու կը խորհիս. կը ճգնիս բան մը ընել, ինչ ձեւի տակ որ ըլլայ ու կը լծուիս գործի. այն հաւատքով որ պիտի կարենաս քու ամենադոյզն օգնութեամբդ տնկարի մը նեցուկը ըլլալ, հիւանդի մը դարման ընել ու անոք ծերունւոյն ապաստան մը տալ:

Այս կարգէն էր կէտիկ փաշայի պատուարժան Աղքատախնամ մարմնոյն, իր քսանեւհինգամեայ յորելեանին առթիւ յանուն կարօտելոց պատրաստել մտադրած «Ջուարթնոց» խմբագրութեան համար եղած դիմումը. մասնակցելու համար ու է գրութեամբ մը:

Սիրալոթար պէտք է ուղեւ մասնակցել այդ շատ օգտակար գործին ու խոյս տալով մտացածին կամ երեւակայական գրութիւններէն կը պրօպոստի մ'մօտաւոր անցեալի յիշատակներուս մէջ ու կը կենամ սրտաճմլիկ գրուագի մը առջեւ, որ տեղի ունեցած է զինգազարի տարիներուն և որ կապակցութիւն ունի անցեալի թշուառ գաղթականին ու այսօրուան անկար աղքատին հետ:

Ո՛վ չը յիշեր զինգազարի տարիներու ազգային կեանքին մէջ պարզուող թշուառութիւնները և չէ փութացած յոգնած ու լքուած գաղթականին, ո՞վ անզգայ մնացած է անոնց սրտաճմլիկ զիճակին:

Աւելորդ պիտի ըլլար անշուշտ երկար նկարագրականներ նուիրել այդ անցեալին որ մահու չափ տխուր է. բայց անցքեր կան որ չեն մոռցուիր, ու ցոյց տալու համար թէ անապատն ու տարագրութիւնը ի՞նչ աւերներ գործած էին բարոյապէս այդ մարդկային խլեակներուն մէջ ու դառնացուցած անոնց հոգւոյն մէջ զգացում ու երախտիք գրի կ'առնեմ գրուագ մը դառնութեան ու մանկիկի մը երախտագիտութեան անցքերէն:

Դագրած էին այլեւս մարդակեր թնդանօթներու ահաւոր պայթիւնները, աշխարհիս մեծամեծները ու կառավարիչները իրարու հաշտութեան ձեռք կարկառած էին ու կ'ըր կամ քառակուսի սեղաններու շուրջ բոլորուած կը վճռէին. կը բաժնէին, կուտային կ'առնէին և այսպէս վերջանալու կը միտէր գարհուրելի պատերազմը:

Ու ասդին պատերազմի զոհերն էին որ սկսած էին գործի և բեռնաւորուած՝ ինչ որ մնացած էր իրենց կը խուժէին դէպի հայրենի երկիր: Այդ թշուառները տեղաւորելու գործը յանձնուած էր ինչպէս ծանօթ է ամենուն. տարագրելոց յանձնաժողովներու և անոնց օժանդակ մասնախումբերու որոնց անդամները ոգի ի բռին ու հեւ ի հեւ վազելով կը ջանային ցաւ մը ամօքել արցունք մը սրբել, միխթարական խօսք մը ընել այդ հէք թշուառներուն որոնք արհաւիրքի կեանքը ապրած էին տարիներով:

Հայտարար փառալուծական կայարանը խզճայի տեսարան մը կը պարզէր այն պահուն, մեծագոյն մասամբ կիներ ու տղաքներ, կ'առաջնորդուէին անձնուէր երիտասարդութեան մը կողմէ դէպի Արամեան - Ունճեան ազգ. վարժարանը հոն սպաստանելու համար:

հարիւրաւոր թշուառներ կ'ստանային ամէն օր իրենց համար պատրաստուած կերակուրն ու հացը:

Ինչպէս ըսի վերը դժբաղդարար անոնցմէ ոմանք գաղթականութեան մէջ զրկանքի ու տառապանքի կեանքը ապրելով կորսնցուցած էին այլեւս ինչ որ մարդկային էր իրենց հոգեոյն մէջ ու եղած էին աճառկու քիփեր, անոնց հետ կարելի չէր մեղմութեամբ կամ խստութեամբ (սօսիլ, խոփոս ու ատելալառ նայուածքով կ'զգեստնուէիր):

Յերեկուան ճաշի բաշխումի օրերէն մին, հացը դեռ բերուած չէր և այս պատճառաւ կ'ուշանար ցերեկուան բաշխումը. ու ստիպուած կարգաւ կեցած կ'սպասէին. յանձնաժողովի անդամուէրներս մեր կարգին կ'սպասէինք շերեփները ձեռքերնիս:

Թանկարժայէ սիրտ բղքող մարդկային խեղճներուն մէջէն ձայն մը կը բարձրանար թէ չէր կրնար սպասել. թէ անպատճառ հիմա կ'ուզէր որ տրուի իրեն բաժինը ու խօսքէն գործի անցնելով կ'սկսէր յառաջանալ ու սպառնալ ու պոռալ և անարգել մեղի որ շերեփները ձեռքերնիս իրենց կը ծառայէինք տարագրուած չլլալով մենք ալ իրենց պէս և իր դառնացած հոգեոյն ամբողջ մաղձը մըր վրայ կը թափէր: Ի վրէժ կ'ըլլային իր շուրջիններուն ջանքերը զինքը համոզելու համար որ պատճառը հացին ուշանալն էր, կատաղութեան մատնուած գաղանի մը պէս կը պոռար ու ւարիւն կ'ուզեմ՝ կ'ըսէր:

Սարսափած էինք ամենքս ալ ի տես այդ թշուառ կնոջ ատելութեան ու անկարգ ձեւերուն: Երիտասարդ ու բաւական սիրուն կին մըն էր ան որու ամուսինը զինուոր եղած էր ու պատերազմի դաշտին վրայ իր պարտականութիւնը կատարած ատին նահատակուած էր թողլով իրեն 7-8 տարեկան աղջնակ մը:

Թանգարուած էր սպասողներուն կարգը ու կը ջանային բան մը ընել լռեցնելու համար զայն, իսկ այդ նորատի կինը կ'սպառնար, կը պոռար թէ չի կրնար սպասել այդ սիկիլներուն գիմացը:

Մեր անձնուէր աշխատութեան այդ կերպով ջախջախուելէն սահմակած երբ իրարու երես կը նայէինք անձայն, սուր ու արեխարշ մանկական ձայն մըն էր որ կը տիրապետէր յանկարծ: Ամենուս ուշադրութիւնը այն կողմը դարձաւ ու տեսանք եօթէն ութ տարեկան աղջնակ մը որ ձեռքերը օդին մէջ բարձրացուցած ու լալով պոռալով դէպի մեզի, դէպի պոռացող կինը կը վազէր. իր աղջնակն էր այդ գորովագութ մանկիկը: Ամենքը սարսափահար մէկ կողմ կը քաշուէին այդ հրեշտակային աղջնակին վազելին ի տես. ու ան ճամբան բաց գտնելով իր առջեւ, կը վազէր ու խոյանալով իր մօրը վրայ կը բռնէր անոր սորբերուն տակ, խնդրելով պապատագին որ լռէր ու այլեւս չի պոռար:

«Մի պոռար մայրիկ, կը վախնամ, մեղք են ջրկիները, քեզի ինչ ըրին անոնք ինչո՞ւ կը պոռաս, քիչ մը պէտէյե՞ աման մայրիկ խղզում մայրիկ»:

Ձայն մը, շուկ մը չկար, կարծէք հրաշք մը տեղի ունեցած էր, հոգին սուրբ իջած էր այդ բարոյաւթուած կամ յուսալքուած կնոջ վրայ:

Փոխուած էր ան, ու ջրկերու թուրացումով մը ընկճուած սպառնական ձեռքերը վար կ'առնէր ու գլուխը խոն օրհնեցնելով ինքն ալ, իր կարգին

գետին կ'իյնար իր անմեղ ձագուկին քովիկը ու զայն գրկին մէջ առնելով լալով ու հեկեկակով կ'օրօրէր զայն երգելով օրօր մը որ տարագրութեան մէջ յոգնութենէ ուժասպառ իր մանկիկը կը քնացնէր:

Չափազանց յուզուած ամենքս ալ մեր կարգին խոնարհած էինք մեր գլուխները ու կը յարգէինք այդ քիչ առաջուան կուռապան կնոջ սրափուճը դէպի բանականութիւն:

Աղջնակը լռիկ կուլար մօրը կուրծքին կրթնցուցած իր աղուոր ու խելացի գլուխը և մերթ ընդ մերթ կը դիտէր մայրիկը, կարծես վախնալով բարկութեան վերադարձէ մը:

Այդ պահուն հասած էր արդէն հացը և երբ կ'ազդարարուէր այդ ողորմելիներուն պատրաստուել իրենց բաժինը առնելու ապուրթեամբ տեսանք որ այդ գիւրաբորբոք հէք կինը ոտքի կ'ենէր ու առանց ստանալու իր բաժինը կ'ուզուէր դէպի իր սենեակը:

Եւ սակայն այդ թշուառ աղջնակը որ տեսած էր շատ մօտէն զրկանքն ու տառապանքը ու իր անմեղ հոգին դեռ չէր ապահանուած և խորհելով որ մօրը ըրած անխոհեմ ընթացքը դարմանելու լաւագոյն միջոցը խոնարհութիւնն էր, կը բռնէր մօրը ձեռքէն և զայն քաշելով դէպի մեզ կուգար առնելու կերակուրի ու հացի իր բաժինը և կուտար մայրիկին, յամբար հեռանալով յետոյ: Այդ օրը այդ հրեշտակային աղջնակը ինչ հիանալի դաս մըն էր որ կուտար իր տառապած ու թշուառ մօրը. խոնարհութեան ու երախտագիտութեան ինչ սքանչելի օրինակ ամէն անոնց համար որոնք երբ առաւապած են ու դառնացածներ եղած, կ'ուզեն իրենց կարգին տառապեցընել ու դառնացնել անմեղ ու անձնուէր սրտերը և չեն հանգուրժեր որ իրը միխթարիչներ ու օգնողներ իր նց դէմ գտնուին քնիւս երեսօրացիս երջանիկներ:

Անցած են այն օրէն ի վեր տարիներ, բայց ես չեմ մոռցած այդ մարդպտեաց ու դառնացած սրտով գաղթական կինը և իր անմեղ, գորովագութ ու երախտագետ աղջնակը:

ԳՈՒՅՈՐ Ա. ՄԱՋԼՄԵԱՆ



ՃԱՄԲՈՒ ԽԱԶԱԶԵՒՈՒՄՆԵՐ

Շոգեկառքի կայանը հետզհետե կը լեցուի ճամբորդներու և ճամբորդող-ներու ստուար բազմութեամբ: Խօսակցութիւններ՝ մեկուսի, յանձնարարութեաններ, յապաղած քորովանքի շաշլանք: Երկու կողմն ալ կ'սպասէ մեկ-նումի սուլիչին: Երիտասարդներ կան որոնք կ'ուզեն բաժանման զգացումը ճաշակել, իսկ փորձառուներ այս անորոշ վիճակէն ժամ առաջ կը փափաքին



ԹԱԳՈՒՆԻ ԲԱՋՈՒՄԵԱՆ

ազատիլ: Համրուած ժամերը սակայն շուտ կը սահին: Շոգեկառքը իր սուր ճիչը կը բարձրացնէ, ճամբորդներ պատուհաններէ դուրս՝ անհոգ ժպտող կը գիտեն ամէն անոնց որոնք դատապարտուած են իրենց տեղերը մնալու: Մոռցուած խօսքը, խորհուրդներ վերէն ու վարէն անվերջ կը փոխանակուին, մինչեւ որ անիւները շարժին ու մեքենան մեկնի խողբար:

Այիս՝ այս ամէնը զիտած էր շոգեկառքին առաջին սենեակներէն մէկուն մէջ բազմած: Գրեթէ միշտ այսպէս եղած էր իր բաժինը, կեանքը թատրոն ինք պարզ ականատես մը:

Վայրաշարժը կը սուրար զգլխիչ արշաւով, սուլելով ու զզրզալով: Դաշտագետտիներ, ակնապարար կանանչութիւններ, ու տակա-ւին բնական անվերջանալի դեղեկութիւններ երջանկութեան պէս արագ կը խուսափէին: Ճամբու եզերքներ, գեղջիւղներ ապշած՝ կը գիտէին նոր ճակատագրեր գիմաւորելու մեկնողները: Երբեմն ալ ամայի ճամբաներու, մէկ կամ միւս կողմը յանկարծ կը յցուէին ցածուկ, կորաքամակ հիւզակներ, ժամանակն ու յոյսերը արհամարհողներու նման անփութօրէն: Այիս երազէ մը սթափած կարծես՝ ուշադրութիւնը ներս դարձուց, արեւելեան դեղեկութեամբ ու ճոխ արդուզարդով օրիորդ մը անհամար ծաղիկփունջերու մէջ արձանացած գինքը կը գիտէր:

Ճամբորդութեան մէջ շա՛տ զիւրին է մտերմանալ անգամ մը որ խօ-

սակցութեան կծիկին ծայրը գտնուի: Այիսին ժպտը արձագանգ դնելով անվարան հարցուց.

- Շատ՞ ես էիք օրիորդ:
- Իրաւ որ չեմ գիտեր, ազգականներով այնքա՛ն զբաղած էիր որ չզգացիր ժամանակին անցնիլը: Դուք թէեւ բնաւ ուշադրութիւն չդարձուցիք մեզի: միշտ դուրս կը նայէիք, արդեօք մէկու՞մ մը կ'սպասէիք որը չեկաւ:
- Ո՛չ մէկու կ'սպասէի օրիորդ:
- Պոտոյ մէջ ազգական կամ բարեկամ չունի՞ք որ մէկը չէր եկած ձեզ ճամբելու:
- Մեկնումիս մասին ո՛չ մէկու խօսած էի, ձեւակերպութիւններէ չեմ ախորժիր փոքրիկ օրիորդ: Իսկ դուք, առանձին կը մեկնի՞ք:
- Այո՛ տիկին, թէեւ երկար չէ ճամբորդութիւնս խօսեցեալս զիս պիտի դիմաւորէ Պուլկարիոյ մէջ:
- Բայց ես ձեզ մանուկ մը կը նկատէի, այսքա՛ն երիտասարդ և արդէն ամուսնանալու կ'երթաք...

— Մեր ընտանիքին սովորութիւնը միշտ այսպէս եղած է տիկին. Ան հօրեղբորորդիս է, բաւական տարիներ առաջ Արժանթին հաստատուած՝ իսկ իր ծն զքը աշխարհ Պուլկարիա կը բնակին: Մեր մանկութիւնը միատեղ անցուցած ու քիչ մըն ալ զիրար սիրած ենք, ինքն է որ յանձն առաւ շա՛տ հեռու երկիրներ մեկնիլ որպէսզի հարստանալով ապագային զիս աւելի երջանիկ ընէ: Իր երազը իրականացած է:

- Բնաւ չկասկածեցա՞ք որ ան ձեզ կրնար մոռնալ:
- Ինչո՞ւ կ'ասկածէի, չէ՞ որ խոստացած էր ամուսնանալ, ինձի կը մնար սպասել:

Այիս տագնանեցաւ, ինչքա՛ն քիչ գիտեն մարդիկ իրենցմէ դուրս, ուրիշներու հոգեկան կացութեան մասին ու անտարբերօրէն նետուած խօսքերով սիրտ կը խոցեն: Սակայն անոնք թո՛նջ յանցանք ունին երբ ամէն հոգի գոց գիրք մըն է:

- Հրէուհին լուրթիւնը խղելու համար հարցուց:
- Ամուսնացած է՞ք:
- Ոչ, և լաւ որ չեմ:
- Ինչո՞ւ այդպէս կը խորհիք:
- Որովհետեւ այն համոզումը ունիմ թէ ամէն ամուսնութիւն շահու-վրայ յենած է:

Ուրեմն չէ՞ք հաւատար սիրոյ և երջանիկ ամուսնութեան:

— Ինչո՞ւ չէ, բացառութիւններ կան անշուշտ, ըսաւ Այիս անդրադառ-նալով որ իր իրաւունքի սահմանէն դուրս էր նշանուած մէկը յուսալքելը: Ու ան դարձեալ սկսաւ բաց պատուհանէն գուրս՝ հեռուները գիտել. մշակ-ուած դաշտերու մէջէն գալարուն ճամբաներ կը կորսուէին աննպասակօրէն: Պահ մը, վայրկեան մը մոռնալ ինքզինքդ, բնութեան մէջ խորասուզուիլ և այնպէս զգալ թէ ո՛չինչ պատահած է կեանքի մէջ քեզ վրդովող... Այս էր Այիսի բաղձանքը այդ վայրկեանին: Հրեայ դրացուհին կարեկցութեամբ կը գիտէր զինքը: Իր սահմանափակ մտքով չամուսնացած կին մը խղճալի մէկը ըլլալու էր: Նախատեսելով իր ապագան գաղտնի կը հրճուէր: Մարդ մինչեւ որ ուրիշներու դժբախտութիւնը չտեսնէ իր երջանկութիւնը չի կրնար չա-փել, կը վճռէր հրէուհին:

Իսկ Այիս իր կարգին զրացուհիին ամբողջ ապագան կը նախատեսէր,

ամուսնութիւնն ունայնութիւնն... դաւաճեցնելը ցաւ ու վիշտ... յետո՞յ... ամէն բան ժամանակի ձեռքին մէջ խաղալիք... Իր այս յոռետես խորհուրդները կը վերագրէր հողեկան ներկան առեղծուածային կայութեանն Յոյս, երազ որոշ տարիքէ մը յետոյ աւելորդ գեղցուններ էին պարզապէս Տարինեւու աշխատանքին տակ կրթած, չարչարուած՝ յանկարծ բախտը փոտած էր իրեն ձիարշախ տոմսակներուն ամենամեծ պարգեւը շահնորդի Սակայն յապաղած բախտ մըն էր ան որուն արժէքը չէր կրնար գնահատել: Գոնէ փափաքեցաւ իր ծննդավայրէն հեռանալով յոգնած ջիւղերը հանդարտեցնել: Նոյն ատեն տարտամ խորհուրդներ, խտէպներ ալ ունէր որոնք զրամի ոյժով կ'ուզէր իրագործել:

- Կ'երեւէ ձեր սիրելիներուն կ'երթաք, բայց հետաքրքիր զբայտ ձին
- Սիրելիներ, դժբախտաբար չունիմ, ո՛ւր կ'իջնու կ'երթամ... Վերջացաւ վերջացնել Ալիս:
- Բայց անշուշտ նպատակ մը ունենալու էք:
- Ա՛հ, այս մասնագիտութիւնս կատարելագործելու մտադիր եմ, թիւ ընես ալ բժիշկ ըլլալը Այսպէս ան բարձրաձայն խորհած էր վերջնական որոշման մը յանգելով: Վերջապէս զբամբը իր մտգական ոյժովը չէր կոչած վինքը վերջնականապէս հեռացնել նախկին ասպարեղէն:
- Ի՞նչ է ձեր պաշտօնը:
- Զգուշակեցի՞ք խո՞ժոռ գէմքէս, գործողութեան սենեակի պետ-հի սն-դապահուհի: Տասը տարիներէ ի վեր սոյն գործը կը կատարեմ:
- Հրեւուհին զարմացած կը նայէր, ինք որ մատի մը արիւնիւրը չէր կրնար գիտել:

* * *

Ալիս Ֆրանսա հասնելէ յետոյ, զբարձուութեան ու պատմական վայրերը տեսնելէ առաջ, բժշկական նշանաւոր հաստատութիւններ այցելեց և հետաքրքրութեամբ ուսումնասիրեց անոնց այլուայլ գրութիւնները:

Բժշկական համալսարանի մասերը կողիկ յարկաբաժին մը վարձելով՝ սկսաւ կանոնաւորաբար համալսարան յաճախել: Տարիները սահեք էին առանց ծանձրացուցիչ ըլլալու, իր յարատեւ աշխատանքովը իրեն վերաբոյժ բժշկուհի ստացիւր էր իր վկայականը: Իր յաճախած համալսարանին մէջ ալ օգնական վերաբոյժի պաշտօն առաջարկուած էր: Հայ թերթերը ըստ սովորութեան խանդավառութեամբ արձագանգ տուին հայուհիի մը այս եղական յաջողութեան: Ասոր յաջորդեց նաեւ շատ մը շնորհաւորութիւններ և համակրանքի արտայայտութիւններ ծանօթ ու անծանօթներէ: Այս բոլորը սակայն չկրցան գէմքէն զաւանցած փոխտի մը հետքերը բոլորովին ջնջել և ինչո՞ւ...:

Ալիս իր կեանքին ուղեց նոր ուղղութիւն մը տալ, քանի որ իր պաշտօնէն զուրս տրամադրելի ժամեր պիտի ունենար ու լայն նիւթական Օտար հորիզոններու տակ թափառող թշուառ աղգակիցները կը մնտաէր խեղճուկ թաղերուն մէջ: Անոնց հիւանդները ինչպէս գլխութեան քոյր կը խնամէր ու պէտք եղած անունքը կը հայթայթէր: Պանդուխտ հայ երիտասարդներու համար բարի խորհրդակից մը դարձած՝ անոնք յաճախ զինքը իր տան մէջ կը մնտաէին իրենց հոգեկան խաղաղութիւնը վերագտնելու՝ անոր սփոփիչ խօսքերով: Ալիս երբեմն իր հոգեկան տառապանքը բաղդատելով այդ թրշուառներու անվերջ ցաւին հետ, շատ ջնջին կը գտնէր:

Ձմառուան ցուրտ իրիկուն մըն էր, իր տաքուկ սենեակին մէջ նստած՝

բժշկական շարժաթաթերթեր աչքէ կ'անցընէր: Կատուն և շունը ոտքերուն տակ ընկողնած զինքը կը գիտէին: Պահիկ մը իր կենդանիներուն անկեղծօրէն փայտելով ըսաւ:

- Բարի էակներ, ո՞վ ըսաւ թէ դուք հոգի մը չունիք երբ այնքան հաւատարմօրէն և սիրով ձեր տիրոջը փարած էք: Ու կը մտածէր մարդկային յեղիւզուկ, այլազան հոգիներու մասին: Այնքան բաներ տեսած և զէպքերու ահանատես եղած էր որ կրնար հիանալի վէպ մը գրել, սակայն ներշնչուած և այդ բոլորը կարգաւ՝ ամփոփելու տրամադրութիւնը կը պահսէր իր մօտ: Մտածումները բնորոշապէս զուսն բաղխուելով Այցելուն առանց սպասցնելու ներս առաւ: Ան էր, ինչո՞ւ եկած էր:
- Մի՛ զարմանար Ալիս, լսելով Ֆրանսա հաստատուելը, հին օրերուն ման եկայ անվարան քեզ հետ գլուխ գլխի մտերմիկ պահեր վայելելու, ինչ որ այնքան տարիներէ ի վեր կը բաղձայի:
- Ձեմ հասկնար պարոն ձեր միտքը:
- Խնդրեմ անունս տո՛ւր, կարելի՞ է մօռնալ ձեւացնել երբ այնքան խոտալ սէրով մը իրարու կապուած էինք:
- Պարապ բաներու մասին կը խօսիք, ձեզ չեմ ճանչնար այլեւս:
- Ի՞նչպէս թէ պարապ, ներէ՛ ինձ, չգնահատեցի արժէքը: Ամուսնութիւն խոտանալէ յետոյ միայն յստակօրէն տեսայ թէ քեզ երջանիկ չպիտի կրնայի ընել, քանի որ պէտք եղած նիւթը քու և իմ մօտ կը պահէր: Ապագան տեսայ, դաւակներ... յետոյ կարօտութիւն ու թշուառութիւն, դուն պագան տեսայ, դաւակներ... յետոյ կարօտութիւն ու թշուառութիւն, դուն ալ ինձ հետ շարժարուելով գոյութեան ծանր պայքարին համար: Ազգեցի խնայել քեզ, ստեցի գրելով թէ մտապումը սէրս ալ թաղած էր: Խորհելով թէ՛ թերեւս որոշէի որ զերիշի մը հետ ամուսնանալ ու աւելի երջանիկ ըլլալ: Իսկ ե՞ս, ամուսնացայ հարուստ այլի մը հետ, իր զբամէն հիմա ոչինչ մնացած է ու ան կ'ուզէ շոյալ կեանքը շարունակել, հաճոյքը ո՛չ մէկ բանի գոհելով: Այս քառասուն կեանքին մէջ մէկը չունիմ զիս մխիթարող: Եթէ դաւակս չըլլար...:
- Ինչո՞ւ այս բոլորը ինձի պատմելով...
- Դառնօրէն պատժուած եմ արդէն, գոնէ դուն անգութօրէն մի վարուելիք ինձ հետ:
- Ի՞նչ կ'ուզէք որ ընեմ:
- Թող տուր որ երբեմն գոնէ գամ քու խօսքերովդ մխիթարուելու և մտքի խաղաղութիւնս վերագտնելու:
- Դարձեալ անձնասիրաբար կը դատէք: Ի՞նչ պիտի ըսեն ծանօթները ու յետոյ իմ հոգեկան շարժարանքս: Հերիք ալ, խնայեցէ՛ք զիս թէ ոչ պիտի հեռանամ այս երկրէն: Լաւ պաշտօն մը ու հաճելի միջավայր մը կորսնցնելուս պատճառը դուք պիտի ըլլաք:
- Ո՛չ ո՛չ չեմ ուզեր յանցանքս բարդել: Բաւ է որ նոյն երկրի մէջ բնակիս, հոգ չէ թէ զրկուիմ ներկայութենէդ: Միայն խոտացիր ինձ մտիկ ընել երբ նեղ պարագայի մը քեզի գիմեմ:
- Անշուշտ, այդ սիրով կը խոտանամ:
- Ալիս երբ գուռը գոցեց իր նախկին բարեկամին վրայ, տարօրինակ զգա-

ցում մը ունեցաւ: Նախախնամութեան կողմէ կարգադրութիւն մըն էր զինքը տառապեցնողին վրայ յաղթանակը ապահովող, թէ ոչ կեանքի ունայնութիւնը ալ աւելի շեշտող իրողութիւն մը: Պահ մը անցեալին դարձաւ, մտաբերեց իր յուզումները և երազները, ինչ երջանկութեամբ պիտի միանար քիչ առաջ մեկնող՝ կեանքի խաղը կորսնցուցած սա թշուառին: Ոչինչ պատճառաւ երէկուան պաշտուած էակ մը կրնայ յանկարծ իր պատուանդանէն ինչալ Միշտ այսպէս չէ՞ եղած միթէ: Մենք մեր կարծիքով կը բարձրացնենք կամ կը ցածցնենք անները: Եթէ ան գիտնար որ օր մը բախտը պիտի ժպտէր ինձ, իր ընթացքը բոլորովին տարբեր պիտի ըլլար ու ես զայն իբր կատարեալ էակ պիտի պաշտէի անոր նուիրուելով բոլոր հոգևով:

* *

Ալիս նոր եռանդով փարեցաւ իր գործին: Ֆրանսայի բժիշկները կ'զմայլէին անոր հանգարտ ու ճարտար գործելակերպին շեշտեալ աւելի լայն շրջանակի մը մէջ սկսած էր համբաւ շահիլ: Ստէպ զինքը կը հրաւիրէին թէյասեղաններու մանաւանդ իր պաշտօնակիցներուն տունը: Անոնց մէջ համակրելի ու սրամիտ բարեկամներ ալ ունէր, որոնց հետ տեսնուելը մտքի զբօսանք մըն էր:

Շաբաթ երեկոյ մըն էր, պաշտօնավարած հիւանդանոցին բժշկապետը տարեկան ընդունելութիւն ունէր, ուր ներկայ պիտի ըլլային Ֆրանսայի շատ մը ականաւոր դէմքերը: Ալիս հրաւիրուած ըլլալով, մեծ հոգածութեամբ պարզ արդուզարդ մը տալէ յետոյ երբ կը պատրաստուէր մեկնել, նախկին բարեկամը յուսահատ արտայայտութեամբ եկաւ զայն գտնելու:

— Վստահելով խօստմանդ, անվարան կուգամ օգնութիւնդ հայցելու: Զաւակս պիտի մեռնի եթէ ժամէ մը գործողութիւն չկատարուի: Բժիշկը օգնականի մը պէտք ունի, մի՛ մերժեր զիս Ալիս, դուն միայն կրնաս տառապող հօր մը սիրտը հասկնալ:

Ալիս գլուխը հակ' անբարբառ հետեւեցաւ մէկու մը նման որ կ'ընդունի թէ իր բաժինը միշտ զոհուել է:

Քայց ան գնաց անմեղ մանուկ մը իր ցաւէն ազատելու գոհունակութիւնը ունենալու համար միայն: Արագ գործողութենէ մը յետոյ փոքրիկը ազատուած էր ստոյգ մահէ մը: Այնքան տարիներէ ի վեր առաջին անգամ ըլլալով Ալիս զգաց որ իր հոգին ճնշող վիշտը բոլորովին վերցուած էր ու հիմա աչքերը նոր հրճուանքով մը կը վայլէին, զինքը գեղեցկացնելով և կարծես կորսնցուցած երիտասարդութիւնը վերագտնելով: Գթութեան տարած յաղթանակն էր այդ մարդկային միւս բոլոր տկար զգացումներուն վրայ:

Բժիշկը առաջարկեց անոր իր ինքնաշարժով մինչեւ տուն տանիլ: Ասոր փոխարէն Ալիս զայն ներս հրաւիրեց, իր հաճելի սենեակին մէջ յոգնած բժիշկը հանգստացնելէ յետոյ թէյով պատուասիրեց:

* *

Սահեր էին արագ ժամերը ու երկուքն ալ չէին զգացած որ առաւօտը շատ հեռու չէր: Խօսած էին երկար առանց ձանձրանալու:

— Լսած էի արդէն ձեր բարի համբաւը օրիորդ, ու իբրեւ ազգակիցս կ'ուրախանայի: Սակայն այսօր ձեր ազնիւ հոգին աւելի նոր և շօշափելի

յայտնութիւն մըն է ինձ համար: Դուք որ ուզեցիք հաղուստեայ հաճոյք մը զոհել թշուառի մը զաւակը փրկելու համար: Թերեւս ուրիշ գոհողութիւն մըն ալ յանձն առնէք, տարիքով յառաջացած բայց հոգևով երիտասարդ ձեր մէկ ազգակցին կինը ըլլալ հաւանելով: Հարստութիւն չունիմ ձեզ տալու, անկեղծ գուրգուրանքս ու բարեկամութիւնս պիտի վայելէք: Ձեր սկսած բարի գործը թերեւս միայն աւելի լաւ կերպով կարենանք շարունակել: Խնչ կ'ըսէք այս ինքնատիպ առաջարկիս:

— Ձեր առաջարկին պատասխանելէ առաջ հարցում մը պիտի ընեմ, կը կը հաւատա՞ք որ մարմնի բժիշկներու նման, հոգին կազմող տարրերն ալ կրնան բոլորովին փոխուել ու սէրը բուսած հոգեկան հիւանդութենէն բուժուել:

— Ինչո՞ւ չէ, ան ալ ունի իր գեղահատը, նոր սէր մը սկսելով:

— Այն ատեն պատճառ մը չունիմ ձեզ մերժելու և խորհիլ թէ կեանքիս այս նոր գեղեցիկ էջը կը պարտիմ այս իրիկուան գէպքին: Ինչ զարմանալի, կեանքի ճամբաներն ալ իրենց խաչածեւումները ունին:

— Ուրեմն օրհնենք այն թշուառին զաւակը որ մեզ ծանօթացուց:

Թ. ԲԱՋՈՒՄԵՆ



ԼՈՒՍՆԻ ԼՈՅՍՈՎ . . .

Արիւնքեան զիւթիչ ու հեշտագին գիւնքներու մեղկութենէն արըշիւոյ դեռ կը դիտեմ, համատարած անդորրութեան մէջ խիղախող ուրուագիծը բուրգերուն:

Հեռճան, հորիզոնին ետին, կարաւանը կ'անցնի աւազէ դաշտերուն մէջէն, ու կը լսուի արծաթէ բոժոժներու զանգիւնը մերթ զմերթ զիւ, մերթ մալմալըրուն... ու հալը ինձ կը բերէ տարտամ ձայներ անո՛յշ ու հեռաւոր...

Անորինակ խոհումով մը կ'իտազդամ կը գիմեմ դէպի սփինքսը խորհրդա-



ԺԻՐԱՅՐ ԶԵՊԵԼԵԱՆ

ւոր, այնտեղ անապատի սրտին բազմած այդ դարաւոր հսկան, իր հպարտ դլուխը բարձր բռնած, կը ծիծաղի՛, կը ծիծաղի՛ երազներու այս աշխարհին վրայ, խնդուքով մը լուս ու հեգնող, մթին ու անաւոր:

Անդին մեծ բուրքին ստորոտը կը նշմարուի ճերմակ սիլուէթը պէտէ-վիին, անապատի զաւակ, այդ ձիաւոր աւազակը, հմայուած իր շուրջը տարածուող զգլխիչ տեսարանէն, լուսնի լոյսին տակ, ծունկի կուգայ աւազէ կակուղ փսիաթին վրայ, մինչ իր շրթներէն ելած աղօթքի մը խուլ մրմունջը խորհրդաւոր լուսութեան մէջ կը բարձրանայ, կը բարձրանայ ու կը մարի...

Ու ես կը մտածեմ, աչքերս կ'իտախակ. կը մտածեմ, մարդկային անդա-մեջի տանջանքներով կերտուած սա հրաշակերտին վրայ որու ձեւերուն մէջ կ'ըսեն, բռնութեան տակ կըրդ բիւրաւոր հոգիներու տխուր անէծքն է պարփակուած:

Գահիրէ

Վ. ՃԼՊՈՆԵԱՆ.



ՔԱՂՏՐ ՄԱՆԿՈՒԹԻՒՆԱ

Անցանք գային, ո՞ն որքան շուտ մանկութեան օրերը, ասուպներու շտապով: Երե՛կ ինձ համար ցաւը պատահար մըն էր միայն և իմարդունքներու շուտ կը յաջորդէր ժպիտը. իսկ այսօր ցաւեր կան որոնք երբեմն կարծես կը քանդակուին մէջս ու կը մնան առ յաւէտ:



ԼԻԼԻ Մ. ՍԵՊՈՒՅԵԱՆ

Լակայութեան մէջ այնքան գեղեցիկ որքան էին այն ատեն, երբ մեծ մայրիկիս գիրկը նստած՝ թևերուս մէջ կ'օրօրէի զձեզ խ'ամուս մայրիկի մը նման, ո՞վ պուպրիկներս, թնչպէս չզգացի այն ատեն թէ խարուե՛ր եմ... ալիւս մեծ մայրս չկայ որ զիս սիրէ, զուք ալ չկաք, ո՞ւր էք... Եկէ՛ք դարձեալ իմ մօտս, Եկէ՛ք օրօրիլ երեւակայութիւնս, Եկէ՛ք, վասնզի պիտի ուզեմ դարձեալ խարուիլ այնքան անո՞յլ են այդ խաբկանքները: Ո՞ն, չկան, չկան այդ երջանիկ օրերը որոնց այնքան կարօտը կ'զգամ այսօր, անա՛ կ'երթան իրենց հետ տանելով մանուկ օրերուն լացն ու ծիծաղը, արցունքն ու ժպիտը, անա՛ կ'երթան անոնք երազի մը չափ վաղանցուկ մինչ ես կը մնամ հին օրերուն յուշքովը և նորերու յոյսին կառչած՝ ապրելու կեանքը որ ինքնին այդ վաղանցուկ երազն իսկ է...

12 Յուլիս 1932

Դասը-գիւղ

Այսօր մանուկ մը չեմ, բայց կը սիրեմ հետաքրքրուիլ անոնց կեանքով. կը սիրեմ ինչ որ մանկական է, հետեւաբար անկեղծ ու բարի. կը սիրեմ տեսնել անոնց խոր ու խելացի աչքերը, նընչուած ձայնը և ոսկի ծիծաղը. ու այն ատեն ինքզինքս պահ մը փոխադրուած կ'զգամ հեռո՞ւն, դէպի ապրուած ալլ անգիտակ խօս պահերը՝ երէկի թարմ օրերուն:

Յաճախ կը մտաբերեմ ես զանոնք, անա՛ կը տեսնեմ պզտիկ աղջիկ մը զուարթ ու անփոյթ որ կը վազէր թիթեռնիկ մը ետեւէն, կամ վնջիկ մը ծաղիկ քաղելու, զայն անմիջապէս նուիրելու համար իր մայրիկին և անկէ փոխադարձ ընդունելով ամէնէն քաղցրը համբոյրներուն:

Կը յիշեմ պուպրիկներս որոնց զոհեր եմ շատ մը ժամեր, կը տեսնեմ գիւղ անոնք երե-

ԼԻԼԻ Մ. ՍԵՊՈՒՅԵԱՆ.

ԿԸ ՅԻՇԵՍ...

Ես կ'երթամ ծովափ կէս դիշերին խօս ալիքներուն երգը ունկնդրելու... Ո՞ն յիշողութիւնս կը ներշնչուի անցեալէն ու երեւակայութիւնս կը սալաւանի թափանցիկ անեղբու թեան մը մէջ:

Ծովը ծաւի աչքի մը պէս իր խորունկ նայուածքին մէջ մարդոց կեանքը կը պարուրէ:

Բայց ես կ'ուզեմ թաղել դանկին մէջ, հաւաքել հոն, յոյս ու լոյս, բոյր ու թոյր, սէր ու բոց, ամէն ակնարկ հեշտամըրի, ամէն համբոյր վարդ կոյսի թուլ հոն վառի բունի:

Ո՞ն հեռացէք ինձմէ՛ ամէն ինչ որ պիղծ էք ու կեղծ: Ես իմ սիրուհիս ճակտին պէս պայծառ ճակատ կ'ուզեմ: Անոր աչքերուն պէս արեւներ կ'ուզեմ:

Ո՞վ իմ անմահն Հայրենիս, կոյսերուն մէջ ամէնէն գեղեցիկը և ամէնէն վարդազոյնը Մեր սրտերուն տրոփունը երգի մը պէս կը բարձրանայ երբ նստած ենք կուշտ կուշտի և աչքերնիս իրար սեւեռած:

Քու պարտէզիդ մեղուները թող պարտէզիս ճաղիկներուն նեկտարը ամբողջութեամբ քամեն որ կարենա՛մ ես ալ քու շրթներուդ հիւթը ծծել:

», Եկ՛ւր, քանի գեւ սէրս կոկոնի պէս գոց է ու նոր բացուիլ կը սկսի»:

Ըսիր գուն ինձ իմ պաշտելի գեղունիս... Կը յիշե՞ս մեր առաջին հանդիպումը արասիաներու տակ երբ նստանք նստարանի մը վրայ քով քովի, մազերովդ զեփուրը կը խաղար ու բու առնուանոտ ծոցդ կարսպի թևերու նման կ'ելլէր կ'իջնէր, խօսքերդ քաղցր շեշտերը առուակին մրմունջին կը ն'անէին:


Կը յիշե՞ս նաև մեր սիրոյ առաջին նիբր այդ կ'սթնաթոյր լուսնին տակ... Կը յիշե՞ս, կը յիշե՞ս, ալ գինովցած սերէն կ'ըսէիր «չըթներդ մի՛ վատեր շրթներէս»:

Գաճիտի

ՅՈՎ. Վ. ՍԱՂՃՅԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

«Զուարթնոց»ը յառաջարան Աղիւնմ. Մարտին. Կ. Փաշայի	էջ 7
Օրհնութեան զիր Մ. Արեւ. Կարոյեան	11
Ինչ որ ունիմ Վեր. Ա. Պ. Մանուկեան	12
Կարեկցութեան զգացումը Դառնիկ Սիմանեան	17
Աղքատախնամ մարմին Կ. Փաշայի 1908—1933	25
Նամակ՝ Աղքատախնամ մարմին եղևիկ Ե. Վ. Պապաեան	37
Սէն-Քլուի Անտառ փոփ. Աբրահամ Տեր Յակոբեան	41
Փոխադարձ վստահութիւն Դարեգիկ Եպիսկ. Տրապիզոնի	48
Ազգերու Ընկերութիւնը եւ Դպրոցը Յ. Թ. Հինգիլեան	51
Զաւաճասներ Կրնա՞ն Եսրիլի Ահթ Արսէնեան	57
Կինը ընտանիքին սեմէն գուրս Տիկ. Նեվրիկ Մ. Սեպուհեան	62
Գրականութեան դիրք մարդկային կեանքին ու ճակատագրին մէջ Քոփ. Յակոբ Մարտեան	64
Դաստիարակութիւնը պիտի սկսի ծնողներէն Առամ Կիկոյսեան	70
Դեղարուեստի հրաշակերաններ Ա. Դարիպեան	83
Հոգեկան խորհրդաւար երեւոյթները գիտութեան առջև Տօթ. Մ. Քեշիշեան	111
Դիտէ՞ք թէ ոչ Բենիամին Պօղոսեան	125
Պոլսահայ գաղութը անցեալի մէջ Բարգէն Աբոտակից Ա. Կարողիկոս Տանն Կիլիկոյ	131
Հայաստանեայց Եկեղեցւոյ Առաքելականութիւնը եւ անոր կեցուածքը հանդէպ Ընդհ. Եկեղեցիին Հմ. Ծ Վրդ. Պախրիշարեան	133
Բուզանդիոնի պատմականը Կ. Յ. Բաամաչեան	138
Էվլիեա Չէլէպի Դ. Մանուկեան	142
Դեղարուեստ եւ կրօնը Արամ Դօնտայեան	147
Օրրոցն ու դագաղը Քաղմանուր. Թ. Արթ. Դոշակեան	154
Ուխտաւորներ Էյուպի Ս. Եղիային Դ. Արթ. Արսւանեան	157
Քալիբրանթուս Հ. Վահան Յովհաննէսեան	169
Լիլլայի ծնունդը » »	161
Ծովափին » »	161
Պատիկ լրագրավաճառը Հայկանոյշ Մատի	162
Խոճորում Եղիշե Այվազեան	163
Թշուառ աղջկնակին աղերսն ու երախտագիտութիւնը Դոհաւր Ա. Ընդլեան	165
ձամբու խաչածեւումներ Թագուհի Բագուճեան	168
Լուսնի լոյսով... Ժիրաշ ձեպեղեան	174
Քաղցր մանկութիւն Լիլի Մ. Սեպուհեան	176
Կը յիշե՞ս... Յովհաննէս Դ. Ետեղեան	177



Կեդրոնացեալի ամէն ճեակ վառարաններու յախնապակի եւ բափածայ. Կոնպէս բափածայ եւ «Լմայ» լոգարաններ «Լավապ» ամէն ճեակի ծորակներ, քրագիչ գործիքներ օդային կազի կազմածներ, զիտակն ու առողջապահիկ կ'սզմութեամբ «Քալորիֆէր» ներու, սաք ջուրի համար երկաթ եւ կապար խողովակներու զեեղման գործեր եւայլն.

Պոլիս նոր նախաձեռնուած պոզոտայ թիւ 20
Թեյեֆօն 2180

Իր պատրաստութեան բժախնոյի ներուրիւններովն է որ



հանրածանօթ օղին ամէն ճեղ ոգելից ըմպելիներուն մէջ
առաջնութիւնը գրաւած է

Տէր ԵՒ ՏՆՕՐԷՆ

ՍՏԷՐԱՆ ՊԵՐՊԵՐԵԱՆ

Ղալաթա Մումնանէ պոզոտայ թիւ 67

ՄԱՐՏԻՐՈՍ ՔԵՕԼԵԵԱՆ

Շոգենաւային Գործակալ

ԱՇԽԱՐԻ ԲՈԼՈՐ ՆԱԽԱՀԱՆԳԻՍՏՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
Տ Ո Մ Ս Ա Կ Ն Ե Ր

Ճամբորդութեան առփու մանրամասն տեղեկութիւններ
կը տրուին

Գոյքերու փոխադրութիւն եւ ապանովագրութիւն

Ղաղաթիոյ փարսիլին վրայ, Թանտրանս խանիկն սակ թիւ 1

Հեռահայն 42686

Հեռագրական հասցէ: Գեօլեան, Եւրանպուլ



ՎԻՐԱԲՈՅԺ ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

ԲԵՆԻԱՄԻՆ Ս. ՊՕՂՈՍԵԱՆ

Նախկին Գեղագործ

Կը դարձանէ բերնի և տկուպի ամէն տեսակ
հիւանդութիւններ հիւանդ կ'ընդունի ամէն օր առտուն
ժամը 9էն մինչեւ իրիկուն, բաց աստի զիշերները
եւս ժամադրութեամբ հիւանդ կ'ընդունի
մաքար և արագ գործ

Կ'է իկ-փաշա Միւսկիլիս վապոյ, թիւ 20, արարչման 4րդ յարկ

ՎԻՐԱԲՈՅԺ - ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

ՀՐԱՆԴ ԲԱԶԱԵԱՆ

Բերա Սեպտի եւ ժուպէ լուսանկարչասան դէմ

Աբաքքրան Սիբէ ար Սիբին, թիւ 6



ՎԻՐԱԲՈՅԺ - ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

ՅԱԿՈԲ ՍԱՐԸԵԱՆ

Պահէ: գարն Թաշ խան Ա. յարկ, թիւ 10 11

Ամէն օր հիւանդ կ'ընդունի իր արդիական դարմանասունը

ժամը 10-12 եւ 1,30-7




Ն. ԱՆՏՐԻՕՍԵՆՈՍ ՈՐԴԻ

ԼՈՒՍԱԿԱՐՉԱՏՈՒՆ

Պօլիս Պոյազիաի հրապարակը թիւ 13

Խնամեալ գործ, դիւրամասշէլի զիներ



ՏՕՔԹ. ՊՕՂՈՍ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

ՄԱՍՆԱԳԵՏ ՆԵՐՔԻՆ ԵՒ ՄԱՆԿԱՆՑ
 ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ

Գարնանացուսք փոխադրած է Կէսիկ-փառայ
 պողոտայ թիւ 135

ՀԻՒԱՆԴ Կ'ԸՆԴՈՒՆԻ ԱՄԷՆ ՕՐ



ԽՄԵՑԷՔ ՊՈՒՐՍԱՅԻ ՀԱՄԲԱՒԱՒՈՐ

ՈՒԼՈՒՏԱՂ

ՀԱՆՔԱՅԻՆ ՋՈՒՐԸ

Կըդ իւրացնէ մաքսողութիւնը, կ'աւել-
 ցնէ մաղձային արտադրութիւնը, կը
 կանոնաւորէ աղիքներու գործունեու-
 րիւնը: Հանրածանօթ բժիշկներու կող-
 մէ յանձնարարուած միակ համալային
 ջուրն է:

Թարմ, աժան եւ բուժիչ.

Էնդիստոս կեդրոնառնդի'
 Սիրէէնի Վիսչիւք Գնանեան խան թիւ 25

Ա.Լ.ԵՄ ՕՂԻԻ

ԳՈՐԾԱՐԱՆ

Յ. ՊԱՆԱՏՈՒԲՐԵԱՆ

ԵՒ

Մ. ՓԱՓԱԶԵԱՆ

Նոր տարւոյ առթիւ սրտանց կը շնորհաւորե իր յարգոյ յանախորդները
 եւ ուրախութեամբ կը տեղեկացնէ թէ յանախ մաքուր ապրանք ծախելու
 փափաքը ունենալով ներկայիս Ալեւ օղին ԵՐՎԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՏԱԿԱՌ-
 ՆԵՐՈՒՆ ՄԷՋ ՍՊԱՍՑՆԵԼԷՆ վերջ է որ շեքերը կը լեցուին ու ըստայնմ
 հրապարակ կը հանուին: Ասիկա ոգելից ըմպելիներու մեծաւորի
 ճնորհնութեան թիւ 650/1327 ու 25 Յուլիս 932 բուակիր արտոնագրին
 համաձայն միմիայն Ալեւ օղին ՍՊԱՍՑՈՒԱԾ է, կարգացեք պիտակնե-
 րուն ետեւը:

Միակ կեդրոնառնդի'

Գում-գարու Գարապըչաք օղիի գործարան, թիւ 13-15-17

ԹԷԼԷՕՏԵ 20741



ՄԻՋՐԴԱՏ ՕՍՄԱՆԼԵԱՆ

Հանրածանօթ շաքարավաճառ, անուանի իր անզուգական եւ
 աւանդական «տուսամ հէլվայ»ով, Զատկական ախորժահամ «չէօ-
 ըէք»ներով ու «փիւշմանի հէլվայ»ով:
 Կը գտնուի նաեւ ամէն տեսակ շաքարներ, պիւսքիւ, շոքոլա եւ
 «Թահին հէլվա», մաքուր, թարմ եւ աժան

Կեօիկ-փաշա Տիվան ալի պողոտայ, թիւ 48

Կ Ի Ի Լ Ե Ր Ե Ի Ի Զ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՀԱՆՐԱԾԱՆՕԹ ՃԱՇԱՐԱՆ

ԳԱՐԵԶՐԱՏՈՒՆ ԵՒ ԶԲՕՍԱՎԱՅՐ

Անթերի սպասարկութիւն, ընտելագոյն խմիչքներ եւ մաքուր աղանդներ

Թարմ, սննդարար եւ դիւրամատչելի, կ'ընդունուի նաեւ հարսնկան, նշանտուքի, կնունքի, թէյասեղաններու եւ ամէն կարգի երեկոյթներու սպասարկութիւն.

Ամբողջ կազմուածով եւ մասշէլի պայմաններով

ՓՈՐՁԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄԷԿ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ԲՍԻԱԿԱՆ Է

Զարշը Գարու հանրակառ.ի կայան թիւ 84 գարեջրատունը

Ուր պիտի գտնաք նաեւ ԲՕՃՍ.ԹԱՇ ի հանրածանօթ, մարտողական եւ մասնագէտ բժիշկներու կողմէ հանձնարարուած հանքային ջուրը:

ՏԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ՝

ՕՆՆԻԿ ԴԱԻԻԹԵԱՆ

ՎՐԻՊԱԿ

Էջ	տող	սխալ	ճիշտ
142	2 վերէն	Չէլէպի	Չէլլի
146	5 վերէն	(անընթեանելի)	դասեր բայց ոչ ամենքը
146	10 վարէն	Կիւտար	հիւտար

700

ՍՈՒՐԲ ԻՆՏԵՐՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ST. NERSES SHNORHALI
LIBRARY

«Ազգային գրադարան»

NL0414107

13620/1